Արարատյան բնաշխարհից բացի ոչ մի տեղ Հայկյան ոգու բնատիպած դրոշմը Հայոց երկրում այնպիսի ճշգրտությամբ չի երեւում, ինչպես Սիսական աշխարհում. որովհետեւ թեպետ Տարոնը կենտրոնական տեղ է զբաղեցնում մյուսներից ավելի եւ հարուստ է ազգային հիշատակներով, բայց Սյունիքը լավագույնն է թվում որպես ազգային ոգու եւ ավանդների պահեստարան՝ ունենալով նախնյաց գրավոր ու անգիր նշխարներ ու հուշարձաններ: Եվ այդ իսկ է զարմանալի, որ թեպետ վաղ ժամանակներից այնքան սերտ հարաբերություն չուներ ազգային անցուդարձի հետ, բայց հարազատորեն է պահել ազգային ոգին, եւ սա, անշուշտ, այսպես է բնակիչների ազատասեր բնավորության պատճառով, հավասարապես՝ նրանց կորովի քաջությամբ, որով նրանք տեվապես դիմակայել են օտարների բռնության՝ օգնական ունենալով իրենց երկրի թե՛ ամրոցները, թե՛ բնական դիրքը, ինչպես ցույց են տալիս հետագա (հիշատակարանները), բնական եւ պատմական տվյալները, որոնցից գլխավորն այն է, որ, անվան հետ միասին, վաղ Հայկյան թագավորության անկումից հետո, երբ Արշակունիները գրավեցին այն, նրանց հարստությունից հետո նմանապես, միայն Սյունյաց իշխաններն էին, որ Բագրատունյաց հարստության ժամանակ ու նրանից հետո եւս կոչվում էին հայկազուններ...

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Սյունյաց Երկիր մշակութային

ԵՐԵՔՇԱԲԹԻ,
1 ՀՈՒՆԻՍԻ 2021Թ.
№ 2

www.syuniacyerkir.am

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

ԵՌԱՄՍՅԱ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru www.syuniacyerkir.am

ISSN 2738-2540

Ինքնավար Սյունիքի քայլերգը

Մեր սարերը անառիկ ու հպարտ,
Մեր որդիք կորովի ու անպարտ,
Խոր ձորերը Սյունիքի ահավոր՝
Շիրիմ են թշնամու դարավոր:

Թշնամին հազարով միշտ մեր դեմ,
Կուրծք կրծքի մենք կանգնած նրա դեմ:
Չենք դողում, չենք սարսում մենք մահից,
Մեր մահը թեթեւ թիթեռի թեւից:

Ինքնավար Սյունիքին ցանկանք
Միշտ լինել թշնամու սպառնանք,
Շատ ապրի մեզ համար այսուհետ,
Քաջ հերոս Նժդեհ Սպարապետ:

ՏԵՔՍՏԻ ՀԵՂԻՆԱԿ՝
ՏԻԳՐԱՆ ՍԱՀԱՆԴԱՐՅԱՆ

Մեղրի

Կապան



Գորիս

Սիսիան

Սյունիքի մերօրյա գրական աշխարհը

ՀԱՄԱՐԸ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՈՒ «ՉԱԱՐԱՏ ԿԱՊԱՆ» ՓԲԸ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՆԵՐԴՐՄԱՄԲ (ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ՝ ԴԱՎԻԹ ԹՈՎՄԱՍՅԱՆ):

Սյունյաց աշխարհի հորովել

Գուսան Աշոտ

Խնձորը ծոցին իմ ջահել ախպեր,
Քո ձայնն է լսում, քո մաճկալ ապեր,
Հո՛լ արա, Խումա՛ր ջան, հո՛ արա, հոտա՛ղ ջան,
Ապերն ինչ ասի, հոտաղը՝ լսի:

Հացի բուրմունքով ձորերը լցնի, հո՛լ արա, հո՜-հո՜...
Ամո՛ւլ ջան, ուսիդ սարի չափ բեռ կա,
Քեզ Աստված ասեմ, տասը մեծ դարդ կա,
Հո՛լ արա, Շումա՛լ ջան, Շումա՛լ ջան, հո՜...
Հո՛լ արա, հոտա՛ղ ջան, հոտա՛ղ ջան,
հո-հո՛լ արա, հո՜-հո՜...

Խնձորը ծոցին իմ ջահել ախպեր,
Հարսանքիդ քավոր քո մաճկալ ապեր,
Հո՜ արա, Թումար ջան, օրը ճաշ դառավ,
Ամառվա վարը ոսկի հաց կտա:
Օջախի ժպիտ, խնդություն կգա, հո՛լ արա, հո՛-հո՜...
Ամուլ ջան, ուսիդ սարի չափ բեռ կա,
Քեզ Աստված ասեմ, տասը մեծ դարդ կա,
Հո՛լ արա, Ղումա՛շ ջան, Ղումա՛շ ջան, հո՜,
Հո՜ արա, հոտա՛ղ ջան, հոտաղ ջան,
հո-հո՛լ արա, հո՜-հո՜:

Սարի սիրունը ճաշ կբերի,
Հոտաղի սերը նորից կնորի,
Հո՛լ արա, Խո՛ւմար ջան, հո՜ արա, հոտա՛ղ ջան,
Որ նորից ծփան ոսկեհուռ հասկեր,
Հե՜յ, թուռնատան մեր հացը՝ խինդ ու սեր,
հո՛լ արա, հո՜-հո՜,
Ամո՛ւլ ջան, ուսիդ սարի չափ բեռ կա,
Քեզ Աստված ասեմ, տասը մեծ դարդ կա,
Հո՜ արա, հոտա՛ղ ջան, հոտա՛ղ ջան, հո՛լ արա, հո՜-հո՜:

Մեր ուղին պիտի հարթենք նաեւ հոգեւոր մաքառումով

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ հրատարակվող «Սյունյաց երկիր. մշակութային» եռամսյա պարբերականի 2-րդ համարը նվիրում ենք Սյունիքի մերօրյա գրական աշխարհին:

Իր պատմության ամենադժվար ու անորոշ ժամանակներից մեկն ապրող Սյունիքում կյանքը շարունակվում է:

Շարունակվում է նաեւ հոգեւոր ոլորտում, գրական-մշակութային անդաստանում:

Սահմանը պահող զինվորականի, սահմանագծում արարող մարդկանց կողքին նաեւ երկրամասի ստեղծագործող մտավորականներն են, գրողները...

Համարի նպատակն է հանրությանը ներկայացնել նրանց մի մասին՝ արձակագիրներին եւ բանաստեղծներին՝ ի ցույց դնելով ներկայիս գրողական որոնումները:

Սյունիքի մերօրյա գրական աշխարհը ներկայացնելիս առաջնորդվել ենք հետեւյալ սկզբունքով. յուրաքանչյուրին հատկացնել (առավելագույնը) 1-2 էջ (A3 չափսի)՝ զետեղելով հեղինակի լուսանկարը, համառոտ կենսագրությունը եւ ստեղծագործություններից մեկը կամ մի քանիսը կամ որեւէ երկի հատված (տրամադրվող մակերեսին համապատասխան). համարը, ինչպես տեսնում եք, բաղկացած է 48 էջից:

Ցանկալի ենք համարել, ինչ-որ առումով՝ պարտադիր, որ հրապարակվող ստեղծագործության (ստեղծագործությունների) վերաբերյալ ներկայացվի նաեւ գրականագիտական տեսակետից արժեւորող որեւէ խոսք՝ գրախոսություն, գրականագիտական գնահատական կամ որեւէ հեղինակավոր բանասերի դիտարկում: Խոսքը կարող էր առնչվել նաեւ տվյալ հեղինակի ստեղծագործական ամբողջական նկարագրին:

Պարզվեց, որ ստեղծագործողներից ոչ բոլորն են մինչեւ այժմ հայտնվել գրականագետների ուշադրության կենտրոնում: Սկսնակների պարագայում դա բացատրելի է, ուստի եւ հրապարակում ենք սոսկ ստեղծագործությունները՝ ակնկալելով, որ նրանց հանդեպ որոշակի հետաքրքրություն կառաջանա: Այդ բացառությունը, ցավոք, արվում է նաեւ որոշ այլ գրողների դեպքում եւս՝ նպատակ ունենալով ավելի ամբողջական դարձնել գրողական որոնումները:

Համարում ներկայացվում են ծագումով սյունեցի այն գրողները, ովքեր ողջ են եւ բնակվում են ինչպես Սյունիքում, այնպես էլ մարզի կամ հանրապետության սահմաններից դուրս:

Ընդգրկում ենք նաեւ Վայոց ձորի ներկայացուցիչներին՝ նկատի ունենալով, որ Վայոց ձորը, ըստ Ստեփանոս Օրբելյան պատմիչի եւ «Աշխարհացույցի»՝ Սյունիքի գավառներից է եւ նշվում է իբրեւ երկրորդ գավառ՝ Ծղուկից հետո:

Համարի նախապատրաստության ընթացքում եւ դրանից առաջ՝ ծանոթանալով Սյունիքի գրական կյանքին, ավելի հաստատուն է դարձել մեր տեսակետը, որ ժամանակակից գրողներից ոմանք ըստ արժանվույն են շարունակում Սյունյաց գրական մեծերի ավանդույթները. դրանում կհամոզվի նաեւ ընթերցողը՝ համարի նյութերն ընթերցելիս:

Բայց մինչ այդ ընթերցողը կարող է ծանոթանալ գրական Սյունիքի ակունքներին (մենագրության հեղինակ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Գասպարյան), ինչպես եւ «Սյունեցիները եւ հայ հին գրականությունը» ուշագրավ հոդվածին (հեղինակ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վանո Եղիազարյան):

Համարում ներկայացնում ենք Հայաստանի գրողների միության եւ այդ միության Սյունիքի մասնաճյուղի դերակատարությունը՝ երկրամասի գրական կյանքը կազմակերպելու գործում:

Ներկայացնելով Սյունիքի մերօրյա գրական աշխարհը՝ նպատակ ունենք նաեւ հավաստել Սյունյաց տոհմիկ գրիչների ավանդներին մեր սերնդակից գրողների հավատարմությունը, ցույց տալ, որ ներկայումս նրանք հայրենասիրության, հայրենապաշտության աստվածահաճո առաքելությունը ձգտում են իրականացնել հենց այդ ոլորտում:

Հին իմաստուններն են դեռեւս սաղմոսել՝ «անունն ավելի ընտիր է շատ հարստությունից. արծաթից ու ոսկիից շնորհն է լավ»:

Դարեր շարունակ Սյունիքում հենց այդ համոզմունքով են մարդիկ ապրել: Եվ պատահական չէ, որ Սյունիքն իր սրի հերոսների կողքին թագադրել է իր գրչի հերոսներին ու այսկերպ պահել լույսը՝ ոգու, սերը՝ բանի, եւ ամենածանր պահերին անգամ աղոթքի պես վանկարկել՝ «Ի սկզբանե էր բանն»: Ու իր հոգեւոր մեծերին, տառը երկնողին, բառն արարողին սյունեցին առանձնակի երախտագիտությամբ է վերաբերվել...

«Սյունյաց երկիր. մշակութային» եռամսյա պարբերականի սույն համարը սերնդեսերունդ փոխանցված ու մեզ հասած այդ վերաբերմունքի մի նոր եւ համեստ արտահայտություն է...



Տաթևի վանք

Գրական Սյունիք

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Առասպելական մի աշխարհ է Սյունիքը. առասպելական թե՛ իր պատմությամբ և թե՛ բնաշխարհով: Դարերի ընթացքում ոչ միայն դիմացել է ամեն տեսակի մարտահրավերների, այլև ստեղծել իր արվեստն ու մշակույթը, որ հայ արվեստի ընդհանուր տեսադաշտում անպայման ունի իր առանձնահատուկ ձևն ու բովանդակությունը: Եվ դա թե՛ միջնադարում, թե՛ նորագույն ժամանակներում: Այս տեսակետից առանձնահատուկ է թե՛ ճարտարապետական Սյունիքը, թե՛ երաժշտական Սյունիքը, թե՛ նկարչական Սյունիքը և թե՛, առավելապես, գրական Սյունիքը: Առանց գրական Սյունիքի հայ գրականության մատյանը թերի կլիներ:

Ա. Ակունքները

Գրական Սյունիքը հայ միջնադարում ունի իր հաստատուն տեղը եւ հայ արվեստն ու գիտությունը հարստացրել է գեղարվեստական գրականությամբ, փիլիսոփայական, դավանաբանական, աստվածաբանական աշխատություններով, թարգմանություններով, ծաղկուն ձեռագրերով եւ մանրանկարչությամբ:

Գրական-մշակութային Սյունիքի արմատները հասնում են նախաքրիստոնեական շրջան: Ուշագրավ են հատկապես 5-7 հազար տարի առաջ արված ժայռապատկերները, Սյունիքի հնագույն բնակիչների՝ շուրջ 2000 քարաբեկորների վրա վեմը 1-6 մմ խորությամբ քերելու կամ փորելու միջոցով արված պատկերները, որոնց ժողովուրդն անվանում է «իծագրեր» (այսինքն՝ այծագրեր=այծապատկերներ), փռված են Մեծ Իշխանասար լեռան արեւմտյան փեշերին՝ Ուղտասար կոչվող հնավայրում: Ժայռապատկերները գտնվում են ծովի մակերեւույթից 3300մ բարձրության վրա: Սյունիքի հնաբնակները, ըստ էության, ժայռապատկերներն ընտրել են որպես ապագա սերունդներին հաղորդվելու հուսալի միջոց: Դրանցում ուրվագծվում են երկրամասի բնակիչների կյանքն ու պատկերացումները:

Նախաքրիստոնեական շրջանում Սյունիքում զարգացած էր գուսանական արվեստը: Մի կողմ թողնենք փաստը, որ Գողթանը տեւական ժամանակ Սյունյաց աշխարհի գավառներից էր, որտեղ ծնված երգերը մեր բանահյուսության հիմքն են: Սյունիքում գուսանական արվեստի առկայության մասին կարելի է դատողություն անել Խորենացու «Հայոց պատմություն»-ից: 2-րդ դարում Սյունյաց նահապետ Բակուր իշխանի կազմակերպած խնջույքում հանդես եկող վարձակ Նազենիկի մասին է գրել Պատմահայրը: Նազենիկը չափազանց գեղեցիկ էր եւ երգում էր «ձեռամբ», որ նշանակում է ձեռքերով նվագել: Այս պատմությունն է դարձել Դանիել Վարուժանի «Հարճը» պոեմի հենքը: Այսօր էլ Նազենիկ անունը տարածված է Հայաստանում, և այդ անունն է կրում Հայաստանի թատերական բարձրագույն մրցանակը:

Սյունիքը բուռն զարգացում ապրեց քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց եւ մասնավորապես գրերի գյուտից հետո:

5-րդ դարը հայ մշակույթի պատմության մեջ ընդունված է կոչել նաեւ Թարգմանչաց դար: Սյունյաց դպրոցը մեծ դեր խաղաց թարգմանական արվեստի բնագավառում: Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ՝ *«Հայոց մեջ նախաթոռ վարդապետությունը եւ գրքերի մեկնության ու թարգմանության իրավունքը միայն սրանց շնորհվեցին Սուրբ Սահակի եւ երանելի վարդապետ Մեսրոպի կողմից»:*

Հայագիտության մեջ արտահայտված է տեսակետ, ըստ որի Պատմահայր Մովսես Խորենացին

Սյունիքի ծնունդ է: Ըստ Մալխասյանի՝ *«Ավելի հավանական է կարծել, թե նա ծնված է Սյունիքի Հաբանդ գավառի Խորեա անունով փոքր գյուղում, որը հիշում է Օրբելյանը 13-րդ դարի վերջում»:* Սա, իհարկե, սոսկ վարկած է:

Տեղի հոգեւոր-մշակութային կյանքում նոր փուլ է սկսվում Մեսրոպ Մաշտոցի Սյունիք այցելություններից հետո: Այդ գործին են լծվում նրա սյունեցի աշակերտները, որոնցից հիշարժան են Անանիա Սյունեցին (Անանիա Թարգմանիչ) եւ Բենիամին Երեցը:

Անանիա (Անանիաս) Սյունեցին հայ առաջին թարգմանիչներից է, գործակցել է Մաշտոցին աղվանից գիրն ստեղծելիս: Ձեռնադրվել է եպիսկոպոս եւ Սյունյաց թեմը ղեկավարել 414-456 թթ.: Աջակցել է Մաշտոցին՝ Սյունիքում առաջին դպրոցները հիմնադրելու գործում: Մասնակցել է Արտաշատի հայտնի ժողովին (449 թ.) եւ ստորագրել պարսից զորապետ Միհրներսեհին ուղարկված պատասխան նամակը: Նրան են վերագրում «Յաղագս Յովհաննու Մկրտչի» եւ «Յոթ խորհուրդ Յովհաննու Մարգարեի» ճառերը, հույն մատենագիրներ Փիլոնի ու Իրենիոսի գործերի թարգմանությունները:

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

Բենիամին Երեցը Մաշտոցի հանձնարարությամբ գլխավորել է Սյունյաց աշխարհի կրթական գործը. *«Նա [Մաշտոցը] կանչեց Բենիամին անունով մի շնորհալի թարգմանիչի, որին անմիջապես արձակեց Սյունիքի տեր երիտասարդ Վասակը, իր Անանիա եպիսկոպոսի միջոցով, որոնց [օգնությամբ] նա նշանագրեր ստեղծեց գարգարացիների այն կոկորդաձայն, կոշտ, խժական, կոպիտ լեզվի համար»* (Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ ԾԴ): Իսկ Օրբելյանը գրում է, որ երբ Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի ձեռքով Սյունիքում սկզբնավորվեց հայ դպրությունը, իսկ Անանիան էլ դարձավ Սյունյաց մետրոպոլիտ, վերջինս Սյունյաց դպրոցների ղեկավար նշանակեց իր դասընկեր Բենիամինին: Դրանից հետո Անանիան վերցնում է Բենիամինին եւ գնում Աղվանք, որտեղ նրանք զբաղվում են աղվանական գրերի ստեղծման եւ դպրոցների բացման առաքելությամբ:

Ժամանակագրական շարքով եւ ընդհանուր ուրվագծերով անդրադառնանք գրական Սյունիքը ներկայացնող մյուս նշանավոր անուններին:

Ստեփանոս Սյունեցի Առաջին. ծնվելու եւ մահվան տարեթվերն անհայտ են: 5-րդ դարի հայ բանաստեղծ-երաժիշտ է: Ամենայն հավանականությամբ Մաշտոցի կրտսեր աշակերտներից է: Հայկական շարակնոցում պահպանվել է նրա գրչին պատկանող 80 երգ՝ ութ շարքով (յուրաքանչյուր ձայնեղանակում տասական երգ): Հազվագյուտ գեղեցկությամբ աչքի ընկնող այդ երգերը կոչվում են «Հարության ավագ օրհնություններ»: Զուտ գեղարվեստական արժանիքներն են խոհականությունը, ապրումների անկեղծությունն ու արտահայտության անմիջականությունը: Ստեղծագործությունը կրում է հեղինակային անհատականության վառ կնիքը:

Պետրոս Քերթող Սյունեցու ծննդյան թվականն անհայտ է, մահացել է մոտ 558 թ.: 547-556 թթ. Սյունյաց թեմի առաջնորդն էր: Որպես թարգմանիչ, հռետոր ու փիլիսոփա՝ նրան բարձր է գնահատել Օրբելյանը (տես «Սյունիքի պատմություն», Երեւան, 1986, ԼԲ եւ հաջորդ գլ.): Համարվել է Մովսես Խորենացու աշակերտը: Մասնակցել է Դվինի 554 թ. ժողովին: Օրբելյանի վկայությամբ՝ գրել է բազմաթիվ գործեր, զբաղվել թարգմանական աշխատանքով: Նրա մատենագիտական աշխատություններից հատվածներ են պահպանվել Կաղանկատվացու եւ Օրբելյանի գրքերում: Նրա շատ մեկնություններ, ճառեր ու ներբողներ համարվում են կորած: Պահպանվել են «Յաղագս հաւատոյ», «Հարցմունք յաղագս մարմնաւորութեանն տեառն զանազանք Վաչագանի Աղուանից իշխանի ընդ Պետրոս Սիւնեաց եպիսկոպոսի եւ իմաստասիրի», «Հարցումն Վաչագանայ իշխանի եւ պատասխան Պետրոսի Սիւնեաց վերադիտողի» երկերը, որոնք ունեն հոգեւոր-փիլիսոփայական բովանդակություն: Գեղարվեստական տեսակետից ավելի հիշարժան է «Գովեստ ի սուրբ Աստուածածինն եւ միշտ կոյսն Մարիամ ըստ յորջորջման նորին եւ ի Ս. Գրոց լուծմունք նոցին հոգեւոր իմաստիւք» ճառը: Այստեղ նրա խոսքը շատ անմիջական է եւ պատկերավոր:

Մաթուսաղա Քերթող (ծ.թ. անհայտ - մոտ 652 թ.): Սյունյաց թեմի առաջնորդն էր 634-652 թթ.: Ժամանակի հանրահայտ գիտնականներից էր, որին Օրբելյանը կոչել է «մեծ քերթող եւ անհաղթ փիլիսոփա»: Նա նաեւ եղել է Սյունյաց հռչակավոր վարդապետարանի ռաբունապետը: Կազմակերպել է Սահակ Պարթեւի եւ Մեսրոպ Մաշտոցի գործերի մեկնությունը: 633 թ. Կարինի ժողովում դավանաբանական վեճի ժամանակ կարդացվել է Եզր վեհափառի հրամանով գրած նրա թուղթը՝ ուղղված Բյուզանդիայի Հերակլ ինքնակալին, որով հեղինակը հիմնավորապես մերժել է քաղկեդոնականությունը:

Վրթանես Քերթողը (մոտ 550-617-ից հետո) Սյունյաց մետրոպոլիտն էր 559-582 թթ.: 604-607 թթ. եղել է նաեւ կաթողիկոսական տեղապահ Մովսես Եղիվարդեցու եւ Աբրահամ Ռշտունու միջեւ: Մեծ դեր է խաղացել նեստորականության եւ քաղկեդոնականության դեմ պայքարում: Վրթանեսին է վերագրվում Հայոց եւ Վրաց եկեղեցիների նշանավոր գործիչներին ուղղված նամակները, որոնք պահվում են «Գիրք թղթոց» պաշտոնական գրությունների հավաքածուի մեջ, ինչպես նաեւ Ուխտանեսի եւ Ուռհայեցու «Հայոց պատմություն»-ներում: Որպես ականատես նա գրել է նաեւ Ս. Հռիփսիմե տաճարի կառուցման պատմությունը: Նրա մատենագիտական գլխավոր գործը համարվում է «Յաղագս պատկերամարտից» երկը՝ ուղղված քրիստոնյա աշխարհում տարածված պատկերամարտության դեմ, որն իր հերթին ուղղված էր նաեւ ընդդեմ պատկերապաշտության: Այս տեսակետից հեղինակն անդրադառնում է հայոց եկեղեցու սրբերի՝ Գրիգոր Լուսավորիչի, Հռիփսիմեի, Շողակաթի եւ մյուս նահատակների որմնանկարներին:

Պատկերամարտության արմատները Բյուզանդիայում էին (4-9-րդ դարեր): Այդ պայքարն առավել սուր է արտահայտվել

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 4

Բակունցը որսաց բնության համր շարժումների լեզուն, այդպես արեւն է բարձրանում զենիթ, բողբոջն է ծիլ տալիս, քարաքոսն է աճում, եւ թռչունն ու կենդանին իրենց կյանքն են ապրում:

ՀԱՄԱՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հատված Ղեւոնդ Ալիշանի «Սիսական» տեղագրությունից 1
Ինքնավար Սյունիքի քայլերգը (Տիգրան Սազանդարյան) 1
Սյունյաց աշխարհի հորովել (Գուսան Աշոտ) 1
Խմբագրական. «Մեր ուղին պիտի հարթենք նաեւ հոգեւոր մաքառումով» (Սամվել Ալեքսանյան) 2
Գրական Սյունիք (Դավիթ Գասպարյան) 2
Սյունեցիները եւ հայ հին գրականությունը 8
Տիգրան Գրիգորյան 12
Գագիկ Դավթյան 14
Ավագ Եփրեմյան 16
Սուսաննա Գրիգորյան 17
Արկադի Ծատուրյան 18
Ապետնակ Գրիգորյան 19
Աշոտ Մինասյան 20
Վարուժան Գալստյան 20
Լեւոն Սահակյան 21
Դիանա Համբարձումյան 22
Մարի Առաքելյան 23
Հրանտ Գյուլասարյան 24
Սուսաննա Բաբաջանյան 25
Վարդան Ավետիսյան 26
Սուսաննա Խաչատրյան (Բակունց) 27
Արթուր Առաքելյան 28
Էդուարդ Հարենց 29
Ներսես Խառատյան 30
Հերմինե Նավասարդյան 31
Ռաիսա Ղարագյոզյան-Բոժկո 32
Արթուր Չերքեզյան 33
Հովիկ Ալեքսանյան 34
Դավիթ Հովհաննիսյան 35
Ավետիք Այվազյան 36
Վարդգես Խանոյան 37
Հայկուշ Օհանյան 38
Կամո Ալեքսանյան (Արաքս) 38
Ներսես Աղաբեկյան 39
Վարդան Սարգսյան 40
Արթուր Կարենց 41
Գարեգին Բաբայան 41
Սուրեն Գրիգոր 42
Վարդան Բեկլարյան 42
Բորիս Մինասյան 43
Նաիրի Սահյան 43
Արթուր Պատվականյան 44
Դուխիկ Հայրապետյան 45
Նինա Դանիելյան 45
Խոսք՝ «Սյունյաց երկիր. մշակութային» պարբերականի խմբագրակազմին (Էդուարդ Միլիտոնյան) 46
Հարցազրույց ՀԳՄ Սյունիքի բաժանմունքի նախագահ Լեւոն Սահակյանի հետ 46
Սյունյաց սարեր (Գուսան Աշոտ) 48
Զանգեզուր (Համո Սահյան) 48

Գրական Սյունիք

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ



ՍԵՐՈ ԽԱՆԶԱԴՅԱՆ



ԳՈՒՍԱՆ ԱՇՈՏ

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 3

8-9-րդ դարերում: Սրբապատկերների պաշտամունքը Բյուզանդիայում վերականգնել է հայազգի ինքնակալուհի Թեոդորան (842-856): Պատկերամարտությունը տարածվել է նաեւ եվրոպական այլ երկրներում եւ ընկալվել որպես Վերածննդի դարաշրջանի նախապատրաստական փուլ: Հայոց եկեղեցին մերժում էր ոչ միայն պատկերամարտությունը, այլեւ պատկերապաշտությունը եւ ընդունում իր պատկերահարգությունը:

Մովսես Քերթող: Սյունիքի մետրոպոլիտն էր 722-729 թթ.: Հայտնի է որպես խոշոր քերական, ինչպես նաեւ հոգեւոր երգերի հեղինակ ու թարգմանիչ: Ն.Ադոնցը Մովսես Քերթողին դնում է հույն քերական Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստ» աշխատության նշանավոր մեկնիչների շարքում: Մովսես Քերթողն իր մեկնության մեջ անդրադարձել է հայերենի հնչյունաբանությանը, դասակարգել խոսքի մասերը: Վերլուծել է նաեւ հոլովների, հոլովումների, բառաբարդման եւ քերականության այլ ոլորտներին առնչվող հարցեր:

Ստեփանոս Սյունեցի Երկրորդ (մոտ 660/670 - 735) ծնվել է Դվինում: Նրա մասին բավականաչափ հարուստ տեղեկություններ է թողել Օրբելյանը (նշվ. աշխ. էջ 147-168): Այս եւ այլ աղբյուրներից տեղեկանում ենք, որ Ստեփանոս Սյունեցին եղել է Դվինի ավագ քահանա Սահակի որդին: Կրթությունն ստացել է հայոց կաթողիկոսարանում, «սաստիկ խստակեցությամբ» ճգնել է Մաքենյաց վանքում: Այստեղ նա կազմել է «Տերունական տոների լուսաբանիչ եւ նահատակների հիշատակարան» գիրքը, որը հայտնի է «Տոնական» (701 թ.) անվամբ: Դավանաբանական վեճեր է մղել երկաբնակության հետեւորդ Հայաստանի ասպետ տիտղոսակիր Սմբատ Բագրատունու դեմ:

Գործունեությունը շարունակել է Սյունիքում, ուր աշակերտել է Մովսես եպիսկոպոսին: Կրթության եւ իմացությունների պակասը լրացրել է Հռոմում, Աթենքում, Կոստանդնուպոլսում: Միաժամանակ զբաղվել է թարգմանական գործունեությամբ: Դավանաբանական հարցերով նրան ընդունել եւ զրուցել է Բյուզանդիայի ինքնակալը և նրան շատ բարձր գնահատել: 728 թ. ձեռնադրվել է Սյունյաց թեմի առաջնորդ՝ մետրոպոլիտ: Սյունյաց 20-րդ թեմակալն էր: Սպանվել է մի անառակ կնոջ ձեռքով, որին քարոզի ժամանակ նախատինքի էր ենթարկել: Դեպքը տեղի էր ունեցել 735 թ. Մոզ քաղաքում: Թաղվել է Թանահատի վանքում:

10-րդ դարում գրվել է Ստեփանոս Սյունեցու ընդարձակ վարքը, որի բնագիրը թեեւ չի պահպանվել, բայց մեզ է հասել Կաղանկատվացու, Գանձակեցու, Այրիվանեցու եւ Օրբելյանի միջոցով: Օրբելյանը նրան մեծարում է «Սիւն երկնի, խարիսխ հաւատոյ» խոսքերով:

Գրել է շարականներ, սաղմոսներ, մեկնություններ, դավանաբանական տարատեսակ երկեր: «Ծննդոց» եւ «Յոբի» գրքերի մեկնությունները չեն պահպանվել: Հայտնի են հետեւյալ աշխատությունները՝ «Չորից Աւետարանաց մեկնութիւն», «Պատճառք եւ թելադրութիւն առաջին տեսլեանն Եզեկիէլի», «Մեկնութիւն Դանիէլի», «Մեկնութիւն ժամանակագրութեան», «Պատճառ հիմնարկութեան Սրբոյ եկեղեցւոյ», «Վասն անապականութեան մարմնոյն Քրիստոսի», «Վասն հաւատոյ դաւանութեան»: Նրա գրչին են պատկանում Դիոնիսիոս Թրակացու «Արուեստ քերականի» երկի մեկնությունը:

Բավականին շատ են Սյունեցու թարգմանական գործերը, որոնցից են Կեղծ Դիոնիսիոս Արիսպագացու «Յաղագս եկեղեցական եւ երկնային քահանայութեանց» (712), Կյուրեղ Ալեքսանդրացու «Գիրք պարապմանց» (715), Նեմեսիոս Եմեսացու «Յաղագս բնութեան մարդոյ» (717), Գրիգոր Նյուսացու «Յաղագս կազմութեան մարդոյ» (719), Գեորգիոս Պիսիդեսի «Յաղագս Վեցաւրեայ արարչութեան» եւ այլն:

Այս շարքը լրացնում է Օրբելյանը. *«Նրա նշանավոր գրվածքները ուրիշ մեկնիչների գործերի մեջ փայլում են պայծառ ջահի նման: Գրեց նաեւ բազմաթիվ ճառեր. ութ եղանակները բաժանեց, կարգեց, շարեց Հարության օրհնությունները, երգեց եւ քաղցրալուր կցուրդներ, հարմարեցրեց «Յինանց»-ի տաղաչափությունը յոթ եղանակներով՝ հույժ խորհրդավոր, ինչպես եւ պասերինը, որ երգվում են աղ ու հացի վրա. պարզաբանեց նաեւ գիշերային արարողության իմաստը»:*

Ստեփանոս Սյունեցուն է պատկանում նաեւ «Սուրբ Մեթոդիոսի Պատարի եպիսկոպոսի եւ նահատակի երազը՝ անցյալի, ներկայի եւ գալիքի մասին՝ Աստվածաշնչի քաղվածքներով հանդերձ» երկը:

Աշխատությունների մեջ Ստեփանոս Սյունեցին փառաբանում է Քրիստոսին, երանելի սուրբ նահատակներին, որոնք վանելով խորտակել են թշնամիներին:

Սյունեցու շարականներն ունեն գրական բարձր արժեք, գրված են ազատաչափով, անհանգ են, խոսքի կշռույթն առավելապես հնչերանգային է՝ ասացողական-երգեցիկ՝ ասերգային, որը, որպես հիմնակետ, բոլոր տների վերջում ունենում է կրկնվող, մի տեսակ կրկներգի դեր կատարող նույնական կամ նույնանման վերջավորություն:

Սյունեցին հայ պոեզիան հարստացրեց նորաբանություններով: Նրա ստեղծագործությանը քաջատեղյակ էր մեծն Գրիգոր Նարեկացին եւ ժառանգել ու շարունակել է նրա բառաստեղծական ավանդույթները:

Սահակադուխտ Սյունեցին Ստեփանոս Սյունեցու քույրն է: Ծննդյան եւ մահվան թվականներն անհայտ են: Երաժիշտ էր եւ բանաստեղծ: Եղել է միանձնուհի, ճգնել Գառնիի ձորի քարայրներից մեկում: Ունեցել է աշակերտներ եւ, որպես ամոթխած հավատացյալ, նրանց ուսուցանել վարագույրի ետեւից:

Հայտնի է Մեծացուսցե շարականների ոգով գրված նրա հոգեւոր երգերից մեկը, որը հիշատակել է Օրբելյանը, իսկ այն գտել եւ հրապարակել է Ն.Ծովականը: Կազմված է տասը տնից, որոնք բոլորն էլ ավարտվում են միեւնույն կրկներգով. «Օրհնեալ ես դու ի կանայս // Բերկրեալ Տիրամայր եւ կոյս...»: Տների առաջին տառերը բանաստեղծուհու անունով ծայրակապ են: Փառաբանում է սրբուհի Մարիամին՝ որպես «անապական տաճար», որպես «անդաստան հոգեւոր եւ համապայծառ ծաղիկ», որը «Հոգեհոս անձրեւէն՝ հովանաւորեալ ի քեզ // Պտղաբերեցեր ի Հաւրե...»: Նա է «Հաստատութիւն երկնի եւ երկրի, // Կենդանութեանց բաշխող»:

Ստեփանոս Օրբելյանը (1250/1260 - 1303) Օրբելյանների հայտնի տոհմից էր, որ Սյունիքում իշխանական դիրք ուներ 12-15-րդ դարերում: Կենսագրական հիմնական տվյալների աղբյուրն ինքն է: Ինչպես Մամիկոնյանների, այնպես եւ նրանց տոհմը սերել է Ճենաց աշխարհից: Ճենաստանից նրանք հեռացել են Ճենբավար արքայի մահից հետո: Օրբելյան ազգանունն առաջացել է Օրբեթ ամրոցից, որտեղ Ճենաստանից հետո հաստատվել են նրա նախնիները՝ Օրբեթ-Օրբուլ-Օրբել-Օրբելյան (Օրբելի): Օրբելյանի նախնիներն ապրել են Վրաստանում, երկրում եղել են երկրորդը եւ իրենց ձեռքում պահել սպարապետությունը: Այդպես եղել է թե՛ վրաց առաջին թագավոր Փառնավազի օրոք (Ք. ծ. ա. 337-302) եւ թե՛ Դավիթ Շինարարի (1089-1125): Օրբելյանները թագուհիներ են տվել վրաց գահին:

Ստեփանոսի պապը Սյունիքի կուսակալ Լիպարիտ Օրբելյանն էր, հայրը՝ Տարսայիճը, իշխանաց իշխան էր, նահանգի կուսակալ, աթաբեկ, ռազմաքաղաքական նշանավոր գործիչ: Տարսայիճը Լիպարիտի հինգ որդիներից կրտսերն էր: Նա ինը անգամ ճակատամարտ է վարել ու հաղթել: Դրա համար գնահատվել է Հալավու եւ Արղուն խաների կողմից եւ արժանացել բարձրագույն պարգեւի՝ «Ոսկե բարձի»: Նշանավոր դեմքեր էին նաեւ Տարսայիճի եղբայրները՝ Ելիկումը, Սմբատը, որոնք արժանացել են մոնղոլ խաների վստահությանը եւ հավասարակշիռ վիճակում պահել երկիրը: Նրանք բոլորը թաղված են Նորավանքի տոհմական դամբարանում:

Ստեփանոսի մայրը՝ Արուզ խաթունը, արաբ էր, որը քրիստոնեություն է ընդունում եւ դառնում ջերմեռանդ հավատացյալ:

Օրբելյանը կրթությունն ստացել է Տաթեւի վանքում: Եղել է դպիր, սարկավագ: Նորավանքում ձեռնադրվել է քահանա: Կրթությունը շարունակել է Գլաձորում՝ աշակերտելով Ներսես Մշեցուն: Դարձել է վարդապետ: Եպիսկոպոս ձեռնադրվելու համար հայրը նրան ուղարկում է Կիլիկիա, արժանանում է բարձր ընդունելության, հանդիպում Լեւոն Գ թագավորին, առաջարկում են հայոց կաթողիկոսության աթոռը: Նա չի համաձայնվում. եպիսկոպոս ձեռնադրվելով՝ հռչակվում է Սյունյաց մետրոպոլիտ, հայրապետի առաջին աթոռակալ եւ մեծարանքներով 1287 թ. վերադառնում: Ներկայանում է Արղուն խանին, որն իր հերթին հաստատում է նրա մետրոպոլիտությունը:

Եղել է հոգեւոր գործիչ, Սյունիքի մետրոպոլիտ, կառուցել ու վերակառուցել է եկեղեցիներ: Հայոց մատենագրության մեջ նա առավել հռչակված է իր «Սյունիքի պատմություն» («Պատմութիւն նահանգին Սիսական») աշխատությամբ: Հայտնի է նաեւ «Ժամանակագրութիւն» աշխատությամբ, որն ավարտվում է իր հոր մահվան թվականով (1290), ինչպես նաեւ «Ողբ ի Սուրբ Կաթուղիկեն» պոեմով:

Օրբելյանը միավորել է Սյունյաց թեմը, հաստատել խաղաղություն, նպաստել մատենագրության ծաղկմանը, տաճարների վերանորոգմանը եւ պայքարել արեւմտյան ազդեցությունների, հատկապես քաղկեդոնականության դեմ:

Վախճանվել է աղիների ու լյարդի բորբոքումից եւ թաղվել Նորավանքում:

«Սյունիքի պատմություն»-ը շարադրել է Ղազան խանի օրոք՝ 1299 թ.: Օրբելյանը շարունակել է հայոց նախարարական տների (առանձին աշխարհների) պատմագրության ավանդույթը՝ օրինակ ունենալով Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմություն»-ը, Թովմա Արծրունու «Արծրունյաց տան պատմություն»-ը եւ համանման այլ աշխատանքներ:

Նախադիր խոսքում իր գործը համարում է «Սիսական տան քաղցրալուր պատմությունների շարադրանք», «Նախնիների հիշատակարան», «Հիշատակաց մատյան»: Պատմիչն իր խոսքն սկսում է իմաստախոսությամբ. «Բոլոր գոյացությունների սկիզբն Աստված է, բոլոր բարիքների սկիզբը՝ սերը, բոլոր շնորհների սկիզբը՝ խոհականությունը»: Ըստ նրա՝ մարդը, չարի եւ բարու «սաղմն ընդունելով մտքի արգանդում <...>, ջանում է ծնել ու գլուխ բերել բաղձալին»: Այս մուտքով նա բացատրում է պատմություն գրելու դրդապատճառները: Վաղուց է նա մտածել գրելու «փառահեղ ու աստվածաբնակ Սյունիքի» մասին, ներկայացնելու եկեղեցիների պատմությունը, «Նախարարության հաջորդական սերնդափոխությունը», «Վսեմ ու աստվածամեծար հայրապետական աթոռի գահակալությունը»:

Որպես պատմիչ՝ Օրբելյանն արդեն նաեւ պատմաբան էր: Նա առաջինն էր, որ մատենագրություններին զուգահեռ օգտագործեց պատմագրական, ձեռագրական, վիմագրական, նամակագրական, պահոցային բոլոր աղբյուրները: Օրբելյանը պատմությունը գրել է՝ ուսումնասիրելով հայոց բոլոր պատմագիրների երկերը, ամփոփելով հին ու նոր զրույցները, Սյունյաց եպիսկոպոս Պետրոսի ճառերը, Սյունիքի իշխանների գրությունները, քարանձավների ամուր տեղերում եւ Տաթեւի միաբանությունում պահված գրքերն ու հիշատակարանները: Նրան բնորոշ են քննական հայացքը, քննադատական վերլուծությունը եւ համադրությունը: Շատ ուշադիր է բնագրերի հան-

> *Գուսան Աշոտը գորիսյան բնանկարի ու բնաշխարհի անբաժան մասն էր թե՛ իր մարդկային կերպարով եւ թե՛ իր անզուգական արվեստով: Հատկապես բացառիկ են «Սյունյաց սարեր», «Ծովաստղիկս», «Պախրա», «Հով սարեր, մով սարեր», «Սարի սիրուն յար», «Յար առանց քեզ», «Սերս վանքում Տաթեւի», «Գուսանն էն է» երգերը, որոնց մեջ խոսքն ու մեղեդին ներդաշնակորեն ձուլված են իրար. խոսքը մեղեդի է, մեղեդին՝ խոսք:*

Ոդեպ, որոնք երբեմն ներկայացնում են ամբողջական մեջբերումներով: Նրա խոսքի մեջ համադրված են գիտությունն ու գեղարվեստը, զարդարուն ոճը եւ պատկերավոր մտածողությունը:

Պատմիչը գրիչ է վերցնում նախնիների փառքը հաջորդ սերունդներին հասցնելու մտահոգությամբ, որպեսզի անգիտության չմատնեն անցյալի հիշատակներն ու «եկեղեցիների ժառանգությունը»: Նա ապավինում է ոչ միայն անցյալի սուրբ հայրապետերին, այլեւ ընթերցողի աղոթքներին: Ընդհանրապես ընթերցողի գործոնը շատ կարեւոր է միջնադարի համար, որ լրջորեն սկսում է գիտակցվել Շնորհալու, Ֆրիկի, ինչպես նաեւ Օրբելյանի կողմից:

Գալով ամենասկզբից՝ Օրբելյանը ներկայացնում է Սիսական նախարարական տոհմի սերումը, Այունյաց աշխարհի սահմանները, հարստությունները, գավառներն ու բերդերը: Այունիքը եւ Սիսականը բխեցնում է Սիսակ նահապետի անունից (Խորենացի): Իսկ նահապետ Սիսակը Հայկի սերունդից Գեղամի որդին էր, որի անունից էլ՝ Սիսական երկրամասը: Սիսականն, այո՛, բայց Այունիքի ստուգաբանությունը թերեւս գալիս է սյուն բառից՝ տեղանքին բնորոշ քարե սյուներից: Օրբելյանն օգտագործում է երկրի անվանման բոլոր հնարավոր ձեւերը՝ Այունիք, Սիսական, Այունյաց աշխարհ, Այունյաց տուն եւ այլն:

Այունիքը եղել է Հայաստանի 15 աշխարհներից 9-րդը եւ ունեցել 12 գավառ՝ Ծղուկ, Վայոց ձոր, Գեղարքունի, Սոտք, Աղահեճ («որ այժմ կոչվում է Քաշաթաղ կամ Խոժոռաբերդ»), Հաբանդ, Բաղք (Աճեն), Կովսական (Գրհամ), Արեւիք (Տաշտոն, Մեղրի), Ձորք (Կապան), Երնջակ, Գողթն, Ճահուկ: Այնուհետեւ թվարկվում են անառիկ բերդերը: Պատմիչն ամեն ինչ ներկայացնում է առասպելախառն պատմություններով, հիշատակում վայրերի հետ կապված ժողովրդական զրույցները: Պատմական դեպքերի հաջորդականության մեջ նա գիտակցաբար չի պահպանել ժամանակագրությունը եւ խնդրում է դա իրենից չպահանջել՝ «Չհետեւեցինք ժամանակագրական հաջորդականության»:

Դեռեւս Տրդատ Մեծի ժամանակներում Այունյաց իշխաններն արքունիքում եղել են առաջինների շարքում, թագավորության մեջ որպես երկրապահներ՝ երկրորդը, իսկ Այունիքի եպիսկոպոսը նստում էր Գրիգոր Լուսավորչի կողքին՝ աջից յոթերորդը:

Դրվագ առ դրվագ հյուսվում է Այունիքի պատմությունը, իրար են հաջորդում պատմական հայտնի դեպքեր ու իրադարձություններ, տեսնում ենք իշխանական եւ հոգեւոր առաջնորդներին, նրանց գործունեությունը: Տեղ-տեղ պատմիչի գրիչը դառնում է բանաստեղծորեն ներշնչված. «Սրտիս գործարանի բուռն բաղձանքը դրդում է միտքս՝ իմ այս շարադրանքի մեջ հոմերական քերթողությամբ ստեղծագործել, հորինել ելեւէջուն գեղեցիկ տողեր, հյուսել ախորժալուր գովեստներ...»:

Օրբելյանը բնականորեն չի սահմանափակվում Այունիքում կատարվող իրադարձություններով, որովհետեւ ամեն ինչ պայմանավորված էր երկրի պատմությամբ: Այդ անհրաժեշտությամբ անդրադառնում է Բագրատունիների թագավորության ստեղծմանը (885), «անիծյալ» Յուսուֆի հարձակումներին Հայաստանի վրա, սուլթան Ջալալեդդինի արշավանքներին, թաթարմոնղոլների պատմությանը եւ այլն:

Գրքի ԿԵ, ԿԶ գլուխներում անդրադառնում է իր տոհմաբանությանը, որպես հայրենասեր գործիչներ մեծարում հորն ու հորեղբայրներին:

Գիրքն ավարտվում է հիշատակարանով, որի մեջ օրհնություն, պատիվ ու երկրպագություն է տալիս Աստծուն իր այս գործն ավարտին հասցնելու համար: Օրբելյանն իրականացրել է իր առջեւ դրած խնդիրը՝ ստեղծելով Այունիքի քննական եւ ամբողջական պատմություն: Պատմագիտական երկ լինելով՝ այն ունի նաեւ գեղարվեստական արժանիքներ՝ պատմական կերպարները կերտված են գեղարվեստորեն, առկա է դիպաշար, խոսքն առասպելախառն է, լեզուն՝ պատկերավոր:

Օրբելյանի գեղարվեստական նախասիրություններն առավել լավ արտահայտվեցին «Ողբ ի Սուրբ Կաթուղիկեն» պոեմում՝ գրված 1300 թ.: Հեղինակը ողբում է «արքայուհի» Կաթուղիկեն՝ Էջմիածնի Մայր տաճարը: Արարատյան դաշտից «բարձրագուժ եւ ահագին» ձայն է լսվում: Այդ ձայնի վրա հավաքվում է ժողովուրդը, շտապում Վաղարշապատ եւ տեսնում արքայուհին «Մերկ, խայտառակ ի բաթրոնին»: Մայր տաճարը, կերպարանք առած, քարով կուրծքն է ծեծում եւ մոխիր ցանում գլխին: Դուստր եկեղեցիները՝ որպես կանանց ջայլ, ողբում են նրա հետ մեկտեղ: Եկեղեցիները զրկվել են առաջվա փառքից ու գեղեցկությունից եւ դարձել չորքոտանիների ու թուրքերի կոխան: Այս ամենը հետեւանք է երկրի ողբալի վիճակի, որովհետեւ չկան երկրի իսկական տերերը, նրանց փոխարեն անհավատներն են: Մայր տաճարը վայ է կանչում եւ բարձրաձայն շարունակում ողբը՝ ի՞նչ էի, ի՞նչ դարձա. «Յերկնից յերկիր զիս իջուցին, // Խորք անդնդոց զիս ծածկեցին»: «Ա՜յ, վայ, քեզ վա՜յ...», - ասում է նա եւ հիշում հայոց հնամենի փառքը՝ արքայական ու նախարարական տները, շեն քաղաքներն ու մարդաշատ վանքերը: Հայրենասեր պատմիչն ու բանաստեղծը Էջմիածնի Մայր տաճարի անունից ողբում է հայոց ճակատագիրը, Ասքանազյան աշխարհի կործանումը: Սակայն Օրբելյանը չի մատնվում վերջնական հուսահատության, այլ լավ օրերի սպասումով շարունակում է. «Թողո՛ւմք զողբանիս ցավագին, // Առնե՛մք աւարտ լալեաց բանին, // Յուսահատիլ չէ պարտ բնաւին»:

Կգա «նորոգումը», եւ հայոց ազգն իր թագավորներով ու եկեղեցիներով ոտքի կկանգնի՝ երազում է հեղինակը:

Ստեփանոս Օրբելյանը Այունյաց աշխարհի պատմությամբ իր հաստատուն տեղը գրավեց հայոց պատմիչների շարքում եւ կորուստից փրկեց ու հիշողությանը հանձնեց բազմաթիվ փաստեր, թվեր, անձնանուններ ու տեղանուններ: Այն, ինչպես իր ժամանակ, այնպես եւ այսօր դիտվում է հայոց պատմագրության կոթողային երկ, որից օգտվել եւ դեռ կօգտվեն շատ ու շատ սերունդներ:

Հովհան (Հովհաննես) Որոտնեցին (1315 - 1386) ժամանակին հայտնի էր նաեւ Կախիկ մականունով: Ծնվել է Այունիքի Որոտան գավառի Վաղադնի գյուղում: Նա Այունյաց մեծ իշխան Իվանեի որդին էր: Գլաձոր համալսարանում աշակերտել է Եսայի Նչեցուն: Զբաղվել է մանկավարժական եւ գիտական գործունեությամբ: Հետագա տարիներին նրան տեսնում ենք Դարանաղյաց գավառում, իսկ կյանքի վերջին տարիներին՝ Տաթեւի եւ Ապրակունիսի վանքերում: Նա Տաթեւի համալսարանի եւ Ապրակունիսի վանական դպրոցի հիմնադիրն է: Մահացել է 71 տարեկանում եւ թաղվել Երնջակի Սուրբ Գեւորգ վանքում:

Որոտնեցին հայտնի է որպես փիլիսոփա, աստվածաբան, հոգեւոր եւ քաղաքական գործիչ: Նա հռչակված ուսուցչապետ էր եւ թողել է գիտուն աշակերտների մի քանի սերունդներ: Համախոհների հետ մեկտեղ պայքարել է կաթոլիկ եկեղեցու ոտնձգությունների դեմ, որն ամբողջ միջնադարում փորձում էր իրեն ենթարկել հայոց եկեղեցին:

Նրա աշակերտներից էր Գրիգոր Տաթեւացին, որը գրի է առել նրա դասախոսությունները: Դրանք հիմնականում փիլիսոփայական աշխատություններ են՝ նվիրված Արիստոտելի, Փիլոն Ալեքսանդրացու եւ Պորփյուրի աշխատությունների վերլուծությանը: Նրա համար ամեն ինչի սկիզբն Աստված էր. այդ գաղափարախոսությունն էլ իշխում է նրա աշխատությունների, հատկապես աստվածաբանական-դավանաբանական երկերի, նաեւ ճառերի ու քարոզների մեջ: Նա քարոզել է հոգու անմահության գաղափարը, ըստ որի՝ մարդու մահվանից հետո ապրում է նրա հոգին:

Որոտնեցին մնայուն հետք է թողել նաեւ իմացաբանության եւ տրամաբանության ասպարեզում: Մատենադարանում պահվում է նրա փիլիսոփայական աշխատությունների ժողովածուն (ձեռագիր 4268): 1956 թ. հրատարակվել են նրա «Յովհաննու Որոտնեցւոյ հաւաքեալ ի բանից իմաստասիրաց», «Վերլուծութիւն «Ստորագրութեանց» Արիստոտէլի», «Համառաւտ վերլուծութիւն Պորփիւրի դժուարալուծիցն» աշխատությունները:

Գրիգոր Տաթեւացին (1346-1409) եղել է մեծահռչակ հոգեւոր գործիչ, փիլիսոփա եւ ուսուցիչ: Նրա «Գիրք հարցմանց» աշխատությունն ունի երկու տարբերակ՝ փոքր (1387) եւ մեծ (1397), տպագրվել է 1729-ին Կոստանդնուպոլսում: «Գիրք քարոզութեան»-ը (1407) կազմված է երկու հատորից՝ «Ձմերան հատոր», «Ամարան հատոր», որոնք եւս 1740-1741 թթ. տպագրվել են Կոստանդնուպոլսում: Հետագայում նա գրել է այլ քարոզներ, որոնց թիվը հասնում է 400-ի: Դրանք նվիրված են հոգեւոր տոներին եւ պատվիրանների բարոյական նշանակությանը: Ունեն գրական լուրջ արժեք:

«Գիրք հարցմանց»-ը հարց ու պատասխանի ձեւով լուսաբանում է կրոնական հարցեր: Խոսում է աղանդների մասին՝ հավատացյալներին ցույց տալով ճշմարիտ ճանապարհը:

Տաթեւացու գրչին է պատկանում նաեւ «Ոսկեփորիկ» (1401) ժողովածուն, որը եւս կրոնական հարցերի պատասխաններ ու բացատրություններ է պարունակում: Քանի որ Սուրբ Երրորդությունը ոսկու արժեք ունի քրիստոնեության համար, այստեղից էլ գրքի «Ոսկեփորիկ» վերնագիրը:

Տաթեւացին գրել է նաեւ կրոնական (Սաղմոսներ, Երգ երգոց, Առակաց, Հոբի, Մատթեոսի եւ Հովհաննու ավետարաններ), փիլիսոփայական (Արիստոտել, Պորփյուր, Դավիթ Անհաղթ) մեկնություններ: Նա շարունակել է իր ուսուցչի՝ Հովհան Որոտնեցու ավանդույթները:

Առաքել Այունեցին (1350/1360 - 1430) եղել է բանաստեղծ, գիտնական, մանկավարժ: Գրիգոր Տաթեւացու քրոջ որդին էր եւ որպես Տաթեւի համալսարանի ուսուցչապետ շարունակել է թե՛ Տաթեւացու, թե՛ Որոտնեցու ավանդույթները: Թողել է բավականին հարուստ ժառանգություն, զբաղվել է գրչության արվեստով: Առավել հայտնի է նրա «Ադամգիրք» պոեմը:

Առաքել Այունեցու կյանքի եւ ստեղծագործության տարիները զուգադիպել են Լենկ Թեմուրի ամայացնող արշավանքներին:

«Ադամգիրք»-երն ստեղծվել են 1401-1403 թթ.: Դրանք չորսն են, որոնցից յուրաքանչյուրն ունի իր հիշատակարանը: Ա գրքի հիշատակարանում հիշում է ծնողներին՝ հորը՝ Դավիթ, մորը՝ Մելիք, եղբորը՝ Բարսեղ (եղել է քահանա), բոլորն էլ հանգուցյալ: Հիշատակարաններում Այունեցին անդրադառնում է նաեւ «ճգնազգեաց» «դասասաց» մեծ վարդապետին՝ Գրիգոր Տաթեւացուն, որի «հրամանաւ» էլ գրել է «Ադամգիրք»-ը: Նրան բնորոշում է այս տողերով. «Ռաբունապետ յոյժ պանծալի, // Ծով իմաստից ծաւալք շնորհի, // Ի նոյն շնորհէ մասն ինչ առի, // Զոտանաւորքս շարագրեցի»:

Այունեցու գրական ժառանգությունից հրատարակվել են «Լուծմունք յաղագս Սահմանաց Դաւթի Անյաղթ փիլիսոփայի», «Քերթուածներ», «Դրախտագիրք», «Մեկնութիւն քերականին», «Սահմանադրութիւն դաստիարակութեան նորածնեալ մանկանց» երկերը: «Ադամգիրք»-ը 1721, 1799 թվականներին հրատարակվել է Կոստանդնուպոլսում, 1907-ին՝ Վենետիկում, 1989-ին՝ Երեւանում, սրանց ձեռագրերը պահվում են Երեւանի, Երուսաղեմի, Վենետիկի մատենադարաններում:

«Ադամգիրք»-ն, ըստ հեղինակի, պարունակում է «Բանք հարմարականք եւ պատմութիւնք պատշաճաւորք յաղագս նախնեացն Ադամայ եւ Եվայի»: Շարադրանքի համար ստեղծել է թեթեւ տողաչափ՝ 8=4+4, յուրաքանչյուր քառատող ունի իր հանգը, պատումը բավականին շարժուն է եւ արագ:

Ամեն ինչ սկսում է աշխարհի արարչությունից: Աստված հողից ստեղծում է Ադամին, ապա Ադամի կողից ստեղծում է Եվային: Աստծու արարչության դեմ միավորվում են չար ուժերը, որպեսզի խորտակեն առաջին մարդուն: Չարի նախապատճառներն են՝ բանսարկությունը, նախանձը, օձը, չար լեզուն, Եվայի անհանճար միտքը, որը դաշինքի մեջ է մտնում օձի հետ: Օձը նրա միտքը կախարդում է եւ խելքից հանում: Եվան ուտում է խնձորը, համոզում Ադամին, որ նա էլ ուտի: Հաջորդ պահին Ադամը փոշմանում է, բայց արդեն ուշ էր: Ահավոր ցավից նա ողբ է ասում ու վայ կանչում. «Վա՜յ այն աւուրն, որ ես ստեղծայ, // Վա՜յ այն ժամին, որ խաբեցայ...»: Դրախտից արտաքսված Ադամի առջեւ կանգնում են ահեղ դատաստանի ու դժոխքի տանջանքների պատկերները: Գեհենի կրակների մեջ Ադամն ավելի հստակ է տեսնում իր գլխին եկած փորձանքը: Այունեցին դատողություններ է անում չար ուժի մասին, պարզում նրա որտեղից եւ ինչ լինելը: Ըստ նրա՝ չարի դեմ բարին է, որի մարմնավորումը մարդն է. «Մարդու պատկեր է արարչին, // Տիպ եւ նըման յոյժ հրաշագին...»:

Հաջորդում է Աստծու եւ Ադամի երկխոսությունը: Աստված հարցեր է տալիս դրախտից վտարվելու մասին, իսկ Ադամը պատասխանում է: Զրույցին խառնվում է Եվան: Պոեմն ստանում է թատերգական կառուցվածք: Ադամն ու Եվան խոստովանում են, որ խաբվել են: Տերը խոսում է նաեւ օձի հետ: Գործողություններին՝ որպես գործող անձ, միջամտում է նաեւ հեղինակը՝ «Մեք ասենք»: Աստված Ադամի եւ Եվայի համար ապրելու նոր կարգ է սահմանում. «Եվ դու, պատճառ չարեցըդ կին, // Դառըն ցաւաւք ծնանիս զորդին», իսկ Ադամի առջեւ դրախտի ծաղիկների փոխարեն փուշ տատասկ են բուսնում, եւ նա դատապարտվում է ծանր հոգսի. «Զհաց քո ուտես քրտմամբ ի լի»: Այդուհետեւ դրախտը նրանց համար մնում է որպես երանելի հիշողություն:

Ադամն իր կողոսկրի ողբն է անում: Քանի կողն իրենն էր, Ադամն անմահ էր, կողից Եվան ստեղծվեց, եւ աշխարհն իմացավ, թե ինչ է մահը: Եվայի հանդեպ բանաստեղծի վրդովմունքը հասնում է նախատինքի:

Իսկ վերջին գլուխներում բանաստեղծը կերպավորում եւ փառաբանում է Քրիստոսին:

«Ադամգիրք»-ը, ինչպես ակնարկեցինք, բաղկացած է չորս գրքից: Առաջինը, որին անդրադարձանք, ծավալուն շարադրանք է: Նույն մոտիվը նա անընդհատ բացում ու զարգացնում է նորովի: Աստվածաշնչյան առասպելը բացահայտվում է ոչ միայն հիմնական խորհրդանիշերով, այլեւ բովանդակային խորքով: Կան կերպարներ, բնավորություններ. Ադամի եւ Եվայի մեղքի խորքում Աստծու եւ սատանայի պայքարն է: Ադամն ու Եվան պետք է փորձության ենթարկվեին, որպեսզի ավելի խոր կապվեին իրենց ստեղծողին եւ հայցեին նրա ողորմածությունը:

«Ադամգիրք» Ա-ին հաջորդում են Բ-ն, Գ-ն եւ Դ-ն, որոնցում այլ տողաչափի ու ծավալի մեջ արծարծվում է նույն նյութը:

Ադամի եւ Եվայի դիպաշարը բազմիցս արծարծվել է համաշխարհային կերպարվեստի ու գրականության մեջ: Դեռ պետք է գրվեին Ջոն Միլթոնի (1608-1674) «Դրախտ կորուսյալ» եւ «Վերագտնված դրախտ» գործերը: Ադամապատումի այս ճանապարհին հայ գրականությունը եւս, հանձին Առաքել Այունեցու, ասաց իր խոսքը:

Միջնադարի գրական Այունիքն այսպիսի բարձր արժեքներով է ներկայանում նոր ժամանակներին, ունի համազգային նշանակություն եւ որպես այդպիսին ծանրակշիռ ավանդույթներ փոխանցվեց հետագա ժամանակներին: Միջնադարը շարունակվում է նոր ժամանակներում:

Բ. Նորագույն շրջան

Նորագույն շրջանում սյունիքյան գրականության առաջին իսկական ներկայացուցիչը Ակսել Բակունցն (Ալեքսանդր Թեւոսյան, 1899-1937) է: Նա ոչ միայն Գորիսից մտավ հայ գրականություն պատմության մեջ, այլեւ Գորիսը մտցրեց հայ գրականություն: Նա ճիշտ հայ միջնադարյան մատենագիրների գործի շարունակողն էր՝ նախկին ժամանակագրություններից օգտվելու, նախկին գրական տեսակները նորոգելու, բառերի ժլատ տնտեսման իր սկզբունքներով:

Բակունցը կրթությունն ստացավ հայրենի քաղաքում (1905-1910), շարունակեց Գեւորգյան ճեմարանում: 1918-ին գործող բանակի շարքերում Էրզրումում, Իլիջայում, Կարսում, Մամախաթունում մասնակցել է կռիվների, այդ թվում՝ Սարդարապատի հերոսամարտին: 1919-1920-ին ուսանել է Թիֆլիսի պոլիտեխնիկական, 1920-1923-ին՝ Խարկովի գյուղատնտեսական ինստիտուտներում: Հետագա տարիներին Գորիսում (մինչև 1926-ի մարտը) եւ Երեւանում աշխատել է գյուղատնտեսի մասնագիտությամբ եւ ապա անցել միմիայն ստեղծագործական աշխատանքի:

Բակունցը գրականություն մտավ գորիսյան տպավորություններով, որոնք նախ՝ արտացոլեց ակնարկների մեջ («Գավառական նամականի», «Մեր գյուղերում»), այնուհետեւ՝ պատմվածքների: «Մթնաձոր» (1927) ժողովածուն մի նոր խոսք էր հայ արձակի մեջ: Գրականություն մտավ մի նոր բնաշ-

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 6

Գրական Սյունիք



ՍՈՒՐԵՆ ԱՅՎԱԶՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՍԵՎՈՒՆՑ

ՇՈՂԻԿ ՍԱՖՅԱՆ

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 5

խարի, արտացոլվեցին նոր կերպարներ և նոր բնավորություններ: Դա հենց Գորիսն է՝ իր գյուղական ու քաղաքային կերպարներով, մարդկային նկարագրերով ու հոգեբանությամբ: Բակունցը դրանով ցանկացավ ասել, որ ժամանակակից գրականություն կարելի է ստեղծել ոչ միայն մեծ քաղաքների նյութով, այլեւ անհայտության մեջ կորած գյուղերի վարք ու բարքի, մարդկանց հոգեբանության կերպավորումով: Վերամբարձ գաղափարական ճառերին Բակունցը հակադրեց բուն երկիրն ու բուն երկրի մարդու ճակատագիրը:

Այս մտայնությունը խորացավ Բակունցի պատմվածքների մյուս ժողովածուներում՝ «Սպիտակ ձին» (1929), «Սեւ ցելերի սերմնացանը» (1933), «Անձրեւը» (1935):

Բակունցի պատմվածքների յուրահատկությունը դրանց խիստ տեղայնության մեջ է, ինչն էլ իր հետ բերում է մարդկային կերպարների, բնաշխարհի, կենցաղի, բարբառի տեղային շունչ ու երանգ: Մեծը (համամարդկայինը) Բակունցը որոնում է փոքրի (աննշան թվացող մարդկանց) մեջ: Իսկ իրականում մեծն ու փոքրը նրա համար նշանակություն չունեն, որովհետեւ մեծը միաժամանակ փոքր է, փոքրը՝ միաժամանակ մեծ:

Որպես գրող Բակունցը եզակի է, որովհետեւ գտավ գորիսյան բնաշխարհի ու միջավայրի գրական լեզուն: Բնության հավերժական շնչառության հանգստությունն ու հանդարտությունը կա անգամ նրա ողբերգական լուծում ունեցող գործերում, ասես անտառում քամուց մի ծառ տապալվեց, կայծակը խփեց ժայռին, կամ որսորդի գնդակը դիպավ միրհավին:

Այս ամենով Բակունցը նաեւ տեղային գուներանգի խոշոր գեղանկարիչ է, ինչն իր դեպքում արտահայտվում է բառանկարով: Այդպես նա ստեղծեց Հայաստանի իր նկարաշարը, որոնք նրա պատմվածքներն են: Բառի ու նկարագրության մեջ երեւում է գույնը, գիծը, շարժումը:

Խորքում արվեստը միասնական է՝ բառը, գույնը, հնչյունը գալիս են նույն ակունքից եւ միայն արտահայտվելիս են ընդունում տարբեր ձեւեր՝ որպես բառի արվեստ, գույնի արվեստ, հնչյունի արվեստ: Բակունցի ստեղծագործության մեջ այդ ամենը շատ միասնական է, որովհետեւ նրա բառի (խոսքի) մեջ ոչ միայն գույնն է, այլեւ մեղեդին եւ հատկապես այն հատվածներում, որտեղ հերոսները խոսում են բարբառով: Այստեղ ձայնն ինքնին մեղեդի է, որն ունի իր յուրահատուկ երանգը, հնչերանգը, շեշտադրումն ու կշռույթը:

Բակունցը որսաց բնության համր շարժումների լեզուն, այդպես արեւն է բարձրանում զենիթ, բողբոջն է ծիլ տալիս, քարքոսն է աճում, եւ թռչունն ու կենդանին իրենց կյանքն են ապրում: Այդպես է ապրում նաեւ գորիսյան բնաշխարհի մարդը, որի համար իր կյանքն իր լեռնաշխարհում ոչ թե խոսք է՝ որպես զրույց, այլ ներկայացում՝ ինքն իր հետ, ինքն իր մեջ, նաեւ ինքն իր համար: Համենայնդեպս, այդպես է իր հերոսներին տեսել Բակունցը, որովհետեւ ինքն էլ նրանցից մեկն էր, որն ուզում էր չկորցնել ամենաթանկը՝ ի՛ր իրականությունը եւ ի՛ր խոսքի հարազատությունը՝ որպես արյունակցական կապ:

Գորիսյան կյանքի համապատկերը նա ներկայացրեց «Կյորես» (1936) վիպակում: Հին ու նոր Գորիսը, հին ու նոր ժամանակների բարքերը, քաղաքային կյանքի ամբողջական նկարագիրը մի նոր երանգ հաղորդեցին նրա ստեղծագործությանը: «Կյորես»-ում Բակունցը հիշատակում ու բնութագրում է շուրջ 150 հերոսի, որոնց մեջ կան գլխավորներ, երկրորդականներ, լրացյալներ, բայց վիպակի գլխավոր հերոսը հենց Գորիսն է՝ որպես քաղաք, որպես հին ու նոր գորիսեցիների վեճերի ու հաշտության հանդիսավայր: Չարենցը որպես գլխավոր հերոս կերտեց իր ծննդավայր Կարսը, Մահարին՝ իր ծննդավայր Վանը («Մանկություն», «Պատանեկություն», հետագայում «Այրվող այգեստաններ»), Բակունցը՝ իր ծննդավայր Գորիսը: Հանձին Բակունցի Գորիսն ստացավ գրական անձնագիր ու գրանցում:

Բակունցը գնում էր գրական հերոսացման. արձակի նրբագեղ ձեւերից նա անցավ վիպակների եւ վեպերի: Գեղարվեստական գրականություն ստեղծելու հետ մեկտեղ նաեւ գրական գործիչ էր, մասնակցում էր գրական բանավեճերի, ելույթներ ունենում համագումարներում, մշակում գեղարվեստի զարգացման տեսական սկզբունքները, Չարենցի, Մահարու, Արմենի հետ մեկտեղ «Նոյեմբեր» խմբակցության գաղափարական դիրքերից պայքար մղում պրոլետարական գրողների ապազգային ու հակագրական գործունեության դեմ... Այդ ճանապարհին էլ նա նահատակվեց: Նա սկզբունքի մարդ էր, արվեստի իսկական գործիչ եւ որպես այդպիսին՝ իսկական հերոս, որը զոհ գնաց անհավասար կռվում: Այդպիսիններն ավելին են, քան սոսկ գրողը, որովհետեւ բարձր գրականությունը դարձնում են պայքարի միջոց՝ հանուն ճշմարտության, հանուն ազգային եւ համամարդկային արժեքների: Հերոսների կյանքը թռիչքի մեջ է ընդհատվում, բայց նրանց չապրած տարիները եւս նույն հերոսական կյանքի շարունակությունն են: Դա մի սխրալի սերունդ էր, որի ներկայացուցիչներն ապրած տարիներին իսկ արդեն դասականներ էին եւ նրանց մեջ Ակսել Բակունցը՝ Սյունյաց աշխարհի գրական քարտեզագիրը, բանահավաքը, մատենագիրը, տաղասացն ու քնարերգուն:

Գորիսյան կյանքի նշանավոր երգիչը Գուսան Աշոտը (Աշոտ Դադալյան, 1907-1989) ծնվել է Գորիսում: Որպես գառնարած չափչփել է հայրենի բնաշխարհի սարերն ու ձորերը եւ սրինգը ձեռքին նվագել գառների համար: Սրինգը շուտով դառնում է քամանչա, եւ 1928-ից զբաղվում է գուսանական արվեստով: 1958-ին դարձել է ԽՍՀՄ գրողների միության անդամ: 1967-ին արժանիորեն ստացել է Հայաստանի ժողովրդական արտիստի կոչում: Լույս են տեսել նրա «Աշուղական երգեր» (1946), «Գուսանի սերը» (1955, 1958), «Սիրո կրակներ» (1971), «Սրտի նվագներ» (1979), «Ծովաստղիկս» (1982) ժողովածուները:

Գուսանը գորիսյան բնանկարի ու բնաշխարհի անբաժան մասն էր թե՛ իր մարդկային կերպարով եւ թե՛ իր անզուգական արվեստով: Հատկապես բացառիկ են «Սյունյաց սարեր», «Ծովաստղիկս», «Պախրա», «Հով սարեր, մով սարեր», «Սարի սիրուն յար», «Յար առանց քեզ», «Սերս վանքում Տաթեւի», «Գուսանն էն է» երգերը, որոնց մեջ խոսքն ու մեղեդին ներդաշնակորեն ձուլված են իրար. խոսքը մեղեդի է, մեղեդին՝ խոսք: Այդ ամենն ունեն բնաշխարհիկ մաքրություն, հեռու են օտար ազդեցություններից: Այդ մեղեդու մեջ սարերի սյուքն է, աղբյուրների կարկաչը, վերձիգ սյուների անհողդողդ ամրությունը, պախրայի կանչը, լեռնալանջերից ձորերին նայող քարափների երգը, թռչունների դայլայլը, կաքավի շաղկան...Եվ ամենակարեւորը՝ այդ մեղեդու մեջ սիրո կարոտակեզ հառաչն է, մարդկային հոգու ձայնը, ապրումների նուրբ ու խոր աշխարհը: Աշոտի երգերը վաղուց մեր ժողովրդի հոգեւոր գանձարանում են եւ իրենց անփոխարինելի տեղն ունեն ժամանակակից հայ մարդու հոգեկերտվածքի ձեւավորման գործում: Դրանք իսկական հոգու երգեր են, որոնք ոչ միայն լսում ես, այլեւ՝ ապրում:

Աշոտը 20-րդ դարում հաստատուն պահեց հայ գուսանական-աշուղական արվեստը եւ դարձավ Սայաթ-Նովայի, Ջիվանու, Շերամի լավագույն ավանդույթների կրողն ու շարունակողը: Գորիսում նրան բոլորը հիշում են Գուսան անունով: Ասում են՝ Գուսանը, բառ, որ իր մեջ մարմնավորում է եւ՛ նրա մարդկային կերպարը, եւ՛ նրա արվեստը:

Ես ինքս տարիներ առաջ առիթ ունեցել եմ Սերո Խանզադյանի եւ Վարդգես Պետրոսյանի հետ Գորիսում հյուրընկալվելու նրա եւ նրա կնոջ երգի ու խոսքի հոգեշահ միջավայրում: Վեհացնող, մաքրագործող մի թանկ զգացում է մնացել այդ հանդիպումից:

Գարեգին Սեւունցը (Գարեգին Սեւիի Գրիգորյան, 1911-1969) ծնվել է Խնձորեսկում: Բարձրագույն կրթություն է ստացել Մոսկվայի համալսարանի կենսաբանական բաժանմունքում, սովորել ռազմաօդային եւ սպայական դասընթացներում: Աշխատել է Բաքվի հայ մամուլում՝ «Կոմունիստ», «Խորհրդային գրող»: Ծառայել է խորհրդային բանակում: 1945-ից մշտական բնակություն է հաստատել Երեւանում: Եղել է «Պիոներ» ամսագրի գլխավոր խմբագիրը (1946-1952), արտասահմանյան երկրների հետ բարեկամության եւ մշակութային կապի հայկական ընկերության նախագահը (1952-1954), Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար (1954-1959): Պարգեւատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի երկու շքանշանով:

Սեւունցի առաջին պատմվածքը լույս է տեսել 1928-ին: Այնուհետեւ մեկը մյուսի հետեւից տպագրվել են նրա պատմվածքների ժողովածուները, վիպակներն ու վեպերը՝ «Դեպի երկիր» (1935), «Ծովախորշում» (1938), «Վիշապասարի աղջիկը» (1945), «Առաջին շարք» (1947), «Ազատության պողոտա» (1947): Նրան հատկապես մեծ հռչակ բերեցին իրականական կյանքի պատկերները: Առաջին գիրքը վերնագրված էր «Իրականական նոթեր» (1949), որի մեջ պարսկական կյանքի իրական տպավորություններն էին: Դրան հաջորդեց «Թեհրան» երկհատոր վեպը, որն ունեցավ մի քանի հրատարակություն (1952, 1953, 1945, 1973): 1954-ին վեպի հրատարակությունն իրականացվեց Բեյրութում: Սա ժամանակի ամենաընթերցվող գրքերից էր: Ընթերցողին հատկապես գրավում էին կենդանի ու հետաքրքրաշարժ դիպաշարը, արտասահմանի կյանքը: Հաջողություն ունեցավ նաեւ «Գերիներ» (1958) վեպը՝ պատերազմական տարիների կյանքի մանրամասներով եւ դարձյալ հետաքրքրաշարժ դիպաշարով: Սեւունցի գրչին բնորոշ էր ակնարկային պարզությունը: Պատահական չեն նրա «Դանուբից Գանգես» (1957), «Վիետնամի գարունը» (1960) գրքերի ծնունդը, որոնք ճամփորդական նոթեր ու տպավորություններ են: Այն տարիներին այսպիսի գրքերն ընթերցող էին գրավում: Լույս է տեսել նաեւ նրա «Երկեր»-ի հինգհատորյա ժողովածուն (1963-1965): Հետմահու տպագրվել են «Պետական գաղտնիք» (1967), «Կյանքը թեւերի վրա» (1984) եւ պատմվածքների ու վիպակների երկու ժողովածու՝ «Չիկա» (1968), «Այն օրերին» (1979):

Համո Սահյանը (1914-1993) ծնվել է Սիսիանի Լոր գյուղում: Սյունյաց աշխարհի մարդկանց, սար ու ձորին հայացք ուղղեց ճիշտ այնպես, ինչպես իր ավագ հոգեեղբայր Բակունցը: Մի կողմում այդ աշխարհի քնարական արձակն է, մյուս կողմում՝ քնարական բանաստեղծությունը: Այս ամենը՝ որպես գեղարվեստական աշխարհ, այնքա՜ն միասնական է, որքան սյունյաց բնաշխարհը:

Սահյանը գրական ճանապարհն սկսել է 1930-ականներին, բայց կայացել է 1940-ական թվականներին: Նախորդ տասնամյակը հիշողությամբ ու մի քանի բանաստեղծությամբ է միայն նրա համար գրական անցյալ: 1946-ին լույս տեսավ անդրանիկ ժողովածուն՝ «Որոտանի եզերքին», որ դարձավ նրա համար ստեղծագործական ուղենիշ: Պատերազմից հետո գեղարվեստին պարտադրվող կյանքի գունազարդմանք, անկոնֆլիկտայնության և սխեմատիզմի տարիներին հրատարակեց երեք գիրք՝ «Առագաստ» (1947), «Սլացքի մեջ» (1950), «Ծիածանը տափաստանում» (1953), որոնց բովանդակության համար հետո ամոթի զգացումով զղջաց: Սահյանը դեպի Համո Սահյան ճանապարհ հարթեց «Բարձունքի վրա» (1955) եւ «Նաիրյան դալար բարդի» (1958) ժողովածուներով: Դրանից հետո Սահյանն արդեն իր գեղարվեստական աշխարհի տերն ու տիրակալն էր, որ շունչ ու կերպ ստացավ «Մայրամուտից առաջ» (1964), «Քարափների երգը» (1968), «Տարիներս» (1970), «Սեզամ, բացվիր» (1972), «Իրիկնահաց» (1977), «Ժայռից մասուր է կաթում» (1979), «Դաղձի ծաղիկ» (1986), «Ինձ բացակա չդնեք» (1998, ետմահու) գրքերում:

Սահյանը կայուն ու հաստատուն արժեքների բանաստեղծ է, որ չափվում է բնության հազարամյակների կյանքով, ինքն էլ՝ որպես մարդ, այդ հազարամյակների ծնունդն է, որի համար շատ բնական էր ծառի փչակում քարե պատարագի քարե լռությամբ սերմի պես թաղվելը, որովհետև գարնանը նորից պիտի ծլարձակի: Նա խոսում է դարերի անունից և դարերի փորձով ստուգվածն է դարձնում ասելիք ու պատկեր: Ժառանգորդական հիշողությունը փոխանցվում է սաղմնաբանորեն: Սահյանն այդ ժառանգորդական հիշողության կրողն է, ինչպես սերմը: Դրան ավելանում է քաղաքակրթության կուտակումը, այս դեպքում՝ մտավոր հիշողությունը: Այս ժառանգորդական շղթան նրա համար դառնում է այն պահպանելու և փոխանցելու պատասխանատվություն, որ իր արվեստի հիմքով ու գեղագիտությամբ նա ժառանգեց սերունդներին:

Վերջին գրքում աստիճանաբար խորանում, խոհի ու պատկերի տարբեր վտակներից հունավորվում է վերջի, ամենավերջի, հավիտենության մեջ վերամարմնավորվելու զգացողությունը: Այլ կերպ՝ դրա անունը մահ է, որ «Սարեր» բանաստեղծության մեջ բացվում է մինչև հոգու մերկության վերջին աստիճանը.

Սարեր, ես ձեր երգիչն էի,
Ձեր խղճի խայթն ու խիղճն էի…
Ես ձոր կիջնեմ, ժամն է էլի,
Իսկ դուք երկինք թռեք:

Ինձ որձաքար մի ծանրադիր,
Ինձ տապան ու տապաանագիր,
Հողիս վրա կանաչ-կարմիր
Ձեր փեշերը փռեք:

Ականջ արեք վերջին անգամ,
Մի սպասեք, թե ես կգամ,
Ձեր երթի մեջ արդեն չկամ,
Ինձ բացակա դրեք:

Այս «Ինձ բացակա դրեք»-ը շատ արագ դառնում է «Ինձ բացակա չդնեք». երկու դեպքում էլ ասելիքը նույնն է, որովհետև ներկան մի ուրիշ տեղ բացակա է, բացական՝ ներկա: Լինել-չլինելու այս հոգեբանական տուրևառությունը «Ինձ բացակա չդնեք» հանգերգով Սահյանը վերածում է լուսավոր օրհներգի՝ իրեն տեսնելով հավերժական ժամանակի հավերժական շրջապտույտի մեջ: Ինքնահրաժեշտի տխուր պատարագ, լռության մեջ հրաժեշտի լաց ինքդ քո վրա և տագնապով՝ հանկարծ ոչ ոք չտեսնի, և հուզիչ մի սգերգ, որ նույն պատարագի շարունակությունն է, բայց առանց ողբ ու հառաչի, այնպես, ինչպես մայրամուտի վերջին պահին մարում է արեգակը՝ հերթական շրջապտույտից հետո վերստին ծագելու համար.

Ես եմ քարե պատարագ,
Ձեզնից սերված, ընդունեք,
Դուք, ձեր կամքին հակառակ,
Ինձ բացակա չդնեք:

Ոչ խոստումներ, ոչ երդում,
Չսպասեք ու չքննեք…
Անվերջ, անշարժ ձեր երթում
Ինձ բացակա չդնեք:

Երկու դեպքում էլ սերունդների գալ ու գնալու երթը այնքան նման է, այնքան նույնական է, որ անշարժ է թվում, կարծես բան չի փոխվել, ինչպես իր տեղում հաստատուն սարը, ինչը և հավիտենության նախապայման է: Այստեղից է՝ «Անվերջ, անշարժ երթ» արտահայտությունը, որը, պատկերի իմաստային խորքը չտեսնելու դեպքում, չի հասկացվի:

Համո Սահյանը մեծ բանաստեղծ է և դեռ սերունդներ է գերելու իր խոսքի հմայքով:

Սերո Խանզադյանը (1915-1998) գորիսյան ծագումով այն հանրահայտ գրողներից մեկն է, որն ամբողջ կյանքում հավատարիմ մնաց իր բնաշխարհին ու բնաշխարհի մարդկանց եւ որպես գրող հաստատեց իր տեղը 20-րդ դարի երկրորդ կեսի հայ գրականության մեջ:

Ծնվել է Գորիսում, ավարտել տեղի մանկավարժական տեխնիկումը, 1934-1941թթ. ուսուցչություն է արել Տաթեւ, Խնածախ, Յայջի (Հարժիս) գյուղերում, 1941-1945-ին մասնակցել է Երկրորդ համաշխարհային պատերազմին: Հետագա տարիներին զբաղվել է ստեղծագործական աշխատանքով:

Արժանացել է բազմաթիվ կոչումների, մրցանակների ու պարգեւների՝ Հայաստանի մշակույթի վաստակավոր գործիչ (1974), Հայաստանի պետական մրցանակի դափնեկիր (1977), Սոցիալիստական աշխատանքի հերոս (1984), Հայաստանի աշխարհագրական ընկերության պատվավոր անդամ (1985), Երեւանի պատվավոր քաղաքացի (1985): Պարգեւատրվել է Լենինի, Հայրենական պատերազմի առաջին եւ երկրորդ աստիճանների, Կարմիր աստղի, Աշխատանքային կարմիր դրոշի (2) եւ Պատվո նշան շքանշաններով: Ընտրվել է Հայաստանի (1980-1985, 1985-1990) եւ ԽՍՀՄ (1989-1991) Գերագույն խորհրդի պատգամավոր:

Խանզադյանը գրականություն մտավ կյանքից: Նրա աչքի առջեւ էր թե՛ երկրի գյուղատնտեսական ու արդյունաբերական վերակառուցումը, թե՛ պատմությունը՝ անցյալի էջերով ու նոր ժամանակների պատերազմական տարիների հերոսացումներով եւ թե՛ բնաշխարհը՝ աշխարհագրությամբ, բնակավայրերով ու սովորույթներով: Սա շատ մեծ ընդգրկում է, որ մարմնավորվեց նրա վեպերում, վիպակներում, պատմվածքներում եւ «Հայրենապատում»-ի հատորներում, որի տպագրությունն սկսվեց 1980 թվականին:

Առաջին պատմվածքը՝ «Ջոր տափը», լույս է տեսել 1933-ին Գորիսի «Կարմիր Զանգեզուր» թերթում: «Հայրենի վտակներ» (1940) ժողովածուի մեջ տպագրվել են նրա բանաստեղծությունները: Առաջին գիրքը «Մեր գնդի մարդիկ» վեպն է, որ լույս տեսավ 1950 թվականին: Մինչ այդ գազմել եւ լույս էր ընծայել եւս մի գիրք՝ բանահյուսական նյութերի ժողովածու, որի մեջ փառաբանվում էին նոր կյանքը եւ նոր կյանքի կառուցողները՝ երկրի ղեկավարի գլխավորությամբ («Գուսանական ժողովրդական երգեր», 1949): Այնուհետեւ լույս են տեսել հետեւյալ գրքերը՝ «Հողը», (վեպ, հհ. 1-2, 1954-1955, 1957), «Որոտանի կիրճում» (պատմվածքներ, 1954, 1956), «Լալ Համազ» (պատմվածքներ, 1955), «Կարմիր շուշաներ» (պատմվածքներ, 1958), «Քարանձավի բնակիչները» (վիպակ, 1959, 1979), «Մխիթար սպարապետ» (պատմավեպ, 1961, 1962, 1963, 1962-ին՝ նաեւ Բեյրութում), «Կորած արահետներ» (պատմվածքներ, 1964), «Քաջարան» (վեպ, 1965), «Այրված տունը» (պատմվածք, 1965), «Մատյան եղելությանց» (վեպ, 1966), «Անձրեւից հետո» (վիպակներ, 1969), «Ինչո՞ւ, ինչո՞ւ» (պատմվածքներ, հեքիաթներ, 1970), «Երեք տարի 291 օր», «Ռազմաճակատային օրագիր» (1972), «Սեւանի լուսաբացը» (վեպ, 1974), «Խոսեք, Հայաստանի լեռներ» (վեպ, 1976, 1980), «Ավանդատուն» (հեքիաթներ, առակներ, զրույցներ, 1976), «Թագուհին Հայոց» (վեպ, 1978), «1971, ամառ» (պատմվածքներ, վիպակներ, 1979), «Արաքսը պղտորվում է» (վեպ, 1985), «Ինչպես հիշում եմ: Հուշեր» (1988), «Անդրանիկ» (1989), «Շուշի» (1991), «Գարեգին Նժդեհ» (1993): Ավելացնենք, որ գրել է նաեւ «Վահրամ Որոտանցի» (1938) թատերգությունը՝ Ցուրաբերդի գյուղացիների ապստամբության մասին (10-րդ դար), բեմադրվել է 1940-ին: Այս ընթացքում նա լույս է ընծայել նաեւ երկերի երկու ժողովածու՝ 5 հատորով (1967-1970) եւ վեց հատորով (1981-1983): Նրա երկերը թարգմանվել են ռուսերեն, ուկրաիներեն, պարսկերեն, անգլերեն, գերմաներեն, արաբերեն, բուլղարերեն, էստոներեն եւ ԽՍՀՄ ժողովուրդների տարբեր լեզուներով: Առանձնահատուկ են Խանզադյանի պատմական վեպերը, որոնց ժամանակային ընդգրկումն ամբողջ հայոց պատմությունն է՝ սկսած Ք.ծ.ա. 14-րդ դարից («Թագուհին Հայոց»), մինչեւ 20-րդ դարը («Անդրանիկ», «Նժդեհ»):

Պատմավեպերի շարքում առանձնանում է «Մխիթար սպարապետը»: Այն յուրովի շարունակում է Ռաֆֆու «Դավիթ Բեկ»-ը՝ պատկերելով 18-րդ դարի առաջին տասնամյակներին հայոց ոգու արթնացումը եւ պայքարը երկրի անկախության համար: Խանզադյանի վեպն ունի ճիշտ կառուցված դիպաշար, հերոսները կերպավորված են, գրված է հուզմունքով եւ ժամանակի լավ իմացությամբ: Վեպի հիման վրա ստեղծվել է «Հուսո աստղ» (1978) կինոնկարը:

«Խոսեք, Հայաստանի լեռներ» վեպի նյութը Երզնկայի խանության ճակատագիրն է, ավելի որոշակի՝ Կաթան գյուղը ու գյուղում ծավալվող դեպքերը՝ թուրքական խուժան, կոտորած, դիմադրություն եւ բռնագաղթ: Դեպքերն ընդգրկում են 1915-1921թթ.՝ պատմական հայրենիքի կորուստ եւ նորաստեղծ հայոց պետություն: Խանզադյանի գրեթե բոլոր վեպերն ունեն պատմական հիմք: Այդպիսին են նաեւ՝ «Երեք տարի 291 օր», եւ՝ «Քաջարան» վեպերը: Դեռեւս «Մեր գնդի մարդիկ» վեպում Խանզադյանն արդեն վիպական հյուսվածքի մեջ էր ներքաշել իր պատերազմական տպավորությունները: Նույն այդ տպավորությունները օրագրային անմիջական գրառումների տեսքով հյուսել են նրա «Երեք տարի 291 օր» վեպը, որն ամբողջովին ինքնակենսագրական է: Շարադրանքն սկսվում է 17 տարեկանում կամավոր բանակ մեկնող գավառական քաղաքի ուսուցչի կենսագրությունից եւ ավարտվում հաղթող բանակի զինվորի իմաստնացած փորձով: Անմիջական տպավորություններն ու շատ չմանրամասնվող պատումը վեպին հաղորդում են զգացմունքայնություն, նաեւ ներքին զարգացում: Վեպի հերոսները, հեղինակից բացի, նրա հետ պատերազմի դժվարին ճանապարհն անցած մարդիկ են (Սախնով, Շուրա): Աստիճանաբար կուտակվում է հոգեբանական մի լարվածություն, որը հետեւանք է հազարավոր մահերի, դժվարությունների եւ հաղթանակի սպասումի:

Պատերազմի դաշտում հեշտ չեն գրվել նաեւ օրագրի էջերը: Պահ է եկել, որ քիչ է մնացել, որ հեղինակը դրանք պատռի ու դեն նետի: Բայց մնացել-պահպանվել են՝ պատմելու պատերազմի, մահվան ու հաղթանակի մասին եւ հիմք դառնալու այս վեպի ստեղծման համար:

«Քաջարան» վեպում հետպատերազմյան տարիների տնտեսական վերազինումն է՝ Քաջարան քաղաքի կառուցումով եւ պղնձամոլիբդենային կոմբինատի գործարկումով: Վեպում կան սոցիալ-հոգեբանական կարգի տարբեր անցումներ՝ նախկին գյուղացին աստիճանաբար անցնում է քաղաքային կյանքի, կյանքի արդյունաբերական վերակառուցման հետ վերափոխվում են նաեւ մարդիկ: Վիպական այս տարածությունը բացում է հերոսների բարոյական բախման լայն տեսադաշտ:

Այս մտայնությունը որքանով որ գեղարվեստորեն հաղթահարվեց «Քաջարան»-ում, նույնքան ձախողվեց «Սեւանի լուսաբաց»-ը վեպում՝ նվիրված Արփա-Սեւան ջրատարի շինարարությանը: Հիմնական թերությունը նյութի ընկալման եւ կերպարների կերտման սխեմատիզմն է:

Խանզադյանի լավագույն ստեղծագործություններից մեկը «Մատյան եղելությանց» վեպն է: Հերոսը Ճել Ավան բիձան է, որն ուղեկցում է հեղինակին: Հեղինակի ու նրա հերոսի աչքի առջեւով գալիս անցնում են փոքրիկ քաղաքի, ըստ ակնարկների՝ հեղինակի ծննդավայր Գորիսի մարդիկ: Նրանք երեւում են իրենց կյանքի պատմություններով, կենցաղով, փոխադարձ հարաբերություններով: Ճել Ավանը փողոց մաքրող է: Նրա աչքի առաջ է ամբողջ քաղաքը: Լուռ ու մունջ նա իր գործին է, բայց աչքը շատ բան է տեսնում, եւ խիղճը շատերի գնահատականն է տալիս՝ դրսեւորելով իր համակրանքներն ու հակակրանքները: Ըստ այդմ էլ ձեւավորվում է կառուցվածքը՝ առանձին թաղերում ապրող մարդկանց որոշակի պատմությունների շուրջ համախմբելով հերոսների դիմանկարները:

Այդ ընթացքում ձեւավորվում է եւ հենց իր՝ Ճել Ավանի կերպարը, որը ողբերգական ճակատագրի տեր մի մարդ է: Սովից եւ պատերազմում զոհվել են նրա հինգ որդիները, անձնական ցավը ծանր տանելով՝ նա կորուստը վեհացնող անչար ու բարի աչքով է նայում մարդկանց, քանի որ ժողովրդական իմաստության կրող է: Գլխավոր հերոսի եւ քաղաքային կերպարների մարդկային պատմությունների շաղախով գրողն ստեղծում է քաղաքի ամբողջական պատկերը՝ կենցաղից ու բարոյական հարցադրումներից մինչեւ սոցիալ-տնտեսական խնդիրներ:

Վեպի հիման վրա ստեղծվել է հեռուստաբեմադրություն (1966):

Խանզադյանի ստեղծագործությունը եղել է հայ քննադատության տեսադաշտում: Գրախոսվել են նրա գրքերը, գրվել են հոդվածներ, ստեղծվել են մենագրություններ, կազմվել է նրա մատենագիտությունը (1992), բացվել է տուն-թանգարան: Ժամանակն է՝ կազմելու նրա մասին հիշողությունների գիրք:

Սերո Խանզադյանի ամբողջ արձակը ժամանակի գաղափարական հարցադրումների արձագանքն է եւ, որպես այդպիսին, կպահպանի մի մասով իր գեղարվեստական, մեկ այլ մասով՝ սոսկ պատմական նշանակությունը:

Սուրեն Այվազյանը (1915-1981) ծնվել է Խնձորեսկում: 1934-ին ավարտել է Գորիսի մանկավարժական տեխնիկումը ու որպես ուսուցիչ աշխատել Խնածախ եւ Տեղ գյուղերում: 1942-ին ավարտել է Բաքվի համալսարանի բանասիրական բաժանմունքի հայկական բաժինը: 1942-1945 թթ. մասնակցել է Երկրորդ համաշխարհային պատերազմին: Պատերազմից հետո աշխատել է «Կոմունիստ» թերթի խմբագրությունում: 1953-ից բնակություն է հաստատել Երեւանում:

Այվազյանն արձակագիր էր, գրել է պատմվածքներ, վիպակներ, վեպեր, մանրապատումներ: Տպագրվել են հետեւյալ գրքերը՝ «Անավարտ գորգը» (պատմվածքներ, 1947), «Խորաձորցիք» (պատմվածքներ, 1951), «Լեռնցիներ» (վեպ, 1955), «Խիղճը» (պատմվածքներ, 1957), «Տու՛ր ձեռքդ, կյա՛նք» (վիպակ, պատմվածքներ, 1959), «Անշեջ կրակների կղզին» (վիպակ, պատմվածքներ, 1960), «Տու՛ր ձեռքդ, կյա՛նք» (2-րդ մաս, 1961), «Հովիվը» (պատմվածք, 1963), «Բարի առավոտ» (վեպ, 1964), «Ջրաղացի ճանապարհին» (պատմվածք, 1964), «Ճակատագիրն հայոց» (վեպ, 1966), «Բարձունքի վրա» (պատմվածք, 1970), «Կա եւ ետմահու կյանք» (վիպակներ, պատմվածքներ, 1971), «Գարունս ձյուների տակ» (մանրապատումներ, 1972), «Առավոտ լուսո» (վեպ, 1976), «Խնձորեսկ» (վեպ, 1982), «Ասու՛ր, հե՛յ Ասուր…» (վիպակ, 1985):

Այվազյանը գրականություն բերեց թե՛ իր բնաշխարհի ու հատկապես ծննդավայր Խնձորեսկի կյանքն ու կենցաղը, թե՛ ժամանակակից կյանքը, թե՛ պատմական անցյալը:

17-18-րդ դարերի ազատագրական պայքարն առանձնահատուկ տեղ ունի հայ պատմավիպասանության մեջ, ինչն արտահայտվել է նաեւ Այվազյանի «Ճակատագիրն հայոց» եւ «Առավոտ լուսո» վեպերում: Առաջինում ազգային գործիչ Իսրայել Օրու, երկրորդում՝ մեծագույն լուսավորիչ, նոր ժամանակների ազգային ոգու վերածնդի խոշորագույն ներկայացուցիչ Խաչատուր Աբովյանի կյանքի ու գործունեության պատկերումով գեղարվեստորեն յուրացվում է հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների պատմությունը: Օրին, Եվրոպայից գալով Ռուսաստան եւ բանակցելով Պետրոս Մեծի հետ, Աբովյանն իր ամբողջ գործունեությամբ՝ ջանում էին օգտակար լինել իրենց ժողովրդին՝ նրա փրկության հույսը կապելով հյուսիսի հզոր հարեւանի հետ: Հայացքի այս ուղղությունը պայմանավորված էր պարսկաթուրքական ծանր ճնշումներով, ինչն էլ ժողովրդի մեջ բորբոքել էր ազատագրական պայքարի բոցը: Վեպերը հարուստ են 17-18-րդ դարերի արեւելքի ու արեւմուտքի դիվանագիտական հարաբերությունների պատմությամբ, հայ եւ հարեւան ժողովուրդների կենցաղի, սովորությունների նկարագրություններով: Ամենակարեւորը՝ կերտվել են հայ հերոսներ՝ պատմական հոգեբանության թանձր նստվածքով:

Շողիկ Սաֆյանը (1916-1995) եւս ծնվել է Խնձորեսկում: Նա Գարեգին Սեւունցի կինն էր: 1939-ին ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմության բաժանմունքը: 1941-1945 թթ. աշխատել է տեղի «Կոմունիստ» թերթի խմբագրությունում: 1946-ից բնակություն է հաստատել Երեւանում: Աշխատել է «Ավանգարդ» թերթում, Հայպետհրատում, գրողների միությունում:

Սաֆյանը բանաստեղծուհի էր: Տպագրվել են նրա «Կարոտի երգեր» (1947), «Ամենալավ նվերը» (1949), «Մեր երգը» (1953) բանաստեղծությունների եւ «Մի հին հեքիաթ է սա» (1963, 1977) մանրապատումների ժողովածուները: Սաֆյանը բանաստեղծական այն սերունդի ներկայացուցիչներից է, որի մեջ էին Սահյանը, Սեւակը, Դավթյանը, Մարգարյանը եւ ուրիշներ: Նրա պոեզիային բնորոշ է ահա այդ սերունդի զգացական ու գաղափարական աշխարհը, ինչն արտահայտվել է քնարական բանաստեղծությունների մեջ: Նա նաեւ հայերեն է թարգմանել Ռուդաքիի քառյակները, ճապոնացի Սեիտե Մացումոտոյի «Ստորջրյա հոսանք» վիպակը, Մայն Ռիդի «Հարավային Աֆրիկայի խորքերում» երկը, բազմաթիվ ռուս, ինչպես նաեւ նորվեգացի, ուկրաինացի, էստոնացի, ղազախ, վրացի եւ այլազգի գրողների երկեր: Նա հայերեն է թարգմանել նաեւ ռուսագիր հայ գրողներ Գեորգի Խոլոպովի (Գեւորգ Խալափյան), Ռիչի Դոստյանի եւ Պետրոնի Ամատունու արձակ ստեղծագործությունները:

Սյունյաց մեծ աշխարհն այսօր էլ բանաստեղծներ է ծնում և արյան հարազատությամբ շարունակում դարերի ավանդույթը: Ժամանակների հետ փոխվում են բարքերն ու կենցաղը, բայց չի փոխվում նվիրական հավատարմությունը լեզվին, բարբառին ու հայրենիքին: Ուրեմն՝ սպասենք նորանոր տաղանդների շողարձակումներին, ովքեր եկել են, ովքեր պիտի գան և շարունակեն ու բարձր պահեն այս առասպելական հող ու ջրի գրական պատիվը: ●

Սյունեցիները եւ հայ հին գրականությունը

ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Սյունեցիների եւ հայ հին գրականության մասին հայագիտության մեջ չկա որեւէ առանձին ուսումնասիրություն: Սույն հոդվածի արդիականությունը հայ հին գրականության մեջ սյունեցիների ունեցած դերի համակարգված ներկայացումն է:

Ս եր նպատակն է ընդհանուր գծերով ցույց տալ Սյունյաց մշակութային գործիչների դերը հայ հին գրականության զարգացման գործում: Սույն հոդվածի խնդիրը մինչեւ 9-րդ դարն ընկած սյունեցի մշակութային գործիչների կյանքն ու գործունեությունն է:

Հոդվածում առաջնորդվել ենք պատմական մեթոդով: Հոդվածի գիտական նորույթը Սյունյաց քերթողական դպրոցի ներկայացուցիչների եւ սյունեցի գործիչների մասին ամբողջական համապատկեր ստեղծելն է:

Նախամաշտոցյան շրջանից չեն պահպանվել Սյունյաց աշխարհի մշակութային գործիչներ, սակայն որպես քաղաքական գործիչ Դ դարում Փավստոսը հիշատակել է Սյունյաց Անդովկ իշխանին, ում դուստր Փառանձեմին Արշակ Բ թագավորը խլեց իր հորեղբոր տղա Գնելից՝ սպանելով վերջինիս՝ Անդովկ իշխանին մեծաթիվ զորքով իր կողմը գրավելու նպատակով: Անդովկի ժամանակ հիշատակվում է նաեւ Սյունյաց եպիսկոպոս Գրիգորը:[1]

Կորյուն Սքանչելի վարդապետը վկայում է, որ Մաշտոցը գնաց Սիսական, որտեղ նրան ընդունեց Սյունյաց Վաղինակ իշխանը:[2] Այստեղ Մաշտոցը ժողովեց մանուկներ եւ կրթեց, քարոզեց, նույնիսկ Անանիա անունով մեկին եպիսկոպոս կարգեց Սյունիքում: Այս ընթացքում Սյունիքում իշխանության գլուխ անցավ Վասակ Սյունին, ում մասին Կորյունը գրում է, թե՝ քաջ Սիսական Վասակը, խելացի ու հանճարեղ եւ կանխագետ, աստվածային իմաստության շնորհքով օժտված մի մարդ է, ով մեծապես նպաստել է Մաշտոցի՝ Սյունիքում քրիստոնեություն քարոզելու գործին:[3]

Հարկ է նշել, որ նույն Վասակ Սյունուն Եղիշեն եւ Ղազար Փարպեցին ներկայացնում են որպես դավաճանի այն պատճառով, որ նրանց պատմությունների պատվիրատուները Մամիկոնյան ազնվական տանից էին՝ Դավիթ Մամիկոնյան երեցը եւ Վահան Մամիկոնյանը, որոնց քաղաքական շահից չէր բխում Վասակի գործունեությունը, քանի որ այդ ժամանակ Մամիկոնյանները եւ Սյունեցիները հավակնում էին մարզպանության պաշտոնին:

Սյունիքում Մաշտոցը թողնում է իր աշակերտներից մեկին՝ Անանիա Սյունուն, ով Արտաշատի ժողովի մասնակից Անանիա Սյունյաց եպիսկոպոսն է:

Բացի հիշյալ երեց աշակերտից՝ եղել են նաեւ Մաշտոցի այլ կրտսերագույն սյունեցի աշակերտներ՝ Մուշե Սյունյաց եպիսկոպոսը եւ Հովսեփ Վայոցձորեցին: Վերջինս էլ հենց Կորյունի երկի պատվիրատու Հովսեփ Վայոցձորեցի կաթողիկոսն է՝ Սյունյաց նահանգի Վայոց ձոր գավառի Հողոցիմք կամ Խողոցիմք գյուղից:

5-րդ դարում Սյունիքում էլ ստեղծվեց Սյունյաց քերթողական դպրոցը, որը ոսկեդարյան եւ հետոսկեդարյան շրջանում ունեցել է չափազանց կարեւոր դեր հայ մատենագրության զարգացման գործում:

5-րդ դարում թարգմանական գրականության մեջ առանձնակի արժեք ունի Դիոնիսիոս Թրակացու «Արուեստ քերականութեան» գիրքը, որը թարգմանել է Դավիթ Քերթողը՝ գրելով առաջին քերականական մեկնությունը, որը դարձել է այդ ժանրի զարգացման հիմքը: Գիրքը հետագա տասը դարերի ընթացքում ունեցավ 15 հայ մեկնիչ, որոնց մեջ նաեւ սյունեցիներ Մովսես Քերթողը (8-րդ դար), Ստեփանոս Սյունեցին (8-րդ դար): Հիշյալ Դավիթ Քերթողը թեականորեն սյունեցի է, որին նույնացրել են նաեւ Դավիթ Անհաղթի հետ:[4]

Դավիթ Քերթողից մեզ հասած չորս տողը «Յաղագս Տիգրանայ» վերնագրով տպագրել է Պ. Խաչատրյանը.

Եւ արդ՝ ներգործող ի միտս երեւիւր առ խորհուրդս փողարին
Մեծոգւոյ Տիգրանայ գեղանին Տիգրանուհի,
Իւր ներածեալ կողաբաղ,
Նաեւ ողջամիտ աշխարհածուի:[5]

Ոչ միայն որպես թարգմանիչ, այլև հայ ինքնուրույն գրականության մեջ իբրեւ ճառերի հեղինակ 5-րդ դարում հիշատակվում է Անանիա Թարգմանիչ Սյունեցին (մոտ 380-մոտ 457), որի անունով հայտնի են երկու աստվածաբանական ճառեր:

Կորյունի, Խորենացու, Փարպեցու երկերում Անանիա Թարգմանիչը հիշատակվում է որպես Սյունյաց եպիսկոպոս: Նա Մաշտոցի առաջին աշակերտներից՝ Սուրբ Գրքի թարգմանության մասնակից, թարգմանել է նաեւ Փիլոն Ալեքսանդրացու եւ Իրինեոսի ստեղծագործություններից: Անանիա Սյունեցու թարգմանությունն ունի սկզբնաղբյուրի արժեք, քանի որ Փիլոն Ալեքսանդրացու՝ հայերենով պահպանված տասնհինգ երկերից ութի հունարեն սկզբնաղբյուրները չեն պահպանվել:

Անանիա Թարգմանիչն ուղեկցել է Մաշտոցին Գողթնում քարոզելիս եւ Մաշտոցի հետ ստեղծել է աղվանների գրերը. *«Եւ կոչեալ զԲենիամին ոմն շնորհաւոր թարգման, զոր անդանդաղ արձակեաց մանուկն Վասակ Սիւնեաց տէր, ի ձեռն Անանիայի եպիսկոպոսի իւրոյ. որովք ստեղծ զնշանագիրս կոկորդախօս աղխազուր խժական խեցբեկագունին այնորիկ Գարգարացւոց լեզուին»:*[6]

444 թ. Շահապիվանի ժողովի եւ 449 թ. Արտաշատի ժողովի մասնակիցների մեջ հիշատակվում է նաեւ Անանիա եպիսկոպոսի անունը: Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ *«Սահակի եւ Մեսրոպի օրոք Սյունիքի Անանիա եպիսկոպոսը կրկին պատվի արժանացավ Աղվանքի Եսվաղեն թագավորից, որը նրան պարգեւեց իր թագավորական կարմիր դրոշը՝ ոսկերիգ նուրբ խաչվառով՝ գլխին ոսկի գունդ ու վրան պատվական խաչ. եւ առաջարկեց միշտ տանել Սյունիքի եպիսկոպոսների առջեւից»:*[7] Ստ. Օրբելյանի վկայությամբ՝ Անանիան իր դասընկեր Բենիամինին նշանակել է Սյունիքում իր բացած դպրոցների ղեկավար:[8] Ստ. Օրբելյանը Անանիային անվանում է «գիտությունների մեջ անհաղթելի Անանիա»:[9]

Հայագիտության մեջ եղել է նաեւ Մովսես Խորենացուն սյունեցի համարելու գիտական վարկած: Թեեւ ընդունված է, որ Խորենացու ծննդավայրը Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Տարոն գավառի Խորնի կամ Խորոնք գյուղն է, սակայն կարծիք է եղել նաեւ, որ Խորենացին Սյունյաց Հաբանդ գավառի Խորեա(ն) գյուղից է, որը նույնացվում է Կոռնիձոր գյուղի հետ: Խորենացու՝ սյունեցի լինելու վարկածի կողմնակիցներն են Մ. Օրմանյանը, Ստ. Մալխասյանցը, Ս. Հախվերդյանը: Հօգուտ այս տեսակետի՝ Ստ. Մալխասյանցը բերում է հետեւյալ փաստարկները. 1. Խորենացին լավ ծանոթ է Սյունյաց աշխարհին, 2. հակակրանք ունի Մամիկոնյան նախարարական տան հանդեպ, 3. փառաբանում է Սյունյաց նահապետ Սիսակին: Սյունիքում Խոռնի անունով մի բերդ էլ հիշատակել է Ղ. Ալիշանը «Սիսական»-ում՝ նույնացնելով Խոռնինք գյուղի հետ, որը, ըստ Ստ. Օրբելյանի, եղել է Սյունիքի Ճահուկ գավառում: Մ. Օրմանյանը եւս հակված է Խորենացուն սյունեցի համարելու. *«...Քերթողներ եւ քերթողահայրեր Սիւնեաց դպրոցէն միայն ելած են՝ եւ ոչ Տարոնէն, մենք կը կարծենք, թէ Խորենացիի շուրջը յուզուած խնդիրը դյուրին լուծում մը ստանայ, եթե Մովսէս Խորենացիի պատմութեան հեղինակը միեւնոյն անձի վերածուին եւ նոյնացուին Է դարուն Սիւնեաց դպրոցին քերթողահայրն եղող՝ Մովսէս Սիւնեցւոյն հետ»:*[10]

Ավանդության համաձայն՝ Խորենացին թաղված է Մշո Առաքելոց վանքում, սակայն կա կարծիք, թե թաղված է Սյունիքում՝ այժմյան Տեղ գյուղից 3 կմ դեպի հարավ-արեւելք՝ Խրովի ձորի դարավանդի կանգուն մատուռ-եկեղեցում, որը Տեղի բնակիչները կոչում են Սռի եղցի (եկեղեցի): Ըստ Ս. Խանզադյանի «Հայրենապատում»-ի՝ Տեղ գյուղի բնակիչների պատմելով՝ Պատմահայրը թաղված է Սռի եղցի եկեղեցում: Այն շատ հին, փոքր, առանց արձանագրության մատուռ է բարձր քարափի վրա, որի շրջակայքում կան հնադարյան գերեզմանոցներ: Մատուռից ոչ հեռու Խորեա-Խրով գյուղատեղն է, Կիրաձոր-Գիրաձորը, քարանձավներն ու ջրաղացները: Ս. Հախվերդյանը եզրակացնում է. *«Ամեն պարագայում, եթե նույնիսկ համաձայնենք, որ Մովսես Խորենացին Սյունիքում չի ծնվել կամ միայն մոր կողմից է եղել սիսական, ինչպես Ստ. Օրբելյանը, նա իր կյանքի վերջնամասը անց է կացրել Սյունիքում, այստեղ է նա երկնել իր անմահ երկը, սրբացել, մահացել ու թաղվել Սյունիքում եւ որ առավել հավանական է՝ Հաբանդ-Գորիսում»:*

Թերեւս այս տարիներին էլ Խորենացուն աշակերտել է Պետրոս Սյունյաց եպիսկոպոսը, ինչի մասին տեղեկանում ենք Ստ. Օրբելյանի պատմությունից. *«... Իր ներբողի մեջ տեղեկացնում է երանելի Պետրոսը՝ Սյունյաց եպիսկոպոսը, քերթողահայր Մովսեսի աշակերտը»:*[11] Պատմելով Անանիա Թարգմանիչ Սյունյաց եպիսկոպոսի մասին՝ Ստ. Օրբելյանը գրում է. *«Սա մեզ մի փոքր ցույց է տալիս քերթողահայր Մովսեսը, իսկ ամբողջը ճշտությամբ՝ նրա աշակերտ Պետրոսը՝ Սյունյաց եպիսկոպոսը»:*[12] Մովսես Խորենացու Քերթողահայր անվանումը եւս իր նպաստն է բերում այս վարկածի օգտին:

Նկատի ունենանք նաեւ, որ Խորենացին պատվեր ստացել է Սահակ Բագրատունուց, որը եւս բարեհաճ չէր Սյունյաց իշխանական տան հանդեպ՝ մարզպանության պաշտոնին հավակնելու պատճառով, սակայն Խորենացին հիշատակել է Սյունյաց նախնի Սիսակին. *«Սիսակն այստեղ բնակվելով, իր բնակության սահմանները լցնում է շինություններով եւ երկիրը իր անունով կոչում է Սյունիք, բայց պարսիկներն ավելի ճիշտ կոչում են Սիսական»:*[13] Ապա հիշատակում է Սյունյաց Բակուր նահապետին, որն ուներ Նազինիկ անունով մի վարձակ, որին խնջույքի ժամանակ հափշտակում է Տրդատ Բագրատունին. *«Մի օր Սյունյաց Բակուր նահապետը նրան ընթրիքի հրավիրեց: Երբ գինով ուրախություն էին անում, Տրդատը տեսավ մի կին, որ շատ գեղեցիկ էր եւ նվագում էր ձեռներով, անունը Նազենիկ: Տրդատը նրան ցանկացավ եւ ասաց Բակուրին. «Այդ վարձակն ինձ տուր»: Նա պատասխանում է. «Չեմ տա, որովհետեւ իմ հարճն է»: Իսկ Տրդատը այդ կինն իր մոտ քաշելով սեղանակիցների առաջ գգվում համբուրում էր նրան սիրահարված անզուսպ երիտասարդի նման: Բակուրը խանդոտելով վեր կացավ, որ կինը նրա ձեռքից խլի: Բայց Տրդատը ոտքի ելնելով ծաղկամանն իբրեւ զենք գործածեց, սեղանակիցներին էլ սեղանից վանեց»:*[14]

Հետաքրքիր է, որ Ղազար Փարպեցին «Թղթում» մի տեղեկություն է տալիս այն մասին, որ Մովսեսը մահից առաջ ճգնում էր Սյունյաց քարայրներում, իսկ ինքը 484-486 թթ. Մովսեսի հետ



Մեսրոպ Մաշտոց (361 կամ 362 - 440), հայկական գրի ստեղծող և հայ ինքնուրույն ու թարգմանական գրականության սկզբնավորող (Սահակ Ա Պարթևի հետ), հայ գրության, հայագիր դպրոցի հիմնադիր և հայերի առաջին ուսուցիչ, լուսավորիչ, մշակութային-հասարակական գործիչ, Հայ Առաքելական եկեղեցու վարդապետ

ճգնել է այնտեղ. *«Եվ գնալով Սյունիք, երկու տարի այնտեղ մնացի, ձմեռը՝ քարայրում, գավառի ամբողջ բնակչության մեջ բոլոր կրոնավորներից ամենից հռչակավոր մի մարդու հետ, որի անունն է Մովսես»:*[15]

6-րդ դարի գրական դեմքերի մեջ հիշատակվում է Պետրոս Քերթող Սյունեցին (5-րդ դարի վերջ-554-ից հետո), ում մասին տեղեկություններ պահպանվել են Ստ. Օրբելյանի պատմության մեջ: Աշակերտել է Խորենացու հետ նույնացվող Մովսես Քերթողահորը: Եղել է Սյունյաց թեմի հոգեւոր վերատեսուչ (547-556) եւ 554 թ. մասնակցել Դվինի՝ Ներսես Բ Աշտարակեցի (Բագրեւանդցի) կաթողիկոսի (548-557) կազմակերպած երկրորդ եկեղեցական ժողովին, որի երեք թղթերում առկա է Պետրոս Սյունյաց եպիսկոպոսի ստորագրությունը:

Նրա մասին գովեստով է խոսում Ստ. Օրբելյանը. *«Այնուհետեւ՝ բազմերջանիկ, մարդկանց հետ անհամեմատելի Պետրոսը՝ քերթողահոր աշակերտը, հմուտ հռետորն ու անպարտելի փիլիսոփան՝ լի իմաստությամբ ու կատարյալ առաքինությամբ, հայոց վարդապետներից առաջնակարգը, քերթող ու թարգմանիչ: Նա բազմաթիվ թարգմանություններ կատարեց, իմաստալից ճառեր շարադրեց Քրիստոսի ծննդյան մասին, քաղկեդոնականների դեմ եւ շատ ուրիշներ, մեկնաբանեց Հին եւ Նոր կտակարանների խրթին ու դժվարիմաց խոսքերը: Սա ձեռնադրվում է Սյունիքի ինն երորդ եպիսկոպոս հայոց Ներսես կաթողիկոսի կողմից, Վահան Մամիկոնյանի մարզպանության ժամանակ: Աղվանքի Վաչագան թագավորը սրան հարցում է արել բազմաթիվ լուրջ ու ծանրակշիռ խնդիրների մասին եւ պատասխան ստացել շատ պատշաճ ու ճիշտ լուծումով»:*[16]

Սյունեցին անվանվել է Քերթող, որը Սյունյաց քերթողական դպրոցն ավարտողների մականունն է: Նա գրել է ճառեր, ներբողներ, դավանաբանական եւ մեկնողական աշխատություններ, որոնցից քիչ բան է հայտնի մեզ, այն էլ՝ պատառիկների տեսքով:

Նրանից մեզ հասել է «Գովեստ ի սուրբ Աստուածածինն եւ միշտ կոյսն Մարիամ ըստ յորջորջման նորին եւ ի Սուրբ Գրոց լուծմունք նոցին հոգեւոր իմաստիւք» ներբողը:[17] Սա հայ եկեղեցական մատենագրության մեջ Տիրամորը նվիրված առաջին դրվատական ներբողն է՝ աստվածաբանական մեկնաբանությամբ:

Պետրոս Սյունեցին գրել է նաեւ «Հարցում Վաչագանայ» երկը: Հատվածաբար մեզ են հասել նաեւ «Յաղագս հաւատոյ» եւ «Ճառ Ծննդեան» գործերը: Պետրոս Սյունեցին գրել է նաեւ մի պատմություն, որը, ցավոք, մեզ չի հասել: Այդ պատմության մի փոքրիկ հատվածը պահպանվել է Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» երկրորդ գրքի առաջին գլխում: Թեեւ Կաղանկատվացին այդ հատվածի հեղինակի անունը չի տալիս, սակայն Ստ. Օրբելյանը, նույն հատվածը մեջբերելով, հեղինակ է համարում Պետրոս Սյունեցուն. *«Ապա ուսումնասիրելով հայոց բոլոր պատմագիրներին՝ ինչ որ գտանք, հավաքեցինք նրանցից ամենայն ճշտությամբ, մի փոքր էլ Սյունյաց եպիսկոպոս Պետրոսի ճառերից՝ Սյունյաց տեր Բաբիկի մասին»:*[18] Ստ. Օրբելյանն իր պատմության Թ գլուխը վերնագրել է. *«Սյունյաց Անդոկ իշխանը եւ իր արած գործերը. այլեւ պարսից Շապուհ արքայի կողմից Սիսական աշխարհի նկատմամբ կատարված դեպքերը. Անդոկի գնալը հունաց Թեոդոս Մեծի մոտ ու այնտեղ վախճանվելը՝ ըստ Սյունյաց սուրբ Պետրոս եպիսկոպոսի պատմածների»:*[19] Հիշյալ հատվածը պատմում է 4-րդ դարում՝ Շապուհ թագավորի օրոք Սյունյաց Բակուր իշխանի գործերի մասին: Այս կապակցությամբ Մ. Աբեղյանը գրել է, թե հայ հին մատենագիրներից Խորենացին ու Պետրոս Սյունեցին ուշադրություն են դարձրել մեր հին վեպի՝ Պարսից պատերազմի վրա:[20] Ըստ Ստ. Օրբելյանի՝ Պետրոս Սյունեցին տեղեկություն է տվել նաեւ Անանիա Սյունյաց Թարգմանչի մասին, ում վերաբերյալ մի փոքր տեղեկություն է տալիս Մովսես Խորենացին, ապա ավելի ամբողջական՝ նրա աշակերտ Պետրոս Սյունեցի եպիսկոպոսը. *«Սա մեզ մի փոքր ցույց է տալիս քերթողահայր Մովսեսը, իսկ ամբողջը ճշտությամբ՝ նրա աշակերտ Պետրոսը՝ Սյունյաց եպիսկոպոսը»:*[21]

Սյունյաց քերթողական դպրոցի երեւելի դեմքերից է նաեւ Գրիգոր Քերթողը (մոտ 550-615-ից հետո), որ հավանաբար սյունեցի է: Նա Վրթանես Քերթողի հետ Մովսես Եղվարդեցի կաթողիկոսի (574-604) հրամանով մասնակցել է 589 թ. Կ. Պոլսի ժողովին: Գրիգոր Քերթողից «Գիրք թղթոց» ժողովածուում պահպանվել է կրոնական հարցադրումներով մի թուղթ՝ ուղղված Աբրահամ Ա Աղբաթանեցի կաթողիկոսին (607-615):

Վերոհիշյալ Վրթանես Քերթողին (550-617-ից հետո) անվանում են նաեւ Քչկանորդի: Մ. Օրմանյանը գրում է, թե Մովսես Եղվարդեցի կաթողիկոսն *«իր վերջին տարիներուն մէջ իրեն օգնական առած էր Վրթանէս Քչկանորդի՝ քերթող վարդապետը»:*[22] Իբրեւ ժամանակի հայտնի մատենագիր, դավանաբան, ուսյալ աստվածաբան՝ անվանվել է նաեւ Քերթող: Մ. Օրմանյանը ենթադրում է. *«Քերթող անունը կը ցուցնէ թէ Սիւնեաց դպրոցի աշակերտներէն էր, թերեւս Սիւնի ալ էր հայրենեօք»:*[23] Սա հաստատվում է նաեւ Ստ. Օրբելյանի մի վկայությամբ, թե Վրթանեսը Պետրոս Քերթող Սյունեցու «երանելի աշակերտն» է:[24]

Նրա մասին տեղեկություններ են պահպանվել նաեւ 10-րդ դարի պատմիչ Ուխտանեսի պատմագրքում, որի համաձայն՝ Վրթանեսը սովորել է Դվինի կաթողիկոսարանի դպրանոցում, ստացել վարդապետական աստիճան եւ գործունեություն ծավալել Դվինի հայրապետանոցում: *«Այս Վրթանէսը Հայոց վարդապետ է եղել, դաստիարակուել եւ ուսանել է կաթողիկոսարանում: [Նա] հեզ [էր] եւ իմաստուն, հոգեւոր [էր] ու հանճարեղ, երկիւղած [էր] ու ուղղափառ հավատի հիմքը, լի [էր] գիտությամբ եւ ամեն շնորհներով զարդարուած, դաստիարակուած էր սրբութեամբ սուրբ Գրիգորի աթոռի հովանու ներքոյ»:*[25] Իմացել է նաեւ հունարեն եւ 589 թ. Կ. Պոլսի եկեղեցական ժողովին մասնակցել որպես Մովսես Բ Եղվարդեցի կաթողիկոսի նվիրակ: Ինչպես վկայում է Ուխտանեսը, Վրթանեսը *«մի իմաստուն, հանճարեղ եւ աստուածային պատուիրանին նախանձախնդիր մարդ էր եւ զօրավիգ ու օգնական ուղղափառ հաւատի, ճշմարտասէր եւ լի գիտութեամբ, որին հավատարմութեան պատճառով տեղապահ էին նշանակել սուրբ Գրիգորի աթոռին»:*[26] Ուրեմն՝ 604 թ.՝ Մովսես Բ Եղվարդեցի կաթողիկոսի մահից հետո, ընտրվել է կաթողիկոսի տեղապահ եւ երեք տարի պաշտոնավարել՝ մինչեւ 607 թ., երբ կաթողիկոս է ընտրվել Աբրահամ Ա Աղբաթանեցին:

Վրթանես Քերթողը մեծապես նպաստել է «Գիրք թղթոց» ժողովածուի կազմման գործին, որում պահպանվել են նրա բազմաթիվ թղթերը՝ նամակները, դավանաբանական բովանդակությամբ գրությունները, շրջաբերականները, որոնք ուղղված են ինչպես հայ, այնպես էլ վրաց հոգեւորականներին:

Նա ապրել է Հռիփսիմե տաճարի կառուցման ժամանակաշրջանում եւ այդ մասին գրել է համառոտ պատմություն:

Վրթանես Քերթողի հայտնի գործերից է «Յաղագս պատկերամարտից» թուղթը, որը ձեռագրերում կրում է նաեւ «Յաղագս ընդդիմամարտից», խորագիրը: Այն արժեքավոր մի վավերաթուղթ է, որում հեղինակը մերժում է Բյուզանդիայում սկիզբ առած պատկերամարտությունը՝ այն համարելով աղանդավորության դրսեւորում, եւ պաշտպանում է սուրբգրային պատկերահարգությունը՝ հընթացս հետաքրքիր տեղեկություններ տալով քրիստոնեական արվեստի վերաբերյալ:

7-րդ դարում վերելք ապրեց Սյունյաց քերթողական դպրոցը, որի առաջնորդն էր Մաթուսաղա քերթողը (մոտ 570-650-ից հետո): Սյունյաց քերթողական դպրոցի ուսուցիչ, մեծ քերթող, փիլիսոփա, ճարտասան, հմուտ հոգեւոր գործիչ Մաթուսաղա եպիսկոպոսի ծննդյան թվականն անհայտ է: Կրթություն է ստացել Սյունյաց քերթողական դպրոցում, հետագայում դարձել այդ դպրոցի անվանի ուսուցչապետը: Ստ. Օրբելյանը գրում է. *«Եվ քանի որ Սյունյաց աթոռը հայոց վարդապետների մեջ մեծապատիվ ու առաջնակարգ էր, եւ որովհետեւ վաղնջական ժամանակներից սուրբ Սահակի ու Մեսրոպի կողմից վերապահված էր նրանց վարդապետներին թարգմանություններ կատարել ու մեկնաբանել, լինել հայոց բոլոր վարդապետների պարագլուխ ու առաջատար, այդ պատճառով էլ տեսնելով այն ժամանակ*

Մովսես Խորենացի (410 - 490), Ոսկեդարի գրող-պատմիչ, մեկնիչ, բանաստեղծ, թարգմանիչ, իմաստասեր, աստվածաբան, պատմահայր: Մովսես Խորենացու «Հայոց Պատմություն» աշխատությունը միջնադարում եղել է ազգային ինքնաճանաչման, քաղաքական-հայրենասիրական դաստիարակության ուսումնական ձեռնարկ:

իմաստառատ ճառագայթներով պայծառացած երանելի Մաթուսաղային, որ դաստիարակված եւ կրթված էր նույն տեղում, նրան հաստատեցին եկեղեցու վարդապետի աստիճանին, նստեցրին բոլոր վարդապետների գլուխ, ըաբունարանի բարձր ու ազդեցիկ ամբիոնում, որից գետի պես բխում է աստվածային իմաստությունն ու փարթացնում բոլոր աշակերտողներին»:[27]

Սյունյաց քերթողական դպրոցի փառքը այնքան էր մեծացել, որ Կոմիտաս Աղցեցի կաթողիկոսը (615-628) այնտեղ ուղարկեց իր սիրելի եղբորորդուն՝ աստվածաբան, ուսուցիչ, մատենագիր Թեոդորոս Քռթենավորին, երբ այդ դպրոցի առաջնորդն էր Մաթուսաղա քերթողը. *«Սյունյաց քերթող Մաթուսաղայի մոտ է ուղարկում իր դեռահաս սանին՝ իր եղբորորդի Թեոդորոսին, որին ինքը մեծափափագ սիրով դաստիարակում էր սրբությամբ»:*[28]

Մաթուսաղան կազմակերպել է Սահակ Պարթեւի եւ Մեսրոպ Մաշտոցի գործերի մեկնությունները, գրել դավանաբանական թղթեր: Հերակլ կայսրը Եզր Ա Փառաժնակերտցուն (630-641) հրավիրել է Կարին՝ դավանանքի քննության համար: Եզրը հրավիրում է Մաթուսաղային, սակայն վերջինս, պատճառաբանելով տկարությունը, հրաժարվում է մեկնելուց, սակայն ուղարկում է իր աշակերտ Թեոդորոս Քռթենավորին: Եզրի հանձնարարությամբ Մաթուսաղա Սյունեցին գրում է մի դավանաբանական թուղթ, որը 633 թ.՝ Կարինի ժողովի ժամանակ, կարդացվել է որպես հայոց դավանանքի արտահայտություն, որում մերժվում էր քաղկեդոնականությունը: Վերադառնալով Դվին՝ Եզրն արժանանում է Հովհան Մայրավանեցու հանդիմանությանը, իսկ Մաթուսաղան *«չափազանց տրտմեց կատարված չարիքից. բայց միաժամանակ պապանձվեց ու լռեց, որովհետեւ չարիքն իր աշակերտից էր ծագել»:*[29] Մաթուսաղա Սյունեցուն Եզր կաթողիկոսը 634 թ. ձեռնադրեց եպիսկոպոս, որը, Ստ. Օրբելյանի վկայությամբ, 18 տարի մնալով Սյունյաց եպիսկոպոսական աթոռին, վախճանվեց 652 թ.: Նրա մասին գովեստով է խոսում Ստ. Օրբելյանը. *«Այնուհետեւ որպես տեղապահ աթոռը գրավում է մեծ քերթող եւ անհաղթ փիլիսոփա Մաթուսաղան, որը դաստիարակվել էր ամենայն պարկեշտությամբ, աճել ամենայն առաքինությամբ, սովորել էր քերթողությունը, վարժվել ճարտասանությամբ, հմտացել փիլիսոփայական գիտություններին, լի ամենայն իմաստությամբ եւ կատարյալ գիտությամբ»:*[30]

Մաթուսաղա Սյունեցին գրել է շատ աշխատություններ, սակայն դրանք չեն պահպանվել. միայն Ստ. Օրբելյանի պատմության շնորհիվ (գլ. ԻԹ) մեզ է հասել նրա մի թուղթը:

Խոսելով 648 թ. Դվինի ժողովի մասին, որին ներկա է եղել նաեւ Սեբեոսը, Մ. Օրմանյանը դիտարկում է, որ *«նկատելի է Սիւնեաց եպիսկոպոսին բացակայութիւնը, որ տակաւին Մաթուսաղան էր, եւ հաւանաբար ծերութեան պատճառով բացակայ եղած է»:*[31]

7-րդ դարում իբրեւ երեւելի բանաստեղծ հայտնի է Դավթակ Քերթողը (մոտ 600-670-ից հետո): Նա այն բացառիկ գրական դեմքն է, որ մեր գրականության մեջ թողել է աշխարհիկ բովանդակությամբ առաջին ողբը՝ պահպանված Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» Բ գրքի ԼԵ գլխում:

Ցավոք, Դավթակ Քերթողի մասին այլ տեղեկություն չունենք՝ բացի նրանից, որ Ջիվանշիր իշխանի (637-670) ժամանակակիցն է, այսինքն՝ 7-րդ դարի հեղինակ է:

Քերթող մականունը հիմք է տալիս ենթադրելու, որ Դավթակը կրթություն է ստացել Սյունյաց քերթողական դպրոցում, իսկ հիշյալ Ջիվանշիր իշխանի կինը Սյունյաց Արուիճան տոհմից մի իշխանի դուստր էր:[32]

8-րդ դարում հայտնի է քերական, շարականագիր եւ թարգմանիչ Մովսես Քերթողը (մոտ 680 - մոտ 750): Ստ. Օրբելյանի վկայությամբ՝ Մովսես եպիսկոպոս Քերթողը 722-729 թթ. եղել է Սյունիքի մետրոպոլիտ. *«Տեր-Մովսեսը՝ յոթ տարի: Սա ամենայն զգուշությամբ դաստիարակում էր սուրբ Ստեփանոսին՝ իմաստասերին ու նահատակին»:*[33] Կրթությունն ստացել է Շաղատի վարդապետարանում եւ դարձել տեղի անվանի ուսուցչապետերից մեկը՝ դասավանդելով Ստեփանոս Սյունեցուն եւ առանձնահատուկ վերաբերմունք ունենալով նրա հանդեպ. *«Այս Ստեփանոսը, գնալով Սյունյաց երանելի եպիսկոպոս Մովսեսի մոտ, աշակերտում է նրան»:*[34]

Մովսես Քերթողը հմուտ է քերականության, հռետորության, իմաստասիրության մեջ: Նրան են վերագրվում Փիլոն Եբրայեցու որոշ երկերի թարգմանությունները, «Յաղագս միոյ բնութեան Բանին մարմնացելոյ» դավանաբանական գրվածքը, Աստվածայտնության ճրագալույցի, Ս. Ծննդյան, Տյառնընդառաջի եւ այլ շարականներ: Մովսես Քերթողի անունով մի աղոթք էլ պահպանվել է Մաշտոցյան Մատենադարանի թիվ 1720 ձեռագրում, որից էլ այն տպագրվել է «Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության» գրքում:[35]

Նիկողայոս Ադոնցը հույն քերական Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստի» հայ մեկնիչների մեջ հատուկ կարեւորում է Մովսես Քերթողի մեկնությունը:

Հայ հին գրականության շարականագիրների պայծառ սերնդի մեջ իրենց հոգու երգը երկինք առաքեցին նաեւ սյունեցիներ Ստեփանոս Սյունեցին եւ իր քույրը՝ Սահակդուխտ Սյունեցին: Հայ բանաստեղծ-շարականագիր, քերականության մեկնիչ,

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 10

Սյունեցիները եւ հայ հին գրականությունը

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 9

թարգմանիչ, եկեղեցական գործիչ Ստեփանոս Սյունեցին (մոտ 670-735) կրթվել է Դվինում, որի կաթողիկոսարանի ավագերեց Սահակի որդին է: Կրթությունը շարունակել է Գեղարքունիքի Մաքենյաց վանքում՝ Սողոմոն վանահորը աշակերտելով, այնուհետեւ Սյունյաց քերթողական դպրոցում՝ աշակերտելով Մովսես Քերթողին:

Մովսեսը մահից առաջ Սյունյաց դպրոցի հոգաբարձությունը հանձնում է Ստեփանոսին, իսկ Մովսեսի մահից հետո Սյունեցին մեկնում է կաթողիկոսի մոտ եւ Անանիա անունով մեկին իր փոխարեն կարգել տալով Սյունյաց դպրոցի ուսուցչապետ՝ մնում է Դվինում: Այստեղ էլ Սմբատ Բագրատունի իշխանի հետ վիճաբանում է կրոնական հարցերի շուրջ եւ հալածվելով նրա կողմից՝ հեռանում Կ. Պոլիս:

Կ. Պոլսում եղած ժամանակ, ինչպես վկայում են Կիրակոս Գանձակեցին եւ Ստ. Օրբելյանը, Սմբատ ասպետը, որ երկբնակ մարդ էր, գրում է կայսերը, թե Ստեփանոսը հերձվածող է: Կայսրը Ստեփանոսին կանչում է պալատ, նրան լսելուց հետո կայսեր բարկությունն անցնում է, եւ Ստեփանոսի խնդրանքով նա բացել է տալիս կայսերական մատենադարանը, ուր Սյունեցին գտնում է ոսկետառ մի մատյան ուղղափառ հավատի մասին:[36]

Հանդիպել է նաեւ Կ. Պոլսի Գերմանոս պատրիարքին, ում թուղթը թարգմանել եւ բերել է հայոց կաթողիկոս Հովհան Օձնեցուն: Վերջինիս հանձնարարությամբ եւ Մանազկերտի ժողովի պահանջով 726 թ. պատասխանել է նաեւ Գերմանոսի թղթին՝ տալով մերժողական պատասխան:

728 թ. կարգվել է Սյունյաց մետրոպոլիտ՝ թեմի առաջնորդ:

735 թ. հուլիսի 21-ին Մոզ ավանում, ծառի վրա քնած, սպանվել է մի կնոջ կողմից, ում անառակ վարքի պատճառով հանդիմանել էր: Թաղվել է Թանահատի վանքում: Ըստ ավանդության՝ մահից հետո 40 օր երկրաշարժ է եղել Եղեգյաց ձորում, ինչի պատճառով էլ այն անվանել են Վայոց ձոր:

Հայագիտության մեջ առանձնացվել է նաեւ 5-րդ դարի շարականագիր Ստեփանոս Սյունեցին, ում չպետք է նույնացնել 8-րդ դարի Ստեփանոսի հետ. այս կարծիքը չէր ընդունում Գ. Զարբհանալյանը[37], մինչդեռ Մ. Աբեղյանը նրան անվանում է երկրորդ Ստեփանոս Սյունեցի:[38] Վերջերս այս տարակարծությունը կրկին վերարծարծվեց. Ստեփանոս Սյունեցուն 5-րդ դարի շարականագիր համարեց Ն. Թահմիզյանը[39], հակառակ կարծիքն է պնդում Լ. Սարգսյանը:[40] Ստեփանոս Սյունեցի շարականագիր 5-րդ դարում ներկայացնում է նաեւ Հ. Բախչինյանը:[41]

Ստեփանոս Սյունեցու մասին վկայություններ ունեն Կիրակոս Գանձակեցին, Ստ. Օրբելյանը, Մխ. Այրիվանեցին:

Ստ. Օրբելյանն իր պատմության մի ամբողջ գլուխը (լա) նվիրել է Ստեփանոս Սյունեցուն՝ *«բոլոր էակներից անհամեմատելիին, իմաստունին եւ սերովբեներից սպասարկված աստծու մարդուն՝ Ստեփանոս իմաստասերին եւ անհաղթ հռետորին՝ Սյունյաց մետրոպոլիտին»:*[42]

Ստեփանոս Սյունեցին բազմաժանր ստեղծագործող է. գրել է շարականներ, թղթեր, թարգմանական գործեր, քերականական եւ կրոնական մեկնություններ, ճառեր:

Ստեփանոս Սյունեցին գրել է նաեւ Դիոնիսիոս Թրակացու «Արվեստ քերականության» մեկնությունը: Գրել է նաեւ աստվածաշնչյան բազմաթիվ մեկնություններ, որոնցից Ծննդոց եւ Հոբի մեկնությունները չեն պահպանվել, իսկ Ավետարանների, Դանիելի եւ մի շարք այլ մեկնություններ հասել են մեզ: Ստեփանոս Սյունեցին նաեւ հոգեւոր երգերի հեղինակ է: Ստ. Օրբելյանը գրում է. *«Նրա նշանավոր գրվածքները ուրիշ մեկնիչների գործերի մեջ փայլում են պայծառ ջահի նման: Գրեց նաեւ բազմաթիվ ճառեր. ութ եղանակները բաժանեց, կարգեց, շարեց Հարության օրհնությունները, երգեց եւ քաղցրալուր կցուրդներ. հարմարեցրեց «Յինանց»-ի տաղաչափությունը յոթ եղանակներով՝ հույժ խորհրդավոր»:*[43]

Օրհնութիւն, Հարցն (Գործք), Մեծացուցէ, Ողորմեա, Տէր երկնից, Մանկունք, Ճաշու, Համբարձի ութ ձայնեղանակների ստեղծողը համարվում է հենց Ստեփանոս Սյունեցին, իսկ մինչ այդ եկեղեցում ժամերգվել են կցուրդներ եւ մարգարեական օրհներգեր: Այսինքն՝ կանոն կոչվածը մինչ 8-րդ դարը չի եղել հոգեւոր երգի մեջ եւ հայ հոգեւոր երգարվեստում Ստեփանոս Սյունեցու նորամուծությունն է: *«Մի անգամ որ կանոնը մտնում է մեր ժամերգության մեջ, բնականաբար պիտի աշխատեին հետզհետե հին կցուրդներից ու կացուրդներից զանազան տոների համար կանոնի պահանջած թվով երգերի շարքեր կազմել»:*[44]

Հոգեւոր երգը սկզբնապես հանդես է եկել կցուրդ-սաղմոսների միջոցով, կազմվել է «Կցուրդարան» ժողովածուն, որը հետագայում՝ 8-րդ դարից հետո, անվանվել է «Շարակնոց»:

Մեծանուն Ստեփանոս Սյունեցու քույրն է 8-րդ դարի բանաստեղծ, երաժիշտ, երգահան Սահակդուխտ Սյունեցին, որի ծննդյան եւ մահվան թվականներն անհայտ են: Նրա մասին կենսագրական տեղեկությունները սակավ են: Հայ պատմիչներ Ստ. Օրբելյանը եւ Մխ. Այրիվանեցին, խոսելով Ստեփանոս Սյունեցու մասին, թողել են հպանցիկ վկայություն նրա քրոջ՝ Սահակդուխտ հայ առաջին բանաստեղծուհու մասին. *«Սա մի քույր ուներ, որը մանկությունից ընդունել էր կույսի վարքը, առանձնացել էր Գառնու ձորի մի քարայրում եւ կյանքն անցկացնում էր անտանելի ճգնակեցությամբ. նրա անունը Սահակդուխտ էր: Նա շատ հմուտ էր երաժշտության արվեստին, որը եւ սովորեցնում էր շատերին՝ վարագույրի տակ նստած, նաեւ ստեղծեց բազմաթիվ քաղցրեղանակ կցուրդներ ու մեղեդիներ, որոնցից մեկը [նվիրված] սուրբ Մարիամին, որն իր անունով հորինեց»:*[45]

Մ. Օրմանյանը գրում է, որ Սահակդուխտը *«քաղցրանուագ տաղեր յօրինած եւ երգած է, եւ նոյնիսկ վարագոյրի ետեւէն ուրիշներուն ալ սորվեցուցած է»:*[46]

Թաղվել է Գառնիի ձորում. *«Նա մեռավ ու այնտեղ էլ թաղված է գերեզմանում, որից շատ բժշկություններ են լինում»:*[47]

Սահակդուխտը հորինել է *«բազմաթիվ քաղցրեղանակ կցուրդներ ու մեղեդիներ, որոնցից մեկը [նվիրված] սուրբ Մարիամին, որն իր անունով հորինեց»*[48], ինչպես նաեւ *«արար տաղս բազումս եւ մեղեդիս եւ կցուրդս Ծնունդեան եւ Փոխմանն, յորոց մի է Սրբուհի Մարիամ»*[49]: Մեկը՝ «Սրբուհի Մարիամ» սկսվածքով, հասել է մեզ. այն ակրոստիքոս է, որի տների սկզբնատառերը հոդում են Սահակդուխտ անունը: «Սրբուհի Մարիամ» օրհներգը, որ ժամանակին եղել է «Շարակնոց»-ի մեջ, իսկ հետագայում դարձել է պարականոն, դարերի կորստից փրկել եւ Անթիլիասի Մայր Աթոռի թիվ 1741 ձեռագրում, որն արտագրված է 1499թ. Աղթամարում, հայտնաբերել ու 1951թ. «Հասկ» ամսագրում հրատարակել է Նորայր Պողարյանը:[50] Ավելի վաղ այն հատվածաբար տպագրել էր Ղ. Ալիշանը:[51] Համեմատելով երկու երգերը՝ Հ. Բախչինյանը եզրակացնում է. *«Պարզ երեւում է, որ «Սրբուհի Մարիամ» սկսվածքով երգերը միանգամայն տարբեր ստեղծագործություններ են եւ ոչ թե նույն երգի տարբերակներ: Ընդ որում, այս երգերը Սուրբ Ծննդյան (Աստվածահայտնության) կարգի համար գրված Մեծացուցէներ են»:*[52]

Թեեւ Մխ. Այրիվանեցին գրում է, թե Սահակդուխտը հորինել է բազում երգեր՝ համալրելով Ծննդյան եւ Վերափոխման կարգերը, սակայն մեզ այժմ հայտնի են միայն Սահակդուխտի՝«Սրբուհի Մարիամ» սկսվածքով երկու երգերը, մեկն՝ ամբողջական, մյուսը՝ թերի (չհաշված «Զարմանալի է ինձ» շարականը, որը որոշ հայագետներ վերագրել են Սահակդուխտին, մինչդեռ այն Խոսրովիդուխտ Գողթնացունն է):

Սահակդուխտ բանաստեղծուհին առանձնակի երեւույթ է հայ հին գրականության մեջ. նա Խոսրովիդուխտ Գողթնացու հետ հաստատում է, որ հայ հին գրականությունը միայն տղամարդկանց մտքի ու գրչի արդյունքը չէ:

9-րդ դարի հոգեւոր գործիչ, հայոց կաթողիկոս Մաշտոց Եղվարդեցին (մոտ 830-898) ծնվել է Սյունյաց գավառի Սոթք գյուղում: Մաշտոց Եղվարդեցին ձեռնադրվել է քահանա Սյունյաց Դավիթ եպիսկոպոսի կողմից, ապրել անապատականի կենցաղով Արտավազդիկում՝ Ծաղկաձորի մոտ, ապա՝ Սեւանի մենաստաններում:

874 թ. Սյունյաց իշխան Գաբուռն Վասակի կնոջ՝ Մարիամ Բագրատունու օժանդակությամբ, ով իր վաղամեռիկ ամուսնու հիշատակին ուխտել էր կառուցել 30 եկեղեցի, Մաշտոց Եղվարդեցին կառուցել է Սեւանա կղզու Ս. Առաքելոց եւ Ս. Աստվածածին եկեղեցիները՝ հիմնելով միաբանություն եւ վարժարան, որի առաջնորդն է եղել 874-897 թթ.:

Երբ մահանում է Գեւորգ Բ Գառնեցի կաթողիկոսը, Սմբատ Ա արքան որոշում է կաթողիկոս դարձնել Սեւանի մենաստանի առաջնորդ Մաշտոց վարդապետին, ով մեծ հեղինակություն էր վայելում իր իմաստասիրությամբ, ճգնակեցությամբ: Մաշտոց Եղվարդեցին հայրապետ է եղել 7 ամիս: *«Սա մի սուրբ ու առաքինի մարդ էր, լցված էր հանճարով ու իմաստությամբ, բնակվում էր Սեւանա կղզում մեծ ճգնակեցությամբ. քառասուն տարի հաց չկերավ ու ջուր չխմեց, մի շորով էր ու բոբիկ: Սա կարգավորեց այն գրքերը, որոնք իր անունով կոչվում են Մաշտոց: Հավաքելով միասնաբար կարգավորեց բոլոր աղոթքներն ու ընթերցվածները՝ կցելով իր կողմից գրված հավելված, որ իր մեջ պարունակում է քրիստոնեության հավատի կարգուկանոնը: Սա հասնելով պատվական ծերության՝ վախճանվեց փառքով ու պատվով»:*[53]

Մաշտոց Եղվարդեցին մահացել է 898 թ. հունվարի վերջին. *«Անակնկալ մահուանը ոչ մի բացատրութիւն չի տար Պատմաբանը, որ իր աշակերտն, ազգակիցն ու յաջորդն է միանգամայն: Տարիքն ալ չի յիշէր, որ յոյժ յառաջացած տարիքին վերագրենք արագահաս մահը»:*[54] Թաղվել է Գառնիի տաճարի մոտ. *«Նրա ոսկորների նշխարները հանգչում են Գառնիում՝ Խոսրովադուխտի հովանոցի մերձավորությամբ, որը կառուցվել էր Հայոց Տրդատ արքայի կողմից»:*[55]

Մաշտոց Եղվարդեցուց մեզ է հասել երկու թուղթ: Նա դեռեւս Սեւանում ճգնելիս կազմել եւ խմբագրել է «Մաշտոց» ծիսարան ժողովածուն, որը սխալմամբ համարվել է Մեսրոպ Մաշտոցի կազմածը, սակայն Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ այն կազմել է Մաշտոց Եղվարդեցին:

Ամփոփենք. 5-9-րդ դարերում Սյունյաց աշխարհում ստեղծված է եղել գրական-մշակութային միջավայր թարգմանական գրականության, քերթողական արվեստի, ինքնուրույն գրականության ստեղծման համար. այդ գործում մեծ է եղել Սյունյաց քերթողական դպրոցի դերը, որը տվել է «քերթող» անվանված երեւելի աշակերտներ, որոնք եղել են հայ հին գրականության պատմությանն ընթացք տվող մշակութային գործիչներ: Քերթող են անվանվել քերականը, մեկնիչը, թարգմանիչը, բանաստեղծը, որոնք էլ հենց հիշատակված սյունեցի գործիչներ են:

Բանալի բառեր. Սյունյաց քերթողական դպրոց, հայ հին գրա-

կանություն, թարգմանական եւ ինքնուրույն գրականություն, մեկնություններ:

Ключевые слова: Сюникская школа стихотворчества, древнеармянская литература, переводческая и оригинальная литературы, комментарии.

Key words: poetical school of Syunik, Ancient Armenian school, independent literature and literature in translation, interpretations.

ВАНО ЕГИАЗАРЯН
д.филол.н., профессор

СЮНИКЦЫ И ДРЕВНЕАРМЯНСКАЯ ЛИТЕРАТУРА

РЕЗЮМЕ

В 5-9 веках на Сюникской земле существовала особая литературно-культурная среда для создания переводной литературы, стихотворческого искусства и оригинальной словесности. В этом большую роль сыграла Сюникская школа стихотворчества, давшая выдающихся учеников, которые повлияли на процесс развития древнеармянской литературы.

VANO YEGHIAZARYAN
Doctor of Philology, Professor

The People of Syunik and Ancient Armenian Literature

SUMMARY

There was a favourable literary-cultural environment in the land of Syunik in the 5-9th centuries for the formation of poetical art, as well as independent literature, and the role of the Syunik poetical school in it was really great. The graduates of that school were quite distinguished and later became historico-cultural figures in ancient Armenian history.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Աբեղյան Մ., Երկեր, հ. Գ, Ե., 1968:
- Ալիշան Ղ., Յուշիկք հայրենեաց Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1870:
- Բախչինյան Հ., Շարականի գրապատմական ուղին, 5-14-րդ դարեր, Ե., 2012:
- Գանձարան հայ հին բանաստեղծության, աշխ. Պ. Խաչատրյանի, Ե., 2000:
- Եղիազարյան Վ., Հայ հին գրականության պատմություն, Ե., 2014:
- Զարբհանալեան Գ., Հայկական հին դպրութեան պատմութիւն, Վենետիկ, 1886:
- Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության, աշխ. Պ. Խաչատրյանի եւ Հ. Քյոսեյանի, Էջմիածին, 2003:
- Թահմիզյան Ն., Սյունեցի համանուն երկու երաժիշտներ եւ Հարության ավագ Օրհնությունները, Էջմիածին, 1973, Բ:
- Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1982:
- Կորյուն, Վարք Մաշտոցի, Ե., 1981:
- Հասկ, Անթիլիաս, 1951, դեկտեմբեր:
- Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Ե., 1982:
- Մեսրոպ Վայոցձորեցի, Սուրբ Գրիգոր Լուսավորչի տոհմի մասին եւ սուրբ Ներսես հայոց հայրապետի պատմությունը, արեւելահայերեն թարգմանությունը, առաջաբանը եւ ծանոթագրությունները՝ Վանո Եղիազարյանի, Վանաձոր, 2015:
- Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, 1981:
- Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Ե., 1969:
- Յովսէփեան Գ., Մխիթար Այրիվանեցի, Երուսաղեմ, 1931:
- Սարգսյան Լ., Կարծեցյալ Ստեփանոս Սյունեցի՝ շարականագիր V դարի, Լրաբեր հասարակական գիտությունների, 1993, թիվ 1:
- Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմություն տիեզերական, Ե., 2000:
- Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986:
- Ուխտանէս եպիսկոպոս, Հայոց պատմութիւն, Ե., 2006:
- Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Ա, Էջմիածին, 2001:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Տե՛ս Մեսրոպ Վայոցձորեցի, Սուրբ Գրիգոր Լուսավորչի տոհմի մասին և սուրբ Ներսես հայոց հայրապետի պատմությունը, արևելահայերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վանո Եղիազարյանի, Վանաձոր, 2015, էջ 29:
2. Հայ մատենագիրները հիշատակել են նաև Սյունյաց այլ ազնվականների անուններ՝ Անդովկի որդի Բաբիկին, Վասակի որդիներ Բաբկեն և Բակուր եղբայրներին, Վասակի փեսա Վարազվաղան Սյունուն, Գդիհոն Սյունի իշխանին, Սահակ և Պետրոս Սյունեցիներին և այլն, որը դուրս է մեր հոդվածի խնդրից:
3. Կորյուն, Վարք Մաշտոցի, ժդ:
4. Ստ. Մալխասյանցը կարծում է, թե Խորենացու հիշատակած հեղինակը Դավիթ Անհաղթն է, ով Խորենացու քրոջ որդին է (Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե., 1981, էջ 470): Այս տեսակետը հետագայում պաշտպանել է նաև Գ. Ջահուկյանը «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում» գրքում (Ե., 1954), ապա Ա. Մուրադյանը՝ «Դիոնիսիոս Թրակացու քերականության թարգմանչի և մեկնիչի հարցը» հոդվածում («Պատմա-բանասիրական հանդես», Ե., 1980, թիվ 3, էջ 68-87): Սակայն Աս. Մնացականյանն ընդունելի չի համարում Ստ. Մալխասյանցի այս տեսակետը և այդ բանաստեղծին նույնացնում է Դավիթ Քերթողի, որ նույնն է՝ Դավիթ Քերականի հետ:
5. Գանձարան հայ հին բանաստեղծության, աշխ. Պ. Խաչատրյանի, Ե., 2000, էջ 39:
6. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Գ, ծդ:
7. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986, էջ 80:
8. Անդ, էջ 98:
9. Անդ, էջ 357:
10. Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, Էջմիածին, 2001, էջ 506:
11. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 87:
12. Անդ, էջ 99:
13. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ա, ժբ:
14. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Բ, կգ:
15. Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Ե., 1982, էջ 451-453:
16. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 119-120:
17. Տե՛ս Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության, աշխ. Պ. Խաչատրյանի և Հ. Քյոսեյանի, Էջմիածին, 2003, էջ 164-169:
18. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986, էջ 68-69:
19. Անդ, էջ 81:
20. Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, Ե., 1968, էջ 441:
21. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 99:
22. Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 689:
23. Անդ, էջ 689-690:
24. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 121:
25. Ուխտանէս եպիսկոպոս, Հայոց պատմութիւն, Ե., 2006, էջ 151:
26. Անդ, էջ 123:
27. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 135:
28. Անդ:
29. Անդ, էջ 139:
30. Անդ, էջ 135:
31. Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 830:
32. Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Ե., 1969, էջ 139:
33. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 147:
34. Անդ, էջ 149:
35. Տե՛ս Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության, աշխ. Պ. Խաչատրյանի և Հ. Քյոսեյանի, էջ 242:
36. Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1982, էջ 63:
37. Տե՛ս Գ. Զարբհանալեան, Հայկական հին դպրութեան պատմութիւն, Վենետիկ, 1886, էջ 387:
38. Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, Ե., 1968, էջ 537:
39. Տե՛ս Ն. Թահմիզյան, Սյունեցի համանուն երկու երաժիշտներ և Հարության ավագ Օրհնությունները, Էջմիածին, 1973, Բ, էջ 29-43:
40. Տե՛ս Լ. Սարգսյան, Կարծեցյալ Ստեփանոս Սյունեցի՝ շարականագիր V դարի, Լրաբեր հասարակական գիտությունների, 1993, թիվ 1, էջ 120-129)
41. Տե՛ս Հ. Բախչինյան, Շարականի գրապատմական ուղին, 5-14-րդ դարեր, Ե., 2012, էջ 81-84:
42. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմությունը, էջ 148:
43. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 152:
44. Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Գ, էջ 541:
45. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ152-153:
46. Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 1010:
47. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 153:
48. Անդ, էջ 152:
49. Գ. Յովսէփեան, Մխիթար Այրիվանեցի, Երուսաղեմ, 1931, էջ 18-19:
50. Տե՛ս Հասկ, Անթիլիաս, 1951, դեկտեմբեր, էջ 366:
51. Տե՛ս Ղ. Ալիշան, Յուշիկք հայրենեաց Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1870, էջ 129-200:
52. Հ. Բախչինյան, Շարականի գրապատմական ուղին, 5-14-րդ դարեր, Ե., 2012, էջ 133:
53. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, էջ 68:
54. Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 1182:
55. Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմություն տիեզերական, Ե., 2000, էջ 210:

Առաքել Սյունեցի (1350 - 1425), հայ վարդապետ, եկեղեցական գործիչ, արքեպիսկոպոս, Սյունյաց մետրոպոլիտ (1407-1425), Տաթևի վանքի վանահայր, Գրիգոր Տաթևացու քրոջ որդին:

Ստեփանոս Օրբելյան (1250/60-1303), հայ պատմագիր, աստվածաբան, բանաստեղծ, կրոնական և քաղաքական գործիչ, արքեպիսկոպոս: Սյունիքի մետրոպոլիտ (1287-1303)

Տիգրան Գրիգորյան



ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծնվել է 1955թ. դեկտեմբերի 27-ին, Երևան քաղաքում: Հետագայում ծնողները տեղափոխվել են Գորիս, որտեղ 1962-63 ուս. տարում ընդունվել և 1971-72 ուս. տարում ավարտել է Գորիսի թիվ 2 միջնակարգ դպրոցը: 1972 թվականին ընդունվել է Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղի ֆիզիկայի բաժինը և ավարտել 1976 թվականին՝ ստանալով ֆիզիկայի ուսուցչի որակավորում:
1988 թվականին Տիգրան Գրիգորյանը ղեկավարել է Ղարաբաղյան շարժման փետրվարյան ցույցերն ու միտինգները Գորիսում:
Խորհրդային Միության փլուզման վերջին տարիներին նա զբաղվել է գործարարությամբ:
Գորիսի շախմատի դպրոցի հիմնադրման օրից (2000թ.) առ այսօր նա զբաղեցնում է այդ դպրոցի տնօրենի պաշտոնը:
Ինստիտուտն ավարտելուց հետո գրական ստեղծագործական գործունեությունը եղել է Տիգրան Գրիգորյանի կյանքի ամենանվիրական զբաղմունքը. գրել է բանաստեղծություններ, պոեմներ, էսսեներ, հոդվածներ, հայերեն է թարգմանել Վ. Բրյուսովի, Ա. Բլոկի, Ս. Եսենինի, Օ. Մանդելշտամի, Ա. Ախմատովայի, Մ. Ցվետաևայի, Ն. Ռուբցովի, Ի. Բրոդսկու և այլ ռուս բանաստեղծների որոշ ստեղծագործություններ, մշակել է Գ. Մանուչարյանի «Զանգեզուրյան լեգենդներ» շարքը:
2015թ. լույս է տեսել Տիգրան Գրիգորյանի վերջին՝ «Անմահության համանվագ» ժողովածուն, որտեղ ներկայացված են բանաստեղծություններ, պոեմներ, մշակումներ, թարգմանություններ, արձակ պատումներ ու հոդվածներ:
2015թ. Տիգրան Գրիգորյանը պարգևատրվել է նորվեգացի մեծ մարդասեր, խաղաղության նոբելյան մրցանակի դափնեկիր Ֆրիտյոֆ Նանսենի ոսկյա հուշամեդալով:
2012թ. փետրվարից Տիգրան Գրիգորյանը Հայաստանի գրողների միության անդամ է:

ԴՐՎԱԳՆԵՐ՝ Տ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅԻՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԱԾ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐԻՑ

ԿԻՄ ԱՂԱԲԵԿՅԱՆ

Նրա յուրաքանչյուր գործ ապրված տառապանք է՝ բյուրեղացած իբրև բանաստեղծական գեղեցկություն:

ՖԵԼԻՔՍ ԲԱԽՉԻՆՅԱՆ

Գրող, գրականագետ

...Սերունդների հերթափոխի մեջ վաղուց տեսանելի և համբուրելի սևակյան ավելի շատ ոչ թե բանաստեղծական, այլ մարդաբանական վերլուծություններով առաջանալու ոտնահետքերն են տանում դեպի Տիգրան Գրիգորյանի բանաստեղծական աշխարհը, ուր քեզ այստեղ ուղեկցում են տողատակում հնչող եսենինյան կիթառալար ալեկոծումները սեփական բախտախաղի մասին, բայց և որտեղ անընդհատ զգում ես այդ խաղում տանուլ տվածի հետ չհաշտվող հեղինակի ըմբոստ ոգու ներկայությունը:

...Եվ այսպես շարունակ, մինչև ընդվզումի և ինքնամերժումի, լիարժեքության և անլիարժեքության պայքարի դաշտում մղած կռիվների արդյունքում կրկին վեր բարձրացող հաղթանակի դրոշ, որի վրա գրված է՝

Ես ընդամենը՝
Հավիտենության կամակատարն եմ:

«Բանաստեղծություն»

...Կիթառահարի կրքոտությամբ է նա խփում հոգու նվագարանին, և հատիկ-հատիկ հնչում են երգերն այն մասին, թե հետմահու երջանկության տարածքը Հայրենիք է կոչվում («Ավետիս»), թե բարության առաքյալը լինելու պահանջը հավատի հրի մեջ տապակվել է նշանակում («Համբարձվելու զգացողություն») և այդպես շարունակ...

...Բանաստեղծի իր կոչման, պոետների շարքում իր ունեցած առաքելության և նույն այդ առաքելության դժվարանցելի ճանապարհի մասին առավել քան անմիջական ու տիպական պատկերներով է ներկայացրել հենց ինքը՝ Տիգրան Գրիգորյանը.

Ես պոետ չե՛մ...
Ես ներդաշնակ մա՜հն եմ կյանքի...
Կամ որ նո՛ւյնն է,
Եթե ասել՝
Թե արքա՛ն եմ պոետների:

«Անտերության գահին»

Ճշմարիտ պոետներն իսկապես իրենց միջով են անցկացնում կյանքի, մահվան ու անմահության գոյաձևերը, որպես մարդ անհատին անհրաժեշտ եռամիասնության պարտադիր պայման: Տիգրան Գրիգորյանի դեպքում՝ կյանքի հրով անցած են «Ես ներդաշնակ մահն եմ կյանքի» խոսքերը, ուստի եռամիասնության մեջ գործող ներդաշնակության համաձայն՝ մահվանից հետո սկսվում է անմահությունը: Արքա պոետներին հասու ճանապարհ է սա, որի գահը ոչ թե գրասենյակներում կամ դահլիճներում է, այլ՝ «Երկնավորի» մոտ...

ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ // «ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ» 21.09.2013Թ.:

ԿԻՄ ԱՂԱԲԵԿՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հայրենիքս

Մեղքդ հույզերի անմահությո՛ւնն էր...
Կյանքդ՝ խելահեղ խայտա՜ռքը նրա,
Մի՛տքդ միշտ խղճի թարգմանությունն էր...
Խելառ պոռթկումդ՝ երդո՛ւմը նրա:

Վի՛շտդ ճշտության անճարությունն էր...
Արդարությունը՝ հավա՜տդ չքնաղ,
Իդեալդ երազի խաղաղությո՜ւնն էր...
Սմքած թախիծդ՝ հեքիաթը նրա:

Հույսդ անընդհատ՝ Աստծո՜ւն մերվելն էր,
Համբերությունդ՝ հանճարիդ վկան,
Ճշմարտությունդ լո՜ւյս-մոլությունն էր...
Տվայտանքներդ՝ պսա՛կը նրա:

Պայքա՛րդ հոգու ազատությունն էր,
Պարտություններդ՝ սրբի՛ ինքնություն.
Արիամարհանքդ՝ ներման աղե՜րսն էր...
Զգվանքդ՝ քենի ողորմածություն:

Ատելությունդ՝ սեթևեթանքն էր...
Հեգնանքդ՝ խոռո՜վք կատարելության,
Հոգսդ կասկածի՛ հավերժությունն էր...
Սերդ՝ հրա՜շքը հավիտենության...

Աղմուկն աշխարհի՛ քո լռությունն էր,
Անճառ ցասումդ՝ երկո՜ւնքը նրա...
Ցա՛վդ անհունի իմաստնությունն էր,
Իսկ տառապանքդ՝ պարծա՜նքը նրա...

Ցավալի իրողություն

Արդարության ձայնն, անկասկա՛ծ,
Խենթությու՜նն է...

Դժբախտաբար,
Ո՛չ միշտ է նա կարողանում
Հասկանալի լեզվով խոսել:

Ավետիս

Նաև հասկացա,
Որ հայրենիքը
Նա է միշտ մարդու,
Որտեղ կարծես թե՝
Երջանի՛կ էլ է
Մարդը ետմահու...

Ինձ չհաջողվեց պոետ ձևանալ

Ես ի զորու՛ չեղա
Կարոտներով սնվել...
Տենչանքներից հյուսված
Սու՜տ երազներ մանել...
Ցավն իմ երկինք հանած՝
Էությա՛նս փարվել.
Խեղանդամվա՜ծ հույզի
Խորհուրդներում թաղվել...

Շատերի համեմատ՝ ես անզոր էի

Չէ՛, ես չէի կարող
Ժամանակիս կցվել...
Հուզաշխարհս կոծկած՝
Համբերատար սսկվել.
Արդարամիտ վեճի
Լռությու՛նը եղծել,
Արդարադա՛տ խոսքի
Սրբությունը պղծել...

Տառապանքը չի ամոքվում

Ո՜րերորդ անգամ
Ես համոզվում եմ,
Որ ցավ սփոփող
Ամեն խոսք՝ բութ է...
Ու վիշտ փարատող
Ամեն միտք ու խոհ՝
Սոսկ պարկեշտ սու՛տ է...

Ողբալի արձանագրություն

Առաջին սե՛րս
Հավատի՜ ծով էր...
Որտեղ ապրեցին
Բոլո՜ր հույսերս...

Իսկ հետո՝ սերս
Մի փոթորի՛կ էր...
Որից փրկվեցին
Միա՜յն... հույզերս:

Հանապազօրյա աղերս

Ցերեկը՝ լո՛ւյս լինի,
Երեկոն՝ հո՛ւյս լինի,
Գիշերը՝ կա՜նչ...

Քեզ ականջ դնո՛ղ լինի,
Աստղադո՜ղ... ու հող լինի.
Բի՜լ անրջանք...

Հոգիդ՝ անքե՛ն լինի,
Հավատդ՝ շե՜ն լինի,
Կյանքդ՝ հորձանք...

* * *

Ճակատագիրս անչափ վաղ ծովեց...
Փողոցը դարձավ իմ բախտի հունը...
Ու հոգիս այնքա՜ն մենակ դեգերեց,
Որ տիեզերքը դարձավ իր տունը...

* * *

Ես սիրո հոգնակի ձևերը ժխտում եմ՝
Անսահման երանի տալով միշտ ողջ նրանց,
Ովքեր այս օրերի խունացած թախծի մեջ
Պատրա՜ստ են նոր սիրո պատրանքից
խենթանալ...

Ճահճատենդ

Կյանքը՝ կեղծիքի ճարպիկ սովորույթ:
Ճշմարտությանը... առա՜ջ են տալիս:
Արդարությունը՝ թշվա՜ռ ավանդույթ,
Որ հոգեհացի՜ պահին է գալիս:

Սուտ հոլովույթն այս՝ զխտվո՜ղ ոչինչ է,
Խիղճը դահի՜ճ է, իսկ պատիվը՝ բի՜ճ...

...Տիգրանը վրձնում է գրչով. գրչի հետագծից աստիճանաբար խմորվում, տեսանելի են դառնում մարդ-բնություն կապերի անտրոհելի միասնությունը և սոցիալական կյանքի համապատկերը:

Պոեմը հարուստ է բանաստեղծական բացառիկ գյուտերով: Բարքեր, սովորություններ, պարտադրված հանձնառություններ, կոշտ ու կոպիտ գործընթացներ ու համատարած գեղեցկություն, նկարեղեն պատկերներ և արևաբույր հայրենի եզերք:

...Ասեմ, որ պոեմն ընթերցողն էլ է դառնում բանաստեղծ, ներընկալում կարոտներ ծլարձակող պատկերներ, ներսուզվում մանկության օրերի տեսիլների մեջ, վերապրում իր ոգեղեն հիացումները, զարմանքն ու ապշանքը:

...Պոեմն իր ամբողջությամբ հոգու երգ է, ինչպես բանաստեղծի, այնպես էլ պատանեկությունը հեռվում թողած մի ողջ սերնդի: Տիգրանը վերապրում է ապրված կյանքը՝ բնության ու մարդու համադաշնության ծալքերից բարձրացող հոգեպարար մեղեդայնությամբ:

...Այդ համատարած գեղեցկության մեջ թերություն նկատելը, մեղմ ասած, հավկուրություն է, իսկ ավելի ստույգ՝ մեծամտության սինդրոմով ախտահարված, ինչպես Օշականը կասեր, «Բանաստեղծից մեծ երևալու. սնափառություն»:

Շնորհակալություն Տիգրան – պարգևած վայելքի համար:

ԽՈՍՔ «ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՆՎԱԳ» ՊՈԵՄԻ ՄԱՍԻՆ // ԳՐԻԳՈՐՅԱՆ Տ., ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՆՎԱԳ, ԵՐ., «ԶԱՆԳԱԿ» ՀՐԱՏ., 2015, 15-18 ԷՋ:

ՌՈԲԵՐՏ ԷԶԱՆԱՆՑԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾ ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ, Ի ԳՈՐԻՍ

Ա՛յր քանքարափայլ,

Աժդանական-Կապուտջուղի բարձունքից գրկեցի Քո լույսով ողողված Սյունիքը, Քեզ գրկեցի... Սիրում, կարոտում, տենչում եմ Քո տաղանդին, զորանում եմ Քեզնով:

...Քեզնով բոլոր ընթերցողներդ ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՆՎԱԳ են...

Դու նորովի ու անկրկնելի ես բացահայտում գյուղաբնակին, սյունեցուն, մարդուն: Տիգրա՜ն, Քո՝ պոետիդ սիրահարվածության մեջ վաղնջական, նորօրյա եւ ապառնական ժամանակի ամեն չպեղված սյունեցին է...

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ», 26.01.2016Թ., (378)

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

Գրող, հրապարակախոս

318 էջերու վրայ տարածուող այս քերթուածներու մատեանը մե-

Անմահության համանվագ (Հատված պոեմից)

Մերը մոլորվա՜ծ հավատի ճիչ է,
Իսկ համբերությունն՝ ուզվորի մահի՛ճ...

Լրիվ օտա՜ր մի խորթ երևույթ եմ...
Ոչ մեկի ցավը չի՜ հասնում սրտիս...
Ի՞նչ ես, Արարի՛չ, արել իմ գութը...
Մի՞թե կորե՜լ է... ցնդե՜լ է հոգիս:

Հեռու՛ ինձանից: Այս ի՞նչ արցունք է...
Մի՞թե աճյունս հողի՜ն են տալիս...
Կա՜նգ առ, սատանա՛: Հոգի՛ս ինձ հետ է...
Աստղերն էլ անհու՜ն թախծից են լալիս...

Կյանքը՝ կեղծիքի մի կու՜ռ սովորույթ:
Արդարությո՛ւնը շատ ուշ է գալիս:
Ճշմարտությունը՝ հորա՜ծ ավանդույթ՝
Հոգեհացին են բուռ-բուռ շաղ տալիս...

Կարոտախտ

Քաղցրանու՜շ, լուռ գիշեր է լուսնոտ...
Գրգա՜նք է ծործորում աստղերից...
Էլի նույն խելա՜ռն եմ երազկոտ՝
Չի՜ փոխել այս կյանքն ինձ գեթ մի քիչ:

Ինձ զգվող կարոտնե՜րը կանանց
Հուլացած իմ հոգին բարուրել,
Ուզում են համոզել, որ իրենց
Հմա՜յքն է այս կյանքը հորինել...

Փաղաքուշ հույզերի՜ց մանկացած
Ու, ասես, անտեղյակ փորձանքին՝
Պատրաստ եմ վերստին խենթացած
Հավատալ սե՜ր կոչված պատրանքին...

Աստղազա՛րդ, լու՜յս գիշեր է լուսնոտ...
Ախ, ու՜ր էր՝ միշտ մանուկ մնայի՝
Աստծո չափ գթառա՜տ ու սրտոտ,
Մրբի չափ միամի՛տ լինեի...

Ապխտածություն

Դարձած հույզերիս անվախճանությամբ
Զմայլված գալիք՝
Այս մահախուճապ,
Լիրբ ու նողկալի մեղանչումներից
Ասես համբարձված,
Բայց և որպես մի խղճի ուրվական՝
Հավերժ կենդանի՝
Ես ինքս ինձ եմ շարունակելով
Ապշահարի պես հաճախ հարց տալիս.
«Ինչպե՞ս ես ապրել,
Իմ հրա՜շք հայրիկ...
Երբ քո բերանով՝
Անդարմանելի տարակուսանքով,
Անհո՛ւնն է խոսում տիեզերական...
Մշտնջենական տառապանքից իր՝
Հավիտենական ցավից լռության»:

Ինչպե՜ս եմ ապրել...

Մի բազմադարյան,
Տարագրակյաց պատմություն է դա՝
Սկսված նորելուկ ու խոստումնալից
Այն նախապահից,
Երբ երանավետ քաղցրությունը ես
Խավարահալած լույսի զգացի...
Որ կարոտաբաղձ ոգորումներով
Շարունակվում է դեռ մինչև՜ այսօր,
Երբ վաղուց է, ինչ՝ ես գերմարդացել,
Բայց քաղցրությունն այդ փոքրի՜կ հրաշքի
Չեմ կարողանում խաղաղված սրտով
Հանգիստ ճաշակել...

Իսկ եթե ասել այսօրվա լեզվով՝
Ես աշխատել եմ,
Ի՜նչ էլ որ լինի՝
Չհիվանդանալ իմ դարի ախտով.
Նույնիսկ՝ մահանալ,
Բայց քաղաքակիրթ խաբկանք չդառնալ:

Այս իմ նորագույն ախտագերծության
Հի՜ն վկաներն են
Բոլոր տեսակի ապրող մահերը
Խաչված կյանքերի նույն իմ պատմության...
Հավատազրկման բեռան տակ կքած
Արևաքայլե՜րն այն խեղճ սրբերի,
Որոնք ապրել են մոգական կյանքով
Առեղծվածային հանելուկների...
Միապետասեր ժամանակների

Անապատածին կախաղաններից
Ձղաձգվելով ճոճվելի՜ս անգամ՝
Կույր ծլարձակման
Կուսականության ճչա՜ն հավատը
Գեթ մահվան պատրաստ
խելահեղությամբ
Կանաչապատել՝
Ու նույնիսկ հոգու ավանդման պահին
Իրենց էության ճշմարտությունից
Չե՜ն հրաժարվել...

Եվ անկախաղա՜ն, խրոնիկացած
Իմ այս ճոճվելը վկայակոչեմ,
Որ կարելի էր խոր հառաչելով,
Ըստ ավանդույթի՝
Նաև կյա՜նք կոչել...
Իսկ ավելի զուսպ համեմատությամբ՝
Տրտմաթախծալի՜,
Պահածոյացած կե՜րպ կենդանության...

Ու ես, փոքրի՛կս,
Այս անտանելի գոյության անլուր
Տվայտանքների արանքում շշմած,
Ծվարած կյանքից...
Զզված ինձ կանչող բոլո՜ր կեղծարար
Գոռ աշխարհների հրավերքներից՝
Ես՝ Արդարության Նորին Բացարձակ
Նորեն ձախողակ Մոլագա՛րս Խենթ,
Ճաճանչավորված միա՜յն ու միայն
Աստծո անդրանիկ,
Հար հրաշագոր տեսքո՛վ երկնաճեմ...
Արևի նման համայնատարա՜ծ
Հավասարություն ճչալով անվերջ
Ու ճապաղելով՝
Դեպի ներկայի արգանդում հունցվող
Իմ սիրամոլո՜ր ու սիրատոչոր,
Ցնդած Գերմա՛րդը ինձ կարկառեցի...

Ու կրակ կտրած ձայնալարերս
Արցունքոտվելով
Այնքա՜ն ժամանակ թեժ թրթռացին,
Մինչև որ՝ հոգնած,
Խեղանդամվելով,
Չհանդիպեցին
Արցունքամխման աղե պատնեշին՝
Ի վերու՛ստ ձաղկված
Կաղկանձմա՜ն ցավին...

...Հենց այստեղից էլ՝
Ես մահաթաքույց,
Բնաստրկային հիասթափության
Սուր ցավն զգացի.
Տեսա, թե ինչպես
Ես՝ աննպատակ,
Ասես դառնում եմ ձմե՜ռ անհատակ...
Քանի որ արդեն սկսեցի ես իմ
Ինքնաբուխ ու խոլ եղանակներին
Երբեմնի սրանց հիմա՜ր տիրոջից
Շատ խորը զգալ.
Վերջնականապես ջղաթափ եղած
Ծերունու նման:

Բայց ծերունու պես ես չնստեցի
Եվ պարապորեն,
Միտքս հարահոս կյանքի հրաշքին՝
Էլ չսկսեցի
Անցած օրերիս կորուստը սգալ...
Այլ այս փակուղում
Ես այն հասարա՜կ,
Պարզ մի՛տքը գտա,
Որ լոկ լեռնե՜րն են,
Եվ այն էլ՝ հսկա՛,
Ձմեռ թե գարուն, ամառ թե աշուն
«Ձմե՜ռ է... Ձմե՜ռ...» անվերջ մտորում...
Թեև բաշերի տարուբերումով
Ի ցու՛յց են անում մեծահոգաբա՜ր
Ի հույս դաշտերի՝
Թե իրենք էլ են իբրև մասնակցում
Խրախճանքներին
Այս հեքիաթային սուտասանների...

Փակուղիս բացվեց,
Բայց...
Սակա՛յն...
Ավա՜ղ...
Նման տխրունայն մի ողբերգության
Շարունակական արարողության...

Ես էլ, փոքրի՛կս, ճարահատորեն,
Կամ էլ՝ ճի՛շտ է թե՝
Ողորմածաբա՛ր,
Այս ժուժկալահար իմ ժամանակի
Բեմահարթակից,
Անպատկառ վարք ու բարքի՛ց մոլեգնած,
Անչա՜փ հանճարեղ
Մեծ դերասանիս դերը ճանկեցի:

Իսկ թե մոլորված՝
Հակասականի խորխորատներում,
Դու՛ շփոթվելով
Ինձ ճշտես այսպես՝
Իբրև՝ ես լե՜ռ եմ...
– Կա՜նգ առ, – քեզ կասեմ, –
Թե ճշտե՜լ է պետք՝
Թող ճշտենք այսպե՜ս.
Հասարակածում ցցվա՜ծ բևեռ եմ...

Ինչպե՞ս եմ ապրել...
Ախ, իմ փոքրի՛կս,
Ի սե՜ր Բարձրյալի,
Ինձ մի՛ հիշեցրու...
Ինքս էլ չգիտեմ...

Վաղնջական կյանքի առասպելը՝ նորած,
Աղջամուղջում ցայգի՛ հարություն է առել...
Խև հովիվի անկիրթ լուտանքնե՜րն են թթված՝
Օրհներգության նման գյուղի վրա փռվել...

Հորիզոնի վրա ա՜յգն է շառագունում.
Կարոտաբաղձ մայու՜ն... Թախծագորով բառա՛չ...
Ծիծառնե՜րն են զվարթ ճռվողյունով ճախրում,
Ձնճղուկներն իրենց վե՜ճն են մղում առաջ...

Ժայռերի հետ մերված ողջ թաղերից հերթով
Աքլորները զիլ-զի՜լ ծուղրուղու են կանչում...
Գամփռնե՜րը քնկոտ, բողոքական բասով,
Քնահարամ եղած՝ սրտմտած են հաչում...

Գյուղի դիմաց փռված այգիներում, վաղուց,
Սոխակների անուշ դայլայլնե՜րն են շրջում...
Տատս, խենթուկրակ մեր այծերի՛ց պրծած,
Կաթի կճուճն առած՝ գոմից տուն է դառնում:

Բրիգադիրն, ասես, մի զգի՛ր է ցնդած...
Ծեգը ծեգին իր հի՜ն գոռգոռոցն է դրել.
Աշխատանքից բոլոր բացակայող մարդկա՜նց
Խոստանում է հաստատ խոտատեղից զրկել:

Արևածա՜գն իր խոլ եղջյուրներին առած՝
Ներին քարաժայռի՜ց իր հոտին է հայում...
Կատաղի ցու՜լն անգամ՝ աչքերն արյունամած,
Գոռ պահվածքի՜ն նրա շփոթված է նայում...

Գերանդիներն առած՝ քնակարոտ քայլքով
Տղամարդիկ դանդաղ գյուղամեջ են իջնում...
Արհամարհված բա՜խտն է իր զոզոան ձայնով
Ինչ-որ մի ավանակ հառաչալի ողբում:

Դեղձան հավքի դյութիչ կլկլոցով լցված՝
Այգիներում կկու՜ն վանկարկում է իր «կու»-ն...
Բաղից գյու՜ղ է գալիս մի մարդ՝ էշը բարձած,
Ուր օղի է թորել ամբո՜ղջ գիշերն անքուն:

Կաչաղակները՝ լի՜րբ, չարչի կանանց նման,
Թողես՝ չափչփելո՜վ անվերջ աղաղակեն...
Ագռավներն էլ՝ կոռան պառավների նման,
Մի բանի՜ են միայն՝ եղա՜ծն աղավաղեն...

Կին ու ջահել աղջիկ իրենց հացը կապած՝
Դեպի հանդվորների մեքենա՜ն են քայլում...
Նուրբ տոտիկներն ուժգին գետնի՜ն տալով՝ գժված,
Մի մանչուկ է, նանից պոկված, մորը կանչում...

Իսկ սարյակներն անհո՜գ, լար ու քիվի նստած,
Չնաշխարհիկ այնքան արիանե՜ր են հեղել,
Որ գողունի կատուն, պատի վրա չռված,
Իր ծուռ միտքը թողած, ապշահա՜ր է եղել...

Մեքենայի թափքը լի՜քն է հանդվորներով,
Այրերն ակամայից մո՜տ են կանգնել կանանց...
Ինչ-որ սրտեր ծածուկ ճմլվում են սիրով՝
Թաքու՜ն կարոտների գրգանքներով անանց...

Արծիվնե՜րն են լազուր, լուրթ երկնքում ծավի
Ներշնչանքից հուզված՝ կոնչոցով ճչու՜մ...
Ու քջու՜ջը կիսատ թողած մոշահավի
Սարսած կչկչո՜ցն է թավուտներում հնչում...

Խոլ հոնդո՜ցն է սուր արձագանքում գյուղում...
Մեքենա՜ն է հանդի ճամփան բռնում ձորից.
Կողքին՝ խրտնած մի հորթ թռչկոտու՜մ է տեղում,
Իսկ մի սիրուն ուլիկ մկկում է ահից...

լանոյշ երգերու շարք մըն է: Կը կարծէք թէ սիրոյ խոստովանութիւններու հեկեկո՞ց կամ ճի՞չ մը, ո՛չ, բարեկամներ, բողոքի ժայթք մըն է այս գիրքը, բանաստեղծութեան բեհեզին տակ, ճշմարտապատում հոսանք մը գետերու, որոնք իրենց ճամբուն վրայ ծառ ու ծաղիկ արմատահան չեն ըներ, այլ կը ջրեն հայ երգի դաշտերը՝ պատգամներ դրոշմելով ճամբու ընթացքին ժայռերու վրայ: Քանդակներ են Տիգրան Գրիգորեանի այս երգերը, որոնք կուգան պայքարատենչ հոգիէ մը, գրիչէ մը, որ թէև երբեմն կարծր կը հնչեն, կապարի պես ծանր, բայց սկիզբ կ’առնեն քնքոյշ հոգիէ մը, որ սխալի մը դիմաց, չարիքի մը աւերին դիմաց գլխահակ կերպարանք ցոյց տուողը չէ՛, այլ պատնէշ մը բարձրացնողը, մեհենագիր մը քանդակողը նոյնիսկ իր սիրային երգերուն մէջ:

...Ինք՝ Տիգրանը վարպետ բանաստեղծ մըն է նաև յատկապէս բարդ բառեր ստեղծող.– հարաճիչ, ճարպաժպտակուլ, աստղադող, զեփյուռաշունչ, զովասյուք, էլեկտրոնապաշտ, միալիցքություն, գոյագարություն, հավատասպանություն, հրթիռել են, խեղանդամված հույզ, շառաչալի հևք, զլած ձայն, քնակարոտ քայլք, ջղաթափ եղած, անապատածին, տիեզերաճեմ, տրտմաթախծալի, անրջաթաթավ, ժուժկալահար, հեգնահայաց, ծործորալ, բարոյախոհություն, թախծապաշտներ և այլն. կարելի է գիրք մը հեղինակել այս մասին:

ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ «ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՆՎԱԳ» ՄԱՏԵԱՆԸ // «ՅՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ», 26.01.2016Թ., (378)

ՇՂՈՐՍ ԴԱՎԹՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր

...Կարդալով «Հավիտենության ճանապարհին» ժողովածուն, գալիս ես համոզման, որ այն գրվել է Ակսել Բակունցին և Համո Սահյանին հարազատ միջավայրի ու հեղինակի ապրած ժամանակի հզոր ազդեցությամբ:

...Տիգրան Գրիգորյանն իր ներաշխարհում կրելով ոչ սովորական մարդուն՝ նրան անվանել է տիեզերաճեմ: Ընթերցելով «Ինչպես գտա ինձ» ենթավերնագիրը կրող շարքը՝ համոզվում ես, որ նա հենց այդ ոգեղեն ոլորտներում էլ գտել է իրեն:

...«Թարգմանությունները դառնում են քո ստեղծագործությունների մի մասը», – գրել է Համո Սահյանը, երբ Եսենին էր թարգմանում: Տիգրան Գրիգորյանը «Թարգմանչի կողմից» գրած իր խոսքում, թեև անուղղակիորեն, սակայն, անշուշտ, նույն համոզմունքն է հնչեցնում. «Անվերապահ ինքնալքումով, ինքնամոռաց հավատով լի թարգմանիչը հեղինակի հետ այնպես պիտի մերվի, որ կարողանա բնագրի արարման ներշնչանքի սարսուռն զգալ. թարգմանված տողը, պատկերը ոչ թե արհեստավարժորեն փոխադրված, այլ հնարավորինս պիտի երկնված լինի: ...Թարգմանությունը ոչ թե պիտի փոխադրվելով ինչ-որ կերպ սարքվի, այլ պիտի թարգմանչի կողմից վերապրվելով՝ վերածնվի»:

Տիգրանի թարգմանած բոլոր գործերը և հատկապես «Սև մարդը» վստահաբար կարելի է դնել հայ թարգմանչական արվեստի լավագույն նմուշների կողքին:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՏՈՀՄԻԿ ԵՐԱՆԳՆԵՐՈՎ ԹԱԹԱԽՎԱԾ // ԳՐԻԳՈՐՅԱՆ Տ., ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՆՎԱԳ, ԵՐ., «ԶԱՆԳԱԿ» ՀՐԱՏ., 2015, 313-315:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
«Այունյաց երկիր» թերթի խմբագիր

...Անկախ ստեղծագործության ծավալից, ասելիքից, ընտրված տաղաչափական ձևից, շարադրանքի խոհականությունից կամ քնարականությունից՝ Տիգրան Գրիգորյանի յուրաքանչյուր գործ իսկապես բյուրեղացած բանաստեղծական գեղեցկություն է...

...«Անմահության համանվագ» պոեմն ասես մեր բնաշխարհի խենթացնող թովչանքնեով լեցուն մի շտեմարան լինի: Այդ ստեղծագործությունը կարդալիս այնպիսի չնաշխարհիկ, անզուգական պատկերների ես հանդիպում, որ թվում է՝ ոչ թե բանաստեղծություն ես ընթերցում, այլ շլացուցիչ գեղանկարներ ու դյութիչ տեսապատկերներ ես դիտում և երբեմն անգամ թվում է նաև, թե մասնակցում ես քո աչքի առաջ ու քո ներկայությամբ տեղի ունեցող իրադարձությունների: Գյուղաշխարհի իրողություններն ու բնապատկերներն այնքան կախարդող ճշմարտությամբ և արարչական նրբագեղությամբ են վրձնված, որ զմայլանքդ ըմբոշխնելով՝ անվիճարկելի մի եզրակացության ես հանգում՝ այս պոեմում գործ ունենք որևէ ժամանակաշրջանով չսահմանափակվող մարդկային հավերժական զգացողությունների ու տարաբնույթ երևույթների անմահ իրականության հետ:

Մեր խորին համոզմանբ «Անմահության համանվագ» պոեմը բոլոր ժամանակների ստեղծագործություն է, որովհետև այն մարդ-բնություն տիեզերական արարչաստեղծ կապի գեղարվեստական բացառիկ արտահայտություն է...

ՅՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀԻ ՄԵՐՕՐՅԱ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ. ԳՐԱԿԱՆ ԴԻՄԱՆԿԱՐ // ԳՐԻԳՈՐՅԱՆ Տ., ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՆՎԱԳ, ԵՐ., «ԶԱՆԳԱԿ» ՀՐԱՏ., 2015, 301-312:

●

Գագիկ Դավթյան



ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծնվել է 1947թ. ապրիլի 4-ին ՀՀ Սյունիքի մարզի Դավիթ Բեկ գյուղում:
Ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը, ծառայել է խորհրդային բանակում որպես սպա:
1988թ եղել է «Խորհրդային Հայաստան» թերթի, 1989թ.՝ «Հայաստանի Հանրապետություն» թերթի Զանգեզուրի գոտու սեփական թղթակիցը:
1996թ. հիմնադրել է Սյունիքի մարզպետարանի «Սյունիք» պաշտոնաթերթը, եղել նրա գլխավոր խմբագիրը մինչև լուծարումը (2000թ.):
Կապանի պատվավոր քաղաքացի է (2007թ)
Գ. Դավթյանի անունն է կրում Սյունիքի մարզի Լեռնաձորի դպրոցի հայոց լեզվի և գրականութան կաբինետը (2007թ):
2012 թ. Աշխարհի բանաստեղծների շարժման (Movimiento poetas del mundo) անդամ է:
2016 թ. Պոեզիայի և արվեստի եվրոպական «ՀՈՄԵՐ» մեդալի շնորհման միջազգային կազմկոմիտեի անդամ է:
2017 թ. Բուլղարիայի Անկախ գրողների միության պատվավոր անդամ է:
2017 թ. Վրաստանի գրողների միության պատվավոր անդամ է:

Առաջին բանաստեղծությունը տպագրվել է 1967թ., «Ավանգարդ» թերթում: 1982թ. ԽՍՀՄ (Հայաստանի) գրողների միության անդամ է:
Հեղինակել է սեփական և թարգմանական ավելի քան 30 գիրք:
Բանաստեղծությունները թարգմանվել և տպագրվել են անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն, վրացերեն, պարսկերեն, սլովակերեն, սերբերեն, բուլղարերեն, ռումիներեն, լեհերեն, ուկրաիներեն, ղազախերեն, չինարեն, չեխերեն, հնդկերեն, առանձին գրքերով հրատարակվել են Մոսկվայում, Թբիլիսիում, Վարշավայում, Պլեվենում, Փարիզում, Բելգրադում:
Մասնակցել է պոեզիայի միջազգային փառատոների՝ Քութայիսի, Վլադիվոստոկ, Թբիլիսի, Ստեփանակերտ, Երևան, Բելգրադ, Բիդգոշչ, Պոզնան, Հանչժոու, Սիչան, Չենդու, Սինին, Աստանա քաղաքներում:
Հայրենական և միջազգային բազմաթիվ մրցանակների դափնեկիր է, այդ թվում Վ. Մայակովսկու անվան միջազգային մրցանակի միակ հայ դափնեկիրն է (Թբիլիսի, 1985) և Պոեզիայի և Արվեստի «ՀՈՄԵՐ» մեդալի առաջին հայ ասպետը (Բրյուսել, 2016):

Պոեզիա

Լուսնյակի լույսը խաղաղ է այնքան,
որքան աշխույժ է
մեղվապարսերի բզզոցը՝
ծաղկած ծառերի շուրջը...

Ինչ – որ հրաշքով
ես կանգնած ծովի ափին,
տեսնում եմ հակառակ ափը...

Ինչ – որ հրաշքով
ես ապարների
սահմոկեցուցիչ շարժումն եմ տեսնում
ընդերքում երկրի...

Ինչ – որ հրաշքով
հողոտ ներբաններն իմ թափառում են
Մեծ Արջի փոքրիկ համաստեղության
հեռաստաններում...

Ինչ – որ հրաշքով
ոչխարներն անգամ
հայացքներն իրենց գամել աստղերին
և հիանում են աստղերի լույսով...

Ինչ – որ հրաշքով
աշխարհի բոլոր թագավորները, բոլոր դարերում,
հրամանները դարձրած կշռաքար,
նախ իրենց խիղճն են կշռում խնամքով, –
ինչ – որ հրաշքով հասկանալով, որ
այս երկրի վրա ամենայն ինչ էլ մահ ունի,
միայն մահը մահ չունի...

Ինչ – որ հրաշքով
աշխարհի բոլոր փոքր ու մեծ մարդիկ
իմ աչքերով են նայում այս պահին
կյանքին ու մահին, աշխարհին այս հին
ու նաև՝ իրենց...

Երբ հեռանում ես...

Ախ, այս որքը սուրբ,
տնավերն այս խեղճ,
աշխարհի այսքան ցավն ինչպե՞ս տանի,
ինքն աշխարհի ողջ ցավն առած իր մեջ,
աշխարհում այս նեղ ո՞ւր ապաստանի:

Ու երբ դու այդպես հեռանում ես լուռ,
հազար երանի,
որ կարծում ես, թե
սիրված լինելու հաճույքը թեթև
քաղցր է սիրելու տանջանքից անլուր,

հազար երանի,
որ չես հասկանում,
թե հեռանալով ինձանից այդպես,
դու ոչինչ, ոչինչ քեզ հետ չես տանում,
պարզապես դու ես լքում ինքդ քեզ:

Եվ ապրում ես դու, ապրում ես որպես
արկի մի բեկոր – անձավում սրտիս,
ու թե չես ուզում դու ինձ սպանել,
թող որ այն մնա, մի փորձիր հանել...

Վասն լույսի և խաղաղ դարերի

Տեր,
քաղցր պահիր աչքդ մեզ վրա,
դավանավորն ենք մենք քո հավատի,
Տեր,
յուղ մի քսիր սրտին այսապաշտ
և զարմը վատի հատիր արմատից...

Հալածիր, Գթած,
տեղատարափը ցավ ու վշտերի,
քողը խավարի ու շուքը մահվան
երկնքից վանիր,
խափանիր, Արդար,
կորստյան խորհուրդն ամբարիշտների
և թունոտ լեզուն
կպցրու քիմքին ամբարտավանի...

Հսկիր ոճրարար մտքերը նրանց
և նրանց հանդեպ եղիր աններում,
խճճիր, Վերին, ոտքերը նրանց
իրենց հորինած որոգայթներում,
և զորությունը ցուցանիր նրանց
քո տերունական հրաշք մականի,

Տեր,
այնպես արա, որ ցնդեն հավետ
աղբյուրները մեր ողբ ու կականի...

Տեր, բարի գիշեր,
խաղաղ գիշեր ենք ուզում քեզանից,
որ վտակները մեր երազների
խառնվեն իրար ու դառնան գետեր,
որ խորշակահար տոհմածառը մեր
ընձյուղ տա կրկին ափունքին նրանց,
և ընձյուղներին
մշտնջենական Լույսը բողբոջի
գիշերվա մեջ, Տեր,
Լույսը խափանված,
Լույսը վիրավոր ու սմբակահար,
Լույսը որպես գիր
ու որպես աղոթք ու որպես ցորյան,
Լույսը որպես սեր,
Լույսը որպես խիղճ ու որպես մանուկ,
և ուզում ենք, որ անվրդով լինի
առավոտը մեր հանապազօրյա...

Տեր,
բերկրություն տուր մեզ այնքան տարի,
որքան աշխարհում տեսել ենք չարիք,
տուր Խաղաղություն մեզ այնքան
դարեր,
որքան աշխարհում Լույս ենք արարել:

Ախ իմ ավագներ, ախ, իմ զավակներ...

Ախ, իմ միամիտ, իմ հավատավոր,
ախ, իմ հեռավոր, մերձավոր պապեր...

Ախ, քանի անգամ, քանի հելուզակ,

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

Չգիտեմ, թե շնորհալի բանաստեղծ Գագիկ Դավթյանն ինչպե՞ս է ուսանում պոլիտեխնիկական ինստիտուտում, բայց բանաստեղծության «ինստիտուտում» նա լավ է ուսանում:

Անձամբ ես հետևում եմ նրա ստորագրությամբ լույս տեսնող բանաստեղծություններին (նույնիսկ թարգմանություններին) և պարզ նկատում եմ նրա աճը:

Նա, որ բոլորովին զերծ է հավուրպատշաճության ցավից (ինչպես իր սերնդակիցների մեծագույն մասը), միաժամանակ չունի այն բովանդակազերծությունը, այն (թող թույլ տրվի ասելու) «ոչ մի բան չասել» - ությունը, որից տառապում են իր սերնդակիցներից շատերը՝ երևի մոռանալով, որ լոկ մի՛ մղումով է մարդը խոսում՝ բա՞ն ասելու նպատակով, իսկ եթե գրում է՝ առավել ևս: Չէ՞ որ բանաստեղծի գործը, վերջիվերջո, նման է հեռագիր կամ նամակ գրելուն, այն տարբերությամբ, որ սրա հասցեատերը ինչ որ մի անհատ չէ, այլ մտերիմների բազմահազար մի բազմություն:

Այսպես է կյանքում:

Գրականության մեջ էլ կա՛մ այսպես պիտի լինի, կամ ոչինչ էլ չպիտի լինի (և չի՝ լինելու):

Գ.Դավթյանի մեջ, ահա՛, ինձ դուր է գալիս նրա այն ձգտումը, որ ուզում է բան ասել, և ասել այնպես, որ բան հասկացվի...

– Եկեք հիշենք Գագիկ Դավթյան անուն – ազգանունը (այսինքն՝ կարդանք նրա գրածները) և դրանով իսկ շնորհալի երիտասարդին ստիպենք արդարացնելու իմ և ձեր հույսերը...

ՍԵՐԳԵՅ ՍԱՐԻՆՅԱՆ

Ակադեմիկոս

Դավթյանի մենախոսություններում մի համակ դառնություն կա, որ բնավ սկիզբ չի առնում մաղձոտությունից: Դա փիլիսոփայական ընդվզում է մարդու բնույթին անհարիր այն արատների դեմ, ինչը օտար է բնության ներդաշնակությանը: Այդ դառնությունը սողոսկում է պատերազմի տագնապից, որն «աղավաղում է ի վերուստ բարի իրերի կարգը», ապա նաև կորստի ցավից, ծամածռվող շուրթերից, կեղծ խոստումներից, անտարբեր նայվածքների չար բնազդներից և արգահատելի նախանձից, որ թեև «տարիք չունի և չունի ծննդյան օր» ու թեև «անպտուղ է և անբուժելի», բայց կա, գործում է և «ապրում է միշտ»:

Գագիկ Դավթյանը հիրավի ասելիք ունի: Նրա մտորումները հարցահույզ են ու անհանգիստ, բառերն ազդու շեշտ ունեն, ինչուները՝ ճշմարտության որոնում:

ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գագիկ Դավթյանը նուրբ քնարերգու է, ասես ժամանակների խաչմերուկում ժամադրվել է մարդու և հայրենիքի անցյալի, ներկայի ու ապագայի հետ՝ հայացքը պարզած համաշխարհային պոեզիայի գոհարներին: Նրա բանաստեղծական նուրբ քնարականությունն ու խոհականությունն արդի հայ պոեզիան հարստացնում են նոր երանգներով: Մարդու մենության և ներքին մենախոսության արտահայտություն է Գագիկ Դավթյանի պոեզիան, որ զրույց է ինքն իր հետ: Անգամ «Վարք Բաբիկի» էպիկական պոեմում, որ թվում է պիտի լինի պատմողական պատում, ակնհայտ է կերպարի հոգեբանական ներքին մենախոսությունը:

Գագիկ Դավթյանը չափածո խոսքի վարպետ է, բանաստեղծական ձևերի նորարար հայ քնարերգության մեջ, քառյակների շղթայակապ պսակի առաջին հեղինակը և սոնետների պսակի առաջին կիրառողներից մեկը մեզանում:

Գագիկ Դավթյանի բանաստեղծական խոսքն արդի հայոց կյանքի դավթյանական պատկերացումն է՝ դրված գեղարվեստական ձևի մեջ, այժմեական ու հավերժական հարցեր արծարծող:

ՖԵԼԻՔՍ ԲԱԽՉԻՆՅԱՆ

Գրականագետ, թարգմանիչ

Ահա ինքնայրումի, ինքնանվիրումի պատրաստակամություն, ձգտում՝ ոչ միայն հայրենի երկիրը, այլև Երկիր մոլորակը կայուն, համաչափ ու ճիշտ ուղու վրա պահելու համար: Եվ այդ ամենը բանաստեղծական խառնվածքով, շնորհով, ներշնչումով...

Գագիկ Դավթյանը կյանքի թե՛ նրբագույն ոգին, թե՛ պրկված ջիղն զգացող բանաստեղծ է, տիեզերքի ոգեղեն ընկալումների հետ կյանքի իրատեսական, շոշափելի ապրումների երգիչ:

Բարոյական արժեքների պահպանության համար գրված Գագիկ Դավթյանի բանաստեղծական տողը նահանջի տեղ չունի: Այն սկսվել ու առաջ է ընթացել քայլ առ քայլ, հաստատուն, կամային որակներով, ասելիքի պատասխանատվությամբ: Նահանջի տեղ չունի, նախևառաջ, որովհետև թիկունքում հայրենի եզերքն է եղել՝ «լեռնակերտ բերդապարիսպը», որ բարի լուր ավետող զանգերի ղողանջի պես պաշտելի անուն ունի՝ Զանգեզուր:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՂԱԶԱՐՅԱՆ

Բանաստեղծ, թարգմանիչ

Գ. Դավթյանը այն «սահմանյալ» բանաստեղծներից է, որ միկրովիրաբույժի խորաթափանցությամբ է հյուսում համեմատությունների համակարգը: Սա չափածո խոսքի կառուցման զգուշավորություն չէ, այլ՝ գերազանց իմացության, տաղանդի փայլատակման և, ի վերջո, գրողի բարեկրթության ու պատվախնդրության դրսևորում:

Այնքան նուրբ ու պատկերավոր են նրա գրչի անցումները խորքից մակերես, բարդից՝ պարզություն, սևից՝ ճերմակ, ցավից՝ բերկրանք, որ անզեն աչքով պարզապես նկատելի չեն: Եվ հենց այդ է գրող – անհատը, նրա տարբերությունը գրիչ բռնողներից, նրա յուրակերպությունը վերջապես: Իսկ թե ինչ Գողգոթայով է անցել բանաստեղծը բյուրեղացման իր ճանապարհին, միայն նրա ճակատագրի մարդիկ կհասկանան. սեղմ ու հակիրճ խոսքով շատ բան ասելու կարողությունը քչերի մենաշնորհն է: Դավթյանը հենց դրանով է Դավթյան.

ԿԱԼԻՆԱ ԻԶԱԲԵԼԱ ԶԻՈԼԱ

Լեհ բանաստեղծ, թարգմանիչ, էսսեիստ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼՈՒՍՆԱՄԾՈՒՇԻ ՄԻՋԻՑ

(Գ. Դավթյանի լեհերեն գրքի վերջաբանից)

Հայ բանաստեղծ Գագիկ Դավթյանի պոեզիան արդեն իսկ լայնորեն ծանոթ է լեհ

քանի – քանիսիդ աչքերն են կապել,
քանի – քանիսն են
սնախոսությամբ անառաքինի
մեր հացը լափել,
քանի – քանիսն են
հավատարմության սուտ երդումներով
մեր գինին ըմպել,
սակայն թիկունքն են ցույց տվել իրենց,
երբ մեր երկինքն է մի փոքր ամպել...

Ախ, քանի – քանի թշվառականի
փառքով ու պատվով իր տունն եք
ճամփել,
քանի անզորի, քանի հզորի
փրկության համար նժույգ եք թամբել,
և քանի – քանի
օտարականի ծվատող ցավով
քանի գիշեր եք անքուն տառապել,
քանի կեղծավոր դրացու համար,
քանի օվկիանոս արյուն եք թափել,
իսկ նրանք անգամ մեզ չեն ճանաչել,
չեն էլ հառաչել,
երբ շառաչել է մեր գլխից վերև
հողմը մահաբեր...

Ախ, իմ միամիտ, մանկամիտ պապեր,
իմ հեռավորներ, իմ մերձավորներ,
ախ, իմ ավագներ,
ախ, իմ... զավակներ,
ախ, կայեններով լիքն այս աշխարհում
դեռ ինչքան պիտի դուք մնաք... Աբել...

Ոգեղեն պատկեր

Երազ էր կարծես, և ապրում էի ես այդ
երազում,
մի երանելի երազ էր հեռու,
և բոլորովին մոռացել եմ ես, չեմ մտաբերում,
թե երբ և ով էր կտակել արդյոք,
որ ծնվեմ այստեղ...

Մոռացել եմ ես, հիշում եմ սակայն,
որ երկնքի տակ այս անեզրական
այս հայրենիքը երբեք չեմ փնտրել,
միանգամից եմ ես նրան ընտրել...

Եվ հաստատ գիտեմ,
եթե ծնվեի ես երկրորդ անգամ,
հենց այստեղ պիտի ծնվեի նորից,
պիտի ծնվեի միևնույն հորից,
պիտի ծնվեի միևնույն մորից...

Բոլոր – բոլորին,
ովքեր ծնվել են այս հողի վրա,
ցանկանում եմ ես ամենից առաջ նույնպիսի
երազ,
որ դեռ չծնված նրանց զավակներն ապրեին
այնտեղ,
ուր ապրել եմ ես, մեկը՝ բոլորից, ծննդից
առաջ,
մի երազ,
որը մաքուր է, ինչպես լույսն այգաբացի,
մի երազ,
որը տեսնում են, սակայն, լոկ փակ աչքերով:
Լույս եմ կտակում բոլոր – բոլորին,
և թող որ լույսը մեր այս երազկոտ աչքերը
բացի,
որովհետև լույսն ապրում է միայն բաց
աչքերի մեջ,
լույս եմ կտակում,
որ նախնական է, ինչպես որ պահը
աշխարհարարման,
որ անվախճան է և այնքան զուլալ,
որ մարդ ուզում է
նրա ոգեղեն պատկերի առաջ
ծունկ չոքել ու... լալ...

Եկք փակ դռներից

Անելանելի իրավիճակներ
չեն լինում երբեք,
լինում են ելքեր,
որոնց դռները բաց են մեր առաջ,
պարզապես դրանք մեզ ձեռք չեն տալիս...

Սակայն, մարդ Աստծո,
այս դռները փակ՝
սրանք էլ, ախր, դռներ են ելքի,
և այս դռներից ելնելու համար
բա գոնե մի քիչ զոռ չտա՞ս խելքիդ

Անգլուխ ձիավորը

Աստված մեկին գանգ է տալիս,
մեկին՝ գլուխ,
ուրիշ մեկին՝ ոչ այս, ոչ այն,
և ամենքն էլ աստվածատուր իրենց ընծան
ընդունում են հեզ ու հլու...
Եվ ուրեմն,
ոչինչ չկա զարմանալու,
երբ ձիավորն է անգլուխ,
կամքն է Տիրոջ...
Տեր, ողորմեա զավակներիդ,
ահավոր է դառնում իրոք,
երբ եռում է մարտադաշտը,
ու երբ մահվան փոթորիկ է սար ու ձորում,
և անգլուխ ձիավորն է գլխավորում
հեծյալ վաշտը...

Աշխարհը քեզ նման

Ես քեզ այնքան որոնեցի,
որ աշխարհը ոտից գլուխ
սկսել է նմանվել քեզ ...

Օ, ես այնքան քեզ ցանկացա, -
որ, հիրավի,
քո անունով սկսեցի
կոչել բոլոր առարկաներն այս աշխարհի...

Եվ հիմա ես հարցնում եմ ինձ.

–Դու կա՞ս իրոք,
թե՞ այդ ես եմ քեզ հորինել
քո պատկերով...

Գուցե իրոք այդպես է դա,
գուցե ես եմ քեզ հորինել,
ու լավն էլ հենց
գուցե դա է,
որովհետև այդ ժամանակ
դու կմնաս ընդմիշտ ինձ հետ...

Ու հավատա,
եթե հանկարծ,
պատահաբար,
թեկուզ նույնիսկ մի վայրկյանով
ես քեզ հանկարծ դավաճանեմ,
դու հավատա, որ դրանից
լոկ ի՜մ հոգին պիտի մխա,

որովհետև

ուրիշների համար միշտ էլ ուրիշ ես դու,
և այդ ես եմ քեզ հորինել քո պատկերով...

Անհնարին զրույց

Անհնարին է
քո ներկայությամբ խոսել քո մասին,
անհնարին է...

Պապանձվում եմ ես
առաջին անգամ հանդիպման եկած
սիրահարի պես...

Համրանում եմ ես
տանջվող ջրերիդ երփներանգումից
շվարած ու լուռ
այս ժայռերի պես . . .

Եվ իմ բառերը,
այս խեղճ բառերը,
հլու – հնազանդ մի անզորությամբ
տարրալուծվում են քո ջրերի մեջ,
ալեհատներին
զարնվող – փշրվող ալիքներիդ պես...

Անհնարին է
քո ներկայությամբ խոսել քո մասին,
անհնարին է,

պապանձվում եմ ես,
համրանում եմ ես,
խեղճանում եմ ես...

Կարոտ

Երկինքն ասես
հայելին է հողագնդի...

Ծովը նրա աչքերում է արտացոլվում,
և նա ասես տարին բոլոր
իր գույներն է շաղում վերից
ծովի վրա...

Զմռան ցրտից գունատվում է
այն մարդու պես դիմագունատ
որ ողջ կյանքում հիվանդ սրտի բեռն է
տանում...

Դեղնախտով է հիվանդանում
աշնանը նա...

Ամռան տապից դեմքն է նրա
կտրում կրակ...

Գարնանը նա ծոր է տալիս երկրի վրա
բոլորագույն իր մանանան
և նրանով ներկում անտառ, դաշտ ու
արոտ...

Անպատմելի ինչ – որ կարոտ
ինձ առել է իր թևերին
և տանում է դեպի երկինքն իմ քարքարոտ,
կարծես մի ողջ հավերժություն
ես լուր չունեմ իմ լեռներից,
և երկինքը –
հայելին է ասես նրանց...

Քեզանից թաքուն

Թափառել եմ ես
մի ամբողջ գիշեր երկնակամարում
և աստղերի հետ զրույց եմ արել
քեզանից թաքուն...

Քեզանից թաքուն,
քո մասին,
սեր իմ...

Հիմա ձանձրացած զրույցից անծայր,
աստղերը քնատ աչքերն են փակում...

Անձրևը գարնան, որ գիշերն ի լույս
իմ լուսամուտն էր անդադար թակում,
աչքերն է թողել
իմ լուսամուտի սառը ապակուն...

Ես այդ աչքերը նվիրում եմ քեզ,
վերցրու, Արեգակ,
միայն թե նրանց խորքերում խոնավ
չկարդամ կրկին խղճահարության
այբուբենը ես...

Անտանելի է,
երբ խղճում են քեզ...

Լեռնագնացի երկրարդ սխալը

Երկու անգամ է սխալվում կյանքում
լեռնագնացը.

Առաջին անգամ՝
կամավ, թե անկամ՝
ընտրության պահին մասնագիտության,
որով պիտի որ վաստակեր կյանքում
հանապազօրյա իր պատառ հացը,
հացը իր մանկան...

Իսկ երկրորդ անգամ...

Իսկ երկրորդ անգամ նա չէր սխալվի,
թե չսխալվեր առաջին անգամ...

ընթերցողին: Նրա բանաստեղծությունները հրապարակված են լեհական էլեկտրոնային կայքերում, գրական, մշակութային պարբերականներում և ահա գիրքը:

Հույժ բազմազան է Դավթյանի ստեղծագործությունը: Նրանում կարելի է գտնել և՛ նուրբ քնարական, և՛ ջերմ հայրենասիրական գործեր՝ նվիրված Հայաստանին, և՛ խորունկ փիլիսոփայական խորհրդածություններ... Այս բանաստեղծի գործերը շատ հուզական են և գրված են ասես սրտի պոռթկումների ազդեցությամբ: Ըստ երևույթին այստեղից էլ գրքի անվանումը՝ «Աստանդական սիրտը»:

Չափազանց քնքուշ է բանաստեղծի լիրիկան, առանց սենտիմենտալության, լեցուն ջերմությամբ, համակված թերասացության թեթև մշուշով: Ինչպես թեթև շղարշի միջից արծաթե դեմքով շողացող լուսինը:

Երբեմն այն հագեցած է էրոտիկայով, թրթռուն ցանկությամբ, բայց մշտապես մինչև վերջ չբացված, չքողազերծված...

Բանաստեղծի հարուստ պատկերավորությունը հաճախ ընթերցողին տանում է միստիկական, տագնապալի տարածություններ՝ լեցուն անսովոր, գերբնական առարկաներով ու երևույթներով, արթնացող տարերքներով և նրանց միջև խորհրդավոր հարաբերություններով:

Դավթյանը գրում է երջանկության մասին, որ երբեք անհրաժեշտ պահին մեր դուռը չի թակում, այն մասին, որ կյանքը մեկ գործողությամբ տրագիկոմեդիա է, որը անհնար է խաղալ երկրորդ անգամ, մարդկային հիմարության մասին, որ հիմնականում անբուժելի է թե՛ ի մասնավորի, թե՛ առավել լայն իմաստով:

Գագիկ Դավթյանի յուրաքանչյուր բանաստեղծություն ուշադրություն է գրավում, ստիպում է խորհել, մնում է հիշողությանդ մեջ: Սա շատ բարձր մակարդակի պոեզիա է: Ես շատ ուրախ եմ, որ կարողացել եմ լեհ ընթերցողներին ծանոթացնել այս բանաստեղծություններին, որոնք հիրավի արժե կարդալ:

ՄԱՂՎԱԼԱ ԳՈՆԱՇՎԻԼԻ

Բանաստեղծ, թարգմանիչ, Վրաստանի գրողների միության նախագահ

ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

(Գ. Դավթյանի վրացերեն գրքի առաջաբանից)

Երեք-չորս տարեկան որդիս հեռուստացույցով կինոնկար էր դիտում. Կռվում էին չինացիներն ու հնդիկները:

– Մայրի՜կ, մայրի՜կ: Մերոնք հաղթեցի՞ն, - ճչաց նա:

– Իսկ ովքե՞ր են այդ «մերոնք», - հետաքրքրվեցի ես:

– Մերոնք նրանք են, ովքեր արդար են ու համարձակ, - պատասխանեց նա:

Երեխաներն ու բանաստեղծները հենց այդպես՝ «յուրայինների» և «օտարների» են բաժանում աշխարհը:

Արդ՝ ո՞վ է Գագիկ Դավթյանի՝ փայլուն հայ բանաստեղծի և թարգմանչի համար «յուրայինը» և ո՞վ՝ «օտարը»:

«Յուրայինը» դա այն պատանին է.

Որ լուսնի դալուկ ճառագայթներից իր երազանքի թելերն է մանում,
որ թռչկոտելով գագաթից գագաթ այրվող մատներով աստղեր է քաղում,
և նստած հանգիստ ու ինքնամոռաց
աստղերի հետ է քարկտիկ խաղում...
Նա է «յուրայինը», ով տագնապում է ուրիշի ցավից, նա,
որին չեք տեսել կյանքում երբևէ ու չեք ճանաչել,
և որ պատրաստ է վերքերի համար ձեր սրտակեղեք
ինքն իրեն խաչել...

Բանաստեղծը լավ գիտի, որ պոեզիան կախարդական զորություն ունի և, որ բարի խոսքը բժշկող բալասան է, ուստի և նա շռայլորեն բարի բանաստեղծական հյուսվածքի սպեղանիով ամրոցում է մեր հոգու վերքերը:

Իսկ բարձր պատնեշներից այն կողմ «օտարներն» են՝ ամբարտավան, երկդիմի, ինքնագոհությամբ համակված ժամանակակից քաղաքական – ա – գետները, որոնք վարտիքակիր, փողկապավոր ձիերի պես կրկեսային

ծառս են լինում՝ խարազանի շաչյուններից սրտապատառ
և փայտիկի կախարդական շարժումներին հլու և հեզ,
մոռացած գլխավորի՝ «ցեղակիցների» հոգսերի և ցավերի մասին, քանի որ
նրանց պետք է ընդամենը վարժեցընող իրենց քեռին,
ավելի ճիշտ՝ շաքարն է պետք նրա ձեռի...

Ահա նրանց է հասցեագրում բանաստեղծը դառը հեգնանքով ու արգահատանքով համակված իր խոսքը, նրանց, ում համար Փողը տիրակալ է, խիղճը՝ ավելորդ բեռ, իսկ Ծառայողական բազկաթոռը՝ կուռք:

Ինչպես բոլոր իմաստունները, Գագիկ Դավթյանը բացահայտել է հավերժության գաղտնիքը.

...կսպասեմ ես քեզ կլոր մի տարի,
թե չգաս կրկին,
կսպասեմ մի դար,
թե նորից չգաս,
կսպասեմ նորից
և...
կապրեմ ամբողջ մի հավերժություն:

Գագիկ Դավթյանը վրաց գրողների նվիրյալ բարեկամն է և իր այդ հավատարմությունը բարեկամությանը մե՛կ անգամ չէ, որ ապացուցել է՝ ինչպես գործով, այնպես էլ սիրո ջերմությամբ:

Նա թարգմանել և Հայաստանում հրատարակել է ավելի քան երեք տասնյակ վրաց բանաստեղծների:

Հենց Վրաստանում է նա արժանացել Վլադիմիր Մայակովսկու և Շեքսպիրի վրացերեն առաջին թարգմանիչ Իվանե Մաչաբելու անվան միջազգային մրցանակներին:

Գագիկ Դավթյանը նաև ի՜մ վաղեմի բարեկամն է, ինչով ես անկեղծորեն հպարտանում եմ:

«Բաց նամակ». այսպես է կոչվում Գագիկ Դավթյանի բանաստեղծական ժողովածուն վրացերեն թարգմանությամբ: Հավատում եմ, որ բանաստեղծական այս նամակները կթափանցեն պոեզիայի բոլոր սիրահարների և գնահատողների սրտերը, կհիացնեն նրանց և կմղեն մտորումների:

●

Ավագ Եփրեմյան



Լուսանկարը՝ Ռաֆայել Կարապետյանի

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծնվել է 1958 թվականի փետրվարի 25-ին, Կապանում:
Ավարտել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետը:
Եփրեմյանի բանաստեղծությունները պարբերաբար տպագրվել են հայկական գրական մամուլում:
2008 թվականից բնակվում է Երեւանում:
Հրատարակել է «Ես իմ լեռան դեմ», «Աստղաքայլ», «Մեկնության ժամանակը», «Գրվածք», «Վարք. սևագրություն», «Երգչախումբը ցրվել է» բանաստեղծական ժողովածուները:
Հայերեն է թարգմանել Բ. Պաստեռնակի, Ալ. Բլոկի, Վլ. Նաբոկովի եւ այլոց ստեղծագործություններից:
Առանձին գրքով լույս է տեսել Իոսիֆ Բրոդսկու «Զրույց երկնաբնակի հետ» ժողովածուն Ա. Եփրեմյանի թարգմանությամբ:

Հատվածներ «ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ ՑՐՎԵԼ Է» գրքի առթիվ գրված «ԿՇԻՌՆԵՐ ԱՆԴՈՒՆԴԻ ԵԶՐԻՆ... ԵՎ ԾՈՎԱՓԻՆ» գրախոսությունից

16/12/2017, ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ

* * *

Ավագ Եփրեմյանի ... հերոսը ոչ թե ժամանակակից քաղաքական, բանող, խոսող, հասարակական-քաղաքական, մոդեռն կամ ավանդապաշտ, դժգոհ կամ խոզի պես գոհ քաղաքացիական միավորն է, այլ՝ մարդը. և այն էլ՝ ոչ թե զանազան կեցվածքներ ընդունած մարդը, այլ՝ մահկանացուն: Այս գիրքը մարդաբանության, գոյաբանության, էկզիստենցիայի ժանրի մեջ է մտնում: Այն ոչնչի կոչ չի անում, նրա միակ արածը ապրելու և մեռնելու շառավիղներն ընդլայնելու անձնական փորձն է:

* * *

Ավագ Եփրեմյանի բանաստեղծությունների թարմությունը ո՛չ աֆեկտիվ է, ո՛չ ազատ վարքով, ո՛չ էլ զգայացունցությամբ: Ընդհակառակը, դա ներսույզ բանաստեղծություն է, որը հենց ներսույզ ընթերցում է պահանջում: Հենքը՝ կրկնեմ՝ գոյաբանական վիճակներն են՝ «մարդու և անասունի ողջ նախնով». իրենց վախերով ու տագնապներով, ոչնչի հանդեպ սարսուռներով և ամեն ինչի իրենց ներընկալմամբ, միով բանիվ՝ ծովափին ու անդունդի եզրին մարդու քաշի ողջ նրբերանգներով: Լեզուն՝ մինիմալիզմից («Վակուում» գեղեցիկ շարքը) մինչև մաքսիմալիզմ: Լեզուն բառային ու քերականական-շարահյուսական գեղեցիկ ձևակերպումներից ձգվում է մինչև բառախաղ, սակայն վերջինս, բարեբախտաբար, ոչ թե անեկդոտի ու «խոխմայի» այսօր շատ տարածված էժան լուծումներով, այլ՝ իրավիճակի սրությունը լեզվական-լինգվիստիկական դաշտի սրումներով ընդգծելով: Հենց այստեղ չմոռանամ ասել, որ Ավագ Եփրեմյանը հիմնականում գրում է ոչ թե պատկերներով կամ մետաֆորներով (թեև դրանք էլ կան), այլ՝ ապրումների, ներսուզումների ասոցիատիվ հոսքերով, մի տողին, մի ապրումին մյուսը զուգադրելով, ինչը շատ նուրբ հոտառություն է պահանջում:

* * *

Ավագ Եփրեմյանը արդի հայ բանաստեղծության մեջ ապրումը ապրումի հետ կապելու, մտքից միտք ցատկելու, պատկերից պատկեր բխեցնելու, այդ ամենով միևնույն տրամաբանության մեջ մնալու և այդ ամենը նույն թելի վրա շարակարգելու եզակի շնորհ ունի: Ըստ որում՝ դա արվում է ոչ թե տրամաբանականության օրենքներով, այլ՝ ներքին մի կապակցման, որտեղ, դիցուք, 1-ի և 3-ի կապը երկուսի կամուրջով է, բայց այդ երկուսը չի արտահայտված, թողնված է ընթերցողի մտապատկերի մեջ, որպեսզի նա իր այդ մտապատկերով ինքը ոտքը դնի այդ 2-ին և անցում կատարի հաջորդ թվին: Սա նրա բանաստեղծությունների նուրբ ու խորասույզ ընթերցում է պահանջում. և ընդհանրապես՝ գիրքը գրված է նրբաճաշակ ընթերցողի համար, - ովքեր ոչ միայն կարող են ընկալել նրա բանաստեղծությունները, այլև մասնակցել դրանց, դրանք լրացնել և տանել իրենց ուզած ուղղություններով:

ՀԱԿՈԲ ՄՈՎՍԵՍ

ՄԵԶՆԻՑ ԴՈՒՐՍ

Սահման է, եւ ահա խաղաղ մահեր են ինձ այցելում,
բարեհաճ են նրանք, առանց հետին մտքի, եւ նրանց
սահքը դեպի ինձ, սա՜հքն ուրվագծող անգույն կայծերում
աղետի հետք անգամ չկա, բայց դեռ չկա նաեւ, թե ինչ է գրած
այնտեղ, ուր գրած պիտի լիներ... այնպիսի բաներ,
որ մարդը դեռ չի գրել (պոնկին պիտի մոռացվի Ելիցը),
եւ դրանցից մեկն էլ ահա, գուցե, խաղաղությամբ կբաներ՝
թե երկինքը որ կա, երկի՜նքը... մեզանից դուրս է երիցս:
Մեզանից դուրս ինչ կա՝ երկինքն է, ինքն է հենց,
այս կամ այն ամայն աշխարհում նույնն է մարդը՝ նույն
աներկինքն է՝ իր սահմաններից կառչած սահմանահեղձ
եւ միշտ անտուն: Չեմ հիշի՝ ո՞ւմ տան առջեւ էր... բալենու
ճյուղերից էին կախված մահերը՝ կանչող ու կարմիր ու կարմիր,
շողշողուն - հատ առ հատ - ասես տան անընդհատ խոստում...
...Տունը, կարմիրը, եւ ահա՝ հիմա արդեն երկինքն էլ - ճախրելով առ մի -
ճխում են այնտեղ՝ մերձ այն սահմանին, որ կա այլեւս միայն իմ խոսքում:

ԲԱՌԵՐԸ

Աշխարհը փոխեցիր բառերի հետ, ոսկին
արդեն չկար: Գոհացար մնացյալ արծաթով.
գաղտնիքի պաղարյուն այդ գետը՝ սոսկ իր՝
վտարանդի շնչառմամբ՝ ցավերը ներս ծաթող:
Գրեթե չի հոսում. մահեր
ու քիչ դեռկյանք, իսկ դրսից՝ հայելին սառցակալ
մի Դեմք է միայն - որին մարդու ածական
չի կպչում երբեք - մոռապահել:
Բառե՞րը. դեռեւս իրենք են՝ երկնային նույնը,
դրանք շարակցելու շնորհն է, որ հետ են առել,
եւ ահա - բառերս, ես, աշխարհի ցավ առթող անունը,
ցավերն իրենք էլ՝ կարգված թե տարատարափ -
պաղ ծփում ենք... որպես աշնան արծաթե մառեր,
որպես... արարչակա՞ն... նախապարապ...

ՀԵՌԱՎՈՐ ԽՆՋՈՒՅՔ

Այս տարածության մեջ – Արարչից մինչեւ Ավերիչ...
Էլ ոչ հանդիպում կարող ես ճաշակել, ոչ բաժանում.
նույնկերպ լցվել ու թափվում են իրենց գավերից
ե՛ւ կյանքը, ե՛ւ մահը... ինչպե՞ս սա որեւէ ժանրում

վերապրես... Նորից դարեր, ժանրեր, սրտեր հատել՝
խմելով թափվող բաժակներից. ամեն մի կումը
դառն է ավելի, իմ անկարեկից հանդիսատես,
քան աշխարհը, որ Եղավ: Որ հիմա հոգուս միգում է.

հեռավոր այնտեղ են՝ նույն սեղանի շուրջը՝
ե՛ւ կյանքի կտավին մահեր Նկարողը, ե՛ւ Հայրը, ե՛ւ Որդին,
ե՛ւ բառեր բռնկող Շունչը,
եւ բառերը՝ մնացած առանց կոկորդի...

ԵՐԿՏՈՂ

Մինչեւ կոկորդը թաղված հողերում խոսքի՝
Մարդը քամում է վերջին դառնության ոսկին:

Գիտի՝ իր երկար կյանքը երկտող է՝ փոշի,
Որ մեծավերջ-վերջատանջ մի փոքրիկ խորշից

Միրով, երեւի՝ սիրով, կսրբի քամին,
Հավանաբար՝ բարեգութ-ճարտար մի ժամի:

Հետո... նույն Աստծո Հոգին՝ Հրահուր Կրակ,
Նույն կյանքերը կփնտրի ջրերի վրա.

Ուրիշ կյանքեր չեն լինում, չի փորձում հիշել,
Ուրիշ լինում են միայն ցերեկ ու գիշեր,

Որ մոլեգնում են ամբողջ լայնք ու երկայնքով՝
Անկրկնելի, սակայն միշտ՝ հաշվապահ կրքով:

Ու չեն խաղաղվում, մինչեւ չբովանդակեն
Ցնծություն ու հավատամք, մոլություն ու քեն:

...Մինչեւ կոկորդը թաղված հողերում խոսքի՝
Մարդը քամում է վերջին դառնության ոսկին՝

Իսպառսպուռ թոթափված գոյացման կրից՝
ԵԼՔ գտնի որ այս ՀՐԻՑ, ՋՐԵՐԻՑ, ԳՐԻՑ:

ԷԼԵԳԻԱ

(դասական ART-ագրություն)

Հոգուս մեջ՝ բառեր,
սրտումս՝ ցավ,
շուրջս՝ աշխարհի
ուրվագծեր...
Ի՜նչ երեխաներ
եկան-անցան,
դայակը դեռ կա՝
Չարիքը ծեր:

ՆԱԽԱԲԱՆ

Մարդիկ ավելի քիչ են,
Քան տարածությունը,
Բայց՝ շատ, քան ժամանակը:
Ահա թե ինչու՝ ամեն ինչ դառնում է քաղաք.
Ինչքան ավելի շատ ես ընդգրկում,
Այնքան չքանում են դիմագծերդ:
Չքացած դիմագծերով հեշտ է ճչալը.
Եւ ահա ճչում են փողոցները՝
Տարբեր ուղղություններով,
Շենքերը՝ իրենք իրենց մեջ,
Անդեմ հավատները՝ ընդդեմ տաճարների,
Հույսերը՝ որպես չհերիքող ժամանակ:
Այդուհանդերձ, հիշել,
Որ բառն ընդամենը կանխազգացում է,
Հատկապես՝ նախախնամ աշխարհում,
Իսկ կանխազգացումը բաժանելի չէ,
Հատկապես՝ մարմնի եւ հոգու,
Հատկապես՝ պատերազմից առաջ:
Պետք է հաղթել:
Նույնիսկ՝ ի վնաս բանաստեղծության:

ՀԻՆ, ՀԻՆ

Բանաստեղծություն իմ, մի՛ աղմկիր,
Սա երազ է, ձյուն է, մի՛ աղմկիր:
Սոված այստեղ գայլի կաղկանձն անգամ
Կարկամ քնքշություն է, մի՛ աղմկիր:
Սրան էինք հասու, սեր կարծեցինք նաեւ
Դավաճանությունը, մի՛ աղմկիր:
Երկնակամարը, տես, կա-կլինի,
Քանի դեռ դու սյուն ես, մի՛ աղմկիր:
Նույնիսկ եթե արդեն ունկդ է պատռում
Մահվան վայնասունը, մի՛ աղմկիր:
Չէ՞ որ կյանքը եղավ, եւ դու եղար
Նրա մի խոր սույլը, մի՛ աղմկիր:

* * *

Մեր հոգում արեւ կա:
Բայց հիմա գիշեր է:

ՀԱՅԱՍՏԱՆ

Նրանք գիտեն,
որ անունները
քեզնից են ծագում:
Նրանք ուրիշ
անուն են ուզում:
Նրանք չգիտեն,
որ ուրիշ անուն չունեն:
Նրանք չգիտեն,
որ առանց Քեզ
իրենց անունն էլ
չեն ունենալու:

ՈՒՐԲԱԹ ՕՐ

Մահամոտ ուրբաթ մի օր էր,
Զիգզագը կյանքի կամ կորը
այնքան շեշտակի ու խոր էր
ծվատում սրտի անդորրը...

Միտք ու ըմբռնում բաց առել,
ցնծում էր նախորդ պատկերով,
օրը, որ գիտեր բաց անել
մատյանը՝ մարդու պարտքերով,

իսկ շուրջս, Երկի՛նք, ի՜նչ իգուր
քաղաք էր՝ զրաջան, վրդով,
ու խորտակ ժխորում՝ լեզուն
ժպտում էր կոտրված սրտով:

Ինչ շնչեղ, ինչ քաղցած, ինչ խրթին,
զիգզագ առ զիգզագ, կոր առ կոր
կյանքն անցավ սրտերից անդին...
այդ ուրբաթ՝ մահամոտ մի օր

Սուսաննա Գրիգորյան

Սուրբ Գրիգոր Տաթեւացու աշխատություններից դուրս բերված «առակաւոր խօսքի» նմուշներ

Կենսագրություն

Ծնվել է 1956 թ. Երեւան քաղաքում:
Բանասիրական գիտությունների թեկնածու է. թեզը՝ «Գրիգոր Տաթեւացու լեզվագիտական հայացքները»:
2000 թվականից առայսօր ՀՀ կառավարության «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ տնօրենն է:
Ավելի քան 35 գիտական հոդվածի եւ 12 աշխատության հեղինակ է:
Մենագրություններն են՝

- Գրիգոր Տաթեւացու լեզուագիտական հայեացքները, Հանդէս ամսօրյա, Վիեննա 1989, էջ 195-255
- Բառերի բացատրութիւնը Երգ երգոցի միջնադարեան մեկնութիւններում և ձեռագիր բառարանները, Հանդէս ամսօրեայ, Վիեննա, 1995:
- Պատմական քերականության հարցեր (Գրիգոր Տաթեւացի), Երեւան, 2002
- Գրիգոր Տաթեւացի, Թեւավոր խոսքեր և ասույթներ, Երեւան, 2003
- Գրիգոր Տաթեւացի, Միջնադարյան առակներ և զրույցներ, Երեւան, 2006
- Գրիգոր Տաթեւացի, Ներբողեան Հովհան Որոտնեցու, Երեւան, 2007
- Նորահայտ բառեր 14-15-րդ դարերի մատենագրության մեջ (Գրիգոր Տաթեւացի), Երեւան, 2009
- Գրիգոր Տաթեւացի, «Գիրք հարցմանց»-ի համաբարբառը (քառահատոր աշխատություն, 2011-2013թթ.
- Բժշկագիտական հասկացություններ Գրիգոր Տաթեւացու գրական ժառանգության մեջ, Երեւան, 2013
- Գրիգոր Տաթեւացի, «Գիրք հարցմանց»-ի նորակազմ բառերի քննություն, Երեւան, 2014
- «Грамматические вопросы в трудах Григора Татеваци», Երեւան, 2016:
- Գրիգոր Տաթեւացի, «Գիրք հարցմանց», աշխարհաբար թարգմանություն, Երեւան, 2020, (1016 էջ):

Ըստ Սուսաննա Գրիգորյանի՝ «... Հայ մեկնողական գրականությունն իբրեւ շտեմարան ամբարում է բառապաշարի գրավոր եւ բանավոր հարստությունները, որոնք բերում են նաեւ ժանրային բազմազանության»:
Միջնադարյան մեկնողական գրականության մեջ «առակաւոր խօսքին» հաճախ են դիմել հայ մեկնիչները. այդպես էլ ձեւավորվել է առակի ժանրը:
Սուսաննա Գրիգորյանը Սուրբ Գրիգոր Տաթեւացու աշխատություններից դուրս է բերել «առակաւոր խօսքի» նմուշները եւ փոխադրել գրական հայերենի:
Դրանցից մի քանիսը՝ ստորեւ:

Առակներ

Վարդապետներից մեկը, երբ ծերացավ՝ կուրացավ. եւ ամեն ժամ ցանկանում էր սուրբ սրտով քարոզել: Ձանձրանալով՝ պատանին մի օր տարավ նրան մի բարձր լեռ եւ ասաց. ահա՛ ժողովուրդը, քարոզի՛ր: Եվ նա քարոզեց. [մինչդեռ] ոչ ոք այնտեղ չկար: Օրհնության վերջում ձայն եկավ հրեշտակներից, որոնք ասում էին. բարի քարոզես, ո՛վ բարի քահանայապետ (Գիրք քարոզութեան, Ձմերան, էջ 376):

* * *

Ասում են՝ մի մարդ եկավ խոստովանահոր մոտ եւ ասաց. մի կղերի եմ հարվածել. նա հարցրեց. փայտո՞վ ես հարվածել, թե՞ թրով. եւ սա ասաց՝ թրով: Դարձյալ հարցրեց. թրի բերանո՞վ ես հարվածել, թե՞ կողքով, եւ [սա] ասաց՝ բերանով: Դարձյալ հարցրեց. խոցեցի՞ր, թե՞ սպանեցիր, եւ նա ասաց՝ սպանեցի: Ասաց խոստովանահայրը. ո՛վ թշվառական, սպանել ես եւ ասում ես, թե «հարվածեցի». ծանրագույն չէ՞ սպանելը, քան հարվածելը:

* * *

Մի թագավոր, որ իշխում էր տասը թագավորների, երբ վրա հասավ մահվան օրը, հրամայեց իր պատանը կապել մի երկար ձողի եւ քաղաքով մեկ շրջելով՝ բարձր գոչել. ամբողջ թագավորությունից, ինչ ուներ արքան՝ այսքանն է տանում իր հետ:

Ավանդություն

Երբ նրա դայակը տարավ նրան Կեսարիա [եւ] քաղաքի մերձակայքում նստեց մի ծառի տակ հանգստանալու, մի թռչուն, որին ոմանք գուրգուր, ոմանք էլ դռուն են կոչում, եկավ, նստեց ծառին եւ կանչեց՝ գուր-գուր: Դայակը կռահելով, որ Սուրբ Հոգին է [իջել] թռչնակերպ՝ աղավնու նմանությամբ, մանկանն անվանեց Գրիգոր, այսինքն թե՝ գրկված եւ գգված եղավ Սուրբ Հոգու կողմից:

Զրույց

Ինչպես այն թագավորը, որ բնավ չէր ուրախանում, սակայն արդար դատում էր: Եվ հարց տվեցին թագավորին, թե ինչու չի ուրախանում: Եվ նա ասաց՝ վաղը պատասխան կտամ: Իսկ մյուս օրը հրամայեց փողհարներին փողեր հնչեցնել, եւ [բոլորը] խիստ վախեցան: Ապա բերել տվեց եղբորը եւ մերկ նստեցրեց փտած աթոռի վրա, իսկ աթոռի տակ հոր էր, գլխի վրա կախված սուր եւ սրեր՝ առջեւից եւ աջ ու ձախ կողմերից: Եվ գուսաններ բերել տվեց, եւ ուրախություն [սկսվեց] նրա առջեւ: Եվ հարցրեց թագավորը. ինչո՞ւ չես ուրախանում, եղբայր: Եվ պատասխանեց եղբայրը. «Այսքան նեղության մեջ ինչպե՞ս ուրախանամ»: Եվ ասաց թագավորը. «Ես էլ ինձ բազում նեղությունների մեջ եմ տեսնում, որովհետեւ դու վախեցար իմ փողի ձայնից [այն դեպքում], երբ վնաս չես տվել ինձ, իսկ ես վախենում եմ վերջին փողից, որովհետեւ մեղավոր եւ վնասակար եմ Աստծուն»:

Խրատներ

Ինչպես նրանք, որ սաթրինճ [զառ, նարտ -Ս.Մ.] են խաղում՝ հերթով ձեռքն են առնում այն եւ ձգում թասը:

Եվ քանի դեռ խաղը մեկինն է՝ խաղընկերոջից բազում իրեր է տանում, իսկ ընկերը խաղաղ նստած [սպասում է] մինչեւ խաղը շրջվի իրեն:

...Իսկ երբ հաղթում է, իսպառ կողոպտում եւ մերկացնում է ընկերոջը:

Եվ այժմ խաղը մեղավորներինն է, որ ճարտար խաղում են՝ ուտելով, խմելով, հարբելով, պոռնիկանալով, խլելով ու զրկելով. եւ Աստված համբերում է մինչեւ խաղը դառնա իրեն, եւ հետո ինքը կխաղա, իսկ մեղավորները կլռեն...

* * *

Ինչպես, օրինակ, եթե թագավորը մի մարդու խնամելու տա բազում եւ տեսակ-տեսակ կենդանիներ, որոնցից ամեն մեկը կա՛մ ընդակեր, կա՛մ մսակեր, կա՛մ խոտակեր եւ կա՛մ հացակեր լինի, ուրեմն նրանցից ամեն մեկին անհրաժեշտ է իր կերակուրը տալ, եւ նրանք կենդանի կմնան: Իսկ եթե ընդակներին միս տա եւ առյուծին՝ ունդ, տգետ կենդանիները չեն ապրի:

Ուստի աղաչում եմ իմաստությամբ հովվապետել սեփական ժողովրդին:

* * *

Ինչպես օրինակ, եթե խավարում փակված են ի ծնե կույրն ու լույսը տեսած [մարդը]: Ահա նա, որ ի ծնե կույրն է, անհոգ է որովհետեւ համաբնակ է խավարին, իսկ որ տեսել է լույսը, երեք դժվարություն է կրում. նախ կարոտում է լույսը, որից զրկվեց, երկրորդ՝ խավարի ներկայիս տառապանքը, երրորդ՝ հույսը, որ տեսնելու է այն եւ տանջվում է ուշացումից:

* * *

Եվ ինչպես, երբ ծառն են տնկում, զգուշանում եւ պահպանում են, որ ամրանա եւ պտուղ տա, այդպես էլ պետք է խրատը լսել, մտապահել, որ պտղաբերի:

* * *

Ասում են իմաստունները, կորած իրը պետք է փնտրել կորցրած տեղում, ինչպես օրինակ այն, որ նետն արձակվում է պարտեզում եւ կորչում, պետք է նույն ուղղությամբ մեկ այլ նետ արձակել՝ առաջինը գտնելու համար:

* * *

Հարկ է, որ նրանք, ովքեր ունեն ինչք եւ հարստություն, օգնական եւ ուղղորդող լինեն աղքատներին, որբերին, այրիներին. բնության կարգն է՝ ստամոքսը կերակուրը բաշխում է ամբողջ մարմնին, այդպես էլ մենք ենք պարտավոր մեր ունեցվածքը հավասարապես բաշխել:

Ինչպես քաղաքում տերը եւ ծառան, ճորտը եւ պարոնը, տանուտերը եւ մշակը միմյանց կարիքն ունեն, այդպես էլ հարուստը եւ աղքատը. որովհետեւ աղքատը մեծատնով է ապրում, իսկ մեծատունը՝ աղքատով կառուցվում:

* * *

Ամենայն ոք՝ առաջնորդ, թե վարդապետ կամ քահանա, եթե գովելիս եւ սիրելիս ուրախանում եւ աշխուժանում է, իսկ նախատելիս կամ չարչարվելիս տրտմում եւ թուլանում՝ ժողովրդի ճշմարիտ բարեկամը չէ:

* * *

Մի՞թե տեսանելի չէ երկրագործի օրինակով. երբ հավասար են լծում լծվորին, գործն անխափան առաջ է գնում, իսկ եթե մեկն ըմբոստանում է՝ ընդհանուրին է խանգարում:

* * *

Բուսանիմք սիրով, կանաչիմք յուսով, ծաղկիմք հաւատով եւ պտղաբերիմք բարի գործովք:

●

«Սուրբ Գրիգոր Տաթեւացի», կտավ, յուղաներկ, 70x60, 2010թ., հեղինակ՝ Ռոբերտ Կամոյան

Հատված Գրիգոր Տաթեւացու «Սողոմոնի առակների մեկնությունը» գրքից

Հարց. Ինչո՞ւ էին Սողոմոնը եւ մյուս մարգարեները եւ Տերը Ավետարանում առակներով խոսում:

Պատասխան. Երեք պատճառով: Նախ, որովհետեւ առակը օգտակար է խոսքին եւ բացատրում է ասվածը: Երկրորդ. որովհետեւ առակը հասկանալի է սիրելիներին, իսկ օտարներից ու անարժաններից՝ ծածկված, ըստ այնմ. «Լսելով կլսեն եւ չեն իմանա եւ այլն» (Ես 6.9): Երրորդ. որովհետեւ ինչպես երեւացող բաներին նայելով աներեւույթներն ենք ճանաչում, այնպես էլ երեւացող օրինակն ու խոսքը լսելով, մտքի մեջ աներեւույթներն ենք ճանաչում:

Քանզի խոսքը երեք կերպ է լինում, այսինքն, ընդհանուր խոսք, առակավոր խոսք, իմաստության խոսք: Արդ ընդհանուրը ամեն մարդու խոսքն է, առակավորը՝ աշակերտներին ուղղված խոսքը եւ իմաստության խոսքը՝ իմաստուններինն է:

Հարց. Ի՞նչ է առակը եւ ի՞նչ է օրինակը:

Պատասխան. Առակը խոսքով է, իսկ օրինակը՝ առարկաներով:

Դարձյալ, առակը գործողությանն է վերաբերում, ինչպես դա լինում է գործելու եւ կրելու սեռերում, իսկ օրինակը՝ ձեւին, ինչպես քանակի եւ որակի սեռերում այն բաների, որոնք համեմատվում են:

●

Արկադի Ծատուրյան



Կենսագրություն

Ծնվել է 1937-ին Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղում:
Ավարտել է Երեւանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը:
Երկար տարիներ հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչ է աշխատել հայրենի գյուղի Գ. Սեւունցի անվան միջնակարգ դպրոցում:
1984-ից Ներքին Խնձորեսկ սահմանամերձ գյուղի միջնակարգ դպրոցի տնօրենն էր, հետագայում՝ Գ. Սեւունցի անվան միջնակարգ դպրոցի տնօրենը:
Գրել է բանաստեղծություններ, պատմվածքներ, հավաքել ժողովրդական բանահյուսության գոհարներ, Արցախյան ազատամարտի մասին պատմություններ:

Անտառային հեքիաթ (կրճատումներով)

Ամբողջ անտառն արդեն գիտեր, որ ժողով է լինելու և այդ ժողովում հանդես է գալու արքա Առյուծը:

Հիմա, փառք Աստծո, որ այդ հին ու մռայլ ժամանակներն անցան: Հիմա բոլորի համար ազատ ուտելու, ազատ շրջելու, ազատ գործելու ասպարեզ է բացվել:

Այդ խմբերը՝ ոհմակ, հոտ, պարս, բոլուկ, երամ կարող են պայքարել ինչպես իրար, այնպես էլ գործող իշխանությունների դեմ: Այդ խմբերի ու միավորումների գործունեությունն այնքան ազատ է, որ կարող են իրենց ուզածի պես բամբասել, զազրախոսել, ցեխ շպրտել սրան-նրան պախարակել ում ցանկանան, ու վատաբանել մեկը մյուսին: Ազատ ու բացահայտ պայքարի ասպարեզ է բացվել բոլորի համար: Թող իմանան մեր կռկռացողները, ծվծվացողները, կռնչացողները և ղունղունացողները հրապարակավ կարող են պայքարել առյուծների, վագրերի ու գայլերի խմբավորումների դեմ: Նույնիսկ ճագարներն ու նապաստակները կարող են ստեղծել իրենց ընդդեմ խմբերը և պայքարել աղվեսների, շների ու բորենիների միացյալ ուժերի դեմ:

Այնպես որ ազատ են բոլորը: Ազատ են և՛ ուժեղները, և՛ թույլերը: Ազատ են և՛ հզորները և՛ անճարները: Բոլորն են ազատ իրենց հնարավորությունների և կարողությունների չափով:

Օրինակ առյուծները, որ հզոր են ի վերուստ, ազատորեն կարող են եղնիկ ու եղջերու լափել, իսկ եղնիկները կարող են ազատորեն փախչել-հեռանալ: Այսինքն՝ առյուծներին խժռելու, իսկ եղնիկներին փախչելու ազատություն է տրված:

Թող բոլորն այսուհետև իմանան, որ ոչ մի շուն իր տան շեմից կապված չի լինելու, շղթա չի դրվելու նրանց պարանոցին: Նրանք այսուհետև ազատ հաչելու և կաղկանձելու իրավունք ունեն: Այսօրվա գայլերը լիովին ազատ են իրենց ցերեկային և գիշերային գործողություններում: Չէ՞ որ ըստ բնական օրենքների մեկը պիտի որս լինի, մյուսը՝ որսկան: Տվյալ դեպքում ոչխարները որս, իսկ գայլերը որսկաններ են: Գայլերն այդ իրավունքը ունեն դարեր ի վեր:

Մեր անտառապետության մեջ մեռնելու ազատություն էլ է տրված:

Թույլ ու տկարը, անուժն ու անկարող ազատ կարող են հրաժեշտ տալ իրենց կյանքին ասենք՝ ոչխարը գայլի բերանում, եղնիկը առյուծի երախում:

Թույլը պիտի ընդունի իր անճարակությունը հզորների նկատմամբ: Իսկ այդ աղավնիները, արագիլները, սիրամարգերը և սոխակները և սիրո ու գեղեցկության մյուս սիրահարները կոչված են երգելու և տարփողելու հզորների փառքը:

Բոլոր հզորների որջերը և արքունական բոլոր ապարանքները պետք է անառիկ լինեն անզորների ու անճարների համար: Օրենքով արգելվում է բոլոր տեսակի ոտնձգությունները պալատների դեմ: Ոչ ոք իրավունք չունի խախտելու անտառապետության հիմքերը: Ով կարողանում է իր համար միջոցներ է ստեղծում, բոլոր հնարներով ապրուստի շուկայից ճանկռում իր բաժինը: Ով չի կարողանում դիմանալ ապրուստաբաժիններին տիրանալու խլխլոցին, գոյության իրավունքով իրեն հանձնում է զորեղների խղճին ու ողորմածությանը:

Օրենսդիրներն են ստեղծում օրենքները, բայց նրանցից և ոչ մեկը իզորու չի խախտել բնության օրենքները: Բնությունն այնպես է ստեղծել մեզանից յուրաքանչյուրին, որ առյուծը լինի առյուծ, գայլը՝ գայլ, նապաստակը՝ նապաստակ:

Առյուծ արքան, վերջացնելով խոսքը՝ հանդիսավոր խոնարհումներ է անում և գնում բազմում գահին:

Թաթը կրծքին դրած՝ ամբիոն է բարձրանում սահմանադիր վագրը՝

- Ես, - ասում է նա, - անտառապետության հզոր արքա Առյուծի կողմից լիազորված եմ ձեզ ասելու հետևյալը.

Իմացած լինեք, որ նախկին միահեծան թագավորության փոխարեն մենք հիմա ունենք ընտրովի անտառապետություն: Այլ կերպ ասած՝ ստեղծվել է առյուծների, վագրերի ու հովազների եռաթև իշխանություն: Մենք չենք ժխտում, որ մենք առյուծներ, վագրեր ու հովազներ ենք, իսկ դուք՝ արջեր, գայլեր, շներ, աղվեսներ ու նապաստակներ: Մենք չենք ժխտում, որ բոլոր անտառաբնակներին էլ ապրել է հարկավոր, բայց մի մոռացեք, որ վերևները պիտի ապրեն ներքևների հաշվին:

Կատուները պիտի ապրեն մկների հաշվին, աղվեսները՝ հավերի, գայլերը՝ ոչխարների, վագրերը՝ եղնիկների, և այսպես շարունակ մինչև առյուծը: Ինչ կարող ես անել: Բնությունը մեկին թույլ է ստեղծել, մյուսին՝ ուժեղ, մեկին կարող է ստեղծել, մյուսին՝ անկարող, մեկին միամիտ է ստեղծել, մյուսին՝ խորամանկ: Հզորն իր զորության ուժով պիտի իշխանություն ունենա, իսկ արքայական գահին պիտի նստի հզորից հզորը: Աշխարհի դրվածքն է այդպիսին. ուտողը պիտի ուտի, որոճողը պիտի որոճա, հոշոտողը պիտի հոշոտի, գիշատիչը պիտի խժռի, տանջվածը պիտի տանջվի, ծառան պիտի ծառայի, հաչացողը պիտի հաչա, զռռացողը պիտի երգի, առյուծը պիտի մռնչա, խոզը պիտի խռխռա, կովը պիտի բառաչի, եղնիկը պիտի հառաչի, մուկը պիտի ծվծվա, ծիտիկը պիտի ծլվլա, գորտը պիտի կռկռա, կատուն պիտի մռմռա, օձը պիտի սողա, նապաստակը պիտի դողա, կապիկը պիտի ճղճղա, ցուլը պիտի բղբղա, ճանճը պիտի տզտզա, մոծակը պիտի բզզա, ուժեղը պիտի խլի, թույլը պիտի լռի: Մի խոսքով բանողը պիտի բանի, տանողը պիտի տանի: Ամեն մեկը իր զորության չափով կարող է գիրանալ: Ուրիշներին ծառայեցնելու իրավունքը բոլորին է տրված: Ոչ ոք մեղավոր չէ այն բանում, որ մեկը զոհ է ծնվում, մյուսը՝ դահիճ: Դուք պիտի լավ իմանաք՝ ինչքան մեծանում են հնարավորությունները այնքան մեծանում են ախորժակները:

Բոլորին ողբալու, սգալու, զոհվելու, խռխռալու, հառաչելու և բառաչելու ազատություն է տրված:

Ինչ կարող ես անել, բոլոր գիշատիչների աչքը եղնիկների, կխտարների, ոչխարների, հավերի, սագերի ու բադերի, խոզերի ու կովերի վրա է: Այստեղ խղճի օրենքը չի գործում: Գործում է միայն ուժի և զորության օրենքը: Եթե այդպես չլիներ, այդ դեպքում բա ի՞նչ կուտեին Անտառի տերերը: Ոնց չաղանան ու բարգավաճեն:

Այս խոսքերի վրա գայլերն ու բորենիներն սկսում են ամբողջ հրապարակով մեկ ոռնալ: Չգիտես ինչու արջերը գլուխկոնծի են տալիս, գայլ ու հովազ, երախները բացած, մռնչում են: Ամեն ինչ խառնվում է իրար:

Շների և չախկալների հաչոցները միանում են ընդհանուր աղմուկին: Կարիճներն ու սարդերը իրար ետևից փախչում են, ելնում հրապարակի եզրասյուներին: Օձերը ֆշշալով գալարվում են այս ու այն կողմ, կատուներն ահով ցատկում են մոտակա ծառերի վրա: Մկները ճարպկորեն թաքնվում են ծակուծուկերում: Եղնիկ ու նապաստակ գլխակորույս փորձում են փախչել ասպարեզից, սակայն դիպչելով վագրերի ու հովազների պատին՝ ետ են ընկրկում: Գոմեշների, եզների, կովերի ու խոզերի խմբերը փախչել- հեռանալու անհույս փորձեր են անում: Ոչխարների ու այծերի վախեցախ-խրտնած խմբերը պոզերը տնկած ու պարարտ դմակները տարուբերելով հուսահատ մայումկկում են ու գնում զարկվում վագրերի ու հովազների կենդանի պատին: Գիշատիչները երախները բաց, սուր հատու ժանիքները կափկափելով, մռութները դեպի երկինք պարզած՝ անզսպորեն հռհռում են՝ իրենց զոհերին հետապնդող որսկանների հաճությամբ: Չդիմանալով գայթակղությանը՝ առավել կատաղի մի քանի վագրեր փախչող եղնիկներից մի քանիսին ճանկում են ու թափում փորոտիքները: Նույն բախտին են արժանանում մի քանի չաղլիկ ոչխարներ: Ագահ բորենիների մի խումբ վրա է թափվում լեշերի վրա: Վայրի կռավոցով զոհերի վրա վայրէջք են կատարում գիշանգղները... Հրապարակը վերածվում է սպանդանոցի:

Ամենուր լսվում են ճղճղոցներ, հառաչանքներ, խռխռոցներ, բղավոցներ:

Զորեղների նստատեղերից արյունահեղությունը դադարեցնելու կոչեր են հնչում: Վերջապես զորեղների ճնշման տակ դադարում են աղմուկ -աղաղակները: Սկզբում հզորները, այնուհետև անզորները գալիս են զբաղեցնում իրենց տեղերը: Արքա առյուծը, թաթն առաջ պարզած՝ բաշը ցնցելով ելնում է տեղից և կատաղի մռնչյունով դիմում դեռևս ամբողջովին չհանդարտված ամբոխին:

- Իմ եղբայր գազաններ, թունավոր և անթույն սողուններ, թաքուն ու բացահայտ կրծողներ, ճանկավորներ և չանչավորներ, ոսկրակտուցավորներ և մագիլավորներ, պճեղավորներ և սմբակավորներ, կծաններ և չանգռողներ, գիշակերներ և լեշակերներ, մսակերներ և խոտակերներ, մեկընդմիշտ ականջներիդ օղ արեք՝ ուժեղի դեմ խաղ չկա և չի կարող լինել:

●

Հայացք Արկադի Ծատուրյանի գեղագիտական արժեհամակարգին

Արկադի Ծատուրյանի բազմաշնորհ անունը ծանոթ է յուրաքանչյուր գրասեր սյունեցու: Նա վաղուց հեղինակավոր ներկայություն է մեզանում՝ իբրև բանաստեղծ, արձակագիր, բանահավաք, երկարամյա մանկավարժ, հրապարակախոս, խմբագիր, գրական-մշակութային ձեռնարկների փնտրված բեմախոս: Հեղինակած երկու տասնյակից ավելի գրքերով, կազմած ու խմբագրած ժողովածուներով ընթերցասեր հանրությանը ներկայացած գրչի երախտավորը սպասում է իր վաստակի արժանի գնահատությանը:

Ա. Ծատուրյանի ստեղծած գեղագիտական արժեհամակարգի գլխավոր երակը հուն է առնում հայրենի հողից, ավանդույթից, պատմությունից, աշխարհայացքից, ինքնուրույն հղացումից՝ մարմնավորված առավելապես արձակի փոքր ժանրաձևերի մեջ:

ԹԵՀՄԻՆԱ ՄԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՑԵՆՏ

Ժողովրդական խաղիկներ

Սերն աբրեշում, ատլաս է,
Ոսկով լիքը կարաս է,
Հացն ու սերը թե որ կան
Բախտը միշտ անպակաս է:

* * *

Լաստ խուրթի բաշում եմ,
Օրս դանդաղ մաշում եմ,
Կյանքս անցավ, բայց էլի
Քո կարոտը քաշում եմ:

* * *

Ես մի ծառ եմ՝ ճյուղս չոր,
Արմատներս հողում խոր,
Թե իմ ճյուղին բույն դնես,
Ես կծաղկեմ նորից նոր:

* * *

Ջյունը կամաց կմաղի,
Ծունչս օդում կպաղի,
Բա աղջիկը ջահելին
Էդքան անխիղճ կդաղի՞:

* * *

Ի՞նչ ես կանգնել այդ ցրտում,
Ո՞ւմ ես փնտրում, չես գտնում,
Տաք տեղի՞ ես ման գալիս,
Արի, տեղ կա իմ սրտում:

* * *

Այ տղա՛, ծուռ մի գնա,
Անտարբեր, լուռ մի գնա,
Քո փնտրածը հենց ես եմ,
Ուրիշ տեղ զուր մի՛ գնա:

* * *

Սուտ կա՝ հորից է գալիս,
Սուտ կա՝ մորից է գալիս,
Ինչքան էլ հետ ես տալիս,
Էլի նորից է գալիս:

* * *

Խեղճից ո՞վ է հարցնում,
Որբից ո՞վ է հարցնում.
Կացին ունես, հարվածիր,
Կոթից ո՞վ է հարցնում:

* * *

Խոստանում է, խոստանում.
Մեծ բաներ է խոստանում,
Բայց սեփական ծառերը
Չորանում են բոստանում:

* * *

Միի փոխվեց ամեն ինչ.
Գահի փոխվեց ամեն ինչ,
Չհասկացանք, թե ինչպես
Շահի փոխվեց ամեն ինչ:

* * *

Գործերս ձախվում են հիմա,
Ամեն ինչ ծախվում է հիմա,
Չուլ-փալասի արժեքը
Երկնքից կախվում է հիմա:

Ապետնակ Գրիգորյան



Կենսագրություն

Ասանկավարժ, բանաստեղծ: Ծնվել է 1935 թ. փետրվարի 14-ին Գորիսում: Ավարտել է Ա. Բակունցի անվան միջնակարգ դպրոցը (1955), ապա՝ Երեւանի պետհամալսարանի բանասիրական ֆակուլտետը (1970): Ծառայել է խորհրդային բանակում (1957-60):

Որպես հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչ աշխատել է Գորիսի Հալիձոր գյուղի ութամյա դպրոցում, ապա՝ 34 տարի Գորիսի թիվ 3 միջնակարգ դպրոցում:

Տպագրվել է տեղական եւ հանրապետական մամուլում:

ԵՍ ԻՆՁ ՏԵՍԵԼ ԵՄ

Ես ինձ տեսել եմ ակնափուլ եղած՝
Հազար աչքաչափ ակնախոռոչի մթին անձավում,
Որը եղել է պապերիս օրրան
Ու դարատոհմիկ տաքուկ խանձարուր:
Ես ինձ տեսել եմ
Ակնախոռոչից վեր ակոս արած,
Դարերի փոշին կնճիռների մեջ,
քունքերին ցրած,
Շանթերի ծրած մի փոքրիկ ճեղքում՝
Սաղարթներ փոած նշենու վրա,
նրա ընձյուղում:
Վայրի նշենու, որի բնընթաց շարժումը ավշի
Զգացել եմ ես իմ ամեն ջիղում:
Ես ինձ տեսել եմ եւ կորաքամակ թառերի վրա,
Իմ տատերի պես մեջքերից ծռված,
Նռան գույնից կեզ՝ շուրթերը որդան ու անկեզ կրակ,
Աչքերում բեկ-բեկ, ցոլցլուն ճրագ:
Ես ինձ տեսել եմ
Հին մատուռների փլատակ դարձած որմնաքարերում,
Ու կիսակործան որմերը կապող կրակարերում,
Եվ կուց-կուց եկող զորնդեղ ջրին՝
Բռաչափ շինված գուռերի միջից
Դորակով ծլող ջրապարերում:
Ես ինձ տեսել եմ
Մութ մատուռների ծխաթակ սեւում,
Ճերմակ թիթեռի նման թրթռող
Ծոր ծորուն լույսի սեւլիկ ստվերում,
Ու զգացել եմ մոմը լուսնկաթ
Իր ժպտացոլքով ինչպես է հեւում՝
Կայծոռիկի պես թույլ լուսարձակով
Գիշերվա մութը ծվատում, ձեւում...
Ես ինձ տեսել եմ...

1973Թ.

ԴԵՐԱՍԱՆ ԵՄ

Ես դերասան եմ մտքերիս անշուք տխուր սրահում,
Ու խաղում եմ լոկ ցնորվածի դեր բեմահարթակին,
Իսկ թաղանթները իմ ականջների թմբուկ են զարկում
Ունկնդիրների բուռն ծափերից...
Ու ծնծղաներ են զրնգուն զանգում,
Դուրս գալիս մտքիս խռով ափերից,
Պղինձ զանգերի ղողանջի հանգույն
Թեւածում պապիս խռով տափերին,
Ուր դեռ մեծ տատիս աղոթքների նուրբ մրմունջն է
լսվում...
Ու դժգոհում եմ ինքս ինձանից, ինքս իմ դերից,
Որ կեղծարարի դեր եմ ստանձնել,
Ու ափսոսում եմ չարածիս համար,
Որ միայն խղճուկ ձայնապանակն եմ
Ու ձայնափողը՝ ձայների կեղծած,
Որ ինքս ես չեմ, այլ մի ձայներիզ՝
Իմ իսկ էության նշանաձողը ու գլխիս կեղծամ...
Բայց վերծանելին անեղծ է ու գոհ,
Որ ես եմ կրում իր իսկ դիմակը,
Իսկ լավի, բարու այծենակաճը կրում է ինքը՝
Ինքս դարձել եմ նրա հենակը...
Բայց դե ինչ արած՝ ես դերասան եմ,
Ժամանակն անսանձ ու ապերասան՝
Անզիջում, անգութ, զորավոր այնքան՝
Որ դեռ կարող է իմ ու քո, նրա,
Ունկնդիրների աչքերը փակել,
Ունկերը գոցել, պատռել դիմակս
Ու հոխորտալով անհոգ հեռանալ...
Դուք կծիծաղեք ճաղատիս վրա,
Որը ձգվում է մինչեւ ծոծրակս,
Իսկ իմ մանչուկը դեռ չիմանալով
ճակատ է կոչում՝
Ինքն էլ մեծ ճակատ, ինքն էլ բաց ճակատ,
Բայց դեհ, ի՞նչ արած՝ ես դերասան եմ,
Ժամանակն անպատիժ ու ապերասան:

1973Թ.

ԼՈՒՍԱԲԱՑ

Բազկատարած ժայռածերպի
Երկինքն ավլող ծառին թառած
Քնաթաթախ բուն կոնչաց...
Ծառը դժգոհ ծույլ ծլնգաց,
Արմատները երակ-երակ կծիկ տվեց,
Իսկ հիմնախախտ ժայռը դողաց
Ու սոսկումով իրեն ցնցեց...
Ժայռապորտից մի քար թռավ,
Վրնջացող նժույգի պես,
Գիշերվա մութը սղոցեց...
Կրակ փոշին երկինք առավ,
Անտեր մի շուն խուլ կլանչեց...
Բուկը մաքրեց սրնգահար աքաղաղը,
Օդը ճեղքեց եւ զիլ ձայնով այնպես կանչեց,
Որ վեր ելան մարդիկ քնատ,
Չէ՞ որ փիրուզ երկինքն արդեն
Լեղակ-լեղակ աչքն էր թարթել
Լուսաբաց էր...

1974Թ.

ՎԵՐՀՈՒՇ

Նորից խրվել եմ հոգոցներիս մեջ,
Կարիքն եմ զգում անթացուպերի,
Կամ ճոճք բազկաթոռ, որ հենվեմ նրան
Ու բռնեմ տուտը խռիվ մտքերի:
Ընտրել ժայռածոր մի ծղոտ կածան,
Ու մեր հնօրյա մատուռներն ելնեմ,
Եվ նրանց ավեր ու կիսակործան
Փլված որմերից կարոտս առնեմ...
Ու մնամ շվար, եւ դառնամ վարան...
Պապերիս պղինձ փարչերին գերի,
Մտքիս աչքերով տեսնեմ նրբիրան
Սյունյաց հարսերին մատռվակելիս:
Ու դառնամ գինով, արբե՜մ ու արբե՜մ...
Ու քարայծերի պճեղով բացած
Պարան կածանը ոտքով հավաքեմ,
Եվ ներանձնանամ թափուր մնացած
Աղոթարանում՝ խոնավ, սեւ-սքեմ,
Օճորքից ծլող կաթոցների պես
Ինքս փղձկամ ու արցունքոտվեմ,
Ու մոմեր վառեմ խորանի վրա,
Մեղապարտի պես խոնարհ ծունկ չոքեմ,
Աղոթք մրմնջամ, թողություն խնդրեմ...
Դուրս գամ գավիթից ծնկներում խրված
Իմ դարձի ճամփան ծնկներիս վրա,
Վեր ելնեմ տեղից ու լալահառաչ,
Սրբերի փոշին փեշերիս առած,
Կոթնեմ ժայռերիս ուսերին թառած
Քարարծիվների բրոնզ թեւերին,
Նրանց արծվենի հայացքի ճախրով
Հասնեմ իմ նախնյաց շիրմաքարերին,
Ու փարվեմ նրանց՝ ողբամ մեղմաձայն,
Իսկ խաչքարերս ողբիս ձայնակցեն
Ու ճախր առնեն՝ հնչեն եռաձայն,
Պատարագի պես հանգիստ թեւածեն,
Անցնեն կիրճերով իմ անդնդախոր,
Քերծերիս պղինձ փեշերով ելնեն,
Ու ողջակիզեն հույզի կրակով,
Մեգ կատարներիս լանջին շունչ առնեն,
Հետո դաշներգեն ու հոգեպարար,
Մեղմասահ իջնեն փիրուզ դաշտերիս,
Փարատեն նրա հոգոցը ծարավ
Ու հանգրվանեն լեռան փեշերին,
Իսկ ես գետնամած շիրմաքարի պես
Սրբերիս հառաչն տխուր ունկերիս
Մրմունջների մեջ նրանց հոգեքամ
Հաղորդությունը առնեմ սրբերիս:

1974Թ.

Հատված Տիգրան Գրիգորյանի «Մեր բանաստեղծ Ապետը» հոդվածից

Համամարդկային արժեքներին հավատարիմ քաղաքացիականությունը մշտապես եղել է Ապետնակ Գրիգորյանի առօրեական կյանքն իմաստավորող, նրա կեցությանն ուղղորդող անկողոպտելի բաղադրիչը: Նա իր ստեղծագործություններում հաճախակի անդրադարձավ հանրային կյանքն այլասերող, մեր ազգային գոյությանն ու դիմագծին սպառնացող հոռի իրողություններին:

Անցյալ դարի 90-ականների դժնդակ տարիներին գոյատեւող մեր ժողովրդի հուզաշխարհի ներքին պոռթկումներին ունկնդիր՝ Ապետնակ Գրիգորյանը քամահրանքով ու սարկազմով լի պատկերավոր բանաստեղծական խոսքի հեղեղումներով ստեղծեց քաղաքացիական պոեզիայի ուշագրավ նմուշներ՝ իր խառնվածքին բնորոշ կատաղի խռովքով փնովելով հասարակության մեջ նյութականով միայն իրենց արժեւորել փորձող, հոգեւորից զուրկ, ինքնաբավ մարդկանց սնամեջ գոյությունը («Կարմիր մերսեդես», «Պատեհապաշտներին»):

Հատկանշականն այն է, որ խորհրդային իրավակարգից շուկայական հարաբերությունների անցման փուլում Ապետնակ Գրիգորյանի ներաշխարհը փոթորկած հենց այդպիսի՝ իրենց պետական այրեր հռչակած մարդկանց անբարո վարքագիծն ու ընչաքաղցությունն ի վերջո ձեւավորեցին լղոզված արժեհամակարգերով այն տխուր իրականությունը, որի մեջ հայտնվեցինք ազգովի...

Ի ծնե ամեն մի ճշմարիտ բանաստեղծի խառնվածք այս կամ այն չափով պարուրված է լինում դոնկիխոտությամբ. ասել է թե՝ իսկական բանաստեղծները մարդկային արժանապատվությունը, վեհանձնությունը, արդարամտությունը, ցնորական երազայինն ու վսեմն իրենց ներաշխարհում խիզախորեն կրելու եւ այդ արժեքներով մոլեռանդորեն ամբողջ կյանքում ապրելու ասպետական տոկունությամբ են օժտված լինում:

Թե՛ իր գոյությանն ուղեկից դարձրած վերոհիշյալ առաքինություններով, թե՛ իր անուրջներով սնվելու կարողությամբ, թե՛ իր դավանած սկզբունքներից չշեղվելու համառությամբ եւ թե՛ իր արտաքին տեսքով Ապետնակ Գրիգորյանն այնքան է Սերվանտեսի կերտած խորհրդավոր կերպարին հիշեցնում, որ նրան, առանց վարանելու, կարելի է իրական կյանքում ապրող Դոն Կիխոտի մերօրյա կրկնօրինակ համարել:

Բնավորությամբ լինելով մարդամոտ՝ նա, առանց խտրականության, հասարակության բոլոր խավերի ներկայացուցիչների հետ նստեց ու նրանց հետ խորհրդածեց, իրեն հատուկ զավեշտալի երանգավորումներով ճեպանկարված խոսքի համ ու հոտով նրանց հետ զրույցի բռնվեց, եթե պետք էր՝ լսեց, եթե պետք էր՝ վիճեց, իր որդեգրած արժեհամակարգի պաշտպանության համար հոգեւորը քամահրող, տհաս ու նեղմիտ մարդկանց հետ երբեմն անգամ, բառիս բուն իմաստով, ձեռնամարտի մեջ մտավ, բայց կարողացավ, այդ ամենի հետ մեկտեղ, ողջ կյանքում ոգեղեն ոլորտներում ճախրող իր էության հետ ներանձնացած ապրել:

Ապետնակ Գրիգորյանի ստեղծագործական աշխարհում կան խորապես ապրված քնարական գործեր («Ես ինձ տեսել եմ», «Վերհուշ», «Էլ չթովեք», «Հառաչանք», «Հուշանվագ»...): Նա պոեզիա բերեց իր էության հոգեկանչերով ու հորդաբուխ հուզաշխարհով շաղախված, ասելիքին համահունչ պատկերավոր մտածողության ինքնատիպ մի համակարգ, որի հախուռն գեղարվեստական դրսեւորումները չես կարող որեւէ մեկի ստեղծագործական աշխարհի մեջ գտնել:

Առաջնորդվելով հիմնականում դասական պոեզիայի ավանդույթներով՝ անցյալի ոչ մի բանաստեղծի չնմանակելով, ոչ մեկից խոհ ու պատկեր չմուրալով, Ապետնակ Գրիգորյանն արարեց իր բանաստեղծական աշխարհը՝ ոչ մեկին չկրկնելով: Թե կրկնելու թուլությամբ ինքն էլ, այնուամենայնիվ, ժամանակ առ ժամանակ վարակվեց, ապա կրկնեց ինքն իրեն միայն...

21.04-02.05.2017Թ., Ք. ԵՐԵՒԱՆ

Աշոտ Մինասյան



Կենսագրություն

Ծնվել է 1959 թ. հոկտեմբերի 2-ին Սիսիանի շրջանի Լծեն գյուղում: Սովորել է հայրենի գյուղի ութամյա դպրոցում, Սիսիանի թիվ 2 միջնակարգում, Լենինգրադի կուլտուրայի ինստիտուտում, Օրենբուրգի միջազգային իրավաբանական ակադեմիայում:
ՀՀ զինված ուժերի գնդապետ է, մաքսային ծառայության գնդապետ: «Սիսական» փառապանծ ջոկատի հրամանատարն է, Արցախյան 1-ին, 2-րդ եւ 3-րդ պատերազմների քաջարի հրամանատարներից է:
Հեղինակ է մի շարք բանաստեղծությունների եւ պատմվածքների:

ԱՌԱՔԵԼ ՊԱՊԸ

Իմ գյուղը փոքրիկ է, փոքր այնքան, որ թվում է՝ մի ընտանիքի չափ է: Ու ապրում է նաև մի ընտանիքի պես, մի ընտանիքի հոգսերով, ուրախություններով ու տխրություններով: Տարիների հեռվից հիշում եմ այն ցուրտ ու մութ տարիները, ու հոգիս պատվում է տխրությամբ: Պատերազմ էր... և պատերազմական այն ծանր օրերին էլ ավելի էր ծանրացել իմ գյուղի վիճակը: Եղբայրս՝ Աղվանը, զոհվել էր, ու իմ գյուղն էլ ավելի էր խեղճացել ու կուչ եկել: Գյուղը Սիսիանի հետ կապող միակ փոխադրամիջոցն իմ ծառայողական մեքենան էր և ծնողներին ու բարեկամներին հազվադեպ հիշող համագյուղացիներիս այցելությունները, որ կարող էին այցելել գյուղ:

Մեր գյուղը փոքր է, փոքր է այնքան, որ թվում է՝ կարող ես ափիդ մեջ տեղավորել: Որոտան և Լորաձոր գետերի հատման կետից սկսվում է ճանապարհը դեպի գյուղ, և թվում է, թե ճանապարհը քեզ տանում է դեպի երկինք, դեպի ամպերը և վեր ամպերից, դեպի մաքրամաքուր երազներիդ ու երազանքներիդ գագաթը, ուր կարող են միայն հրեշտակները թևածել:

Գյուղս ունի մի փոքրիկ հրապարակ-գյուղամեջ, ուր տեղակայված են գրասենյակը, ակումբը, գրադարանը, խանութը և մի աղբյուր, որ կառուցվել է 1947թ.: Մեր գյուղամեջը մեր հավաքատեղին է, մեր՝ իրար երես տեսնելու, բարևելու, բամբասելու, վիճելու և բարեկամանալու միակ վայրը:

Առաքել պապն ամեն օր արևագալն ընդունում է գյուղամիջի աղբյուրի դեմ տնկված միակ էլեկտրասյան տակ կանգնած: Արևին բարի գալուստ է ասում, ժողովրդին բարի լույս է ասում, աշխարհին բարի օր է ասում, ու գյուղը մտնում է իր առօրյա հոգսերի մեջ, ինչպես աշխարհի բոլոր ծայրերում և ինչպես լինում է առ այսօր՝ աշխարհաստեղծման օրվանից:

Քոթուկ է Առաքել պապը, պինդ, պինդ արմատ, պինդ տոհմ, պինդ սյունեցի ու բարի, համեստ, բանիմաց: Հենվում է Առաքել պապն իր ձեռնափայտին ու հայացքով չափում արևի անցած ճանապարհը, երկրի ու երկնքի տարբերությունը, իր անցած և անցնելիք ճանապարհը:

Ամեն անգամ գյուղից մեկնելիս հանդիպում եմ Առաքել պապին, բարևում, հալ ու հարցում կատարում, օրհնանք ստանում ու մեկնում իմ գործերին:

Այսօր գյուղամիջում հանդիպում եմ Առաքել պապին, իջնում եմ մեքենայից, մոտենում նրան, հալ ու հարցում անում: Տխուր է պապը: Կռթնել է ցուպին՝ գլուխը կախ, ու մտքերի հետ երեւի կռիվ է տալիս:

– Բարի լույս, Առաքել պապի:

– Աստծու բարին, Աշոտ, բալաս:

– Ո՞նց ես, պապի, ինչի՞ ես տխուր:

– Հոգնել եմ, Աշոտ, բալաս:

– Ինչի՞ց ես հոգնել, Առաքել պապի:

– Աշխարհից եմ հոգնել, բալաս... Ոսկորներս ցավում են, բալաս... Ընկերներս բոլորը հանգստարանում են...Ես մենակ մնացել եմ այստեղ, ի՞նչ անեմ... Ես էլ եմ ուզում հանգստանալ...Ես էլ եմ ուզում գնալ ընկերներիս մոտ... Հոգնել եմ...

Լռում ենք...

Ձերմակ մորուքի վրայով արցունքի երկու կաթիլ է գլորվում մորուքն ի վար, ու ես կարկամում եմ, զրկվում խոսելու ունակությունից, կուչ եմ գալիս պապի խոսքերից, պապի արցունքից, հանգստարան բառից: Նայում եմ Առաքել պապի ճերմակ մորուքին, իմ սև մորուքին ու ամաչում իմ սև մորուքի ու պապի ճերմակ մորուքի տարբերությունից: Հասկացել եմ, թե մեր մեծերն ինչու են գերեզմաններին հանգստարան կամ հանգիստ ասում: Բա ինչու՞ մեր խորհրդաստ հանգստարանները վերափոխվեցին, դարձան գերեզմանատներ: Ես մտամոլոր նստում եմ իմ «Վիլիսի» ղեկին ու գյուղից դուրս գալով՝ ոլորաններով գլորվում դեպի Սիսիան, Սիսիանից դեպի պատերազմի դաշտ՝ մտքով անիծելով պատերազմը, պատերազմ հրահրողին, հանգստարանները գերեզմանատներ սարքողին, աչքերիս առաջ ունենալով իմ Առաքել պապի թախծոտ դեմքը, մեր Առաքել պապի ճերմակ մորուքը, բոլորիս Առաքել պապի իմաստուն խոսքերը և արցունքի երկու կաթիլը, որ առ այսօր մնացել են իմ աչքերում և ուղեղում դաջված...

Լույս իջնի շիրիմիդ, Առաքել պապի, հիմա իմ մորուքն է ճերմակել, ու ես եմ հոգնել...

Վարուժան Գալստյան

Կենսագրություն

Ծնվել է 1953թ. Գորիսի տարածաշրջանի Վերիշեն գյուղում: 1970-1974թթ. սովորել է Պետական մանկավարժական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետում: 1974-1975թթ. ծառայել է բանակում:
1975 թ. աշխատել է Ազգային Ակադեմիայի Հաշվողական կենտրոնի Գորիսի լաբորատորիաներում՝ որպես գիտաշխատող: Եղել է Սանկտ Պետերբուրգի համալսարանի հայցորդ: Ֆիզմաթ. գիտություններիի թեկնածու է: 1994թ. աշխատել է սոցիալական ոլորտում:
1998-2018թթ. աշխատել է Գորիսի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրեն:
Ամուսնացած է, ունի երկու տղա, մեկ աղջիկ և 4 թոռ:
Ունի հրատարակված բանաստեղծությունների 3 ժողովածու. «Ճայի խենթությունը»՝ 2016թ, «Երկնող ժամանակի հանգրվանը»՝ 2018թ., «Հրկիզված անդորր»՝ 2019թ.:

ՄԵԾ ՀՈՒՅՍ

Իմ կնճիռները թախիծն են դարի...
Հեգ խտությունը՝ գույժը դեգերման,
Իսկ կնճիռների պարը ճակատիս
Անցանկալի լուրն է ծերության...

Ամեն մի կնճիռ ճամփա է անցել՝
Ծնվելով որպես տանջանքի կնիք.
Ամեն մի կնճիռ երկունք է տեսել՝
Հավերժ փնտրելով երազած տեսիլք...

Ապրածս դարը մեզ ինչե՞ր տվեց,
Մարդիկ տխրեցին և ուրախացան.
Դարի ժպիտը մեր հույսն էր մեծ,
Իսկ կնճիռներս՝ սպասումը նրան...

ԱՅՍԲԵՐԳՆ... ԱՆՀՈԳ

Օվկիանոսը հանգիստ ծփում է դանդաղ,
Հորիզոնի հետ հեռվում համբուրվում,
Երկինքը պարզ է, արևը՝ պայծառ,
Այսբերգն այստեղ լուռ ի՞նչ է որոնում...

Օվկիանոսը չար դեմքն է խոժոռում՝
Հորիզոնի հետ հաղթ կռվելով հեռվում.
Երկինքն արդեն ծածկված է ամպերով.
Այսբերգն անտարբեր ինչի՞ է սպասում...

Օվկիանոսը գոռ գոռում է, գոչում,
Հորիզոնը հեռվում՝ անձև, ծամածռված,
Երկնքի տեսքը բոթն է ցունամու.
Այսբերգն անհոգ՝ ալիքներին հենված...

Օվկիանոս, երկինք, արև ու հորիզոն.
Այսբերգը նրանց հետ գնում է հեռու...

Դեպի հասարակած, դեպի տաք ջրեր՝
Անհայտության գրկում դանդաղ մեռնելու...

ԿՏԱԿԻ ՅԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Ես ամբողջ կյանքում սար եմ բարձրանում,
Բարձունքի կանչը ինձ հուզել է խիստ.
Քայլած արահետներս խառնվելով՝
Ձգվում են գագաթը արևանիստ...

Գնում եմ այնտեղ հանգիստ թիկնելու՝
Ապրած օրերս թողնելով ճամփին,
Նրանք բոլորը մի հեքիաթ ունեն
Եվ սպասում են ոսկե ավարտին...

Գագաթին, ահա, մասրենին խրոխտ,
Քամուն հեծած ժիր, հեռուն է նայում,
Նրան տեսնելով՝ ես միտք եմ անում,
Որ նա բարձունքը լավ է պահպանում...

Եթե ճիշտ է, որ մեռնելուց հետո
Հոգին դառնում է կենդանի կամ ծառ,
Կուզեի հոգիս, իմ մահից հետո,
Բարձունքին կանգնած մասրենի դառնար...

ՆՈՐԻՑ ՆՈՒՅՆԸ

Նորից նույն խաղը,
Նորից նույն մարդիկ.
Ասպարեզն է ննջում հոգնած,

Վարուժան Գալստյանի ստեղծագործությունների մասին

Կյանքն իր բնական ընթացքի մեջ է, որտեղ ամեն ինչ իր չափման միավորը, պատճառն ու հետևանքն ունի: Այնուամենայնիվ, կա մի սահման, մի հորիզոն, որի հաղթահարումը կնշանակի լուծել դարերի առաջադրած հանելուկը՝ գտնել ցանկության և բավարարվածության միության բանաձևը:

Ըստ Վարուժան Գալստյանի՝ անսահմանի տիրույթում է գործում մարդկային ցանկությունը, սակայն, միևնույն ժամանակ, կա բանաձևը՝ սահման գտնելու անսահմանի մեջ: Միայն թե այստեղ անզոր է մարդկային միտքը, որին փոխարինելու է գալիս որևէ չափման մեջ չտեղավորվող Անհունի ողորմածությունը:

Նկատելով, որ Վարուժանի բանաստեղծական մտածողության կայունությունն ապահովող «առարկան» շարժումն է, նշենք նաև, որ նա ներքին մղումներով, գուցե նաև՝ գիտակցված ջանքերով ուսումնասիրել՝ կյանքի առաջացման խնդիրները քննարկած փիլիսոփայական մտքի նվաճումներին, որոնք թե՛ իրատեսորեն բաց, և թե՛ ներքին մտածողությամբ արտացոլվել են նրա ստեղծագործական աշխարհում: Այդ ամենն էլ հնարավոր է դարձրել բանաստեղծորեն խոսել կյանքի այն աղբյուրների մասին, որոնք են՝ հողը, օդը, ջուրը և կրակը: Դրանք Վարուժան Գալստյանի համար պաշտամունքի հասնող կենսական էներգիայի ու արարումների աղբյուրներ են:

Այս ամենով հանդերձ ահա բանաստեղծական իր աշխարհն ունեցողների շարքում է մեկը, ով զգում է շարժման մեջ գտնվող անհունի գոյությունն ու խոնարհվում նրա առաջ:

Հավատ՝ մարդու նկատմամբ: Մարդերգության հովանու ներքո ստեղծագործող բանաստեղծ է Վարուժան Գալստյանը. անհատին արժևորող, երկիր մոլորակի գոյությունը մարդով պայմանավորող ստեղծագործող:

ՖԵԼԻՔՍ ԲԱԽՉԻՆՅԱՆ
ԱՐՁԱԿԱԳԻՐ, ԳՐԱԿԱՆԱԳԵՏ

Լևոն Սահակյան



Կենսագրություն

Ծնվել է 1955 թվականի հունվարի 26-ին, Սյունիքի մարզի Ակներ գյուղում:

Վերիշենի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1973-1975 թթ. ծառայել է ԽՍՀՄ բանակում /Գերմանիա, Գոտհա քաղաք/: Ավարտել է Կապանի շինարարական տեխնիկումը և Գորիսի «Սյունիք» համալսարանը: Աշխատել է տարբեր կազմակերպություններում՝ տարբեր մասնագիտություններով: Տասը տարի խաղացել է Գորիս քաղաքի տարբեր տարիքի ֆուտբոլի հավաքականներում: 1992-1994 թթ. մասնակցել է Արցախյան առաջին պատերազմին որպես իր գյուղի կամավորական ջոկատի շտաբի պետ:

1992 թվականից ԵԿՄ անդամ է:

Ստեղծագործել է 13 տարեկանից: Ունի տպագրած 12 գիրք: Բազմիցս տպագրվել է «Գրական թերթում» ու այլ լրագրերում: ՀԳՄ անդամ է: 2017 թվականից՝ ՀԳՄ Սյունիքի մասնաճյուղի նախագահն է: Ամուսնացած է, ունի երկու որդի, դուստր և վեց թոռ: 2016 թվականից կենսաթոշակառու է:

ՍՅՈՒՆԻՔ

Սյունյաց աշխա՛րհ, սյու՛ն իմ ամուր,
Դու՛- բազմափորձ վահան ու սուր,
Դու՛- բարձրաբերձ արծըվաբույն,
Արծըվակամ և բարձրանուն.

Ոսոխներիդ համար՝ մեծ սեպ,
Հարվածդ՝ խոլ ու անվրեպ,
Անպարիսպ բերդ և պանծալի
Ու վեհ եզերք Հայաստանի.

Դու՛- ճաքած նուռ, զորեղ ուրան,
Ալպյան ծաղիկ, կենաց օրրան,
Քարե հեղեղ և քրտինք-հաց,
Արմատդ՝ խոր, ճակատդ՝ բաց.

Դու՛ - կամեցող, արդար ատյան,
Մի ձեռքիդ՝ զենք, մեկում՝ մատյան,
Երկրի մի մաս, մի ողջ աշխարհ,
Միշտ ակնառու, անհիշաչար.

Դու՛- հյուրընկալ, անվերջ հեքիաթ,
Ամենավուր հույս ու հավատք,
Արարչամերձ, ավանդապաշտ
Եվ քաջերի թռիչքադաշտ ...

ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Աշխարհը նորից չի ուզում տեսնել,
Սարից անդին է ցավը ուրիշի,
Տագնապահար է հայը ամենուր,
Մահաբեր արկը հասնում է Ծուշի.

Հաշվարկ են անում զորեղներն անվերջ
Ու հետևում են շահի տիրույթից,
Թուրքը փչում է շեփորը մարտի,
Ազերին ճառում արդարությունից.

Արևը սառն է ու կռիվը՝ թեժ,
Մահը՝ քեֆի մեջ ու խրախճանքի,
Հողը իր բաժին արյունն է խմում,
Շրթեշուրթ անցնում անունը քաջի.

Հովանու տակ է օրինազանցը
Ու հորիզոնը՝ թանձր մշուշի.
Տեսնել չի ուզում աշխարհը նորից,
Ծովից անդին է ցավը ուրիշի:

* * *

Թիթեռն անցավ թեթև՜-թեթև
Ու ծանրություն իջավ սրտիս,
Երգս մեկեն կիսատ մնաց,
Ընդարմացավ բառը շրթիս.

Խոհերի մեջ ընկա մոլոր-
Աչքս նրա այն զառ շորին,
Ասես դարը հավասարվեց
Թիթեռի կյանք այս մի օրին.

Խառնվեցին ներկա, անցյալ,
Ապագան է հայում, ահա,
Տեսնես ինչքա՞ն հոգս է տանում
Թիթեռը խաս թևի վրա ...

* * *

Հոգեմաշ կասկած, ահի զգացում,
Ճաքեր են գցում երազները հեշտ,
Անօրենները դեռ դիմանում են
Ու պճնազարդում դիմակները գեշ.

Ինքնազսպումի որոշումներից
Ո՞րն էր ճշմարիտ և ո՞րը սխալ,
Ա՜խ, ազնիվ մարդու հոգեոռնոցը
Մի՞թե դժվար է վերևում անսալ.

Կոշտ դատաստանի ե՞րբ կարժանանան
Բիճ զավակները ձգվող խավարի,
Տե՛ր ու մարգարե՛, օգնական եղեք,
Արդարության է ազգս ծարավի:

ԶՄԵՌԱՅԻՆ ԷՏՅՈՒԴ

Ստվարացող արծաթ-մշուշ,
Ջյունը՝ վարար, մանրափաթիլ,
Գրավում է ճերմակը լույս
Որպես չքնաղ մի հմայիլ.

Փայլազարդված թավշե սավան,
Միջօրեի ձանձրույթ անհուշ,
Ջյուն է իջնում թախծաքնար
Եվ տիրում է նինջը անուշ...

* * *

Գիշեր է անուշ ու մի չքնաղ կին
Աստղերի մասին հարցեր է տալիս,
Հեքիաթի թռչող գորգ է նա ուզում,
Ջնգուն քրքջում, բարձրաձայն լալիս.

Օ՛, աշխա՛րհ, ինչքան նման է նա քեզ՝
Խաղաղ, եռացող, հասարակ ու պերճ,
Քայլում ենք խշշան խաշամի վրա,
Միջաստեղային մշուշների մեջ.

Լռեցնում եմ նրան համբույրով,
Իջնում են կոպերն աչքերի վրա,
Թռչում ենք ասես հեքիաթի գորգով
Եվ լռությունը հրաշք է նրա:

* * *

Այս ձմռան օրով սարսռեցուցիչ
Երազներն էլ են կուչ եկել ցրտից,
Հևում է երկիր-կարուսելը ծեր
Ու չի բողոքում հոգնածությունից.

Ինչքա՞ն, դեռ ինչքա՞ն պիտի պտտվենք,
Մի՞թե, երկի՛ր իմ, դու չես ձանձրանում,
Ես դիմանում եմ չգիտեմ ինչպես
Եվ սրտխառնուք եմ հաճախ ունենում.

Ի՞նչ պիտի ասի արարիչը մեզ,
Երբ ինքն հավերժ է ու մենք՝ անցավոր...
Երկի՛ր իմ, աչքիս դու՛ էլ չգիտես,
Թե մեր գալ-գնալն ում է հարկավոր:

.....

Արնածարավ ռումբի կողքին
սիրո մասին ի՞նչ ասեմ,
Ինձ տանջում է բախտն աշխարհի,
խելքի մասին ի՞նչ ասեմ.
Սուրբ հույզի մոտ շունչը մահի
հալածում է մեզ անվերջ,
Ես այս վիճակն արարողին
ետ դառնամ ու ի՞նչ ասեմ...

ՄՆԱ

Օ՛, համբույրդ քաղցր է այնպես,
Մնա՛, մնա՛ իմ գրկում,
Թող երկարի այս հրաշքը
Առավոտից իրիկուն.
Գաղտնածածուկ իրենց լեզվով
Մեր սրտերը թող խոսեն,
Շատ խութեր են հարթել մեկտեղ՝
Մնալով հաշտ ու վսեմ.
Ուշացումով իրար գտած
Տատրակներ են սիրավոր,
Թող վայելեն ինքնամոռաց,
Թող վայելեն մեղավոր...
Մնա՛, մնա՛ դու իմ գրկում,
Երանություն սիրահյուս.
Ու թող ձգվի այս հրաշքը
Երեկոյից մինչև լույս:

ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Ա՜խ, իմ հող դառած պապը կանչում է,
Կանչում է, ահա, հողի ձայնով,
Եվ շիրմաքարից նրա ժպիտը
Այնպես բարի է, այնպես շոյող.

Հպում եմ ձեռքս տապանաքարին,
Հաղորդակցվում եմ, ասես, նրան,
Հուշերը գալիս, հերթափոխվում են
Ու գերազոր է կանչը արյան.

Պա՛պս, ես էլ եմ պապ դարձել վաղուց
Ու լավ եմ հիշում դասերը քո,
Չեմ ճառաբանի, միայն իմացի՛ր,
Շատ բան չի փոխվել երկնի ներքո.

Բարի, լավ մարդը էլի կա կյանքում,
Կա նաև վատը՝ սին ու անպետք,
Մեծն լռեցին այսօր էլ կասեր՝
Ապրե՛ք, երեխե՛ք, բայց մեզ պես չապրե՛ք...

Գիտության հրաշք թռիչքների մոտ
Դեռ մահակով են դատը վարում,
Հանրության անվամբ էլի երդվում են,
Մի բան ասում են, ուրիշն անում.

Կիսատ մի քանի գործ է մնացել,
Ձգտում եմ եղած պարտքերս տալ,
Կողքիդ տեղ պահի՛ր, պա՛պս, հոգնել եմ,
Երկար չեմ կարող այստեղ մնալ:

Ճշմարտությունը՝ վաղուց վաղամեռիկ...

Նորից նույն պարը,
Նորից նույն մարդիկ.
Ստամոքսն է ճաքում պրկված,
Քաղցը՝ վաղուց վաղամեռիկ...

Նորից նույն երգը,
Նորից նույն մարդիկ.
Տնքոցն է լսվում անձայն,
Ընտրյալները՝ վաղուց վաղամեռիկ...

Նորից նույն գովքը,
Նորից նույն մարդիկ.
Սահմանն է քանդվում անտես,
Անկախությունը՝ վաղուց վաղամեռիկ...

Բայց ես հավատում եմ մեծ գալիքին.
Նույն անհոգ մարդիկ, ինչ էլ որ անեն,
Հայրենիքս՝ երկիրը Նաիրյան,
Կհարատևի, կծաղկի նորեն...

ՀՉԱՅՈՂ ԼՌՈՒԹՅՈՒՆ

Արարման շաղախն է վերջին
Իմ մատներին արդեն փայտացող.
Տարիների երթից ստեղծարար
Տնքոցս է՝ խորունկ բան ասող...

Ճամփեքի քարերն անհամար
Ստեղներ են հոգնած ոտքերիս,
Իսկ խենթացած քամին երգահան
ՈՒղեկից է կարգված մտքերիս...

Երազիս տեսիլք է միշտ հայտնվում
Հանդերձյալ աշխարհից չսպասված.
Իբր իմ մեռած մարմինն անդեմ՝
Մեծ դատին են տանում զարդարած...

Ես արդեն շատ հոգնած ամենից,
Այս աշխարհի տապից հրդեհված,
Դեպի անհունն եմ սլանում՝
Մեծերի հզոր շքերթին խառնված...

ԿԱՆՉԻ ՍՊԱՍՈՒՄ

Անհոգ փորձությունը թող ինձ սպասի,
Հայտնի պա՛րս է արդեն ավարտված.
Եվ դառնությունը՝ բիրտ ծիծաղելով,
Թող ինձ քրքրի՝ իմ սիրտը հեծած...

Անտարբերությունը թող ինձ քամի,
Աստղիս լույսն է շուտով մարելու.
Խավարը նենգ, սպասելուց հոգնած,
Թող ուսիս նստի հանգստանալու...

Բազում մտքերը թող ինձ լքեն հար,
Արդեն ճակատիս փայլն է խամրած.
Եվ ժպիտները դառնացած, կիսատ,
Հաշվեն օրերս՝ վաղուց սպառված..

Խնդրում եմ, մարդի՛կ, ինձ հանգիստ թողեք.
Թող իմ բացատում վերջապես թիկնեմ
Եվ հորիզոնի երգը լսելով՝
Հեռու անհունի կանչին սպասեմ...

ԳԵՐԻՇԽՈՂԸ

Ժամանակի սլացքը խելահեղ
Տարածության կետերն է մաշում,
Իսկ ամեն վայրկյանը՝ ակնթարթ,
Ե՛վ սկիզբ է, և՛ վերջի ավետում...

Հզոր մտքի թռիչքն անարգել
Ճախրում է տիեզերքի անհունում,
Եվ ամեն մի նոր մտքի ճառագում
Իմացության սահմանն է քանդում...

Ավա՜ղ, բթությունը՝ մեզ գերիշխող,
Որպես նորածին զորավոր դաշտ,
Գրավիտացիայի տեղն է նշում,
Իսկ խեղճ տիեզերքը լուռ է ու հաշտ...

ՏԻԵԶԵՐՔԸ՝ ՀԱՆԳԻՍՏ ՈՒ ԼՈՒՌ

Անհուն տիեզերքի ինչ-որ մասում
Անհոգ թևում է մոլորակը մեր,
Արևը լարված կրակ է թափում՝
Նայելով մարդկանց երկրին անտարբեր...

Անվերջ տիեզերքը՝ հանգիստ ու լուռ,
Անսահմանություն է չափը նրա,
Ժամանակը, կարծես, վաղ է մեռել,
Օ՛, մա՛րդ, տիեզերքին տերություն արա...

Կարծիք ստեղծագործությունների մասին

Նրանք, ովքեր ծանոթ են Լևոն Սահակյանի գրչի վաստակին, մեծագույն հարգանքով են համակվում նրա անցած ճանապարհի, մարդկային նկարագրի, ու այդ ճանապարհին նրա կուտակած գրական բերքի նկատմամբ:

Լևոնը գրչի աշխատավորի այն տիպարն է, որի ամբողջ կյանքը շնչավորված, իմաստավորված է գրի անդաստանի անխոնջ ու անվերջ հերկումով, և մարդու, մտավորականի այն տիպարը, որն արժանապատվությունը պահեց կյանքի բոլոր ասպարեզներում: Իմ խորին համոզմամբ նրա պոեզիան արժանի է ամենաբարձր գնահատության: Նրա մաքուր և բնական ձայնով ստեղծած գործերը իրենց հետքը թողնում են իսկական ընթերցողի սրտում:

ԹԵՀՄԻՆԱ ՄԱՐՈՒԹՅԱՆ
ԳՐԱԿԱՆԱԳԵՏ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ

Դիանա Համբարձումյան

ՓԵԱԿՆԵՐԻ ՏԱՐԱԲԱԽՏՈՒԹՅՈՒՆ

(ՀԱՏՎԱԾ ՎԵՊԻՑ)

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ
ՎԵՐԱԴԱՐՁ
1. ՄԻ ՈՒՐԻՇ ՏԽՐՈՒԹՅՈՒՆ

Տունը, որտեղ ծնվել էր մայրը, այլևս նրա տունը չէր, տունը, որտեղ մեռավ մայրը, վաղուց նրա տունը չէր: Ինչ ուներ-չուներ՝ մի ձեռք հին շոր ու մի նոր շապիկ, դրեցին գլխի տակ, որ գնացած տեղում ամոթով չմնար, ու հաշիվները փակած համարեցին: Պարտք ու պահանջը տվեց երկու ուզող, տասը չուզողին և հոգնած գլուխն ազատեց բոլորից: Ցուրտը մարդու ոսկոր էր շամփրում, ինքը, տոնական բացլանջ բլուզը հագին, պառկել էր անխռով: Սպիտակ մազերը խնամքով հարդարել, դեմքն աննշան շպարել էին, որ ցավի հետքերը թաքցնեն: Մայրն ապրելիս էլ էր ցավը խնամքով ներս հրում: Ասում էր. «Սևս ներս եմ անում, կարմիրս՝ դուրս, թող թշնամիս չուրախանա»: Մայրն արդեն քանի տարի է՝ թշնամի չուներ, թշնամիները հերթով ևս-ևս էին եղել, բայց նրան ոչ ոք չէր ասել էդ մասին: Մայրը երեսի զոռով շարունակում էր ապրել, չէր մեռնում, որ թշնամիները չուրախանան:

Մահվան ու թաղման պատրաստվելն էնքան կարևոր է, որքան ծնունդից, հարսանիքից, կնունքից առաջ նոր շոր ու կոշիկ, նոր ներքնաշոր առնելը: Հա, դե, օգտագործած դագաղս ո՞րն է:

Սենյակը չէր տաքանում ո՛չ եկողների շնչից, ո՛չ էլ մոմերի թպրտացող բոցերից: Պատի տակ շարված իշոտնուկներին նստածները կուչուձիգ էին լինում, սրթսրթում ու արանք-արանք փղձկում էին, սևաշոր կանայք մրմնջում ու անձայն լաց էին լինում: Բոլորի ուշքն ու միտքը ցուրտն էր: Ինքն անխռով պառկել էր:

Մայրդ: Երբ հարս գնաց, տան երկաթյա ճաղերով մահճակալին սկեսուրն էր քնում, դարչնագույն բրեզենտով ծալովի պառկելատեղը տեգրոջն էր, ինքն ու մարդը փայտե կարմրաներկ հատակին փռված կարպետին կողք կողքի երկու ներքնակ շարեցին ու փրփուր սպիտակեղենը խնամքով արդուկելուց հետո վերմակ-ներքնակ-բարձին հագցնելով՝ բոյեբոյ մեկնվեցին ու փաթաթվեցին իրար: Առաջին գիշերը մի կերպ լուսացավ, լուսաբացին մեջքացավով ելան ներքնակներից ու չխոնջացած մարմինները ծռմռելով՝ բերանբաց, ձայնով հորանջեցին: Եկող գիշերներն էլ լուսացան, ձերոնց մնաց մեջքացավն ու հոգիների խոնջությունը:

Հետո հարևան-բարեկամները կիհշեն. «Սև լինի դրա գալը, որ հարս եկավ: Հարս կա՝ ոտը շեմից ներս է դնում թե չէ, էդ տունը ծլում-ծաղկում ա, հարս էլ կա՝ ստվերը կոխկրտելով ա տուն մտնում, ու էդ տան եղած-չեղածը չորանում վերանում ա: Հիմա Նազոյի հարսն ա. եկավ-չեկավ, մահն էլ հետը բերեց ու էն արած-դրած, լիքը տուն-տեղը մեռցրեց թողեց: Եկած տարում սկեսուրը հոգին փչեց, տարեվերջին տեգրը բանակ գնաց, բանակը Ղազախստան էր, կես տարի հետո դիակը ցինկե դագաղով հասավ Երևան»: Նրանք կհիշեն ու կպատմեն, մերդ կուչ կգա, կդառնա մի բուռ ու, վիրավորանքից կոպերը կփակվեն, աչքերի խորքում արցունքը կճղփա ու ներս կհոսի: Ինքն իրեն կխղճա, կծվատվի ու կդառնա մի բուռ:

Լինում է, որ գժվում ես սիրելուց ու ամուսնանում՝ առանց փողի, բայց չի լինում տարին տարու վրա գիժ-գիժ ապրել՝ կոպեկ հաշվելով: Էն Տրիստանի ու Իզոլդայի վերջն անգամ հեչ խեր չէր՝ ի հակառակ արծվային հավատարմության ու տնջրի ծառի հավերժության ուխտի, էլ ուր մնաց՝ սիրվտուքը պակաս, ապրուստը պակաս կյանք անեն, ու կյանք լինի:

«Ես չգիտեի, որ մերոնց սերն էդքան անսեր ա եղել, ու ես էդ անսերից եմ լույս աշխարհ եկել, - տխրամած ասում էր Ար հայրիկս, - դու մի ասա՝ սերը մի հարյուր հազար երես ունի, իսկ հարյուր հազարմեկերորդը, որ դեռ անիմանալի ա, լինելու ա ու լինում ա: Կամ գուցե սեր չի, մի ուրիշ քաղցրություն ա, մի ուրիշ փորացավ ա, բայց կա, ու լավ ա, որ կա»:

– Մերդ ասում էր՝ դու էն թթի քաղցրությունն ունեիր, բայց ձերոնց կյանքի դառը քաքմեջ արեց եղած-չեղածը, - դագաղին հենված՝ հիշում էր հարևան ծերունին, որ Արի դպրոցի պաշտոնաթող տնօրենն էր: - Կա՛մ անսերն ա շարունակվում, կա՛մ կյանքը: Ձերոնց անսերն էնքան տևեց, մինչև հորդ քրքրված սիրտը մի որպեռում պայթեց, ու կյանքը վերջացավ ոչ թե հորդ, այլ մորդ համար: Մնացիք մերդ ու դու՝ նոր-նոր ոտքի ելած, գետնին կպած քոթոթ, որ երկու քայլ անելիս երրորդին թրմփում էիր ու ժամերով ընկած մնում:

Օրվա մեծ մասը մերդ, որ սրա-նրա տունն էր մաքրում, սրա-նրա լվացքն ու արդուկն էր անում, ճաշ-մաշ էր եփում, դուռ-լուսամուտ էր պլպլացնում, էդպես էլ չիմացավ, թե դու ոնց փրկվեցիր եռման ջուրը վրադ թափելուց, տունը կրակի տալուց, ամբողջ օրը տակդ թրջած ու կեղտոտած, հոտը վրադ կպած՝ երկու քրքրված խաղալիք աջ ու ձախ տշտշելով՝ ոնց մեծացար, ու երբ մեծացար, մերդ էդպես էլ չիմացավ, թե ուր էիր գնում, ում հետ էիր նստում-վեր կենում, ինչ էիր անում, ոնց էիր փող ճարում, որ մի երկու հատիկ ծխախոտ առնես, տղերքին ցույց տաս՝ ես էլ եմ ծխում, որ հազար տարի օգտագործած, ջրի գին մի ժամացույց ձեռք գցես, զարկես պատին, պատը վնասվի, իրան բան չլինի, որ էդ ժամացույցը կապես թևիդ, թևդ տնկես ու բադիկ-բադիկ ճեմես համալսարանի միջանցքներում, որ ձեր կուրսի աղջիկները նայեն ու տեսնեն, քեզնից էլ ժամ հարցնեն, որ մեկ-մեկ էլ դու ձեռքդ տանես գրպանդ ու տղերքին գարեջուր պատիվ տաս, դու էս բաներն ինձանից լավ կհիշես, Ա՛ր, բայց ես էլ եմ հիշում, աչքիս առաջ ես մեծացել ու մարդ դառել: Խոմ սենց քաչալ չե՞ս ծնվել, գանգուրներով երեխա էիր, մերդ մեկ-մեկ բանտիկ էր կապում մազերիդ, որ աղջկա հավեսը հաներ:

– Հը՛, - Արը հեգնախառն մնչաց:

– Համալսարանն ավարտելուդ տարին պատերազմ սկսվեց, ձեր կուրսի բոլոր տղերքը գնացին Ղարաբաղ, Երևանում մնացել էիք դու ու Սուրոն, որ աջ ձեռքի մատները խորհրդային բանակին էր նվիրաբերել, - ձայնեց ավելի ջահել հարևանը, որ քառասուն տարեկանում արդեն քսան տարվա գործազուրկ էր: - Դու ասեցիր՝ գնամ կամավոր գրվեմ, Սուրոն ասեց. «Մերդ մեղք ա, մորդ խղճա, ոտից-ձեռից ընկել ա, երկար չի ձգի, գոնե աչքերը փակող լինի»: Սուրոն սխալվեց: Մերդ հին ու պինդ ոսկոր էր, երկար ձգեց, բայց դու երկար չձգեցիր երևանյան լոպպազություններդ ու փողոցում ջրահարս բռնելու ձկնորսությունդ: Կարթերդ հավաքեցիր ու պահ տվեցիր ձեր փլվող տան ձեղնահարկին: Ձեղնահարկից իջնելիս սարդոստայնը փաթաթվեց մարմնիդ ու դաջվեց-մնաց կիսատ թողած տղայությանդ ճակատին:

– Է՜հ, եսի՛մ, է, ոնց որ հեչ իմ կյանքը չլինի, ոնց որ մի հեռու ծանոթի մասին եք խոսում, ես ձեր ցավը տանեմ, չգիտեմ՝ ինչ ասեմ:

– Սուրոն մի տարի մենակ մնաց Երևանում, մինչև որ դու Ղարաբաղից հետ եկար՝ արկի բեկորը ոտքիդ փափուկ մսի մեջ, պատերազմի հոտը վրադ, մահվան տեսքից՝ զզված, - շարունակեց գործազուրկը:

– Մի օր էլ, երբ կռված տղերքով իրար գլխի հավաքվեցիք, պարզվեց՝ բոլորդ անգործ եք, ես էլ՝ ձեզ հետ, ձեզ նման, պարզվեց՝ բոլորիս ձեռքերն իրար քսվելու կարոտ ունեին, կոշտուկի կարոտ ունեին, ու տղերքն ասեցին՝ թուղթ խաղանք, եկե՛ք գոնե թուղթ խաղանք, - շարունակեց թաղի հարգված տղերքից մեկը, որ հիմա իր տան նկուղում նստած՝ կոշիկ էր նորոգում, տուն-տեղը պահում: - Էդպես սկսվեց ու սարի գլխից գլորվող ձնագնդի նման թափ առած՝ ահագնացավ:

- Հետո մի ձմեռ, - ինքն իր մասին խոսեց Ար հայրիկս, - սովետի փողն արդեն փոխվել էր, հագիդ բաճկոնը ստիպված հանեցիր, կրված փողի տեղ թողեցիր ու մի բարակ վերնաշապիկով տուն գնալիս մթան մեջ լաց եղար: Մերդ դուռը բացեց, դռան տակ անխոս կանգնած՝ նայեց ու գլուխը կախեց. կարծես ինքն էր մեղք գործել: Հետո գնաց ներքնակի ծերը բարձրացրեց, ձեռքը մտցրեց խորքերն ու եկավ կանգնեց դիմացդ, կանգնեց ու անթարթ նայեց աչքերիդ:

Մորդ դողացող ձեռքերը, երեսով հոսող արցունքն ու մատների մեջ ցցված թղթադրամները քեզ էնքան սթափեցրին, ինչքան տարիներ առաջ հորդ չխփած ապտակն ու մթան մեջ չպայթած հայհոյանքը, երբ անհեր՝ առաջին անգամ ծխած ծխախոտիդ կայծկլտացող կրակը մենակ դու էիր տեսել ու խեղդվել ծխից ու մի ուրիշ տխրությունից, որ տղայի անհերությունն ա վկայում, - եսի՞մ, տղե՛րք, ոնց որ էս սաղ իմ գլխով չի անցել, ոնց որ մոդայից դուրս եկած մի կինո եմ հիշում ու պատմում:

Մոր մահն ու թաղումն առիթ էին, որ Ար հայրիկս մեկընդմիշտ վերադառնար Հայաստան՝ ինքն իրենից ու ամենքից թաքցրած երազանքն ի կատար ածելու վճռական մտադրությամբ: Հայաստանում մեռնելու երազանքը:

Մի բան, որ շատ ես ուզում, լինում է:

●

Կենսագրություն

Ծնվել է 1961 թ. Թբիլիսիում: Մանկությունն ու պատանեկությունն անցել են ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան քաղաքում, որտեղ 1977-ին ավարտել է Ստ. Շահումյանի անվան միջնակարգ դպրոցը: 1978-ին ընտանիքը տեղափոխվել է Երևան, Դիանան ընդունվել է Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների պետական ինստիտուտի անգլերենի ֆակուլտետ՝ ավարտելով գերազանցության դիպլոմով 1983-ին: 1984-ից մինչ օրս անգլերեն և թարգմանության տեսություն է դասավանդում Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում: 1990-ին ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի, 2007-ին՝ բանասիրության դոկտորի գիտական աստիճան: 2009-ին նրան շնորհվել է լեզվաբանության պրոֆեսորի կոչում:
20-ից ավելի գրքերի հեղինակ է, որոնց թվում՝ վեպեր, վիպակներ, պատմվածքների ժողովածուներ, թարգմանություններ, մենագրություններ և բուհական դասագրքեր: Արժանացել է մի շարք գրական մրցանակների: Պատմվածքները թարգմանվել են 13 լեզվով և տպագրվել արտասահմանյան հայտնի գրական ամսագրերում և անթոլոգիաներում, «Տասը լավագույն պատմվածք» (2011) հայերեն-անգլերեն ժողովածուն թարգմանվել է ռուսերեն ու գերմաներեն և «Հեռագիր Ֆաթիմային» վերնագրով հրատարակվել Ռուսաստանում (2014) և Գերմանիայում (2014):

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Արձակագիր Դիանա Համբարձումյանի «Փեակների տարաբախտություն» (2017) վեպն արծարծում է մի շարք կնճռոտ խնդիրներ, որոնք մեր այսօրվա իրականության բաղկացուցիչ մասն են և ինչ-որ չափով կանխորոշում են մեր ապագան: Դա արտագաղթի խնդիրն է, ազգային ինքնության պահպանման, հայի պառակտված էության, արդարության ու երջանկության ձգտման, սեփական սխալի ու մեղքի գիտակցության և բազմաթիվ այլ խնդիրներ, որոնք շաղկապված են իրար հետ, և բոլորը միասին հյուսում են մարդու ճակատագիրը: Սակայն անհամեմատ նվազ կլիներ այս ամենի ազդեցությունը ընթերցողի վրա, եթե գրողը հասարակական կարևոր հնչեղություն ունեցող այս հարցերը չմատուցեր գեղարվեստական յուրահատուկ լուծումներով ու գրական վարպետությամբ:

Վեպը հղացվել է իբրև ընտանիքի ավագ դստեր՝ Մանեի կողմից շարադրվող կինոսցենար, որի՝ ժամանակի մեջ ետուառաջ գնացող կադրերը ընդմիջվում են ընտանիքի մոր՝ Նարեի օրագրային գրառումներով: Այս յուրօրինակ կառուցվածքը ընթերցողից երկար ժամանակ թաքցնում է պատճառի ու հետևանքի հաջորդականությունը, լարում ընթերցողի հետաքրքրասիրությունը, որը բավարարվում է միայն վեպի վերջին էջերում:

Հողային և այլ սոցիալական հարցեր, պարտքի խնդիր, խանդ և այլն, որոնք երբեք առաջին պլան չեն գալիս, հերոսներին ստիպում են մեկնել Շվեդիա: Հեռվից օտար ու հարուստ երկիրը բախտ ու երջանկություն է խոստանում, փրկություն բոլոր անհաջողություններից, բայց թվացյալ փրկությունը գին ունի, ինչպես հունական առասպելի փեակների դեպքում, որոնք Ոդիսևսին փրկելու համար հատուցեցին՝ աշխարհի երեսից վերանալով, ժայռակույտի վերածվելով: Վեպում էլ Նարեն հատուցում է հոգեկան հավասարակշռության կորստով, ամուսինը՝ կյանքով: Այստեղից էլ՝ վեպի վերնագիրը: Գրողը փորձում է համոզել, որ երկրից հեռանալով՝ մարդը չի կարող ինքն իրենից հեռանալ, չի կարող ազատվել սեփական մեղքի զգացողությունից: Իրենց ճակատագրի համար Նարեն և Արը ունեն մեղքի իրենց մեծ բաժինը, ինչը և թույլ չէր տալիս, որ նրանք իսկապես փրկվեին:

Արձակագիր Դ. Համբարձումյանը նաև թարգմանիչ է, լեզվաբան ու գրականագետ, լավ է պատկերացնում ժամանակակից վեպի առանձնահատկությունները, ուստի պատահական չէ, որ առասպելի այլաբանությամբ կառուցված նրա վեպում կարևոր տեղ ունեն նաև նշանները, խորհրդանիշերն ու ինտերտեքստը: Վերը նշված հատկանիշները թույլ են տալիս նշելու, որ գործ ունենք ասելիքի կարևորությամբ և պոետիկական թարմ միջոցներով հարուստ վեպի հետ:

ԺԵՆՅԱ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ
Բ.Գ.Դ., ՊՐՈՖԵՍՈՐ

Մարի Առաքելյան

Կենսագրություն

Որպես կենսագրական, Մարի Առաքելյանը՝ մերօրյա այսնյաց բանաստեղծը, այսպես է ներկայանում.

Կյանքի բոլոր խաղերի մեջ՝ տառապանքից-խրախճանք,
Ես ընտրեցի ճամփան լույսի՝ արքայությունը հոգու,
Ընթանում եմ՝ ջղաձգված իմ երգերով,
խելառ դարին համընթաց,
Ինձ չդատեք ընթացքի մեջ. հավերժությանն եմ միտված...

Ծնվել է Կապանի շրջանի Առաջաձոր գյուղում:
Մասնագիտությամբ բեմադրիչ է: Աշխատել է Կապանի Ա. Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնում՝ որպես դերասանուհի, զուգահեռ զբաղվել երկրորդ մասնագիտությամբ՝ լրագրությամբ, թղթակցելով հանրապետության մի շարք թերթերի ու ամսագրերի: Բանաստեղծել սկսել է 12, տպագրվել՝14 տարեկանից: Ունի տպագրված՝ «Վերջը քո մի բուռ հողինն եմ» բանաստեղծությունների ու պատմվածքների ժողովածուն և համահեղինակել է նաև բազմաթիվ գրքեր, որոնց մեջ հիշարժանը, թերևս՝ լավագույն բանաստեղծների, հայրենասիրական լավագույն գործերի հավաքածուն է՝ ալմանախը՝ նվիրված Հայոց Մեծ եղեռնի 100-ամյակին: Այդ հայրենասիրական գործերից որոշները առանձին թարգմանիչների կողմից թարգմանվել են անգլերեն, ռուսերեն:
Գրում է նաև մանուկների համար: Այդ գործերից ներառված են՝ «Սյունիքի գրողները մանուկների մասին» գրքում: Տպագրության է պատրաստ ևս երկու գիրք, որոնք սպասում են իրենց հովանավորներին: Ստեղծագործությունների ընդգրկումը բազմաժանր է, բազմաթեմա, որտեղ գերակայողը մարդն է, ժամանակը, կյանքը... Խոսքը համարձակ է, լեցուն, տրոփող, դրա համար էլ վայելում է գրչակից ընկերների, ընթերցողների սերն ու հարգանքը:
Մեր ժամանակների տաղանդավոր բանաստեղծ Խաչիկ Մանուկյանի՝ Մարիի ծննդյան օրվան նվիրած էքսպրոմտը, թերևս վկայությունն է վերոնշյալի.

Շնորհավոր քո տարեդարձը,
Հմայքներ, լույսեր կրող Մարի,
Քո շռայլ հոգին, որ միշտ բաց է
Հորդ հույզերի դեմ այս աշխարհի,
Ոչ ոք չի կարող տողադարձել,
Կիսելով՝ որպես սիրտը բառի,
Դեռ ինչքա՜ն երգեր պիտի սանձես
Քո անկասելի ճանապարհին...

ՀԱԿԱՏԱԳԻՐ

Իմ արյան մեջ է անցյալն իմ ապրում,
Ես արյան գնով պահում եմ ներկան...
Ներկան է ապրած օրերն իմ չափում,
Մարդահամարն էլ՝ փաստում, որ դեռ կամ ...
Արդար եմ ապրել կյանքն ինձ պատկան.
Եվ չեմ խարդախել ոչ մի ակնթարթ,
Եղեռնազարկ եմ մինչև իսկ եղել
Եվ ցավն իմ հոգում համրորեն կրել.
Սրբություններն այլոց չեմ լլկել,
Ոչ մեկին տնից, հույսից չեմ զրկել.
Թե երկրիս ներսում բազուկ եմ պրկել-
Իմ հայրենիքն եմ միմիայն փրկել ...
Ինձ ավերեցին, ինձ ավարեցին,
Ինձ հավատափոխ արին, գերեցին,
Ինձ խողխողեցին, ինձ քրքրեցին,
Մարմնիս վրա խաչե՜ր հանեցին,
Ողջ-ողջ այրեցի՜ն, բռնաբարեցի՜ն,
Անապատներում անթաղ փռեցին,
Աշխարհասփյու՜ռ արեցին անգամ ...
Հետո ետ դարձան իմ հազարամյա պատմության վրա,
Քարե՜ պատմության,
Նաև՝ խաչքարե՜ պատմության վրա
Մի նոր ու վայրագ ջա՜րդ սկսեցին ...
Խաչքարերի՜ ջարդ ...
Որքան էլ ջարդեք խաչերն իմ քարե,
Եկեղեցիներս, վանքերս ավիրեք -
Ես չե՜մ հատնելու, չե՜մ սպառվելու,
Զի՝ որքան հողի վրա եմ կանգնած,
Նույնքան էլ նրա տա՛կ եմ անթեղված ...
Որտեղ էլ փորեք -ի՜նձ եք գտնելու,
Ձեր հերսից դուք եք մի օր սատկելու ...
Ինձ շա՜տ մաղեցիք, բայց չմանրացա՜
Ինձ շա՜տ դաղեցիք, բայց չչարացա,
Ինձ խաչ հանեցիք - ոգեղենացա՜ .
Գլխովս այնքա՜ն բաներ անցկացան ...
Հիմա արարքն այդ խորշում եք հիշել,
Քանզի ինձ պարտել չկարողացաք ...
Եվ այստե՛ղ եմ ես - կանգուն ու հպարտ .
Որքան էլ լինեք խոժոռ ու դժկամ ..
Ո՞ւր են ասորիք, որ այսօր չկա՜ն,
Բաբելոնացիք, որ փոշիացան ...
Իսկ ԵՍ այստե՛ղ եմ -կանգուն ու հպարտ,
Եվ մի բան էլ դեռ՝ գալիքն է ինձ պարտ,
Ե՛ս եմ մարդկության պատմության վկան,
Ինձնից տարիքով էլ ոչ -ոք չկա :
Ես ժամանակն եմ - սլացքս ՝ անվախճան,
Ես Հա՛յն եմ զորեղ ...Ես ՝ Հավերժական ...

ՔՆԱԽԱԽՏ ԵՄ ԴԱՐՁԵԼ ...

Իմ խաչերի՛ երկիր, խաչքարերի՛ երկիր,
Հազա՜ր տեղից խոցված, եղեռնազա՛րկ երկիր,
Երբ նայում եմ խորու՜նկ քո վերքերին աննինջ-
Քնախախտի նման վեր եմ թռչում քնից՝
Որպես մի խելագա՜ր, մի անզիջում դահիճ -
Նրա՜նց համար, ովքեր քոչվոր ու փուչ տեղից
Եկան, դրկից դարձան արյունածուծ ու պիղծ ...
Որ խենթացած հայի արյան քաղցր համից
Բոլորեցին մեր շուրջ, ծավալվեցին մեր շուրջ,
Մոլախոտի նման շուլալվեցին մեր շուրջ,
Մեռաստազներ տվին ՝ահյակից ու աջից
Ու սողեսող հասան մեր կոկորդ ու շնչին-
Մա՜զ էր մնում ՝ տայինք մենք մեր շունչը վերջին ...
Ու հերթական անգամ
Ձեռք մեկնեցինք տիրոջ սու՜տ փրկարար աջին,
Ու հերթական անգամ ...վե՜ր հանվեցինք խաչի ...
Իմ խաչերի՛ երկիր, խաչքարերի՛ երկիր,
Իմ դարդիմա՜ն, օ՜, իմ անհանգիստ ու աննինջ,
Իմ աղոթքն ես օրվա՝ առաջին ու վերջին,
Զի քեզ համար վաղու՜ց քնախախտ եմ դարձել -
Դատապարտվա՜ծ հավերժ մեռյալներիդ կանչին ...

Է՜հ, կենացդ, տեր Աստված...

Լռությունը ձայն տվեց... Ձայնեղները չքացան...
Բարեկամը հեռացավ, օտարները ջերմացան,
Այս խաղերից, տեր Աստված, ես մնացի բացակա,
Դու՛ էլ հոգնել ես ինձ պես. դու՛ էլ դիտորդ ես անձայն ...
Է՜հ, կենացդ, տեր Աստված, նույն օրին ենք ես ու Դու.
Այս աշխարհում՝ մեզ համար բան չմնաց ապշելու.
Նույն հանգով են վանկարկում իմաստուն ու կակադու,
Նույնակերպ էլ կպառկեն փոսերի մեջ՝ նամշելու...
Ես՝ անցավոր, Դու՝ հավերժ.. Անցավորիս ափսոսա՝
Մի բռաչափ խինդ բախշիր՝ ժլատ բախտիս սփոփանք-
Պարտք չմնանք մեկմեկու,
Պարտքը բեռ չէ հասարակ,
Պարտքը սապատ է հոգում,
Հոգու սապատն՝ ահարկու,
Հողը, որ հող է, անգամ
Հազարաշերտ իր խորքում,
Հողը պարտք չի պարտակում ...
Խառնափնթոր այս կյանքում՝
Ինչե՜ր տեսանք նողկալի.
Շինծու ժպիտ, կեղծ հոգոց
Ոչ մի հուզում ՝ խորքային...
Չընդունեցի՜, ի՞նչ արած,
Չընդունեցի՜. խորթ էին
Բնությունից հեռացած
Վարքուբարքը մարդկային...
Եվ ահա՛ ես՝ ըմբոստս,
Մերժած ամբոխ ու լկկամ,
Մենակ կանգնել եմ քո դեմ
Պարզաճակատ, անկարկամ,
Կամ պատիժ տուր, կամ՝ փրկանք.
Տեր եմ կամքիդ գերակա,
Տեր եմ ինքս իմ բախտին,
Տառապանքին անվկա...
Բայց... մինչ վճիռդ կարդաս,
Ձեռքդ դիր խղճիդ վրա
Ու տալիքդ արդար տուր,
Որ տվածիդ հավատամ...
Անժամ ... գու՞ցե խարսխվեմ
Ափերիդ մոտ ու ... Մնա՛մ...

ՀԱՐԲԵԼ ԵՄ ԱՆՇՈՒՇՏ, ՈՐ ԱՅՍՔԱՆ ՎԱՏ ԵՄ...

Չեմ նայել՝ խմել գիտեմ-չգիտեմ –
Բաքոսյան հեղուկը քաշել եմ գլխիս,
Գու՞ցեև վաղը կյանքս ավարտեմ –
Բաքոսյան հեղուկը քաշել եմ գլխիս...
Թվաց՝ քամու պես ես էլ ազատ եմ,
Բայց լոկ դառնության սահմանն եմ հատել,
Սահման, որից դեն վերստին պատ էր,
Գուցե քի՞չ էր ինձ... Էդ է՞լ ինձ շատ էր...
Իմ կյանքն ՝ անսովոր ու մի քիչ բարդ էր.
Ինքս ինձ շատ էի... Ինքս ինձ պարտք եմ...
Ես ամբողջ կյանքում հույզ եմ ենթարկել
Եվ ոչ մի հնար, թե կփարատվեմ;
Այս կյանքի Դառը ինձ ներսն է առել,
Ապրել եմ ՝ ասես ՝բնավ չեմ ապրել,
Լացս խինդով եմ հաճախ պարտակել,
Երբեմն էլ՝ խոսքի տեղ՝ խորունկ եմ լալկել ...
Չսովորեցի՜ ես մարդուն ատել,
Հավերժ էր սերս ու անհատակ էր,
Անհատակ ասածն էլ ՝հավերժ կարոտն էր -
Որքան ինձ հիշում՝ աչքս շաղոտ էր ..
Հիմա՝ քամու պես թեև ազատ եմ,
Բաքոսյան հեղուկն էլ քաշել եմ գլխիս,
Բայց վատ եմ, վատ եմ, ես այնքա՜ն վատ եմ,
Մեկը ջան ասի՝ դարդս կպատմեմ...

●

Հսկզբանե բանն ստեղծողը պոետ է՝ էգ, թե որձ:

Մարդու դեմ կեղծ ցուցմունք գրողը, օդի մեջ լսվող բառերով «բանաստեղծություն» շինելը՝ սրբապղծություն է:

Շատ դժվար է մտախաղ ու «հավեսով» հանգախաղ անող ոտանավոր բստրողներին հասկացնել, որ ինչքան ածականախեղդ անեք ձեր գրավոր խոսքը, հայոց լեզուն աղեկեզ լացուկոծով պատեք, միեւնույն է, ձեր «տխրությունը» կամաց-կամաց (չի) փոխվում լացի՝ Համո Սահյանավարի ասացի, որ միտքս զմռսեմ:

Լույսի ցանկությունից լաց լինելը բանաստեղծի լեզուն է, գերադասելի է հիշեցնեմ Դանիել Վարուժանի «Աստծո լացը» եւ բանաստեղծին նման, Աստվածն ալ որպեսզի արարէ, - հարկ եղաւ լալ»: Այս մտորումներն ունեցա, երբ կարդացի պոետ Մարի Առաքելյանի դիմագրքում տեղադրված վերջին տարիների ստեղծագործությունները, անգամ շուտափույթ արված գրառումները:

Մարմարի կարծրությամբ բանաստեղծելու իր լեզուն, ակնառու լեզվի շքերթը. այսօրիկ ընթերցողի թափառ հոգին ապրեցնում է լույսի ցանկության մեջ՝ հազիվ թե կարողանաս գտնել մի մտացածին բառ, որ առանց ստի մեջ թրծվելու լույս աշխարհ է եկել:

Մարին վարպետորեն կարողանում է այսօրիկ մեր կյանքին խառնել մի քիչ աղմուկ, մի քիչ ցասում, նշխարի չափ սեր, մայրական մի պտղունց ատելություն, վերջում հայրենիքի սեր, կյանք, հետո՝ ոճ:

ՌՈՒԼԱՆԴ ՇԱՌՈՅԱՆ
ԳՐՈՂ, ՀՐԱՊԱՐԱԿԱԳԻՐ, ՊՐՈՖԵՍՈՐ

Հրանտ Գյուլասարյան



ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծնվել է 1937 թ. օգոստոսի 1-ին Մեղրու շրջանի Կուրիս գյուղում: 1956 թ. ավարտել է Մեղրու շրջկենտրոնի միջնակարգ դպրոցը: 1956-59 թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1965-67 թթ.՝ աշխատել է Մեղրու «Արաքս» շրջանային թերթի խմբագրությունում: 1968 թ. հեռակա ավարտել է Երեւանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը: 1967-72 թթ. աշխատել է Մեղրու շրջանի Ագարակ ավանում՝ կուլտուրայի պալատի տնօրեն: 1972 թվականին տեղափոխվել է Երևան: 1972-1979 թվականներին աշխատել է «Հայաստան» հրատարակչությունում: Աշխատել է նաև հեռուստառադիոպետկոմում: Գյուլասարյանի ստեղծագործությունները պարբերաբար տպագրվել են հանրապետական գրական մամուլում, թարգմանվել են ռուսերեն: Եղել է ՀԳՄ «Նոր-Դար» ընկերության հրատարակչության տնօրեն:

ՃԱՆԱՊԱՐՀ

Սրսուռ ապարանցի Ազատ Գասպարյանին

Սեպտեմբերի վերջին օրերն էին, Մեղրու համար ամենալավ ժամանակները, բայց երբ մեր երթուղայինն սկսեց լեռնացքի վերելքը, անձրևը հանկարծակի փոխվեց ձյան՝ զարմացնելով բոլոր ուղևորներին: Ձյունը, անշուշտ, հազվադեպ երևույթ էր այդ ամսին: Լեռնանցքի ամենաբարձր կետում, որ ծովի մակերևույթից բարձր էր երկու հազար հինգ հարյուր մետր, ձյունն ավելի սաստկացավ՝ ինչպես լինում է դեկտեմբեր-հունվար ամիսներին, և միայն նրա ճերմակ շղարշի միջով երևում էին աշնան գույները, որ թեթև էին երաժշտության պես, և վայրէջքն էլ թեթև էր: Անսպասելի ձյունը կտրվեց, արևը դուրս եկավ, իսկ ճանապարհից ու անտառից բարձրացող գոլորշին հաճելի ջերմություն էր հաղորդում:

Ճանապարհը, որ մեզ առաջնորդում էր Մեղրի, ոլորաններով իջնում էր ձորերն ու բարձրանում, սլանում էր Մեղրի գետի վրայով, որ դեռ մաքուր էր՝ ինչպես ակունքում և իր վշշոցում անկասկած պահպանում էր Արաքսի արձագանքը:

Ամեն անգամ այդ ճանապարհը իմ մտապատկերում արթնացնում էր Ազատ Գասպարյանի կերպարը, որին պիտի հանդիպեի: Նրան չեմ կարող մոռանալ, այնքանով որ տպավորիչ էր, անմիջական ու հանդարտ, թեև առաջին հայացքից դժվար թե այդպես մտածես: Եվ ամեն անգամ, երբ հանդիպում էինք, հենց այնպես, իբր թե իմիջիայլոց ասում էի.

- Ազատ ջան, ես քո շինած ճանապարհով եկա: Ախպեր ջան, էդ ի՞նչ լավ ես շինել, քունս տարավ: Չկարողացա բնությամբ մի կարգին հիանալ:

- Դրա մասին չենք խոսում, - կանխում էր շարունակությունը, - հիմա միասին գնում ենք Արաքսի այս ափ: Գնում ենք տարածք նվաճենք:

Լսողն էլ կկարծեր, թե Քաջ Նազարի պես գնում էինք Հնդկաստանից եկող քարվանը կտրենք-բերենք, տունը լցնենք: Ճիշտն ասած, ինձ էլ մի քիչ շփոթության մեջ գցեց, բայց Ազատի հումորին ծանոթ էի, դրա համար էլ առանձնապես լուրջ չընդունեցի:

Արաքսի մոտ սահմանային փշալարերը բավականաչափ քանդած էր, ճանապարհը փլուզվելու ենթակա էր, ուստի ինքնաթափներով մեծ-մեծ քարեր ու խիճ էին լցնում Արաքսը, գետը լայնքով նահանջում էր, բուլդոզերը հարթեցնում էր քարերն ու խիճը, ստացվում էր նվաճված տարածք: Այսինքն՝ երկու-երեք մետրով խորանում էինք Արաքսի մեջ, և ստացվում էր, որ տարածք նվաճեցինք:

— Սա է մեր նվաճածը, —ասաց Ազատը՝ հեգնախառը ժպտալով, — ուրիշները հարյուր հազարավոր կիլոմետրերով են առաջ գնում, նվաճում չի կոչվում:

Ես Ազատի հումորը մտքիս մեջ լրջացրի:

— Երանի՜, - ասացի ինքս ինձ, — երանի՜ այն օրը գա, երբ սահմանները կբացվեն, փշալարերը կքանդվեն, և Արաքսը, մեր մայր գետը լիաթոք կշնչի: Սովետի ժամանակ թուրքերն իրենց անասունները քշում էին մեր արոտավայրերն ու դուրս չէին գալիս, մնում էին և, փա՜ռքդ շատ, Տեր Աստված, դրա վերջն էլ եկավ...

Մենք դրանից հետո Մեղրի վերադարձանք շրջանցող ճանապարհով, որ մի ժամանակ լավն էր, հիմա քարուքանդ էր, լքված ու անտեր:

— Եկող տարի իմ ծրագրի մեջ այս ճանապարհը մտցրել եմ, որ գաս՝ չես ճանաչի: Մեղրուց-կայարան մի շնչով ենք հասնելու: Ափսոս, շրջապատի կանաչը չքացավ, ծառերը չորացան, խոտը չորացավ, նուռը, դեղձը, խաղողը, թուզը, սերկևիլը էս տարածքից վերացան: Անմահական ջուրը կորավ: Սաղությունն լինի՝ էդ էլ եմ անելու, ջուր եմ քաշելու:

Այնպես էր խոսում, ասես բնիկ մեղրեցի լիներ:

— Լսիր, Գյուլասարյան, ես ավելի մեղրեցի եմ, քան՝ դու: Քսանչորս տարի այստեղ եմ ու միշտ էլ ճանապարհներ եմ շինել: Բայց գիտես, չէ՞, սրսուռ ապարանցի եմ: Հենց որ կարոտում եմ՝ ավտոն քշում եմ ուղիղ Ապարան՝ Արագած գյուղ: Այնտեղ Բենիամին հայրս է, Սիրանույշ մորս գերեզմանը: Բայց ցեղով մենք մշեցի ենք: Հասկանում ես, չէ՞, ինչ եմ ուզում ասել: Կոտորածից հազիվ մազապուրծ: Բայց այն էլ ասեմ, որ հայրս Մուշը չի տեսել: Պարզ է, ես էլ չեմ տեսել: Այ, Գևորգ պապս ուրի՜շ էր: Նա Մուշի մասին այնպե՜ս էր նկարագրում, այնպե՜ս պատկերավոր, որ աչքիդ առջև տեսնում էիր ամեն ինչ. իրենց գյուղը սարալանջին, տունը, թոնիրը, այգին, թթի ծառը, շանը, որ ասես տան անդամը լիներ, այնքան որ հարազատի պես էր: Շատ էր լցված ցավով ու կարոտով: Ասում էր՝ «Բենիամին, կգա՞ օրը, որ նորից հետ երթանք»:

– Կգա, կգա, անպայման կգա՛, - պատասխանում էր հայրս՝ ինքն էլ չհավատալով ասածին: Պապս այդպես կարոտն աչքին էլ հանգավ: Հիմա նրա հոգին Մշո դաշտերում է, Մշո սարերում, սավառնում է երևի...

– Գյուլասարյան, ի՞նչ ես կարծում, էդ օրը կգա՞... Մեզ անշուշտ հույսն է պահում: Դա որ կորցրիր, ուրեմն՝ վերջ ամեն ինչին: Մոռացիր վերադարձն է՛լ, քեզ է՛լ:

Ազատը, ճիշտ է, Մուշում չէր եղել, բայց այնտեղից ասես ձայն էր լսում, մեկը կանչում էր անվերջ հրեշտակի պես, և դրախտի ձայնն էր դա, արյան կանչը: Արյունը հիշողություն ունի, արյունը ձայնով հանդերձ փոխանցվում է և մի օր տանելու-հասցնելու է այդ կորած էրգիրը, այդ դրախտը:

— Դե տեր կանգնեք ձեր կորցրածին...

Ազատը տարավ Լեհվազ՝ իր հարստությունը ցույց տալու: Ասֆալտի գործարան, խճի, ավազի, քարերի բլուրներ, մեքենաներ՝ ջարդող, մանրացնող, հարթեցնող... Ամեն ինչ՝ ճանապարհաշինության համար: Ամբողջ կյանքում ճանապարհ է շինել, որ մարդիկ հեշտ ու հանգիստ երթևեկեն:

Դու գոնե մի մետր ճանապարհ շինե՞լ ես...

Ես հիշեցի, թե ինչպես հայրս է՛ն թվերին Մեղրուց մինչև Լեհվազ ճանապարհը քարերից մաքրում, քիչ թե շատ հարթեցնում էր: Հատուկենտ մեքենաների վարորդները կանգնում էին, բարևում, թափքի մրգից իրեն բաժին տալիս և շարունակում ճամփան՝ Վռամը, Դանիելը, Բստան Սերոժը, Մխոն, Մուկուչը, Վալոդը, Վանյան...

— Գյուլասարյան ջան, քանի հիշողության ու կարոտի օր է, ի՞նչ ես կարծում, չգնա՞նք խորասուզվենք դրանց մեջ: Ուղիղ Վարդանիձոր, Հովիկ ջան, քշիր:

Ազատին հակառակվելը իզուր բան էր. արդեն ասածն ասել էր, համ էլ առանձնապես դեմ չէի:

— Մի կտոր հաց ենք ուտելու, — ասաց, — ընդամենը մի կտոր հաց ու մի շիշ օղի:

Բայց երկուսս էլ գիտեինք, որ մի շիշ օղիով ո՛չ հիշողության վերջը կերևա, ո՛չ էլ կարոտը կհանգչի, այնքան կորուստներ ունենք, կորստի ու կարոտի այնքա՜ն լեռներ են դրված մեր ուսերին և մեր միջև:

Վարդանիձորը ընդամենը մի «վետերոկ» ունի, և նրա տերը պարտիզան Ռուբիկի տղա Դավիթն է, իմ մանկության ընկեր Մյուդիկի փեսան: Ճիշտն ասած, երբ Մյուդիկի անունը տվեցի՝ իմ մանկությունն էլ հիշեցի, և կարոտն սկսվեց հենց այդ պահից: Մեղա քեզ, Աստված, կարծում էի, թե Մյուդիկն այն աշխարհում է, բայց նա եկավ ողջ-առողջ և նախկին ժպիտով: Ճիշտ է, անթրաշ էր, նիհար ու հյուծվածի պես և շատ էր նման հանգուցյալի, բայց երբ խոսեց, համոզվեցինք, որ այդ նիհար մարմին կոչվածում դեռ երկար տարիների կյանք ու հոգի կա:

Դավիթը ատամնացավի տենդի մեջ էր և չկարողացավ մի բաժակ անգամ խմել: Դրա համար էլ հեռացավ մեզ թողնելով ճոխ սեղանը:

...Եվ ամբողջ երեկոն չտեղավորվեց հիշողությունների ու կարոտի մեջ. նրանք մեզ ուղղակի խեղդում էին, իրարից առաջ ընկնում, իրար հրմշտելով ցցվում մեր առջև: Նրանք մեզ պարզապես հոշոտում էին, ու մենք չէինք դիմադրում: Մենք մեզ ծանրաբեռնել էինք այդ բաղձալի ու տանջալի ցավերով կամովի, ուզելով, նույնիսկ մի տեսակ քնքշանք դնելով բաղձանքի մեջ, և թեթևացումը գալիս էր ինքն իրեն: Մենք լավ էինք զգում: Սրսուռ ապարանցի Ազատը գոհ էր ճակատագրից, որ իրեն Մեղրի նետեց, և Մեղրու, մեղրեցիների համար արեց ամենը, ինչ հնարավոր էր, ինչ իր ձեռքից գալիս էր և ոչինչ չխնայեց. ո՛չ իրեն, ո՛չ փող: Փողը երկրորդ պլան մղվեց, մնացին մարդը, մարդկայինը: Դրա համար էլ մեղրեցիները նրան սիրեցին, նրա մասին խոսում էին պատկառանքով ու երանությամբ: Մի՞թե քիչ մեղրեցիներ կան, որ նրա նման կարող են լավ բաներ անել, իրենց իսկ ծննդավայրի համար, բայց չեն անում, որովհետև չեն ուզում:

- Դու ինչո՞ւ Մեղրու պատվավոր քաղաքացի չես, – ասաց ու էլի հեգնախառը ժպիտ խաղաց դեմքին, - որովհետև արժանի չես: Ի՞նչ ես արել որ: Իսկ ես այդ պատվաբեր կոչումն ունեմ և հպարտ եմ դրա համար: Լավ, բայց արի մի լավ կենաց խմենք: Իմ մշեցի Գևորգ պապի կենացը, որ էրգրի կարոտը սրտում մեռավ, իմ Բենիամին հոր կենացը, որ Մուշը չի տեսել, մեծացել է որբանոցում և իրեն մշեցի է համարում, իմ լուսահոգի մոր հիշատակի և ընդհանրապես մեր բոլոր-բոլոր կորածների...

Երրորդ շշի վրա Մեղրու ոստիկանապետ Արմենին հրավիրեց. հրաշալի մի մարդ, և ես անչափ ուրախ էի, որ այսքան համով-հոտով ոստիկա-

Կարծիք Հրանտ Գյուլասարյանի ստեղծագործությունների մասին

Գրասեղանիս է Հրանտ Գյուլասարյանի «Վերադարձ անցյալ» պատմվածքների ու նովելների ձեռագիր (գրչագիր) ժողովածուն: Ընթերցում եմ: Այս նոր պատումներն էլ ասես «Դեպի խորքը» գրքի տրամաբանական շարունակությունը լինեն՝ մեկը մեկին լրացնող ու ամբողջացնող: Այսինքն՝ նույն «ծննդարան» աղբյուրից են բխել, որոնք իրենց թարմությամբ ու անմիջականությամբ հուզում են ինձ ու պահում հիացքի ու հմայքի «մագնիսական դաշտում»: Իր ապրածներն ու տեսածներն են, իր մանկության և պատանության տարիների միջով անցկացրած ու քամած, կերպավորած:

Ներշնչանքի «հում» նյութը եփվել է Գյուլասարյան գրողի հոգու քուրայում և ստացել նոր ձև ու բովանդակություն, յուրովի արտահայտություն, որն էլ մեզ տանում է իրերի և երևույթների երբեմնի անբռնելի ու անտեսանելի. մարդկային հարաբերությունների ներգո անցումներով՝ քանորդում թողնելով լավի ու բարու հավերժական բախումը: Հեղինակը՝ այս դեպքում Գյուլասարյանն է հետևողն ու ընթացք տվողը գործողություններին՝ նրանց ուղղորդողը, որն էլ հանգեցնում է լիակատար ամբողջացման ու ավարտվածության: Կերպարներ ստեղծելու, առանձնացնելու գործում Գյուլասարյանը հմուտ է, դրվագ առ դրվագ, երկխոսությունների միջոցով «հասունացնում», կերպավորում է իր հերոսներին, լինեն թե՛ մարդ-անձեր, թե՛ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ:

Ինձ թվում է՝ Գյուլասարյանի պատումները հորինվել են «Արևիք» հայահամ գավառի պապերի ու տատերի ալևոր շուրթերին, փչակավոր անտառներում, զըմփզըմփան ձոր-անդունդներում, նռնահամ այգիներում, որտեղ որ վերևից, երբ նայում ես՝ գյուղերն ու ավանները, վարում, նմանվում են արծվի կամ բազեի բացված թևերի: Այդ գյուղերի որդին է Գյուլասարյանը: «Աննինջ» տպավորությունն է մեջս մնացել, երբ անցել եմ այդ տարածքներով: Եվ ահա, այս բնության և այս ժողովրդի ծոցից ելած Գյուլասարյանը իր գրական մտածում-մտորմունքներում պատմել է նրանց մասին, նրանցից քաղած իր գեղեցիկ-անմոռանալի, տիպաբանական լիարյուն, կենդանի կերպարներով: Նա իր գրիչով ասես նկարում է ու ծեփում, զրուցելու պես պատմում իր ապրածներն ու տեսածները:

Գյուլասարյանի պատմվածք-պատումները որքան հետաքրքիր են, այնքան էլ ուսանելի՝ բարո՛ւ, լավի՛, ճշմարտի՛ ու անկեղծի՛, ափսոսանքի՛ ու կորցրածի՛, աներևույթի՛, չբացահայտվածի արտահայտություններ, երեսից չերևացող, ներսում՝ «տուն տված» գոյություններ: Խոխոջուն արձակ, համովհոտով մոտեցումներ, ցայտուն ակվարելային գծեր:

ՎԱՉԳԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Սուսաննա Բաբաջանյան

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լրագրող, ԽՍՀՄ ժուռնալիստների միության անդամ (1989). բանաստեղծ:

Ծնվել է 1958 թ. նոյեմբերի 19-ին, Գորիս քաղաքում: 1974-ին ավարտել է քաղաքի Ա.Բակունցի անվան միջնակարգ դպրոցը, 1982-ին՝ Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտը: 1979-81-ին սովորել և ավարտել է նույն ինստիտուտի ՀՄՖ-ի ժուռնալիստական բաժինը:

«Զգացողություններ» բանաստեղծությունների ժողովածուի մասին

Սուսաննա Բաբաջանյանի բանաստեղծական նոր ժողովածուի մեջ ամենուր նույն զգայուն, տագնապահար սիրտն է՝ չարի, դավաճանության, դաժան հոգիների դեմ անպաշտպան ու մերկ, խորապես խոցելի և արյունաքամ, բայց և անվերջորեն լի սիրո, մաքրության, բացարձակի և լույսի տոների, նրանց հաղթանակների չսպանվող հավատով:

Դա ճակատագրով և Աստծո կամոք ընտրյալ մարդն է՝ լույսի և խավարի կատաղի պտտահողմում, ամբողջությամբ բաց զգայարան ու նյարդ, զգայություն- մարդ, որին վիճակված է բաժին ընկած երկրային Գողգոթան անցնել լուսե-թրթռուն-մաքուր, փշե պսակի ոգեղեն լարումներով, ճիգով, գոյության ցավատանջ արարումի և նախախնամությամբ սահմանվածի գիտակցումով ու պատասխանատվությամբ:

Գիրքն ամբողջությամբ մի «սրտե-սրտագույն մարմին ու հոգի» է, նրանում ներկայացված մարդը՝ «հրաբորբ և գուլեղ գոյություն»՝ «իրականության վտիտ կմախքի մեջ» և արդեն «քանի հազար տարի ու դար է՝ նետված են ձեռնոցները...»:

ՄԱՐՏԻՆ ԶԻԼՖՈՒՂԱՐՅԱՆ

Կանչ հարության

(գրվել և ընթերցվել է Թատերական հրապարակում)

1.

Հայաստան, կարկատանված երազ,
խաբկանք նվիրական
հավերժորեն ձգվող-
անիրական մի տենչ՝
մարմին հագած, սակայն,
մարմին՝ ցա՛վի,
նախնիների արյամբ
թրծված ու հին ցավի...
Որ տնքում է նորից
և տնքում է այնպես,
որ Դեր-Զորում մորթված
2 միլիոն հայի
ոսկորներն են ճթթում,
և քարի տակ ջարդված ուղեղներից ճայթում
արդար մի հատուցում-իբրև պահանջ-
և մեր դեմ են ելնում
միլիոնավոր ու սուրբ Մարգարեներն Աստծո՝
Զոհրապը, Վարուժանը, Սեւակն ու Կոմիտասը...
Ելնում և շեքսպիրյան ուրվականի նման
հալածում են խիղճը համայն մոլորակի-
խոր մրափով քնած նրա սրտին, մտքին
կոչում ԱՀԵՂ ԴԱՏԻ,
ԱՐԴԱՐ ՄԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ...

2.

Ավաղ, ում որ դարեր
մենք կույր հավատացինք,
և հանձնեցինք նրան
բախտը մեր ցավատանջ-
մեզ նվիրեց պատրանք՝
կարկատանված մի ՀԱ~ՅՔ,
որ մենք խեղդվենք, խփվենք,
զարկվենք մեր պատերին-
ելք չգտնենք,
հիշենք ծովի՜ց-ծովը
ու փոթորկվենք,
եռանք ու տապակվենք ձկան նման,
ձկան, որ չգիտի, ավաղ, խոսել
և հոգին է գուցե նախնիների
հենց այ՛դ կերպը առած...
Ավաղ, հավատացինք,
Մինչդեռ մեզնից ձեւեց
Լոկ մի... անդրավարտի՜ք,
և ոչ թե մենք, իրենք
կուշտ հագնելու համար-
թաքցնելու այն սև
ամոթանքը իրենց,
թաքցնելու սպանդը 20-րդ դարի,
որ կատարվեց սատկած հոտի առաջ,
քաղաքակիրթ հոտի...
ՍՊԱՆԴԸ ՄԻ ՈՂՋ ԱԶԳԻ...

որ կոծկվում է այսօր
մի խայտառակ ստով-
և ում հավատացինք
նա չի հերքում սուտը, դեռ ավելին,
որդեգրել է նրանց՝ ստողներին...

3.

Չհերքելով, ավաղ, մեզ հասցրին
երկրորդ սպանդին՝ Սումգայիթին,
որի դատը նույնպես չպաշտպանվեց...
Ի՜նչ կբերի սա էլ... Հայտնի չէ դեռ,
սակայն ժամն է ասել՝ ուշքի եկեք հայեր և՝
Հայաստան-
կարկատանված երազ, խաբկանք նվիրական,
զարթնա՛ծ Լառ,
թուրք ասկյարներ չկան, չկա Մշո դաշտ էլ,
կրկնվում է սակայն պատմությունը քո որբ,
եղերական ու հին, - Անդրանիկի հուժկու
ոտնաձայնն է լսվում մոտիկ ու մտերիմ,
արձագանքում խրոխտ լեռներիդ մեջ,
և Վարդանանց զորքի 20 այն քաջերի սվինների ձայնն է
թնդում անվերջ... Քանզի զարթնել ես դու
և պաշտպանես պիտի լեզուդ այն պիղծ թրից,
հոդդ հնամենի, մեսրոպատառ գիրդ,
հավատդ սուրբ-
այլապես էլ ետդարձ մենք չունենք ու չկ՛ա,
և չենք ուզում արդեն կարկատանով օծվել,
լռել ձկան նման,
ապրել խաբկանքներով,
վաղեմի ու փորձված-
և հե՜շտ, սուսիկ-փուսիկ,
ճերմակ սպանդով
ազգուտակով ջնջվել...

4.

Զարթնել ենք, մեկ ենք,
մեկ հոգի, մարմին-
մեկ տենչ՝ հատուցե՛լ
նահատակների գեթ մի չնչին վերք-
իսկ երբ Սիերը
ելնի քարայրից-
կծաղկեն նորից
Անին, Էրզրումը,
Կարսը, Վարդանեն,
կծաղկի համայն աշխարհը Հայոց-
քանզի պատմության ոչ մի խաչուղում
Հայկը չի պարտվել-Բելն է սողացե՛լ-
և թե պետք լինի՝ այսօր Հայ՛կ ենք մենք
և այսօրվանից Հայկ ենք մենք կոչվում,
մուսալեռցինե՛ր
և, արդ, մեզ համար
դարերից եկող
իմաստնությունը
նորից է հառնել՝
պատգամի, կոչի,
սրբության նման.
ԳԻՏԱԿՑՎԱԾ ՄԱՀԸ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ Է:

1988Թ.

ՄԵՐԿՈՒԹՅՈՒՆՆ ԻՄ ԽԱՉՔԱՐԻ...

1.

Ծեծվածիս փառաբանիր
և ցույց տուր արժանիքներն իմ,
հանիր փալաս-փուլուսը,
որով ծածկել են ինձ,
և կարապային վզիս վրա
շուրթերով խաչվիր,
ծծիր թույնն ինչպես
խայթվածին են անում
և կյանք տալիս կրկին, -
իսկ ես քո ստեղծածն եմ,

ինչպես ավերների տակից
մի խաչքար են հանում,
մաքրում փոշին,
կարդում գրերը,
որ ծաղկողն է թողել
դարեր առաջ-ծաղկաձև՜-
դու պեղեցիր ինձ...

2.

Դու պեղեցիր ինձ
այն ինչերի՞ տակից,
որ առերևույթ կյանք է կոչվում
մեղմահոս,
մինչդեռ իրականում
ամեն տրոփի հետ՝
Չա՛րկ է ինքնին,
Չա՛րկ, երբ քնքուշ ես,
Չա՛րկ, երբ բարի ես,
Չա՛րկ, երբ ակամա,
քեզնից անկախ
աչքդ է վերից փայլում-
ինչպես Աստղ,
և մինչ հետևում ես
կատարյալին-
ձևերդ ամբողջ թողած ինքնահոսի-
ի՜նչ անմեղություն, -
Չարկ այդ անկյունից-
Որտեղ չի՜ էլ սպասվում-
Ի՜նչ փոքր-փոքր, ի՜նչ
մանրություն, -

որից հետո այն մեծ Արցունքը,
որ քամվում է մի կերպ,
/քանզի բջիջները Ցավի
անչափ խիտ են շարված,
հետևաբար՝ ծանր,
հետևաբար մի կաթիլ օդում
Արցունք պտղելու համար
պետք է, որ նրանք
շատ սեղմվեն,
միանալու չափ շատ/:

3.

Փառաբանիր ինձ,
թերթիր էջերս, որ խռնացած են
և ծաղկողիս գիրը պահիր
աչքերիդ դեմ-
և թող նրա լույսից
մերկությունն իմ հառնի

և մոտենա ինձ...

1985 Թ.

նապետ էլ է լինում, հումորով ու մարդկային...

Հետո Ազատը երգեց Ջիվանու «Քանքարավոր ընկերը», կարծեմ երկու քառատող, ասաց, որ այդ երգը իր մոտ լավ է ստացվում, ես ուզում էի ձայնակցել ու չստացվեց, պարզապես սկսեցի անկապ գռմռալ: Եվ անսպասելի տխրություն իջավ մեզ վրա, երբ Արմենը սիրո մասին մի երգ երգեց, հիշեցինք մեր բոլոր կորած սերերին, մեր էն լա՜վ օրերը, որոնք նժույգների պես սլացան լեռնագագաթներով, և նրանց վրինջը լցվեց սար ու ձոր, և ապրում են նրանք մեր մեջ, քանի դեռ մենք կանք: Եվ հասկացանք նաև, որ մենք ամբողջովին հուշերի կծիկ ենք, որ բացվում է մեր դեմ՝ թեկուզ գինարբուքի ժամանակ:

...Իսկ լուսաբացին, երբ Արմենի եղբոր մեքենայով Երևան էինք վերադառնում, լեռնանցքի գագաթին հիշեցի Ազատին՝ «...Գյուլասարյան, մենք բոլորս էլ Մեծ Հայեր ենք, չէ՞»: Եվ աչքերիս առջև հառնեց վիթխարի Վիլյամ Սարոյանը՝ իր վիթխարի բեղերով, ահա այստեղ, այս բարձունքում տրուբադուրի պես իր պղնձե շեփորով, արձագանքը սարուձոր լցնելով՝ ի մի է հավաքում բոլոր մեծ ու փոքր հայերին: ●

Վարդան Ավետիսյան



Կենսագրություն

զինված ուժերի գեներալ-մայոր, Քաղաքացիական հատուկ ծառայության 1-ին դասի պետական խորհրդական, ծնվել է 1967 թ. Գորիսի շրջանի Տեղ գյուղում: Խմբագրությանն են տրամադրվել Վարդան Ավետիսյանի ութ ժողովածուից հետեւյալ գործերը՝ 1) Լույսի քաղցրություն, Երեւան-2016, 2) Լույսի օրհնություն, Երեւան-2013 եւ 3) Յիսուս Քրիստոսի փառաբանությունը. հոգու կանչ, Երեւան-2020:
Ստորեւ՝ բանաստեղծություններ վերջին ժողովածուից:

Հատված Վարդան Ավետիսյանի «Յիսուս Քրիստոսի փառաբանությունը. հոգու կանչ» գրքի վերաբերյալ գրախոսականից

Վարդան Ավետիսյանը «արթնությունները» տեսնող, գնահատող ու գովերգող ստեղծագործող է:

Կարոտաբաղձ կանչեր ու կարոտներ, աղոթաձայն խոսքեր, ջերմեռանդ փառաբանություններ, սիրո ու նվիրումի անմեկնելի խոստովանություններ, ու այդ ամենը մայրության թեմայի մեջ՝ որպես որդիական ծնրադրումներ մայր կոչվող էակի առջև: Այդ ամենն էլ ամփոփված է իր պարզության մեջ սրտառուչ՝ «Աղոթեմ Մորս համար» խորագրի ներքո, որը ժողովածուի մեջ պաշտելի լույսի շողարձակման պես է:

Մարդն իր ծննդյան օրվանից տեսնում ու լսում է իրեն շրջապա-տող թե երկրային, և թե երկնային ձայներն ու պատկերները: Հասակ առնելու հետ աչքն ավելի շատ է դեպի ետ, դեպի մանկություն դառնում, որովհետև, երկրայինը գնալով ընդարձակվում է, մի հեռավոր անկյուն մղելով երկնայինը, որի մեջ կծկված է մնում մանկությունը: Վարդան Ավետիսյանի դեպքում չենք կարող ասել, որ երկնայինը մնացել է նրա մանկության մեջ, չենք էլ կարող ասել, թե նա իր հետ բերել է իր մանկությունն ու մանկան մաքրությամբ ներկայացել որպես բանաստեղծ: Չենք կարող, որովհետև այստեղ ավելին է. նրա բանաստեղծական աշխարհում քրիստոնյա հայի կյանքի այնպիսի մի ներկայություն է, որտեղ մանկան մաքրության մեջ լվացվելուց ու մաքրվելուց հետո, մաքուր ձեռքերով ու մաքուր մտքերով է անցնում տարիների վերածվող իր օրերի ճանապարհը, և, արդեն ոչ թե մանկան միամտությամբ, այլ որպես գիտակցորեն լույսն ու բարին բռնած անձնավորություն: Ճիշտ այնպես, ինչպես սովորեցնում է Ավետարանական ճշմարտությունը Պողոս առաքյալի բերանով, թե՛ «Ամեն ինչ փորձեցեք, բարին ամուր բռնեցեք»:

Վարդան Ավետիսյանը որպես կյանքի բազմափորձ ճանապարհ անցած հայորդի այս ժողովածուում ներկայանում է որպես լույսն ու բարին ամուր բռնած անձնավորություն, ում լուսահեղ զգացումները ներդաշնակվելով Աստծո հեղած լույսերի հետ, չափաբերվում, բանաստեղծական խոսք ու տող են դառնում:

Մանկության մաքուր ջրերում լվացված սրտով է Վարդան Ավետիսյանը դառնում դեպի ծննդավայր, հայրենի եզերքներ ու Հայաստան:

ՖԵԼԻՔՍ ԲԱԽՉԻՆՅԱՆ

Քարեր ու սարեր

Քարերի աշխարհ իմ սո՛ւրբ Հայրենիք,
Քարերի մեջ լուրթ, քարերի հետ նուրբ,
Դու մեզ ապավեն, մեր հույսի տանիք,
Դու միշտ անուշ ես, անեղծ ես, միշտ սուրբ...

Քո քար ու սարի անհունին դառնամ,
Աշխարհին բացեմ մի չքնաղ գաղտնիք,
Քո սիրուց հարբած՝ երկինք համբառնամ,
Այնտեղ հոգվոց հետ տոնեմ հարսանիք...

Քեզ համար անվերջ խունկ վառեմ հույսի,
Երկնի ու երկրի դռները բացեմ բոլորանվեր,
Տառապանքներդ հրատոչորեմ, վերածեմ լույսի,
Արեւդ առնեմ ու փառաբանեմ տիեզերքից վեր...

Սարերի արքա իմ սո՛ւրբ Հայաստան,
Երկնապսակը Մասիսի վրա քեզ է պատկանում,
Դու եդեմական աղամատունն ես՝ հավերժի ոստան,
Քեզ խաղաղություն ու զորություն է սիրտս ցանկանում:

Մեծ ուխտիդ ճամփին տառապել ես լուռ,
Մաքառել ես մի՞շտ, տարել բյուր ցավեր,
Բախել ես անվերջ հազար ու մի դուռ,
Դու բեկանել ու հողմացրել բազմաթիվ դավեր...

Քարերիդ ոգով հորովելներ եմ աստղերին մաղում,
Վանքերիդ կանչով պատարագներ եմ արեւին տալիս,
Քար ու սարերիդ ներշնչանքներ եմ անլուռ շարմաղում,
Հայաստա՛ն աշխարհ, քեզ կարոտում եմ, երբեմն լալիս...

Քո քարերի հետ, քո սարերի հետ
Անհայտ կարոտով կապված եմ անվերջ,
Մենախոսում եմ ու հրահոսում դարերով հավետ,
Ես քեզանից դուրս, իսկ դու հոգուս մեջ...

Հայաստա՛ն աշխարհ, արեւահամով քարերիդ փարվեմ,
Մեղեդիներով տրվեմ սարերիդ, մեծարեմ նրանց,
Մեղմեմ քեզ կրծքիս, մանկան պես գրկեմ,
Քեզ միշտ կարոտեմ, քեզ պաշտեմ սրտանց...

14.06.2016 Թ.
ԷՋ 136

Գերադասում եմ ձեզ չհավատալ...

Չնայած նրան, որ ինձ զրկեցիք իրավունքներից
Եվ մեղք բարդեցիք ձեր խղճի վրա,
Տունս քանդեցիք եւ թուլացրիք ինձ ակունքներից,
Հետո չուզեցիք վերականգնել տանիքը նրա,
Ես, այնուհանդերձ, անընշմարելի հավատում եմ Ձեզ:

Չնայած նրան, որ ինձ զարկեցիք ուղիղ թիկունքից
Եվ իբրեւ ընկեր դավաճանեցիք Հուդայի նման,
Խարդավանքներով կախված մնացիք ուրիշից,
Ու որոգայթներ լարեցիք անտես, անդեմ, աննման,
Բայց էլի փոքր տաշեղաչափով հավատում եմ ձեզ:

Չնայած նրան, որ ինձ ժպտում եք ու քաջալերում,
Բայց իմ ետեւից չարախնդում եք ապերախտորեն,
Որից ես տխուր ալեկոծվում եմ, նորից համբերում
Եվ ինքնապարփակ ցավեր եմ քաշում ակնհայտորեն,
Չնայած դրան, էլի փորձում եմ մի քիչ հավատալ:

Չնայած նրան, որ ենթարկվում եմ բանադրանքների,
Եվ ինքնամորմոք քաշում գութանս ճահիճների մեջ,
Փորձում եմ լրել ու տեղիք չտալ շարադրանքների,
Իսկ ցայգալույսին աղերսահառաչ աղոթում անվերջ,
Չնայած դրան, էլի ուզում եմ մի քիչ հավատալ...

Չնայած նրան, որ ես տխուր եմ եւ սիրտ էլ չունեմ,
Սակայն ժպտում եմ առավելապես ժպտալու համար,
Բայց իրականում անպարագրելի ասելիք ունեմ,
Եվ ասելիքս կարող է դառնալ պատրույգներ անմար,
Հենց սրա համար գերադասում եմ ձեզ չհավատալ...

ԷՋ 245

Քառօրյա ռեքվիեմ

2016 թվական

Գարուն է, հայոց ոստանին մորմոք է պատում,
Երկինք ու երկիր խելագարվում են հայոց սահմանին,
Ապրիլի մեկից քաշաթխպեր են սահմանը հատում,
Հայոց սահմանին թուրքը անցնում է իր «հրամանին»...

Հայոց խորանը արյունոտվում է ապրիլի մեկից,
Մև պատերազմն է թևերը փռում սահմանի վրա,
Թուրքը դառնում է եղեռնաոճիր մահվան ուղեկից,
Բացահայտվում է դիակ մորթողի դիմակը նրա...

Հայոց դիրքերին համազարկեր է ոսոխը տալիս,
Հայ զինվորները աներկմտելի կանգնած են անպարտ,
Խրամատներում ոգեղեն կանչ է երկնքից գալիս,
Մահը սուրում է արժանավայել և ընկնում հպարտ...

Խրամատները կենաց ու մահու կտուր են դառնում,
Արկերը այնտեղ գահավիժում են խելագարի պես,
Քաջերը հայոց հերոսանում են ու թևեր առնում,
Նրանք զարկում են խրամատներից թշնամուն անտես...

Թշնամին անթիվ հրոսակներով շարժվում է առաջ,
Հյուսիսում՝ Թալիշ-Մատաղիս գյուղի սարահարթերով,
Հարավից՝ Լյա-լյա Իլագիի դիրքին ընդառաջ,
Արշավում է նա, նոր «կամիկաձե» օդանավերով...

Ոռնում է «գայլը»՝ «Ալլահ ագբա՛ր» նշանաբանով,
Շարակազմերով ընթանում՝ խորքից հարվածներ տալու,
Հայոց զինուժն էլ դիմակայում է՝ պատասխան տալով,
Եվ պարտադրում է հրոսակներին շուտ ծնկի գալու...

Կենաց ու մահու կռիվ է սկսվում սահմանագլխին,
Թվաքանակով գերիշխող թուրքը առաջ է գալիս,
Նա սպառազինված ապավինում է դողազդու վախին
Եվ դատապարտված՝ հարյուրապատիկ զոհեր է տալիս...

Զոհեր են տալիս նաև հայերը խրամատներում,
Բայց չեն ընկրկում հակառակորդի դաժանությունից,
Նրանք անվեհեր՝ հայրենականչը իրենց սրտերում,
Կռվում են անխոնջ՝ չվախենալով խավար անհունից...

Հայոց դիրքերը բորենիների մահիճ են դառնում
Վարձկան ոսոխը ճաքեր է տալիս գնդակահարված,
Դիրքապահները խրամատներ են ձեռքից ձեռք առնում,
Առաջնագիծն էլ բնութագրվում է չափազանց լարված...

Ռազմաճակատը ահագնանում է, դառնում հրե գունդ,
Հյուսիսից հարավ հրասայլեր են բերվում խորքերից,
Հենակետերը կրակի ներքո խարխլվում են թունդ,
Արյուն է հեղվում ռազմաճակատում կռվող զորքերից...

Հակառակորդը վերջին սերնդի զենքեր է հանում,
Ժամանակակից ուղղաթիռներից մինչև իսկ «Սմերչ»,
Հայոց քաջերն էլ դիմադարձում են ու հեռու վանում
Եվ բեկանում են «գայլերի» գրոհը՝ ջանքերով անվերջ:

Կենաց ու մահու կռիվ է սկսվում անընդունելի,
Ահ ու սարսափ է հրամղեղվում թշնամու վրա,
Մահը երկուստեք թվագրվում է, դառնում տանելի,
Կորստի գինը բացազատում է արդյունքը նրա...

Արդ, ընկրկում է «Հեյդարաբադը» իր գորշ գայլերով,
Հրադադարի միջնորդություն է նա խնդրում ռուսից,
Գործընկեր ռուսն էլ աղաղակում է վայնասուններով
Եվ միջնորդում է՝ չնահանջելով դավադիր հույսից...

Սուսաննա Խաչատրյան (Բակունց)

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծնվել է 1947 թ. օգոստոսի 13-ին՝ Սյունիքի մարզի Հին Գորիս (այժմ՝ Վերիշեն) գյուղում: 1965 թ. ավարտել է Գորիս քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցը, 1970 թ.՝ Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ֆրանսերեն լեզվի բաժինը: Նույն թվականին «Կառուցվածքային լեզվաբանություն» մասնագիտությամբ ընդունվել է ասպիրանտուրա, որն ավարտել է 1973 թ.: 1973 թ. առ այսօր աշխատում է Երևանի պետական համալսարանում՝ որպես ֆրանսերենի դասախոս:

Հիմնական աշխատանքին զուգահեռ 1980-1990 թթ. վարել է Հայաստանի հանրային հեռուստատեսության «Ֆրանսերենի հեռուստադպրոց» հաղորդաշարի հաղորդումները՝ լինելով սցենարների հեղինակը: Զբաղվել է նաև թարգմանչական գործունեությամբ. ֆրանսերենից հայերեն է թարգմանել ավելի քան 20 գիրք, որոնց մեծ մասն ուսումնագիտական բնույթի է և որպես դասագիրք կամ ձեռնարկ է երաշխավորվել փիլիսոփայություն, սոցիոլոգիա, արվեստ, ինչպես նաև աստվածաբանություն և կրոն ուսումնասիրող ուսանողներին (Է. Ֆոր, «Միջնադարյան արվեստ», Ա. Ֆոսիյոն, «Ձևերի կյանքը: Գովք ձեռքին», Վ. Լայբնից, «Մետաֆիզիկական երկեր», Է. Դյուրկհայմ, «Սոցիոլոգիական մեթոդի կանոնը», Դ. Ֆոլշեյդ, «Մեծ փիլիսոփայություններ», Պ. Պուպար, «Կրոններ», Ջ. Գուայտա, «Գարեգին Ա, Ամենայն հայոց կաթողիկոս: Մարդու կյանքը. հանդիպում երկնքի և երկրի միջև» և այլն):

Նրա թարգմանությամբ 100-ից ավելի ուսուցողական ու ճանաչողական ֆիլմեր են ցուցադրվել Հայաստանի հանրային հեռուստատեսությամբ:

Հրատարակել է մի շարք ուսումնական ձեռնարկներ ու հոդվածներ, համահեղինակն ու խմբագիրն է հայ իրականության մեջ ծավալով աննախադեպ «Ֆրանսերեն-հայերեն» բառարանի:

Վերապատրաստման դասընթացներ է անցել Ստրասբուրգի Հումանիտար գիտությունների ակադեմիային կից Թարգմանիչների և միջազգային հարաբերությունների ինստիտուտում (1994, 1998 թթ.), Բրյուսելի Մարի Հապս ազատ ինստիտուտում (1998 թ.), Լոզանի համալսարանում (2000 թ.):

Ֆրանսիայի Մշակույթի նախարարության «Գրքի վարչության» կողմից թարգմանչական ստաժավորման է հրավիրվել Փարիզ (1996, 2002, 2006, 2011 թթ.):

2009 թվականից Հայաստանի գրողների միության անդամ է:

ԳՈՎՔ ՁԵՌՔԻՆ

ԱՆՐԻ ՖՈՍԻՅՈՆ
Ֆրանսիացի արվեստաբան

ՀԱՏՎԱԾ ՖՐԱՆՍԻԱՑԻ ԱՐՎԵՍՏԱԲԱՆ ԱՆՐԻ ՖՈՍԻՅՈՆԻ «ԳՈՎՔ ՁԵՌՔԻՆ» ԷՍՍԵԻՑ: ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍՈՒՍԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

Ձեռքի այս գովքին ձեռնամուխ եմ լինում բարեկամական պարտքի զգացումով: Գրել սկսելու պահին աչքիս առջև են ինձանից միտք պահանջող և այդ մտքին ուղղություն տվող իմ ձեռքերը: Ինձ հետ են ահա անխոնջ ուղեկիցներս, որ տարիներ շարունակ կատարել են իրենց գործը. մեկը՝ տեղում պահելով թուղթը, մյուսը՝ մաքուր էջի վրա բազմապատկելով աճապարող, մուգ ու ակտիվ փոքրիկ նշանները: Նրանց միջոցով մարդն առնչվում է մտքի խստությանը: Ձեռքերն ազատագրում են զանգվածը՝ դրան պարտադրելով ձև, ուրվագիծ, իսկ հենց գրելու ընթացքում՝ ոճ:

Նրանք գրեթե շնչավոր էակներ են: Սպասավորնե՞ր: Գուցե: Սակայն եռանդուն ու ազատ ոգով, կերպարանքով օժտված, աչքեր ու ձայն չունեցող դեմքեր, որ տեսնում են ու խոսում: Որոշ կույրեր ժամանակի ընթացքում ձեռք են բերում այնպիսի նուրբ շոշափելիք, որ դիպչելիս կարողանում են տարբերել խաղաթղթի աննշան հաստության պատկերները: Բայց տեսնողները նույնպես զգում են իրենց ձեռքերի կարիքը՝ տեսնելու, շոշափելով ու բռնելով լրացնելու համար արտաքին ընկալումները: Ձեռքերի ունակությունները երևակված են նրանց գծագրում ու պատկերում. վերլուծելու ունակ ճկուն ձեռքեր, խորհրդածողի երկար ու շարժուն մատներ, հոգեհոսանքով լի մարգարեական ձեռքեր, հոգևոր ձեռքեր, որոնք հանգստի պահին անգամ շնորհ ու շուք ունեն, նուրբ ձեռքեր: Դիմագիտությունը, որից մի ժամանակ ջանասիրաբար օգտվում էին վարպետները, կշահեր, եթե անդրադառնար ձեռքերին: Մարդկային դեմքը ընկալող օրգանների ամբողջություն է առաջին հերթին: Իսկ ձեռքը առարկայացնում է գործողություն. վերցնում է, ստեղծում, երբեմն էլ, ասես, մտածում է: Հանգստի պահին անհոգի գործիք չէ սեղանին ընկած կամ մարմինն ի վար կախված: Ձեռքում խորհրդածում են գործելու սովորությունը, բնազդն ու կամքը, և պետք չէ երկարատև վարժանք՝ կռահելու, թե ինչ շարժում է պատրաստվում նա անել:

Խոշոր արվեստագետները մեծ ուշադրություն են դարձրել ձեռքերի ուսումնասիրությանը: Նրանք զգացել են դրանց հզոր ուժը, նրանք, որ ավելի շատ, քան մյուսները, ապրել են դրանցով: Ռեմբրանդտը ձեռքերը մեզ ցուցադրում է հույզերի, տիպերի, տարիքների, վիճակների ողջ բազմազանությամբ. «Ղազարոսի հարության» մեջ իրադարձության մի վկայի՝ զարմանքից լայնորեն բացված, ստվերված, առ լույսը պարզված ձեռք, պրոֆ. Տյուլպի բանող ու ակադեմիական ձեռք, որ նրբունելիի ծայրին զարկերակների մի փունջ է բռնել «Անատոմիայի դասը» կտավում, իր՝ Ռեմբրանդտի ձեռքը՝ նկարելու պահին, սբ. Մատթեոսի ձեռքը՝ հրեշտակի թելադրանքով Ավետարան գրելիս, «Հարյուր ֆլորինանոց մետաղադրամ» նկարի ծեր կաթվածահարի ձեռքը՝ կրկնապատկված նրա գոտուց կախ հասարակ թաթմաններով: Ճշմարիտ է, որ որոշ վարպետներ ձեռքերը վրձնել են սովորույթի ուժով, իրոք, գրեթե անփոփոխ կայունությամբ. սա մարդաչափական կարևոր ցուցում կարող է լինել քննադատի դասակարգումների առումով: Բայց նկարների քանի՜-քանի էսքիզներ են մատնում արվեստագետի վերլուծությունը, եզակի մտահոգությունը: Ուրեմն, այս ձեռքերը մեն-մենակ ապրում են իրենց բուռն կյանքով:

Իսկ այդ ի՞նչ արտոնություն է: Ինչու՞ է համր ու կույր մարմնամասն խոսում այդքան համոզիչ: Բանն այն է, որ դա ամենաինքնատիպ, ամենատարբերակված օրգաններից մեկն է՝ կյանքի բարձրագույն ձևերին հար և նման: Նուրբ հոդերով միակցված՝ մեծ քանակությամբ ոսկրիկներ հիմնակմախք են ծառայում դաստակի համար: Հինգ ոսկրային ճյուղավորումներ, որ ունեն նյարդերի ու ջլերի սեփական համակարգ, անցնում են մաշկի տակով, այնուհետև, ասես միանգամից, առանձնանում՝ իբրև հինգ առանձին մատներ, որոնցից յուրաքանչյուրը, երեք հոդերի վրա խարսխված, ունի իր ունակությունն ու ոգին: Երակներով ու զարկերակներով պատված, կլորացած եզրով ուռուցիկ մի հարթություն մատները միացնում է դաստակին՝ թաքցնելով նրանց կազմությունը: Ձեռքի հակառակ երեսը զետեղարան է: Ակտիվ կյանքում ձեռքն ընդունակ է լարվելու և կոպտանալու, ինչպես նաև կաղապարելու առարկան: Աշխատանքը դրոշմներ է թողնում ձեռքի ափի մեջ, և այստեղ կարելի է հայտնաբերել անցած ու գալիք բաների եթե ոչ գծային խորհրդանիշները, ապա գոնե մեր առանց այդ էլ աննշան կյանքի հետագիծն ու, ասես, հուշերը, թերևս նաև՝ հեռու-հեռավոր ինչ-որ ժառանգություն: Մոտիկից դա արտասովոր բնապատկեր է՝ սարերով, կենտրոնական մեծ իջվածքով, նեղլիկ գետահովիտներով՝ մերթ պատահարներից ճաքճքած, օղակներով ու ցանցերով պատված, մերթ էլ ձեռագրի պես հստակ ու նուրբ: Կարելի է մտորել ամեն պատկերի շուրջ: Ես չգիտեմ՝ ձեռք ուսումնասիրող մարդը բախտ ունեցե՞լ է վերծանելու որևէ առեղծված, սակայն ինձ դուր է գալիս, որ նա հարգանքով է նայում այդ հպարտ սպասավորին:

Նայեք, թե ձեռքերն ինչպես են ապրում ազատորեն, նայեք՝ առանց դիմելու նրանց ֆունկցիային, առանց նրանց ծանրաբեռնելու որևէ խորհրդավորությամբ. հանգստի պահին մատները թեթևակիորեն ծալված վիճակում են՝ ասես ձեռքերը տրվել են ինչ-որ երազանքի, կամ էլ օժտված են զուտ շարժումների, անօգուտ շարժումների ճկուն նրբագեղությամբ. այդժամ թվում է, թե նրանք օդում ապարդյուն գծագրում են բազմաթիվ հնարավորություններ, թե իրենք իրենց հետ խաղալով՝ պատրաստվում են արդյունավետ ինչ-որ միջամտության: Մոմի լույսի տակ նրանք ունակ են իրենց ստվերով պատի վրա նմանակելու կենդանիների ուրվապատկեր ու պահվածք, բայց շատ ավելի գեղեցիկ են, երբ ոչինչ չեն նմանակում: Երբեմն, մինչ միտքն աշխատում է, ազատ մնալով՝ նրանք թեթևակիորեն շարժվում են: Մի մղումով շարժում են օդը կամ ձգում իրենց ջլերն ու ճարճատեցնում հոդերը, և կամ կիպ սեղմվում՝ ստեղծելով հոծ զանգված, ոսկրե իսկական ժայռ: Պատահում է նաև, որ պարողի ճկունությամբ մեկը մյուսի հետևից բարձրանալով, իսկ հետո էլ իջնելով մտացածին տակտերի համաձայն՝ մատները ծնում են պատկերների փնջեր:

Ձեռքերը պասսիվորեն իրար նման երկվորյակներ չեն: Նրանք միմյանցից չեն տարբերվում նաև իբրև կրտսեր և ավագ, կամ էլ որպես անհավասար ծիրքեր ունեցող երկու աղջիկներ, որոնցից մեկն օժտված է բոլոր հմտություններով, իսկ մյուսը կոպիտ աշխատանքների միապաղաղ կատարումից ընդարմացած ճորտ է: Ես ամենևին էլ չեմ հավատում աջ ձեռքի հայտնի կոչմանը: Ձախի բացակայությամբ նա հայտնվում է դժվարին ու գրեթե անպտուղ միայնության մեջ: Ձախը, այն ձեռքը, որը հանիրավի ցույց է տալիս կյանքի վատ կողմը, տարածության չարագուշակ մասնաբաժինը, որտեղ չպետք է հանդիպել մահացածին, թշնամուն կամ թռչնին, ընդունակ է մարզվելու՝ կատարելու աջի բոլոր պարտականությունները: Կառուցված ինչպես մյուսը՝ նա ունի նույն ունակությունները, որոնցից հրաժարվում է՝ զուգընկերոջն օգնելու համար: Ո՞չ այնքան ամուր է բռնում ծառի բունը, սեղմում կացնակոթը: Պակա՞ս ուժով է գրկում հակառակորդի մարմինը: Խփելիս մի՞թե ավելի թույլ է նրա հարվածի ազդեցությունը: Ջութակով արդյո՞ք նա չի հնչեցնում նոտաները՝ ուղղակիորեն հարձակվելով լարերի վրա, երբ աղեղի միջոցով աջ ձեռքի տակ տարածում է մեղեդին: Երջանկություն է, որ չունենք երկու աջ ձեռք: Ինչպե՞ս կարող էին բաշխվել բազմազան գործերը նրանց միջև: Ձախ ձեռքի մեջ այն, ինչը «ձախ» է, հաստատապես անհրաժեշտ է բարձրագույն մի քաղաքակրթության համար: Նա մեզ կապում է մարդու պատվավոր անցյալին, երբ մարդը չափազանց հմուտ չէր, դեռևս բավականին հեռու էր այն բանից, որ կարողանար, ինչպես ժողովրդական առածն է ասում, «ամեն բան անել իր տասը մատով»: Այլապես մենք կսուզվեինք ճարտարության ահավոր ավելցուկի մեջ: Ըստ երևույթին, ծայրահեղության կհասցնեինք ժոնգլյորի արվեստը և հավանաբար՝ էլ ուրիշ ոչինչ:

Այս զույգն իր կազմությամբ ոչ միայն օժանդակել է մարդկային էակի մտադրություններին, այլև օգնել է դրանց ծնվելուն, ճշգրտել դրանք, տվել ձև ու դեմք: Մարդը ստեղծել է ձեռքը, ուզում եմ ասել՝ աստիճանաբար նրան առանձնացրել է կենդանական աշխարհից, ազատագրել վաղեմի ու բնական ստրկությունից, բայց ձեռքն էլ ստեղծել է մարդուն: Նրան հնարավորություն է տվել որոշ շփումներ ունենալ տիեզերքի հետ, ինչը չէին ապահովում մյուս օրգաններն ու մարմնամասերը: Բայց օդում վեր հառնած, ճյուղի պես ծաղկած ու առանձնացած ձեռքը մարդուն մղում էր հոգեհոսանքներ որսալու: Նա բազմապատկում էր այն մակերեսները, որոնք խիստ զգայուն են օդի, ջրերի հատկությունների ճանաչողության հանդեպ: Մի վարպետ՝ Պոլլայոլոն, ում մեջ մարդասիրության շատ բարակ շերտի տակ մեծ նրբագեղությամբ շարունակում է գոյել Առասպելի միստերիաների փոք-ինչ աղոտ ու վայրի զգացումը, վրձնել է կերպարանափոխությունների ոգով համակված մի գեղեցիկ Դափնե այն պահին, երբ Ապոլլոնը ուր որ է հասնելու է նրան. Դափնեի թևերը վերածվում են ճյուղերի, ծայրերը՝ հովերից օրորվող տերևազարդ ընձյուղների: Ինձ թվում է՝ տեսնում եմ, թե անտիկ մարդն իր ձեռքերում ինչպես է ըմբոշխնում աշխարհը և ինչպես է ձգում մատները՝ դրանք դարձնելով անկշռելին որսալու ցանց: «Իմ ձեռքերը, - ասում է Կենտավրոսը, - տեսել են անթիվ-անհամար ժայռեր, ջրեր ու բույսեր, զգացել են օդի ամենանուրբ ազդեցությունները, որովհետև ես դրանք վեր եմ պարզել կույր ու խաղաղ գիշերների մեջ՝ սյուքերին անակնկալի բերելու և նշաններ քաղելու իմ ճանապարհը կանխատեսելու համար...»: Աստվածների առանձնաշնորհյալները՝ Կենտավրոսն ու Դափնեն, իրենց կերպարանափոխված կամ կայուն վիճակում չունեին այլ զենքեր, քան մեր ցեղի զենքերն են՝ աշխարհը «գայթակղելու», նրան փորձելու համար մինչև իսկ այն կիսաթափանցիկ հոսանքներում, որոնք չունեն կշիռ և որոնք բնավ տեսանելի չեն աչքին:

Բայց այն, ինչը կշիռ է կազմում աննշան ծանրությամբ կամ էլ կյանքի ջերմ բաբախյունով, ինչն ունի կեղև, զգեստ և մորթի, անգամ քարը՝ լինի դա աղմուկով տաշված, հոսող ջրերից ողորկված, կամ թե նրա անաղարտ փշուրը, դարձյալ թիրախ է ձեռքի համար, նպատակակետ, դեպի որը տեսողությունը կամ միտքը միայնակ չեն կարող առաջնորդել: Աշխարհին տիրանալը պահանջում է յուրատեսակ շոշափողական հոտառություն: Տեսողությունը սահում է աշխարհի երկայնքով: Ձեռքը գիտի, որ առարկան ունի կշիռ, որ այն հարթ է կամ անհարթ, որ քարացած չէ երկնքի կամ երկրի խորքում, որի հետ ինքն ասես ամբողջություն է կազմում: Ձեռքի գործողությունը որոշարկում է տարածության դատարկությունը և այդ տարածությունն զբաղեցնող առարկաների հոծությունը: Մակերևույթը, ծավալը, խտությունը, կշիռը օպտիկական երևույթներ չեն: Մատների արանքում, ափերի մեջ է մարդը նախևառաջ ճանաչել դրանք: Տարածությունը նա չափում է ոչ թե հայացքով, այլ ձեռքով ու քայլով: Շոշափելիքը բնությունը լիցքավորում է խորհրդավոր ուժերով: Առանց շոշափելիքի այն նման կլիներ լուսանկարչական խցիկի թեթև, հարթ ու ցնորական սքանչելի բնապատկերներին: ●

Արթուր Առաքելյան



ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հեղինակ է բանաստեղծական, գրականագիտական տպագրված երեք գրքի «Մթնաձորի լույսը» (2001.), «Նյութի հաղթանակը» (2009.), «Լեռներում» (2014.), էսսեների շարքի եւ շուրջ հարյուր հոդվածի (գրականագիտական, գրախոսական, մշակութային, բժշկագիտական, բնապահպանական), որոնք տպագրվել են գիտական հանդեսներում, գրքերում եւ լրագրերում: Ծնվել է 1959թ. օգոստոսի 11-ին Գորիս քաղաքում: Ավարտել է Գորիսի Ակսել Բակունցի անվան միջնակարգ դպրոցը (1966-76), Գորիսի N-41 պրոֆտեխուսումնարանը (1976-77), Երեւանի պետական բժշկական ինստիտուտի (այժմ համալսարան) Հասարակական մասնագիտությունների ֆակուլտետի ժուռնալիստիկայի բաժինը (1980-82), Երեւանի պետական բժշկական ինստիտուտը (1977-83):
Հայաստանի գրողների միության անդամ՝ 2016 թվականի հուլիսից:

«ԱՐՑԱԽ» շարքից

«Լեռներում»

Ո՜վ, դեմոկրա՛տիա, որտե՞ղ ես կանգնել,
Ինչու՞ մնացիր կես ճանապարհին:
Շտկի՛ր, մեջքը քո,
Օձիքը քո ձիգ արդեն մի՛ կոճկիր:
Թո՛ղ, քո սիրտը բաց՝ ու դիր սեղանին՝
Եղիր սպեղանի, աղ ու հաց, գինի:
Ո՜վ, դեմոկրա՛տիա, քեզ հպա՛րտ պահիր՝
Պառակտման ահի կես ճանապարհին,
Անկոտրու՜մ եղիր,
Խրոխտ ուսիդ կրիր՝
Դրոշն անորոշ, ու ոտնահետքը
Սրբազան ուղու՝ պահիր ինչպես որ՝
Անեղծ է ուղիդ ու մշտանորոգ:
Ո՜վ, դեմոկրա՛տիա, անպաշտոն դու շունչ,
Առանց բյուրոկրա՛տ այդպես դու այդ ու՞ր,
Որտե՞ղ ես հասել, օրհնությա՛ն դրոշ,
Արևշատ հորձանք ու մշտահոլով.
Ո՜վ, դեմոկրա՛տիա, որտե՞ղ ես, կորո՜վ:

Ք. ԳՈՐԻՍ 2011Թ.

ՀԱՎԱՏԱ՛, ՇՈՒՇԻ-ՀԱՎԵՐԺՈՒՀԻ

Նաև դո՛ւ, հոգո՛ւ իմ թարգման
Կարծիր Ինձ՝ շատ հասարակ
Քանզի մարգարեն արև է վառ,
Բազմամեղս՝ մեկնիչը նրա:
Նույնպես ունեցա զարթոնք՝ արդար,
Որ ազգային է, մեղքս ո՞ւր պահեմ...
Ինչպե՞ս պահանջեմ, որ լինես հաստատ
Հավասարատես լինե՛ս, ո՜վ Բարձրյալ:
Սյունեցի եմ, Գորիսում ծնված,
Արյունս եռաց խղճի ներքո
Սրտում՝ երկունքի զգացում ունեցա,
Երբ հաղթեց Շուշիս՝ ամրոցը սգո-:
Հավատա՛, Բարձրյա՛լ, առաջին անգամ տեսա՛ նրան՝
Արդեն ազատ էր, գոռ ու քարուքանդ,
Եղել էի լոկ Ստեփանակերտում՝
Պատանուս թվաց, թե Շուշին նույնպես
Հայաշատ է, կուռ՝ հայոց փառքի տուն:
Հավատա՛, Բարձրյա՛լ, չգիտեի՝ թուրքի թաղեր կան,
Կրթամշակույթ Հայոց սրտի մեջ՝ սպի ու կոշտուկներ:
Չգիտեի, հզոր Սյունիքի հենց քթի վրա՝
Վաղո՞ւց ճանճեր են բազմել ցիրուցան.
-«Քանդվե՜ս դու, Գորիս» քեզ չսազական:
Հավատա՛, Բարձրյալ, պատանի էի, տասնօրյա այցով
Ստեփանակերտ հյուր էին տարել,
Ելիզավետպոլ-Գանձակ գնալս մնաց անկատար,
Չկար ազգային ո՜չ մի ընդվզում,
Սովետ-Միության հրճվանք էր անմիտ.
Իբրև հայեր են ապրում Շուշիում:
Աշակերտ էի՝ գերազանցիկ, Նժդեհի մասին
Անգիր գիտեի պատմությունը՝ կեղծ,
Կիևյան Ռուսիա, Հին աշխարհ, Հռոմ,
Խաչակրաց կոչվող ու Նապոլեոնի
Արշավանքը՝ զուր, Ֆաշիզմը՝ տխուր:
Հավատա՛, Բարձրյա՛լ, Թուրքիայի գործած մեղքը գիտեի՝
Ցեղասպանություն, Մասիսը՝ կորա՜ծ, անհաս ու վսեմ:
Սակայն Շուշիում՝ տարիներ առաջ երեսուն հազար
Հայ էր մորթել ազերին՝ այդ նույն, որ քեզ՝
Իմ Շուշի՛, ինքնավար մարզ էր նետել նսեմ,
Հավատա՛, Բարձրյա՛լ, չգիտեի դա՛:
Չգիտեի, որ ամենօրյա՛ շուկայում ներկա՝
Այնքա՛ն ձվաձև գլուխները՝ նույն որջից են ելել:
Գորիսում՝ գիտե՞ք, թուրքեր չեն ապրել, եղել են՝
Հինգ խառն ամուսնական ինտերնացիոնալ.
(Գուցե հնգաթև աստղի՞ էր նման),
Սյուսներն՝ այդ ինչպե՞ս, վստահ են եղել՝
Եկել են հասել Էյվազլար, Շուռնուխ,
Համոզված, գերի ունեն իրենց մոտ, Շուշի՞,

Թե՞ գերի, «Քանդվե՜ս դու, Գորիս», քեզ՝ աններելի:
Գորի՛ս, դարերի հերոսական ասք,
Նժդեհի աչքին ինչպե՞ս երևամ՝ այսքա՜ն ուշացած,
Որտե՞ղ էր բարքի ու ճշմարտության
Խիզախումը քո՛, որ իմ օրոցքում մնացի՛ քնած:
Հավատա՛, Բարձրյա՛լ, ինձ՝ ներել չկա՛ զտարյուն հողում,
Սա Դավալու չէ ու Բազարգեչար, Սիսիան ու Քյարքի,
Պղծվել էր Կապան, դաշտն Արարատյան ու գետը՝
Զանգու:
Նոր հազարամյակ՝ արարի՛ր, տքնիր ու խա՞չս
Հանիր վերելքդ դեպի՛, լու՜յսը կենսատո՛ւ:

13.07.2012, Ք. ԵՐԵՎԱՆ

ԱՐՑԱԽԻ ԱՌԱՎՈՏԸ

Նախաստեղծության բոցը քեզ կերտեց՝
Շոա՜յլ այգաբաց, լույսդ ճո՜խ, վսեմ՝
Ցայգաղի խմած ու մյուռոն գինի
Անսահմանության գովեստ Բարձրյալի:
Հավիտենության տենչանք բաղձալի
Ժայռիդ ու վեմիդ պերճանքը թավիշ,
Ցոլանք է ու ցող, մաշկդ՝ լուսաշող
Խավոտ շուրթերով ըմպել ես՝ ավի՛շ:
Կարոտի ընծա՝ եղյամդ-պարզկա,
Միրաժը հեռվի արտացոլքերի,
Արարչության առեղծվածն անձև,
Զրերդ հորձանք կայծակնահարի:
Հիշեցում են, մե՜ծ ճոխության հրաշք
Հակվել են բարուն դղիրդ ու որոտ
Արևի հրով բողբոջդ խրոխտ
Քո ճշմարտության առջև ծնկաչոք:
Պայթյունը ցրել՝ ծաղկունքի բերկրանք-
Դարձրել երկրային, ներկայությո՛ւնդ,
Անձրևն ու ձյունը քամիդ է բերել,
Մաքրել փոշին ու խավը փռել:
Անծիր բերկրանք հեղել սերմերին՝
Հովերիդ բովում ու եզերքներում,
Գարունդ՝ նայի՛ր, սփոփանք էր երեկ
Բազմաշնորհ ձիրքեր խորքերում:
Հավատարի՜մ են անուրջներդ, լուրջ
Կախարդանքի աննման հորձանք,
Ամռան արևդ՝ վայելքի պարծանք,
Շիկնա՜նք՝ ամոթխած ծաղկաբույլերում:
Մշտահոլով է աշունդ, երկի՛ր,
Կրկին զսպված դաշտերու՜մ ձմռան,
Հավերժ պատվար երկչոտ ցողունիդ-
Նախաստե՜ղծ Բարձրյա՛լ, քո բարձրաթռիչ՝
Մեծահոգության բողբոջը պայթած,
Ճայթեց հողին կայծակդ վերին,
Որ արդար, անձուկ սերմերը տեսնեմ՝
Մխրճած հողի սխրանքում բերրի:
Տապալիր թերին անհամաձայնիս,
Բազմամեղիս կամք ներարկիր ըմբոստ,
Համոզմունքը մեծ դեռ ծածկագրիր,
Կամքդ՝ անխոտոր, գթառատ՝ ուղի՛դ:

14.07.2012, Ք. ԵՐԵՎԱՆ

ԱՐՑԱԽԻՆ ՍՅՈՒՆ՝ ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ

Ինքնորոշված հավատամքով,
Ազգդ՝ ազատ, անկախ երկիր
Արդար ուղիդ՝ զենքով կռիր,
Ո՛չ թե սպասիր՝ գութն այցելի-
Օտար կիսատ սոխով՝ հագիվ՝
Ոսոխիդ շե՛ղ աչքերից արցունք քամի:
Քշի՜ր քամի՛, թևի՜ր Սյունիք,
Դեռ հեռու՜ է ծարավ հոտի,
Բարկ արևի անապատը քոչվորի:
Հյուսիսի խփած արևը ժլատ՝
Մամուռ է կախել ծառիս ու պատիս,
Թեև քնքուշ է, մրմու՜ռս՝ խորն է,
Հանելու՞ է Մհերին խորշից;
Հյուսիսից խփած ուսիս վերքի սպին
Կթողնի՞ ելնել եզերքը Կասպից,
Թե՞ պիտի կռա՜ անգղը նորից՝
Կույր ագռավը Սև ծովից ու Քուռից:
Դեռ քանի՜ տարի, վիհերիդ նման
Ստո՛ր, ոսոխդ չա՛ր, ցածրում որոճա՛,
Տաճարիդ խոնարհ... կամարիդ համար
Չապաշխարհած, մեղսանքը զգա՜նք:
Փառքիդ հանդիման՝ երկնաթռիչ
Քեզ պարտք ենք խո՜յանք:
Երկի՜րս Սյունյաց, մերկ ու անվախճան-
Որձաքարիդ պես, ժայռերիդ նման,
Ծխանի ծուխը մեջքիդ կարծրացա՜ր՝
Ոսոխիդ հեռու՜ նետելու համար:
Տաճարիդ սյունը երկինքդ հանած
Պղնձաջիղ տա՜ք աղոթքդ
Լարա՜ծ սարդոստայնի դեմ,
Երկնքի ներքո ոստանդ փոա՜ծ՝
Հերոս Արցախի հրաշքը ցոլաց:
Տոկա՜ աննահանջ, սյու՜նդ ճոճի՜ր,
Ու գավազանիր ընդդեմ ոճիրի,
Ամե՜ն թշնամյաց՝ ոճի՜ն անխտիր:

26.06.2012, Ք. ԳՈՐԻՍ

ՇՈՒՇԻՆ ԿՀՈՒՇԻ

Անունդ տալիս՝
ամեն մի վանկում
Հուզվել աննկուն,
Հասակդ անհաս-
կրկին դեռահաս:
Անգին ես եղել,
դու կրկին եղե՛գ,
առագաստ զգաստ:
Եղել ես լեգենդ,
արարում ասքի,
Հնչյուն ես, կարկաչ
ու ճայթում հասկի,
Կարոտի հրճվանք
ամենափրկիչ
Վանք պարտաճանաչ:
Ազգային զարթոնք,
Ազատամարտի
շեփոր հաղթական,
Հայի խիղճ արթուն՝
նամուսը մարդու:
Վանդակված հայի
սուրբ բարձրավանդակ,
Ընդմիշտ չհանձնված
սրբազան տարածք,
Հող հայրենական:
Դու սերմնացանին
լինեիր նեցուկ,
Ո՞ւր էիր Աստված,
Որտե՞ղ է Տերը՝
մեզ առաջնորդի
Դեպի հաղթուղին
Տիգրանակերտի,
Մեկի փոխարեն՝
նրանք չորսն էին:
Ո՞ւր են գետերը,
Որտե՞ղ է Տերը,
Մեզ հետ էր հարկավ
Գանձակ ու Պարտավ:
Ո՞ւր է խաչուղին՝
Արաքս-Քուռ ուղին,
Հայկի հաղթ գինին...
Որտե՞ղ է Տերը,
Ո՞ւր են գետերը,
մեր արահետը,
Տո՛ւր Հայկի նետը:

2007Թ, Ք. ԳՈՐԻՍ

Էդուարդ Հարենց



ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծնվել է 1981 թ. Տաթևում: Ավարտել է Կահիրեի պետական համալսարանը (2004 թ.) և Երևանի պետական համալսարանը (2007 թ.): Մասնագիտությամբ արաբագետ է: Հեղինակ է տասը բանաստեղծական ժողովածուի: Տպագրվել է հայաստանյան և արտասահմանյան բազմաթիվ հեղինակավոր գրական պարբերականներում և անթոլոգիաներում, արժանացել մի շարք գրական մրցանակների ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում: Միջազգային գրողների մի քանի ասոցիացիաների պատվավոր անդամ է: Նրա ստեղծագործությունները թարգմանվել են աշխարհի 60-ից ավելի լեզուներով:

1984 թ., 22 հունիսի

Նախօրեին
ռադիոն հայտնում էր, որ
հետևյալ օրը
մարդկային ճակատագրերի երկայնքով մեկ
սպասվում է +45° հիշողություն ու հիշատակ,
որ 39-ին երդված օրիորդների նշանի մատանու
կորած ակերի տեղում կնկատվեն արցունքի կաթիլներ,
որ գեոմագնիսական դաշտը բոլորին քարշ կտա
դեպի գերեզմաններ, հուշարձաններ, եկեղեցիներ,
որ ուլտրամանուշակագույն ճառագայթման
ինտենսիվությունը
խաղաղության սպիներից կբեկվի 45° անկյան տակ,
որ օդի խոնավությունը գնահատող ինդեքսը կունենա
զոհվածների անմահության
և ապրողների կյանքի արժեքը:

Առավոտյան

ամենաշոշափելի հրեշտակների Օլիմպոսից
ուղիղ եթերով հաղորդեցին,
որ Հայոց աշխարհի մշակութային ծննդատանը
գյումրեցի մի կնոջից լույս աշխարհ է եկել
2000-ականների պոետիս մուսան,
որին, ի պատիվ իոնական մեղրի,
անվանել են Նեկտար...

* * *

Բանաստեղծության պատուհանի տակ
ես յուրաքանչյուր
դարավերջից մինչև դարասկիզբ
սերենադներ եմ շռայլում հարբած...
Ու մինչդեռ շուրջս
թաղանթներ ծամող
ժամանակները պոռնիկ -
սիրուս գրավելու համար
մեռնելու չափ չքեր իրենց ներքնազգեստի՝
բնազդները կորցրած
երանգներն են փոխում, -
ամենասիրածս գույնը աշխարհում
բանաստեղծությո՛ւնն է...

Գրավյուր

Թաց գիշերի ու զգեստի
հոդակապը թոցրած՝
անվան սիրած ժամերն էգ
պարան-պարան են խաղում
պատի քունը մխրճված
տրամվայի երազում,
որի ռելսերն են փախցրել
ժանգոտները քաղաքից...

Անհոդաբաշխ վարդերով,
անհյուրընկալ ու մրսած, -
շրջադարձին հեքիաթի
դու նստել ես կանգառում՝
պայծառ հետքերդ թողած
տրամվայի ռելսերին,
որոնք կորան՝ խեղդվելու
ծախու բաշխիչ ցանցերի
ժամագոտու նեղվածքում...

* * *

Մարդը նավ է,
խարիսխ,
մարդը՝ կառամատույց:

Խորտակվողի վարդը՝
գուցե
այդ ամենի
վասն և պատճառով...

* * *

Ես գրվելիս
ժամադրավայր
եմ անհնար՝
աններելի
սանդուղքներով

դեպի մի Բայց,
ուր վասնզի

մի մեղք կա, որ
պատկանում է
մեկ ուրիշին,
բայց ես նրան
կրած ունեմ...

* * *

Վան Գոգն ազատվեց իր ականջից,
որովհետև այն իրեն պետք չէր.
նա արդեն լսե՛լ էր Հանճարը:

Ալ-Մա՛արրին իրականում տեսնում էր այնքան,
որ այլևս
աչքերն այնքան էլ կարևոր չէին:

Չարենցը գերեզման չունեցավ,
քանզի
նա դեռ չի՛ էլ մեռել:

Ես մարդկանց ձախո՛վ եմ բարևում,
որովհետև
աջով արդեն բարևե՛լ եմ Աստծուն...

* * *

Ես հիմա
հատ-հատ պոկում եմ լռության թարթիչները
ու կարկատում աղոթքս,
որ պատռվել է երանգներից բառի...
Հիմա երանգն ավելին է, քան ձայնը...
Ու ես արդեն
ոտաբոբիկ եմ մտնում Հույսի եկեղեցին,
որ քայլերս բախտիս
ձայներ չնկարեն:
Շշուկներից քանի՜ ոտնահետք է ճաքել...
Իսկ իմ ոտնահետքը
իմ աղոթքն է սիրուս,
որ երբեք չի՛ ավարտվում,
որովհետև չի՛ գունավորվում բառով...
Իսկ հիմա
գլխավոր գույնը այն է,
որ սերը զգացմունքի բանաստեղծությունն է...
Որ մուսաները կին չե՞ն դառնում...

* * *

Այդ կարմիր օրը
մուսայիս դեռ հեթանոս տատերը,
դոնփակ գաղտնի քվեարկությամբ,
որոշել էին,
որ ինն ամիս անց
բակունցյան միրհավների երգի ներքո
պիտի լույս տեսնի
բանաստե՛ղծը իրենց թոռան:
Եվ որովհետև աստվածավախ էին,
ուստի որոշեցին
Դրախտի ծառերից
ոչ մի ֆիզիկոսի գլխին կաթուկ տված
վերջին խնձորը –
խնամքով թաքցնել մորս փեշի տակ...

Ութսունմեկի օգոստոսին –
հայրս թթի օղի էր թորում...

* * *

Կուզեմ՝
դողս ընդգրկի՛ կույսի ժպիտն
ամոթխած՝
իր իսկ մերկ կրծքին թաքուն նայելիս,
երբ երկնքի կապույտ կաթը
անխնա
սոված գայլերի երախն է լցվում,
երբ խոզերն անփույթ ծամծմում են
ցայգի պտուկները...

Կգամ՝ դողդ կընդգրկե՛մ:

Կաթդ կտրվելու աստիճան
գիշերները մրսի՛ր, Մարիա՛մ, -
դրսում, Տան շուրջը,
ամենուր վխտում են կայենները վաղվա...

Չվարթնոց

Խոյակ առ խոյակ
ժամանակների ուսերը մաշող
քարե շուրջպար՝
ինչպես քոչարին
անթաշկինակ օրիորդների...

Խաչքարերը թաշկինակներն են նրանց...

* * *

Միայնակ ինձնից,
ամենից մենակ՝
նախորդիվ գիշեր ժամերի տակով
ես ոտաբոբիկ այգու շեմն անցա:

Գուցե այդ պահին զմրուխտ քնի մեջ
նա իր երազի ոռոգման մասին
իմ ինքնահոսի ձայնն էր մտածում,
բայց ես մոտեցա խաղաղ, ծառս որբ
դրի թևիս տակ և դարձա... գաղտնի:

Ես նստել էի հասարակածին
և իմ վարդավառ-արցունքի
աղի նվագն անելով շրթհարմոնիկ,
բայց -
ծառիս զո՜վ կանաչ հիշողությունը
աչքերս լցրած՝
ինձնից փրկվածի խաչն էի
սարքում ես – մենակ – ինձնից...

Կողքիս մեռել էր սիրո արդեն-ը:

Կեսգիշերը լյա-մինոր ուրբաթ էր
քսում մատներիս,
բայց ես հենց սկզբից
փակ էի պահում մատներիս աջը՝
որպես Շաբաթ օր, -
հարության կերպը թաքցրած ափիս մեջ...

* * *

Վաղվա օրը պետրոս է՝
ձեռքին վարդեր, -
գայթակղիչ, ինչպես թարգմանություն:

Ցերեկային խոսքեր՝
սուրճ առանց մայրական կաթի, -
կսահեն
Տիեզերքի կոկորդն ի վար,
ուր կցցվի Միրո դեղին
փոխակերպումն, ինչպես ձկնափշեր՝
նախորդ ընթրիքներից, -
ապաշխարողի աղոթքի նման...

Լույսի ջրվեժներից առաջ...

Արյանս կանաչ գետի ջրերում
ձկները մկրտում են
նայադների կուրծքը:

Երեք օրորոցներս

Առաջինը մորս
անթելան էր, որից
բարձրացա, որ տեսնեմ

երկրորդը՝ եռանիվ
հեծանիվս, որով
սայթաքեցի՝ տեսնեմ

երրորդ օրորոցս՝
քսան ամսականի
իմ դագաղը գողտրիկ,
որի մեջ ես, ավաղ,
չտեղավորվեցի՜...

Ոդիսական

Բանաստեղծությունը կերանք,
մի գավաթ սուրճի հետ ծխեցինք
լռությունը,
Մահից հեռացանք՝
գույները ծամելով,
բայց էլի բառի՜ն ենք նայում...

* * *

Իմ անունը
մի քար է Աստծո երազի մեջ՝
ծուռ հայելիների զարդաքանդակներով:
Լույսի կողոսկրերի
միջով
զրնգում է Հորս կատարակտը
լեզվիս վրա:

* * *

Գիտեմ, կարթնանամ մի օր
խորհրդավոր ընթրիքից,
կհագնեմ հորս ոտնահետքերը՝
ճաքճքոտած
որպես փոքր գրպանիկներ՝
լցված անչափելի սիրով...
Կկարողանա՞ն, արդյոք, օրերս
կշռել
այնքա՜ն անտանելի թեթևությունը...

Անսպառելի որբեր

Ծույլ հրեշտակի
չիրականացած երազներն
իրար
զիգզագող անտես ներվաթելի
պես՝
արվարձանային աչքեր են
բառերս՝ Աստվածային հիվանդությամբ
ախտահարված...

Ներսես Խառատյան



Կենսագրություն

Ծնվել է 1947թ. հոկտեմբերի 23-ին, Մեղրի քաղաքում: Ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Աշխատել է ՀՀ դատախազության համակարգում, ՀՀ գրողների միության անդամ է: Նրա արձակ և չափածո ստեղծագործությունները պարբերաբար տպագրվում են հանրապետական գրական մամուլում և հանդեսներում: Տասնհինգ բանաստեղծական և արձակ գրքերի հեղինակ է: Բանաստեղծական ժողովածուներից կազմվել ու ռուսերենով թարգմանվել է ընտրանի: Ռուսերեն թարգմանված արձակ գործերից «Խաղ մահվան հետ» պատմվածքն ընդգրկվել է վերջին 25 տարում «Լիտերատուրնայա Արմենիա» հանդեսում հրատարակված լավագույն ստեղծագործությունների անթոլոգիայում: Հեղինակ է հինգ վեպի, որոնցից չորսը դետեկտիվ ժանրի: «Ով սպանեց Էլենին» վեպը ճանաչվել է տարվա լավագույն արձակ ստեղծագործություն, արժանացել ՀՀ գրողների միության Դերենիկ Դեմիրճյանի անվան մրցանակին, «Մերժվածները», «Հրանտ և Մանուշակ Սիմոնյաններ» լոսանջելեսյան գրական հիմնադրամի մրցանակին: Հայաստանի հանրապետության գրողների միության նախագահությունը նրան պարգևատրել է «Գրական վաստակի համար» մեդալով, Միջազգային անվտանգության ակադեմիան՝ իրավապահ համակարգում նրա երկարամյա, անբասիր ծառայության, ինչպես նաև հայ գրականության բնագավառում ներդրված ծանրակշիռ ավանդի համար՝ «Մեծն Տիգրան» շքանշանով: Հրատարակվել են գրողի՝ «Կարոտի երգեր» 2003թ., «Մորմոք» 2006թ., «Գիշերով եկար» 2008թ, «Դու հրաշք էիր, կյանք» 2009թ., «Сожгли меня» 2011թ., «Փոքր քաղաքի մեծ պատմություններ» 2012թ., «Վայրիվերումների բացատ» 2013թ., «Խաղ մահվան հետ» 2015թ., «Ո՞վ սպանեց Էլենին» 2016թ., «Մերժվածները» 2017թ., «Թռիչք ժամանակից դուրս» ընտրանի, 2017թ., «Կրակոց թիկունքից» 2018թ., «Հովտաշուշան» 2019թ., «Պատասխան տալու ժամանակը» 2020թ., «Հին օրերի կանչը» 2021թ. գրքերը:

ԽԱԼԽԻ ՄԱԼԸ

– Սո՜սիկ, Սո՜սիկ... մի պապռոզ տու հասնեմ տուն:

Հարևան Բագրատ բիձան է կանչում: Կարճահասակ, ջլուտ մի մարդ՝ կնճռապատ, պեպենոտ, փոքրավուն դեմքի համար կարճատեսի չափազանց մեծ ակնոցով ու հարբեցողությունից մշտապես կարմիր, մեծ քթով:

Նրանց տան ճանապարհը մեր դարպասի մոտով է անցնում, իսկ տների միջև ընկած տարածությունը հիսուն մետր հազիվ լինի, ուստի ծխախոտը միայն պատրվակ էր, որ հայրս հրավիրի տուն՝ օղի խմելու, դե ձեռքի հետ էլ կօգտվեր նաև ծխախոտից:

Ամեն այսպիսի կանչից հետո հայրս պարտադիր հրավիրում էր տուն:

Բակից աստիճաններով երկրորդ հարկ բարձրանալիս, որպես կանոն, երկու-երեք անգամ խռպոտ հազում էր, զինվորական կտորից կարված հնամաշ բաճկոնի թևքով բերանը մաքրում, ապա պատշգամբում «բարիգուն» ասելով՝ ուղղվում դեպի սեղանի մոտ դրված թախտը: Հայրս առաջարկում էր նստել, թեև նա դրան չէր էլ սպասում, տնքալով նստում էր, նույն, զինվորական կտորից կեպին հանելով դնում սեղանին, ապա մշտապես ջրակալած աչքերի խորամանկ-սպասողական հայացքը միամիտ անմեղության արտահայտությամբ պատմուճանելով դիմում հորս.

– Հը՛, ինչ կա չկա:

– Հեչ, բան էլ չկա: - Իր հմայիչ, տրամադրող ժպիտով պատասխանում էր հայրս և սեղանին գտնվող ծխախոտատուփը ձեռքով հրում դեպի նա: Վերջինս, սակայն, դրան չնչին իսկ ուշադրություն չդարձնելով, կարծես մոռացած, թե ինչի համար է եկել, անշտապ հանում էր ակնոցը, աչքերը տրորում, ապա նորից դնելով, հարցական, մի տեսակ հլու հայացքը հառում էր հորս: Հայրս նրա հոգու հետ խաղալու ակնհայտ միտումով, խաղացկուն ժպիտը դեմքին, ժամանակը ձգելով, առօրյա, սովորական ինչ-որ խոսակցություն էր սկսում. «Բա իմացա՞ր, որ...» կամ նման մի բան, որը նա կա՛մ ականջի պոչով էր լսում, կա՛մ ձևացնում էր, թե լսում է, վարպետորեն թաքցնելով օղեբաղձ անհամբերությունը: Այդ ընթացքում դեմքի արտահայտությունը նմանվում էր տնային, խոնարհ կենդանու դեմքի արտահայտության, որ ուտելիք ստանալու ակնկալիքով մեկ համակ նվիրվածություն էր ճառագում, մեկ խղճալի-հուսահատ անհամբերություն: Հայրս, սակայն, երբևէ չափի զգացումը չէր կորցնում, և թվում է՝ միշտ ճիշտ ժամանակին անսպասելիորեն խոսքն ընդհատելով հանկարծ դիմում էր նրան.

– Հը՛, մի բաժակ կխմե՞ս:

Տեսնեիք միայն՝ ո՞նց էր միանգամից կերպարանափոխվում ու հրճվանքից պայծառանալով աշխուժորեն իսկույն վրա բերում.

– Բա աչքն էլ չե՞մ հանի, – ասում էր, ապա ծխախոտատուփից երկու հատ ծխախոտ վերցնելով մեկը դնում էր ականջի ետևը, մյուսը՝ վառում: Այդ ընթացքում մայրս գրաֆինով տնական օղին թթվի հետ դնում էր սեղանին:

– Գևորգյա՛ն, մենակ բաժակները բեր, հերիք ա, ուրիշ բան պետք չի, նեղություն մի քաշի, – միշտ այսպես դիմելով մորս, նա ոչ թե քաղաքավարության տուրք էր տալիս, այլ պարզապես խմելուց հետո սիրում էր միայն թթու օգտագործել, ասելով. «Արաղի իսկական զակուսկին հենց էս ա, մնացածը՝ հեչ»:

Առաջին բաժակը խմելուց հետո, անմիջապես հացից հոտ էր քաշում, ապա թթվից վերցնելով գցում անատամ բերանը, այս ու այն կողմ տանելով ծամում: Մայրս կամաց-կամաց սեղան էր գցում, ընթացքում նրան համոզելով ուտել, բայց նա ուրիշ ոչ մի բանի ձեռք չէր տալիս:

Հայրս թեև իր բաժակն էլ էր լցնում, սակայն նրա հետ չէր խմում:

– Սոսի՛կ, խմի, արաղդ լավն ա...

– Իմ տանն ինձ հյուրասիրո՞ւմ ես, – ժպտալով հարցին հարցով էր պատասխանում հայրս, ապա ավելացնում. – Բագրա՛տ, դու իմ չխմելուն մի՛ նայիր: Սիրտդ ինչքան ուզում է՝ խմիր, ես գործ ունեմ անելու: Ապա երկրորդ բաժակը լցնելիս (թեև արդեն լցնում էր) չգիտես ինչու միշտ պարտադիր հարցնում էր.

– Հը՛, մե՞կն էլ...

– Հա՛, խասյաթս գիտես՝ խեր, շառ, Աստված, – ասում էր, հասկացնելով, որ երրորդն էլ է խմելու:

Երկրորդ բաժակից հետո միալար սկսում էր ինչ-որ անկապ պատմություններ պատմել: Թեև, կարծում եմ, շատ լավ հասկանում էր, որ հայրս իր այդ կիսատ-պռատ պատմությունների, անհամ զրույցի կարիքը չունի, սակայն պատմում-զրուցում էր հենց այնպես, մի բան ասած լինելու համար: Հորս դեմքին ձանձրույթ էր նկատվում, սակայն լինելով զուսպ մարդ, մի կերպ դիմանում էր, երբեմն-երբեմն քաղաքավարությամբ, որպեսզի չնեղացնի, փորձում էր ընդհատել, սակայն ապարդյուն: Նա իր խռպոտ, ոչ մի զգացում չարտահայտող միալար ձայնով շարունակում էր խոսքը՝ ուշադրություն չդարձնելով հորս՝ կարծես խոսելով ինքն իր համար: Լռեցնելու միայն մի միջոց կար, սակայն հայրս նրան խղճալով, դրան դիմելու ժամանակը հնարավորինս ձգում էր: Վերջապես, երբ համբերությունն արդեն հասնում էր վերջնասահմանին, լցնում էր երրորդ բաժակը: Տեսնելով այդ, նա կտրուկ խոսքն ընդհատում էր և ակնապիշ հայացքը հառելով բաժակին՝ սպասում: Երբ այն արդեն լցված էր լինում, համարյա խլում էր հորս ձեռքից, ձգելով «Է՛հ» ասում և մի շնչում դատարկում: Դրանից անմիջապես հետո անխոս ոտքի էր կանգնում, բարի գիշեր մաղթում ու օրորվելով գնում տուն:

Շաբաթվա երկու-երեք օրը դա կրկնվում էր: Չէր գալիս միայն այն օրերին, երբ կա՛մ հարբած էր, կա՛մ էլ տուն գնալիս մենակ չէր լինում: Նրա ամեն այցից հետո մայրս, նեղսրտած դիմելով հորս, բողոքում էր.

– Ծխախոտ է ուզում՝ տուր թող գնա, ի՞նչ ես ամեն անգամ տուն կանչում, նախ գալիս է խմած պակասն այստեղ լրացնելու, կեղտոտ կոշիկներով, գոմաղբի հոտը տարածելով տանը, անկապ-անկապ խոսում, քեզ նյարդայնացնում և վերջապես մեր տանից է հարբած տուն գնում: Չե՞ս կարծում, որ կմտածեն՝ մենք ենք խմեցնում: Թեև, որ մտածեն, կսխալվե՞ն:

– Ա՛յ կնիկ, դու շատ լավ գիտես, որ նրա փորացավը միայն ծխախոտը չէ, մարդ է, մոտ հարևան, ո՞նց չհյուրասիրեմ:

– Լավությո՞ւն ես անում, ի՞նչ է: Որ չկանչես, զոռով հո չի գա: Ծխախոտ է ուզում՝ տուր, թող գնա: Մի բան պատահի... Կարող է չէ՞, պատահել:

– Լավ, սրանից հետո ասածիդ պես կվարվեմ, էլ տուն չեմ կանչի, – գլուխն ազատում էր հայրս, սակայն մեկ կամ երկու օր հետո նույնը նորից էր կրկնվում:

Մորս համբերությունն անսահման չէր, և մի օր, այլևս չդիմանալով, ասաց.

– Եթե էլի կանչես, ստիպված կլինեմ նրան ասել, որ մեր տունն իր համար պանդոկ չէ:

Իհարկե, մայրս նման բան իրեն թույլ չէր տա, հայրս դա շատ լավ գիտեր, սակայն ձևացնելով, թե հավատում է նրան, կեղծ բարկությամբ նետեց.

– Կարծում ես՝ դրանից ես հաճո՞ւյք եմ ստանում: Վերջ, սրանից հետո հաստատ էլ չեմ կանչի:

Այս խոսակցության հենց հաջորդ օրը, սակայն, երեկոյան նա նորից ձայն տվեց.

– Սո՜սիկ, Սո՜սիկ... մի պապռոզ...

Մայրս լարված նայեց հորս: Նա էլ բարկացած ձեռքը թափ տվեց և վճռականորեն երկրորդ հարկից իջավ բակ: Ընդառաջ գնալով դարպասից արդեն ներս մտնող անկոչ հյուրին՝ նա ոչ այս, ոչ այն, ասաց.

–Բագրա՛տ, սրանից հետո, որ էլ նեղություն չքաշես կանչես, ես ամեն օր դարպասի մոտ գտնվող քարի (նստարան քար էր) ետևի մասում պապիրոս կդնեմ, վերցրու, ծխելով գնա տուն, – ասաց ու ծխախոտ մեկնելով ճանապարհեց: Այնուհետև բարձրանալով վերև՝ ինձ հանձնարարեց օրական մեկ հատ ծխախոտ դնել քարի ետևում:

Ես այդպես էլ վարվում էի, սակայն հարբած օրերին նա մոռանում էր ծխախոտը վերցնել, որից օգտվելով, ես ինքս էի այն վերցնում և ծխում: Ամեն առավոտ ստուգում էի, եթե տեղում էր լինում, վերցնում էի, իսկ երեկոյան հորս տվածը նորից դնում տեղը: Եվ այսպես շարունակ:

Մի օր սակայն, կա՛մ մոռացել էի դնել, կա՛մ դեռ չէի հասցրել, կանչեց.

– Սո՜սիկ, Սո՜սիկ... մի պապռոզ...

Հայրս բարկացավ և առանց ներքև իջնելու, պատշգամբից պատասխանեց.

– Ասել եմ, չէ՞, որ էլ չկանչես, քարի ետևին է, վերցրու, գնա:

– Էհ չկա, որ լիներ..., – ասաց, սովորության համաձայն երկար, խռպոտ հազաց, ապա դժգոհ տոնով ավելացրեց.

– Որ լիներ, կվերցնեի կգնայի:

– Լավ, սպասիր, հիմա երեխան կբերի: Ամեն օր պարտադիր դնում է, երևի ինչ-որ մեկը վերցրել է:

– Սա առաջին անգամը չի: Մի քանի անգամ չեմ վերցրել, օրենքով հիմա մի հինգ-վեց հատից ավել պիտի լինի, չկա:

– Ոչինչ, ասացի ինչ-որ մեկը երևի վերցրել է:

– Տեղը տղադ գիտեր մենակ, նա վերցրած կըլի:

– Տղաս ծխու՞մ է:

– Է՜հ, Սոսիկ, հիմա որ լակոտը չի ծխում:

Լակոտ բառն ակնհայտորեն հորս դուր չեկավ, և նա ակամա, կարծես ինձ արդարացնելու համար, ասաց.

– Գուցեև նա է, արդեն մեծ տղա է:

– Է՜հ, ինձ ինչ (տնքաց), ծխում ա, թող ծխի, բայց թող քոնից ծխի, իմի հետ ի՞նչ գործ ունի:

Հայրս ապշած մի պահ կարծես ցանկացավ ինչ-որ բան ասել, սակայն նա նորից երկար հազաց, բաճկոնի թևքով բերանը մաքրեց, ապա թթված դեմքին իրեն ոչ հատուկ, մի նոր, թվում է պարտատիրոջ պահանջկոտ արտահայտություն տալով, անսպասելիորեն մեծամիտ ու վերամբարձ տոնով ասաց.

– Լավ չի, լավ չի, մի անգամ որ ականջը կարգին քաշես, խալխի մալին աչք չի գցի, – ասաց, մի պահ դադար տվեց, ապա մի տեսակ ընդգծված լրջություն հաղորդելով բառերին, շատ կարևոր և խորը միտք արտահայտողի տեսքով ավելացրեց.

– Չե՞ս իմանում, որ «խալխի մալին աչք գցողի վերջը լավ չի վերջանա»:

Այդ «հեղինակավոր», հիմարավուն-խրատական տոնով համառ-աներեսությունից անակնկալի եկած, հորս դեմքին, թվում է մի պահ բարկության նման մի բան հայտնվեց, սակայն ինտելիգենտ մարդու ողջախոհ զսպվածությամբ, նա կարողացավ տիրապետել իրեն, և առանց դժգոհության իսկ նշույլի, միայն իրեն հատուկ մեղմ, հեգնախառն ժպիտով պատասխանեց.

– Չուտողի մալը ուտողին հալալ ա: Սա երևի չգիտեիր, Բագրատ, կամ մոռացել էիր, իսկ տղաս, սրանից հետո միայն իմից կծխի:

Ավելի ուշ, երբ նա արդեն գնացել էր, հայրս ինձ ասաց.

– Լսեցիր, չէ՞, ինչ ասաց՝ «Ուրիշի մալին աչք գցողի վերջը վատ կլինի», եթե ծխում ես, պետք չի այս կամ այն պատի տակ ծխես, տանը ծխիր և իմ ծխախոտից:

Ես կարմրելով ոչինչ չպատասխանեցի, և մինչև դպրոցն ավարտելը այլևս ձեռքս ծխախոտ չվերցրի: ●

Հերմինե Նավասարդյան

Կենսագրություն

Ծնվել է 1967թ. նոյեմբերի 29-ին Սյունիքի մարզի Լեռնաձոր գյուղում, Կապանի շրջան: Սովորել է Լեռնաձորի ութամյա, այնուհետև՝ Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոցներում: 1984-1989թթ. ուսանել է մաթեմատիկա և լրագրություն Երևանի պետական համալսարանում, 2006-2007թթ.՝ անգլերեն Հայաստանի ամերիկյան համալսարանում:

Տիրապետում է հայերեն, անգլերեն, գերմաներեն և ռուսերեն լեզուներին: 1992-1998թթ. աշխատել է Քաջարանի թիվ 6 դպրոցում: Թղթակցել է հանրապետական թերթերի և ամսագրերի: Ունի տպագրված բանաստեղծություններ, հոդվածներ ու թարգմանություններ հանրապետական և արտասահմանյան ամսագրերում, թերթերում եւ համացանցային կայքերում: Բանաստեղծական երկու գրքերի հեղինակ է. «Ջրից եւ հոգուց» (2017) եւ «Լուսածերպեր» (2003): Ունի թարգմանական չորս ժողովածու, այդ թվում՝ Ֆրանց Կաֆկա «Առակներ եւ պարադոքսներ» (2014), ժամանակակից գերմանական գրականություն. «Վերջապես անցան սառը օրերը. Սաքսոն-անհալթյան պոեզիա» (2012): Բանաստեղծությունները թարգմանվել են գերմաներեն, անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն, ռուսերեն, ռումիներեն, բոսներեն և սերբերեն: 2007 թ.-ից Հայաստանի գրողների միության անդամ է: 2017 թ. դարձել է Եվրոպական KOGGE գրողների միության, իսկ 2018թ.՝ միջազգային PEN - ի անդամ: Մասնակցել է մի շարք միջազգային գրական ընթերցումների և փառատոների: 2012թ.-ից աշխատում է Հայաստանի գրողների միությունում որպես Միջազգային գրական կապերի բաժնի ղեկավար:

ԵՐԱՄ
Էմիլի Դիքինսընին

Սառույցներից ենք
մենք աճում,
կոկոնները մեր
ձյուներն են սնում:

Արմատները մեր
փաթիլների միջով են
հողին հասնում
կամ օդում կախվում:

Արեւի շողերն են միայն
թերթիկներին մեր հպվում,
ոչ մի լեռնագնաց այստեղ
ժայռերին մեր չի հասնում:

Աչքերը մեր երկնքի մեջ են
ուղիղ բացվում,
բուրմունքով մեր օդն
ու ամպերն են շնչում:

Աղբյուրները մեր սրտերից են
քարերն ի վար հոսում,
ջուրն ակունքի մոտ
գիշերը սառույց է բխում:

Թափորը մեր ճերմակ
երկրից – երկինք է ձգվում,
թեեւ ոչ ոք ո՛չ իջնում է,
ո՛չ բարձրանում:

ՍԻՐՈՒՄ ԵՄ

Սիրում եմ թռչունների փետուրներ հավաքել
տարբեր գույների, ամենաշատը՝ սպիտակ.
մտածում եմ նրանք ինձ կօգնեն
մի օր թռիչքի ժամանակ:

Սիրում եմ երկնքին նայել երկար, անթարթ
աչքերս ամպերի ճերմակությունն
ու երկնքի մաքրությունն են
ըմպում կաթ-կաթ:

Սիրում եմ քարեր,
լեռներ մագլցել մենակ.
այնտեղից երկրի վրա բացվում է
բոլորովին ուրիշ մի հայացք:

Սիրում եմ քամիների թեւին
երկար սավառնել օդում,
ծառերի ու ծաղիկների հետ զրուցել
հավերժական գարնան մասին թաքուն:

Սիրում եմ երազել ծովերի,
առագաստանավերի մասին,
քանզի երկրում, ուր ապրում եմ ծով չկա,
լեռներով է լեցուն հսկա:

ԼԵՌԸ

Վեր է խոյանում
լեռը հսկա
մշտախոհ, հպարտ՝
որպես հավերժման
լռին վկա:

Հառնում է վիհերից
դեպ արև
խենթ, լուսագահ՝
որպես արարման
ոգի հարատեւ:

Ոսկեփայլ մի լույս է
անընջում
գագաթին տիրական՝
որպես վեհության
մարմնացում:

Նայում է բարձունքից
աշխարհին
հայացքով իր ժայռե՝
որպես փառահեղ մի բագին:

ՁՀԱՅ ՄԵՐ

Ես չեմ կարողանում երկնքից իջնել,
այնինչ հողին ապրելու համար են
հողեղենները ծնվել:

Օր ու գիշեր կախված եմ պատշգամբից.
վայրի աղավնիներիս համար
հացի փշուրներ եմ շաղ տալիս:

Թեւեր են երբեմն խրվում հոգիս.
մի քանի կաթիլ է թափվում
հողին իմ սրտից:

ԲՈԼՈՐ ՃԱՄՓԱՆԵՐԸ

Բոլոր ճամփաները Հռոմից են գալիս
ու բոլորին դեպի Հռոմ են տանում,
պարիսպներն աշխարհի
վեր են հառնում ինչպես Կոլիզեում
ու հանդերձանքն է մարդկանց
տեր ու ստրուկ խաղում,
ճամփորդությունն այստեղ
դարերի միջով
մի քանի ակնթարթ է տևում,
ճամփորդները բոլոր
գալիս են ու գնում,
հրեշտակները քարացած
դրախտի անդորրն են հսկում:

ՀՐԵՇՏԱԿԻ ՏՈՒՆԸ

Որտե՞ղ է տունը հրեշտակի.
ճերմակ ծովում ամպերի,
թե՞ խաղաղության վրա ջրերի
կուսական անտառներո՞ւմ
թե՞ ժայռերի անհաս ծերպերում
գո՞ւցե հյուսիսային կամ
հարավային բեւեռներում,
ուր երկիրն է սրբվում
եւ կամ հեռու մի աստղի վրա,
ուր ոչինչ չի խաթարում անդորրը նրա.
ժամանակ, տարածություն չկա –
մի թեւաբախում ու հայտնվում է նա...

ՀԱՅՐԵՆԻՔ

«Հիմարները ներխուժում են այնտեղ,
որտեղ հրեշտակները վախենում են
ոտք դնել»:

Ինչ պատահական անցորդ
ասես տեր է կանգնել
հայրենիքին մեր:

Մեզ մնում է միայն
հայրենիքը երկինք
բարձրացնել:

Որ երկնքում
անապական մնան
հոգիները մեր:

ՏԵՍԱՆԵՆ՝ ՈՉ ՏԵՍԱՆԵՆ, ԼՍԵՆ՝ ՈՉ ԼՍԵՆ

Ես բանաստեղծություններ եմ կարդում ձկների համար,
բայց նրանք ո՛չ խոսում են, ո՛չ լսում:

Բայց ես շարունակում եմ կարդալ, որովհետեւ
հոգուց ծնվածներին ջրերն են մկրտում:

Մարդիկ բանաստեղծներին չէ՝ հոետորներին են լսում,
որ նրանց դեպի հողերն են չգրավված առաջնորդում:

Գրականագիտական հայացք

Հերմինե Նավասարդյանի «Ջրից եւ Հոգուց» բանաստեղծական ժողովածուն մեզ տանում է մեր օրերի համար զարմանալիորեն լուսավոր և մաքուր մի աշխարհ, ուր երկիրը միախառնված է երկնքին: Հեղինակը ոչ թե երկրից երկնքին է նայում, այլ երկնքից է փորձում դիտել երկիրը, որ այն ավելի լավ երևա:

Իրականության և երազի հակադրության ավանդական թեման նորանոր դրսևորումներով է նրա մոտ արտահայտվում: Շեշտվում է մարդու՝ հողեղենների լուսեղենության և ըստ այդմ՝ դեպ աննյութականության ձգտումը:

Հեղինակի բանաստեղծական աշխարհը կազմված է երկրից երկինք ձգվող ճանապարհով, ուր գլխավոր գործող անձինք են, եթե կարելի է այդպես անվանել, ջուրը և հրեշտակը: Ջուրը ներկայացվում է նաև իր փոխակերպումներով՝ ձյան և սառույցի միջոցով:

Այս ժողովածուն կարելի է անվանել ինտելեկտուալ, բայց և միաժամանակ հոգեբանական անցումների բանաստեղծությունների ժողովածու: Գիտելիքը բանաստեղծության նյութ է դառնում:

Նկատելի է անցյալի գրական ավանդույթի երկու շերտ: Ավետարանական թեմաների հեռավոր արձագանքը՝ բանաստեղծական ընդհանրացմամբ և այսօրվա փոխակերպումներով, որոնցում զգացվում է Հայր Մերի, Հաղորդության խորհրդի և այլ հասկացությունների հեռավոր շունչը, ինչպես նաև 20-րդ դարասկզբի հայ դասական բանաստեղծության արձագանքը:

Միջնադարյան միստիցիզմի մերօրյա ինքնատիպ դրսևորում է լույսի հետ միանալու, լույսի մեջ անհետանալու ձգտումը:

Հ. Նավասարդյանի տողերում բառերը ոչ միայն պատկերներ են դառնում, այլև մարմնավորվում և մարդ ու առարկա են դառնում:

Ասելիքի և բանաստեղծական մտածողության ինքնատիպությունը հանգեցրել են բանաստեղծության տաղաչափական ձևերի ինքնատիպության: Հոգեվիճակի և ասելիքի փոփոխությունները բերում են տաղաչափական ձևերի, անգամ բառաձևերի փոփոխության:

Կառուցվածքային առումով բավականին ինքնատիպ է վերնագրի, որպես բանաստեղծության առաջին տողի կիրառումը, երբ բանաստեղծության ընթացքը սկզբնավորվում է վերնագրից:

Գիրքը եզրափակվում է երկտողերով, որոնք հաճախ աֆորիզմային խտացումների են հասնում:

Հ. Նավասարդյանի «Ջրից եւ Հոգուց» ժողովածուն ընթերցողին տանում է բանաստեղծական մաքուր մի աշխարհ, որը միաժամանակ լեցուն է երկիր մոլորակի և մարդկության ներկայի ու ապագայի համար տագնապներով: Ժողովածուն առանց չափազանցության կարելի է համարել մեր բանաստեղծության այսօրվա նվաճումներից իր թեմատիկայով, արտահայտչամիջոցներով և ընդհանրապես բանաստեղծական արվեստով:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ
Մ.ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏՆՕՐԵՆ

Ռաիսա Ղարագյոզյան-Բոժկո

Կենսագրություն

Ուկրաինական գրականության հայտնի թարգմանչուհի է, Ուկրաինայի գրողների միության և Հայաստանի գրողների միության արտասահմանյան անդամ, առաջինը, որ սկսեց բնագրով թարգմանել ուկրաիներենից: Նրա թարգմանությամբ Հայաստանում լույս են տեսել ավելի քան երեսուն ուկրաինացի գրողների ստեղծագործություններ, մասնավորապես Պավլո Զահրեբելնու «Եվպրաքսիա», Վասիլ Զեմլյակի «Կարապների երամը» վեպերը, Միխայլո Կոցյուբինսկու «Մոռացված նախնիների ստվերները» նշանավոր վիպակը, Գրիգոր Տյուտյուննիկի նովելներն ու վիպակները «Ասպետի մահը» խորագրով, ուկրաինական պատմվածքների «Կենաց ծառը» անթոլոգիան, ինչպես նաև ուկրաինական և լեհական հեքիաթների մի քանի ժողովածու: Այժմ «Անտարես» հրատարակչությունում տպագրության է պատրաստվում 19-րդ դարի ուկրաինական դասական գրող Իվան Նեչույ-Լեվիցկու «Կայդաշի ընտանիքը» վիպակը:

Վերջին տարիներին Երևանյան «Անդին» և «Նարցիս» ամսագրերում լույս են տեսել Ռաիսա Ղարագյոզյանի մի քանի պատմվածքները՝ նվիրված հիսունական թվականների Գորիս քաղաքի կյանքին ու անցուդարձին, որտեղ նա 1948թ. ծնվել ու 1966թ. ավարտել է №2 միջնակարգ դպրոցը, հետո Երևանի պետական համալսարանի երկրաբանության ֆակուլտետը: Այժմ ապրում և ստեղծագործում է Կիևում:

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում «Կյորվա աստղերը» գողտրիկ պատմվածքը Գորիսի շրջանի մի հին, գեղատեսիլ բնությամբ գյուղի մասին, որը 1974 թվին ողջ բնակչությամբ տեղափոխվել է քաղաքից ոչ հեռու մի բարձրավանդակ ու անվանվել Հարթաշեն:

Կյորուն քարտեզի վրա այլևս գոյություն չունի, նրանից միայն հուշեր են մնացել:

Կյորվա աստղերը

«Մի հարուստ քաղաքացի որոշում է որդուն տանել մի շատ աղքատ գյուղ, որ ցույց տա, թե որքան չարքաշ է գյուղի կյանքը: Երբ մի քանի օր գյուղում մնալուց հետո քաղաք վերադարձան, հայրը հարցրեց որդուն.

- Դեհ, ինչ կասես, որդիս, դու՞ր եկավ քեզ աղքատ գյուղում ապրելը:

- Շա՜տ, հայրիկ:

- Տեսա՞ր ոնց են ապրում աղքատները:

- Տեսա, իհարկե, տեսա, - պատասխանեց որդին:

- Դեհ, խելքդ ի՞նչ կտրեց:

- Էն, որ մենք մի շուն ունենք, նրանք՝ չորսը, կատուներին էլ թիվ չկար: Մեր ջրավազանը բակի կեսով է, իսկ նրանք գետ ունեն, որ ոչ սկիզբ ունի, ոչ էլ վերջ: Մեզ հախճապակե ջահերն են լույս տալիս, նրանց՝ երկնքի աստղերը: Մենք խանութից ենք ուտելիք առնում, նրանց անտառն ու բնությունն է ամեն ինչ տալիս: Մենք հողամաս ունենք, նրանք՝ անեզր դաշտեր: Մեզ ժամացույցն է արթնացնում, նրանց՝ արևն ու աքաղաղի կանչը: Մենք փող ենք վճարում, որ գազանանոցում բնություն տեսնենք, նրանք իրենք բնության մեջ են ապրում: Մեզ պարիսպներն են պաշտպանում, նրանց՝ աշխարհը:

Հայրը կարկամել՝ չգիտեր ինչ ասի»:

Համացանցի լաբիրինթոսում դեգերելիս հաճախ ես նման իմաստությունների հանդիպում: Առակը, որը հասկացնում է, թե ամենամեծ գանձը անարատ բնությունն է, կանաչ խոտը, մաքուր օդն ու ջուրը, ճողփացող օվկիանոսը, թեկուզ և ստեպ-ստեպ փոթորկվող մագնիսադաշտով, բայց մեր պահապան մշտնջենական արևը, այդ իմաստություններից է: Համացանցը մարդկության առաջընթացի մե՜ծ հրաշքն է, բայց հարցը միայն իմաստությունը չէ: Այդ առակը հանկարծ աստղային երկնքի կարոտ արթնացրեց մեջս: Վաղու՜ց մոռացված կարոտ: Ասում են, թե մեծ քաղաքներում նույնիսկ աստղային երկնքի պակասից հիվանդություններ են առաջանում, ինչպես, ասենք, A վիտամինի պակասից: Առակն ընթերցելուց ինձ թվաց, թե հիվանդ եմ: Հապա ինչո՞ւ հիշեցի Կյորուն, նրա գիշերվա երկինքը...

Կյորվա աստղերը խոշոր էին, հատ-հատ, վառ ու զարմանալիորեն մոտ: Կյորվա աստղերն ուրիշ էին, «Երեկոները Դիկանկայի մոտի խուտորում» ուկրաինական ֆիլմի ցնորական աստղերի նման, որ ցախավելին հեծած վիուկ Սոլոխան հատ-հատ հավաքում, մախաղի մեջ է դնում: Այդ կինոնկարը դիտել եմ հարյուր անգամ, հարյուրմեկ ու հարյուրերկու անգամ էլ կդիտեի: Արդյո՞ք դրանք Կյորվա աստղերը չեն, ի՜նչ իմանաս...

Կյորուն այլևս չկա: Ավելի ճիշտ՝ չկա այդ անունը, բայց կան բնությունը, նրա սարերն ու ապառաժները, կիրճերը, լքված տները, բարձիթողի արված տնտեսություններն ու մացառապատ բոստանները և... խոշոր-խոշոր աստղերը: Չկա միայն գյուղի անունը քարտեզի վրա և չկան... մարդիկ: Այնտեղ արդեն վտանգավոր գոտի է, պատերազմի շնչով պապանձված ու արդեն պատմություն դարձած կոթող:

Ես սիրում էի գիշերվա Կյորուն:

Կյորուն Ձնեմոքուրի հորանց գյուղն էր, նրա գյուղը: Ինձ ուղարկում էին այնտեղ ամառները՝ չգիտեմ ինձնից ազատվելու, թե պարզապես արձակուրդներին: Ես չէի սիրում կանաչ խոտ ու ծառից զուրկ այդ գյուղի ամառվա տապը, փոշոտ, դարիվեր փողոցները, քարայրե կացարանի տարտամ մթնոլորտը, ոչխարի մածունն ու թրջած լավաշը, թխսի կռթկռթոցը, աքլորի ծղրտոցը...Տատս հետս չէր, և շուրջն ամեն ինչ թշնամական էր: Ես մենակություն էի զգում ու կարոտ, ուզում էի, որ օրն ակնթարթ լիներ: Գյուղի երեխաները քաշվում էին քաղաքի իմ շորերից ու բոկոտիկներից: Հետո սովորեցին, բայց նրանք իմ բակի խաղընկերները չէին, Ձնեմոքուրի մայրը՝ խստադեմ Շուշանը, իմ տատը չէր, քարայրը, որտեղ քնում էր ողջ գերդաստանը, իմ տունը չէր: Ես կարոտում էի քաղաքին և ուզում էի լաց լինել, որովհետև գիտեի, որ մեծերի կամքով սահմանած ժամանակը՝ ուզեմ թե չուզեմ, պետք է անցկացնեմ Կյորուում: Որպեսզի թաքցնեմ լացս, ես քարայրի վրա՝ ուղտի զույգ սապատի պես կանգնած երկու սարի գոգում էի թաքնվում, ազատություն տալիս արցունքներիս ու հանդարտվում, հետո լանջն ի վար թավալգլոր անում, հետզհետե համակերպվելով փոքրիկ աքսորյալի իմ ճակատագրին: Միայն թե ափսո՜ս, այն ժամանակ չէի հասկանում, որ դա լավ ճակատագիր է, որ Կյորուն դա աստծո դրախտն է, որ այդ գյուղն աշխարհի ամենաչնաշխարհիկ անկյունն է, որ կյանքում ամեն ինչ հարաբերական է ու վաղանցուկ, որ աշխարհը լի է գեղեցկություններով ու... որ տարիներ հետո, հիմա, ինչե՜ր ասես չէի տա՝ գեթ մի ակնթարթ կրկին այդ գողտրիկ զույգ սարի գոգում հայտնվելու ու այդպես անհոգ, թեթև, նրանց գրկում, ինչպես մոր արգանդում, թավալգլոր անելու համար:

Այդ զույգ սարի գոգում տիեզերական անդորր էր ու լռություն: Ես պառկում էի զույգ սարի գոգում, նայում երկնքի կապույտին ու ականջ դնում...աշխարհի անդորրին:

Մի օր խնդրեցի ինձ համար անկողին գցել դրսում՝ ծղոտի դեզի վրա, ասելով, որ ուզում եմ աստղերին մոտ լինել: Զարմացան, բայց Կյորուում, երեխայի տարօրինակ ցանկության վրա երկար գլուխ չէին կոտրում: Ցանկությունս ընդամենը երկնքի աստղերն էին ու ծղոտի դեզը: Եղածն ի՞նչ է: Եվ ես սկսեցի դրսում քնել: Բուրավետ ծղոտի մեջ ընկղմված ես նայում էի երկնքի մութ պաստառի վրա գիշերվա միայնության մեջ ինձ մտերմորեն թարթող աստղերին, գոհ, որ նրանք հետս են, և ականջ դնում խավարի շրշյուններին...

Կյորուն հիշյալ առակի շատ աղքատ գյուղն էր: Կյորուն ջուր չուներ: Կյորուն հող չուներ: Կյորուն ուներ լուրթ երկինք և բնության կողմից առատորեն շնորհված քարանձավներ, ժայռեր, սարեր, քերծեր ու ծերպեր և... քարեր, քարեր: Մարդիկ ապրում էին քարե անսվաղ տներում և աստծո տված քարանձավներում: Դժվար էին ապրում...

Կյորուն գեղեցիկ էր, բայց ... ահարկու: Ոչ, չքնաղ լեռներն ու քերծերը, Կյորվա անդունդները չէին ահ ներշնչում: Գյուղի չարքաշության, մարդկանց պլոկված կենցաղի, փոշու մեջ անհոգ թավալգլոր լինող մանուկների քրջերի, ջրով լի ծանր կժերն ուսած հարսների՝ քարքարոտ լեռնաշավիղը հաղթահարելու ծանր տնքոցի ու ծլլացող քրտնքի մեջ անճարության և անհուսության, ունայնության և կյանքի անիմաստության անսքող զգացում կար: Այդ հարսները, մանուկները և բոլորն այդ գյուղում, որոնց սովորական կերակուրը մածունն էր ու լավաշը, լավաշն ու մածունը, մածնով լավաշը և լավաշով մածունը, մոխրագույն էին: Կյորուն մի տեսակ հանգած օջախի մոխրի գույնի էր, այդպիսին է մնացել մանկական իմ հիշողության մեջ այդ գյուղի սրտաճմլիկ պատկերը: Գյուղը երանգավորում էին նրա ոսկե աստղերը, գյուղատակի սակավաջուր գետակի վեհերոտ քչքչոցը, քերծերի ծերպերին այստեղ-այնտեղ թառած բոստանները, թթով լի տակառների պղպջան օղեբույրը, մեղրահամ թութը, մեղուների տարտամ բզզոցը, այծի զվարճալի մկկոցը, ոչխարի «բյա -ա՜»-ն և Կյորվա ավանակի «հի՜-հա՜»-ն:

Ախ այդ ավանակը՜, այդ անքմայք, հլու անասունը...

Կյորվա մի չքավոր օջախի գլուխ էր Հովհանը՝ Ձնեմոքուրի հայրը, կիսամաշ, երևի պատերազմից բերած գորշ շինելը ոսկրոտ, երկարաձիգ մարմնի վրա կախված, դալկադեմ, հեզ ու բարի մի մարդ: Նրա գունատ դեմքի վրա անմիջապես աչքի էին ընկնում աջ ու ձախ տնկված շեկ, բուդյոնովյան ցից՝ ասես քթի տակ կպցրած, մի տեսակ խաբուսիկ բեղերը: Տպավորությունը լրացնում էր ավանակը, որով Հովհանը ընտանիք էր կերակրում, երկու ամուսնությունից ծնված որդիներից, կնոջից, հարսներից ու թոռներից բաղկացած մի ողջ գերդաստան: Ավանակը ցախ էր բերում, ջվալով այլուր, կժերով ջուր, ընտանիքի չքավոր գոյությունն ապահովելու համար ամեն ինչ: Քարքարոտ, զառիթափ, ոլոր-մոլոր կածանով բերում-հասցնում էր գյուղի գլխին թառած ամենավերջին տունը, որ ընդարձակ քարանձավների մի շարան էր լոկ, առջևում՝ լայնարձակ բակ: Դա էր Հովհանի տունը: Մի օր այդ դժվարանց կածանով տուն բարձրանալիս, անտանելի շոգից, թե հոգնածությունից, կամ էլ պարզապես ծերությունից ավանակը մեկ էլ տրտինգ տվեց ու վայր գցեց իրեն հեծած հոգնատանջ տիրոջը: Եվ ավանակի այդ դավաճան վարքը Հովհանի մեծ գերդաստանի քայքայման սկիզբը դրեց...

Ստացած վնասվածքներից այլևս ուշքի չգալով, ծեր Հովհանը շուտով մեռավ: Դա մեծ հարված էր գերդաստանի համար, հատկապես հանգուցյալ կնոջից մնացած կատարելապես կույր Ենովք որդու համար, ով կին ու մի տուն լիքը երեխաներ ուներ: Սգում էր առանց այդ էլ անժպիտ, արծաթ փողերը ճակատին շարած և զանգեզուրյան տարազով բերանը պինդ կապած նրա այրիացած կինը՝ Շուշանը: Սգում էին քաղաքում իրենց կյանքն այս կամ այն կերպ դասավորած դստրերը՝ Ձնեմոքուրը և իրենից մեծ քույրը՝ ժպտադեմ, բարեհամբույր, շպարված, միշտ վառ կարմիր ներկած շրթունքներով և «Կրասնայա Մոսկվա»-ի թունդ բույրով Գորիսի կրպակավաճառ Սաթին: Սգում էին արդեն ընտանիքավորված որդիները, մեծ հարսը՝ Ֆլորան, որին ոչ թե Ֆլորա, այլ Փոլի էին կոչում, որովհետև Ֆլորան գուցե թե Ելիսեյան Դաշտերին սազական մի սեթևեթ անուն էր, այնինչ Կյորուն սեթևեթանք չէր ընդունում: Կյորուն հարմարեցրել էր Ֆլորան իր քարայրներին, իր քարքարոտ արահետներին ու դարձրել Փոլի.

«Ֆլորաս ո՞րն է, Փոլին, ա՛յ, ուրիշ բան է: Փոլի՜, Փոլի՜...»:

Եվ Ֆլորան հնազանդորեն ընդունել էր այդ անվանափոխությունը, բայց որպես գերդաստանի՝ աշխարհի արարումից ի վեր հաստատված կանոններին հավատարիմ հարս, հոգու խորքում ատել այդ ընտանիքի բոլոր կինարմատներին՝ կեսուրին և ամուսնու քույրերին: Իսկ իր ամուսնուն՝ Հովհանի և Շուշանի թուլակամ, մանկամիտ, նաև ինչ-ինչ տկարամիտ որդուն՝ Սիմոնին, ով ծնվել էր քույրերից՝ Սաթիից և Ձնեմոքուրից հետո, նայում էր մի տեսակ վերևից, ենաթած սերը, գուցե և սիրո ուրվականն էր իրեն կապել նրա հետ: Դեռ ավելին, Սիմոնը հարևան գյուղից էր Ֆլորային ոչ առանց աղջկա բարի կամքի «փախցրել»՝ բերել Կյորու: Եվ խստակենցաղ ծնողների կամքը հաշվի չառած ազատամիտ Սիմոնի այդ հանդուգն արարքը հեքիաթի կախարդական փայտիկի մի հարվածով Շուշանին վերածել էր

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ՝ ԷՋ 46

Արթուր Չերքեզյան



Կենսագրություն

Ծնվել է 1953 թ. Գորիսում: 1970 թ. ավարտել է տեղի թիվ 2 միջնակարգ դպրոցը, նույն թվականին ընդունվել եւ 1975-ին ավարտել է Երեւանի պետական համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետը:
1991-ին ավարտել է Մոսկվայի Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտը:
Հրատարակել է «Վերադարձ» խորագրով պատմվածքների ժողովածուն:

Անքուն գիշեր

Վաղուց ի վեր Նվարդն ամեն գիշեր արթնանում էր: Երբեմն դա տեւում էր մի քանի րոպե, եւ առաջին պահին, երբ բացում էր աչքերը, ոչինչ չէր ընկալում: Հետո, երբ ուղեղում ծագում էր գիտակցության թույլ լույսը, զգում էր իրեն եւ մթության մեջ աստիճանաբար զանազանում կիսախավարի մեջ խրված սենյակի կահավորանքը: Այդ պահերին նա ճիգ էր անում կամքի ուժով կանգնեցնել մտքերի սկսվող ընթացքը, հանգցնել գիտակցության բռնկումը եւ նորից ընկղմվել քնի մեջ: Սովորաբար դա նրան հաջողվում էր: Երբեմն էլ երկար ժամանակ չէր կարողանում նորից քնել եւ վարագույրի արանքից թափանցող փողոցի լուսավորությունը կամաց-կամաց պատկերում էր փոքրիկ սենյակը, որի ամեն ինչը հարազատ էր իրեն: Առաջին միտքը, որն առաջանում էր նրա մեջ, ժամանակի մասին էր. «Ժամը քանի՞սը կարող է լինել», - ասում էր ինքն իրեն եւ տեսողությունը լարած՝ աչքերը հառում զարթուցիչին: Նրան թվում էր, թե տեսնում է սլաքները եւ հաճախ, իրեն ստուգելու համար, սեղմում էր գիշերալամպի անջատիչը, որը դրված էր լինում սեղանիկի վրա՝ անկողնու մոտ: Ուղիղ ժամը երեքն էր: Նորից անջատում էր լույսը եւ մի տեսակ գոհ, որ տեսողությունը կամ, թերեւս, զգացողությունն իրեն չի խաբել, փակում էր աչքերը, ջանում իրենից վանել մտքերը, որպեսզի կարողանա քնել: Որոշ ժամանակ նրան թվում էր, թե ոչինչ չի մտածում, հետո նկատում էր, որ մտքերը, որոնք գիշերները, խավարի մեջ, ավելի պայծառ եւ կենդանի են լինում, պաշարել են իրեն: Այդ մտքերի մեջ առանձնահատուկ ոչինչ չէր լինում: Հիշում էր առօրյան, ձանձրալի ու միապաղաղ, ոչինչ չնշանակող դեպքեր, որոնց տեղի ունենալն ու տեղի չունենալն իրարից էապես չէին տարբերվում: Հաճախ էր, երբ առանձնապես չէր կարողանում քնել, հիշում էր, կյանքը՝ սկսած մանկությունից, փորձում հասկանալ, թե երբ կատարվեց շրջադարձը, ինչու կյանքը դարձավ այդպես միօրինակ ու տաղտկալի, եւ արդյո՞ք դրա պատճառը իր բնավորության մեջ է:

Տասը տարի առաջ էր, երբ ավարտեց ինստիտուտը, աշխատանքի անցավ գործարանի տեխնոլոգիական բաժնում, այսպես ասած, մտավ կյանք՝ վարդագույն հույսերով եւ պատկերացումներով: Ինչ տվին այդ տասը տարիները: Ոչինչ, եթե չհաշվենք մասնագիտական կարգի բարձրացումը, որը ընդամենը մի քանի ռուբլով ավելացրեց աշխատավարձը:

Այդ գիշեր նույնպես Նվարդը հիշում էր անցած տարիները, որը կորցրած էր, որովհետեւ ոչ ոքի պետք չեկավ, թառամեց ինքը եւ հիմա անկողնում շուռումուռ գալով՝ հետզհետե զայրանում, ապա հուսահատվում էր անցնող տարիների եւ անելանելի վիճակի պատճառով:

Տասը տարի: Ինչ էին դրանք: Միապաղաղ ու միանման օրեր, որոնք անցան տառապալից դանդաղկոտությամբ, գումարվելով՝ դարձան երկար ու ձիգ տարիներ, ոչինչ չտվեցին եւ հիմա դրանք հիշելիս, թվում է, թե անցան ակնթարթորեն, որովհետեւ կրկնեցին իրար, դարձան անհետաքրքիր եւ իրենց մասին ոչ մի հիշողություն չպահպանեցին:

Օրեր, որոնք անցան աշխատասենյակի չորս պատերի մեջ՝ լցված միեւնույն խոսակցություններով, միեւնույն մտքերով ու դատողություններով, միեւնույն եզրակացություններով, որոնք ամեն անգամ ասվում ու լսվում են անտարբերությամբ: Ստացվում է այնպես, որ կատարած աշխատանքը թվում է անօգուտ եւ անիմաստ, որովհետեւ որոշակի սահման գոյություն չունի արածի եւ չարածի միջեւ:

Այդ տասը տարիները տարան երիտասարդ մարմնի թարմությունը՝ փոխարենը տալով անտարբերություն ամեն ինչի նկատմամբ, տեղադրելով անցյալն ու ապագան միեւնույն վանդակի մեջ, ջնջելով ներկան, որովհետեւ ներկան հազար անգամ կրկնված անցյալ է եւ հազար անգամ կրկնվելիք ապագա:

Ոչինչ այլեւս հետաքրքիր չէր, ոչ իսկ տոնակատարությունները, որոնց առաջներում սպասում էր սրտատրոփ ու անհամբեր, որովհետեւ դրանք նույնպես կրկնողություններ են եւ ոչ մի նոր բան իրենց մեջ չեն պարունակում:

Նախորդ երեկոյան իրենց գործարանում նշեցին Մարտի 8-ը: Միեւնույն ճառերը, միեւնույն մտքերը, վիճակագրական միեւնույն թվերը: Հնացած, ձանձրալի կրկնողություն: Իսկ նոր ընդունված աշխատակցուհիները, ոգեւորված, վառվում էին անկեղծ ապրումներով, ուշադրությամբ դիտում շրջապատողներին, հույս ունենալով զարմացնել նրանց իրենց գեղեցկությամբ, երիտասարդական փայլով: Մի ակնթարթի պես կանցնի եւս տասը տարի, կյանքը կճզմի նրանց, ինչպես իրենց, նրանց նույնպես կդարձնի իր նման հոգնած ու անտարբեր, եւ կապրեն ու կաշխատեն նրանք, որովհետեւ դա անհրաժեշտություն է, եւ կլրացնեն ձանձրույթից տառապող միլիոնավոր մարդկանց խմբերը:

Կլինեն եւ հաջողակներ, որոնց բախտը կբերի, կորսան որեւէ մեկին, երեխաներ լույս աշխարհ կբերեն, որոնք հետագայում հավանաբար կկրկնեն իրենց ծնողների ճակատագրերը:

Բայց, ի վերջո, մինչեւ ե՞րբ պետք է նստել անկյունում, նայել կյանքին եւ ամեն օր ինչ-որ բան կորցնել: Պետք է փոխել կյանքը, պետք է արմատական փոփոխություն կատարել, այլապես կանցնի եւս տասը տարի եւ այն ժամանակ արդեն, խնդրեմ, ինչպես ասում են, ներկայացումն ավարտված է:

Ի՞նչ անել ուրեմն: Թերեւս փոխի բնակավայրը, տեղափոխվի այլ քաղաք, դուրս գա արդեն ճահիճ դարձած միջավայրից, փոխի շրջապատը, ընկերներին, հեռանա բոլոր ծանոթներից եւ նոր կյանք սկսի՝ արդեն այլ ձեւով, առջեւում որոշակի նպատակ դրած: Գուցե դա ինչ-որ բա՞ն տա:

Բայց ինչպե՞ս անել, ո՞ւր գնալ: Բնակարանի հարցն ամեն տեղ դժվար է: Երկար տարիներ են պետք, մինչեւ բնակարան տան, իսկ առանց բնակարանի, առանց սեփական անկյուն ունենալու, կապրի, այսպես ասած, կիսատ-պռատ, որովհետեւ երիտասարդ չէ արդեն եւ առանց սեփական կահավորանքի, առանց սեփական հարմարությունների, որոնց մեջ սովոր է ազատ զգալ իրեն, կլինի մի տեսակ անկայուն, ստորացված վիճակում:

Թքել ամեն ինչի վրա եւ երեխա ունենալ: Իսկ ի՞նչ կլինի հետո: Կխայտառակի ծնողներին ու հարազատներին: Հետո՞ ինչ: Ամեն ոք իրավունք ունի իր կյանքն ինչ-որ կերպ դասավորելու, թեթեւացնելու: Պետք է սեփական ձեռքերով բախտ ստեղծել, անձամբ հասնել ամեն ինչի, որովհետեւ օգնություն չի լինի, որովհետեւ ամեն ոք զբաղված է իրենով, ամեն ոք ինքն է օգնության կարիք զգում:

Բայց ինքն այդ քայլը չի անի, ոչ թե բարոյական մնալու պահանջից, այլ որովհետեւ վճռականություն չունի, որովհետեւ ինքնուրույն լինել չի սովորել, միշտ զիջել է եւ արել այն, ինչ հարազատներն են ճիշտ համարել: Ո՞ւմ էր պետք այդ բարեհամբուրությունը, այդ խոնարհությունը: «Այսինչ բանը պետք չէ անել, որովհետեւ պատշաճ չէ, այսպես պետք չէ վարվել, որովհետեւ տգեղ է»: Իսկ ի՞նչ տվեց դա, ի՞նչ մնաց արդյունքում: Կորցրեց միայն ինքը, որովհետեւ բաց թողեց առիթները, որոնք կարող էին փոխել եւ իմաստավորել իր կյանքը: Դեռ ինստիտուտի առաջին կուրսում էր, թարմ եւ հրապուրիչ, երբ իր հետ մտերմություն արեց կողքի փողոցում ապրող մարզիկը: Գեղեցիկ էին նրա հետ ունեցած հանդիպումները, գեղեցիկ էին թեթեւ զեփյուռի տակ անց կացրած երեկոները, որոնք հաճախ վերջանում էին համբույրներով, եւ ինքն անտեղյակ այդ գեղեցկությանը, չէր գիտակցում նույնիսկ ամբողջ մարմնում տարածվող համբույրի քաղցրությունը: Այդպիսի զգացում այլեւս չի ունենա, որովհետեւ անմիջականությունն անվերադարձ կորավ պատանեկության հետ, որովհետեւ հիմա, այս տարիքում ամեն ինչ կշռադատվում է, ենթարկվում անհրաժեշտության օրենքին:

Խզվեցին կապերը մարզիկի հետ: Ո՞վ օգտվեց դրանից: Ով ոչ: Դարձյալ կորցրեց ինքը: Եվ հոր պատճառով, որը, չգիտես ինչ մտածելով, դեմ կանգնեց եւ կտրականապես հանդիպել հետը. «Գիտեմ դրանց, ոչ մի բանի պիտանի չեն, կարող են միայն գայթակղել»:

Հետո եղան ուրիշներ, որոնք նույնպես ցանկացան մտերմություն անել հետը, արժանանալ իր ուշադրությանը, բայց ինքը մնաց անհասանելի, որովհետեւ այդպես էր ցանկանում հայրը, եւ այդ էր պահանջում իրենից. «Ուշք ու միտքդ պետք է լինեն դասերդ, դեռ ժամանակը չէ»: Հետո գործարան, մեկուսացված կյանք աշխատասենյակում, տղաների պակաս, ճարպիկ աղջիկների առատություն: Թռավ ժամանակն անդարձ եւ ամեն անցնող տարի թողեց իր կնիքը:

Օ՜, տեր Աստված, զզվելի է մրցակցությունը, հոգնել է ինքն արդեն, հոգնել է ամեն ինչից, նույնիսկ ծնողներից, հարազատներից:

Լավն են ծնողները, ինքը սիրում է նրանց, բայց եւ այնպես, հոգնել է նրանցից: Հայրը, որ մի ժամանակ ուժեղ էր, առնական, ծերացել է հիմա, եւ գիտե ինքը, որ հոր համար ինքը հոգս է դարձել: Բարի է հայրը, մեղմ, բայց հիմա էլ սիրում է իրեն խիստ պահել, ինչպես առաջ: Խեղճ մարդիկ: Ծերանում են, թուլանում, բայց չեն ուզում տեսնել իրենց մեջ կատարված փոփոխությունը:

Տարիներ առաջ, երբ ընտանիքով գնում էինք բնության մեջ կիրակնօրյա հանգիստն անցկացնելու, միշտ էլ հայրն էր պատրաստում ուտելիքը, եւ միշտ մի որեւէ ծիծաղելի բան էր պատահում: Խեղճ, լավ հայրիկ: Ծերացել է հիմա եւ ամեն ինչում ենթարկվում է մորը: Ինքն էլ է ծերանում, ծերանում է աննկատելի: Մի քանի օրից կլինի 34 տարեկան: Տեր Աստված, կիսել է կյանքն ակնթարթորեն: Անօգուտ ապրած տարիներ, որոնք ոչինչ չտվեցին, բացի հուսախաբությունից: Ինչպես էր ինքն առաջներում պայծառ եւ լավատես, իսկ հիմա դրա հետքն էլ չի մնացել:

Մի ժամանակ ծծնդյան օրվան սպասում էր անհամբերությամբ, ամեն ինչ անում, որ հյուրերն ուրախանան, որ սեղանին պակաս բան չլինի, իսկ հիմա զզվում է այդ օրից: Այդ օրը միայն ավելացնում է տխրությունը:

Կոտրեց կյանքն իրեն, ճզմեց ու դարձրեց անձեւ մի գորշություն, որը սպասում է հոգնած եւ անտարբեր, թե երբ կտանեն իրեն, կխլեն մնացորդ մանրուքները, կոչնչացնեն, վերջ դնելով ամեն ինչին:

Չափազանցված զգացողություն է թերեւս, բայց ահավոր է, որովհետեւ չկա օգնություն, անիմաստ է սպասել որեւէ մեկից այդ օգնությունը: Ամեն մեկն իր հոգսերը, իր տառապանքներն ունի եւ անհաղորդ է ուրիշին: Այդպես են բոլորը, այդպիսին է եւ ինքը: Ամեն մեկն ուզում է ինչ-որ կերպ առաջ անցնել, ինչ-որ կերպ հաջողություն ձեռք գցել, կարեւոր չէ, թե ինչ ճանապարհով, որովհետեւ դա արագ մոռացվում է, որովհետեւ կարեւորը միայն արդյունքն է: Խելահեղ վազք, առաջ ընկելու խելագար տենչ: Օ՜, տեր Աստված, ո՞ւր կտանի դա, ի՞նչ կլինի ապագայում: Զզվելի, հոգնեցուցիչ պայքար մի մանրուքի համար: Աստված իմ, մի՞թե հաղթելն այդքան հաճելի է:

Եղբոր կինն աննկատելիորեն, հաճախ եւ բացահայտ անում է ամեն ինչ, որ ինքը հարազատների մեջ օտար զգա իրեն, ավելորդ, որովհետեւ ինքը խանգարում է նրան, եւ նա է հիմա իրավունքների տերը: Հասկանալի է, եղբայրը դա զգում է, զգում են դա բոլորը եւ լռում, որովհետեւ ճշմարտությունը թերեւս նրա կողմն է, որովհետեւ այդպիսին է կյանքը:

Անշուշտ, փոքր եղբայրը այդպիսին չէր լինի: Նա իր սիրելին էր, կապված էր իր հետ եւ, հավանաբար, հասկանար իրեն: Բայց նա էլ տեղափոխվել է ուրիշ քաղաք, եւ վաղուց իրար չեն տեսել:

Քնքուշ էր կրտսեր եղբայրը: Հիշում է, երբ ինքն ավարտեց դպրոցը, նա մի նվագարկիչ նվիրեց իրեն: Հիմա էլ միշտ փոստով շնորհավորում է տարեդարձը: Ինքը դա երբեք չի մոռանա: Կարոտել է նրան: Պետք է անպայման հյուր գնա: Նրա մոտ այնպես թեթեւ է զգում իրեն, այնպես անհոգ:

Էհ, քնել է պետք, ուշ է արդեն: Հավանաբար մի ժամից կբացվի լույսը: Վաղը Մարտի 8-ն է: Մի քանի ժամ կզբոսնի, գուցե ֆիլմ դիտի, հետո նորից տուն, մանր-մունր հոգսեր, մանր-մունր աշխատանքներ: Կողքի փողոցում ապրող մարզիկը միշտ ժպտում է իրեն: Շաբաթը երեք-չորս անգամ հանդիպում են իրար փողոցի անկյունում: Մարզիչ է դարձել հիմա: Լուրջ եւ խոհուն տղամարդ է: Սպիտակել են մազերը տեղ-տեղ, եւ դա ավելի է գեղեցկացրել նրան: Իզուր խանգարեց հայրը: Հիմա ամուսնացած կլիներ հետը, եւ գուցե երջանիկ լիներ: Լսել է, որ կնոջ հետ հարաբերությունները լավ չեն: Երեւի դա է պատճառը, որ տխուր են աչքերը, թախծոտ է ժպիտը: Ինքը պետք է անտարբեր չանցնի կողքով, պետք է պատասխանի ժպիտին: Գուցե բաժանվի կնոջից եւ ինքը... Տեր Աստված, ամեն ինչ հնարավոր է, գուցե եւ գա հաջողությունը, գուցե այլեւս այդպես չտառապի: Օ, Աստված, եթե դու չօգնես, ո՞վ կլինի մեղավորը:

Շառագունել է երկինքն արդեն, շուտով կբացվի լույսը: Քնել է պետք, քնել եւ մոռանալ ամեն ինչ: Կգան օրեր էլի եւ գուցե... գուցե...

Եվ Նվարդը խորասուզված մտքերի մեջ, չիմացավ, թե երբ վրա հասավ քունը:

●

Հովիկ Ալեքսանյան



ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծնվել եմ 1959-ի գարնանը, երբ առաջին ձնծաղիկն էր աչքերը բացել: Ձնծաղիկ շատ եմ սիրում: Հետո գյուղական մանկան կյանքն՝ իր բոլոր ուրախություններով եւ տխրություններով, խեղճություններով ու չտեսությամբ: Ձյուն շատ էր գալիս, շատ ցուրտ էր: Ցուրտը հույզի է նման, որ պարուրվեց, բաց չի թողնելու, տանելու է ինչքան հարկավոր է ու հնարավոր է: Սովորել եմ մեր Սպանդարյան գյուղում, Բաքվում, Երեւանում, Սիսիանում: Բաքվի տարիներն ինձ օգնեցին որպես մարդ ձեւավորվել: Արեւելյան այդ քաղաքում տեսա տարբեր ժողովուրդների ներկայացուցիչներ, տրամվայ, հարբած կին, փողոցում ապրող բորոտ, փոքրիկ բաժակով արեւածաղկի սերմ վաճառող ծերունի, բուլվար ու վերջապես ծով, նավահանգիստ, գիշերային լույսեր ու փարոս: Որպեսզի չընկնեմ հիշողությունների գիրկը, ասեմ, որ հետո, ինչպես բոլորը՝ խորհրդային բանակ, ուսանող Երեւանում: Իմիջիայլոց, որպես մարդու ձեւավորման ընթացք, ինձ շատ են օգնել իմ դասախոսները՝ Աշոտ Աբրահամյանը, Վաղարշակ Քոսյանը, Վաչե Պարտիզունին, Սեւակ Արզումանյանը, որոնց տարիների հեռվից ցանկանում եմ բերել իմ խորին խոնարհումը: Երեւանն ինձ թատրոն նվիրեց: Թատրոն հաճախելու օրերն ամենամեծ հարստությունն են եղել ինձ համար եւ կմնա այսօր ու այսուհետ: Հետո արդեն գյուղական դպրոցի ուսուցիչ, տնօրեն, շրջժողկրթբաժնի դպրոցական տեսուչ, մարզային տեսուչ, Սիսիանի վարժարանի տնօրեն, Սիսիանի թիվ 5 դպրոցի տնօրեն, Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ, իսկ ներկայումս՝ կրկին Սիսիանի թիվ 5 դպրոցի տնօրեն:

Աֆրիկը

Այդպիսի ձի ոչ ոք չուներ: Թե որ աստղից էր վայր ընկել այդ քուռակը, ոչ ոք չէր հիշում: Կարմիրի ու սևի խառնուրդ էր Աֆրիկը՝ որձաձի էր՝ հզոր վզով ու գավակով: Կուրծքը դուրս էր ընկած ու ինչ-որ կարծր բան կար նրա մեջ, որ երբևէ չի ընդունում պարտություն, ընկճվածություն կամ թուլություն:

Բաշի սև մազերը երկար էին, թափվում էին աչքերին ու Աֆրիկի աչքերը ոչ բոլորն էին տեսել, նույնիսկ տերերը: Որձաձի էր Աֆրիկը, բայց չգիտես որտեղից հրաշալի նազանք ուներ, որ պետք է չունենար: Տեսե՞լ եք երբևէ սիրուն կանանց ու աղջիկների, երբ վարսերի մի փունջ գեղեցիկ աչքի վրա են պահում ու երբեմն գլխով կամ ձեռքի շարժումով փորձում են հեռացնել: Այդ գործողությունը այնպես են անում, որ այն կրկնվի երկու կամ երեք րոպե հետո: Չե՞ք զգացել, որ դժվար է սուզվել ձիու աչքերի մեջ. այն շատ պարզ է, մեծ ու խորը: Այդպիսին է նաև կանացի աչքը, մանավանդ երբ մի աչքը ուղղակի ձեզ շամփրում է վարսերի ծածկույթի տակից: Նկարագրված աչքն ու ազատ, բաց աչքը նույնը չեն, շատ են տարբեր և երևի ունեն հիմնական գործառույթից բացի մեկ այլ հարթություն, որը ոչ մի բանաստեղծության մեջ նշված չէ: Թե որտեղից էր կանացի այս սեթևեթանքը հայտնի Աֆրիկին, չգիտեմ, բայց հաճախ էր օգտագործում, և այդ պահերը շշմեցուցիչ ազդեցություն ունեին հարևան ձիերի վրա: Եվ սկսվում էր ահավոր խրխինջ ձիերի հասարակության, և ձիերից ոչ մեկը ոչինչ չէր թաքցնում իր ունեցածից:

Աֆրիկը նախագահ Գևորգին կրում էր իր ուսերին: Թամբը փայլում էր, ձին՝ խնամված: Բոլորս համոզված էինք, որ Աֆրիկը և՛ մտածում էր, և՛ տրամաբանում, և՛ բոլորից խելացի է:

Նրան երբևէ մտրակ չէր դիպել: Նա հասկանում էր ամեն ինչ, և մենք կարծում էինք, որ Աֆրիկն էլ է ղեկավար: Պետություն էր կառուցում Աֆրիկը. հրամայում, հավաքում, բերում, աշխատանքի էր ուղարկում ժողովրդին, դաշտերն էր պահպանում, շրջկենտրոն գնում, փակ նամակ բերում ...

Ծամում էր լկամը, ֆռթացնում, և այդ ձայնը, որ դեռևս հեռվից էր լսվում, ահավոր տպավորություն էր գործում. վախ ու փորձանք էր հորդում: Եվ այսպես հանդիսավոր պայտած իշխանությունն էր գյուղ մտնում, անցնում փողոցներով՝ իշխանություն ու հնազանդություն սփռելով շուրջբոլորը: Աֆրիկը ժողովրդի մոտ, գյուղամիջում չէր հանգստանում. պտտվում էր իր առանցքի շուրջը, թափահարում էր բաշը, պտտում պոչը, գետինը քանդում սուր պայտով: Ձիավոր նախագահը իրեն լավ էր զգում և ձիու անհանգստությանը իբր նշանակություն չէր տալիս: Այդ պահերին Աֆրիկը նման էր մի դերասանի, ով անմնացորդ խաղում էր իր դերը և մի բան էլ ստեղծագործում: Մի բան էլ կար նրա այդ անդադրում լինելու մեջ. կարծում եմ՝ դժգոհ էր գյուղացիների աշխատանքի և՛ քանակից, և՛ որակից. բա ա՞յս տեմպերով ենք կոմունիզմ կառուցելու, կարծես ասում էր նա:

Այս կողմերում լավ չէր դասավորվել ձիերի ճակատագիրը: Աֆրիկը բացառություն էր: Նրանց օգտագործում էին ամեն տեղ. ձորից թաց քեղի էին հանում գյուղ սիլոսի համար, խոտ, ցորեն կամ ալյուր կրում: Ստրուկներ էին նրանք, իսկ մեր կոլխոզը սրտկատեր: Բոլոր ձիերի մեջքին մեկ կամ երկու խոշոր վերք կար, ինչը առաջանում էր ծանր բեռից. բեռը սեղմում էր թամբին, թամբը խրվում էր կաշվի մեջ, հարում էր ու վերջապես պատռում ու պոկում կաշին: Ու այդ վերքը երբեք չի փակվելու: Անխիղճ մարդն այդպես կվարվի այն կենդանու հետ, որը այսօր կրում է այն բեռը, որը մի քանի տարի առաջ ինքն էր կրում մեջքով ու նրա մեջքին էլ այդպիսի վերք կար: Ու ոչ-ոք չէր խղճում: Ի՞նչ խղճի մասին կարող էր խոսք լինել, երբ կոլխոզին սիլոս էր հարկավոր: Արդեն աշնանը գունաթափվում էին մեր գյուղի ձիերը. այնքան էին տանջվում, բեռի տակ կքում, որ զրկվում էին բնական գույնից ու դառնում անգույն, անլույս, անկենդան: Նույնիսկ արյունը այլևս չէր եռում նրանց երակներում ու երեկվա հզոր հովատակը չէր նկատում այլևս մատակին: Միայն ետ ու առաջ էին տանում մի տեսակ չորացած ու խոշորացած գլուխները, քշում վրա տվող ճանճերին ու մոծակներին: Հենց այդ պահին էր, որ փոքրիկները մոտենում էին ձիերին ու հարցնում.

- Ինձ կուտե՞ս ...

Ձիերը գլուխները առաջ ու ետ էին տանում, իսկ փոքրիները հրճվում էին.

- Տեսեք, տեսեք, ասում է՝ կուտեմ ...

- Իսկ ինձ ասել են, որ չեն ուտելու, - այն կողմից ավելացրեց մի փոքրիկ, որի քիթը շտապ մաքրել էր հարկավոր:

Չորացել ու խոշորացել էին մեր գյուղի ձիերի գլուխները: Այդպես չորացել ու խոշորացել էին նաև մարդկանց գլուխները, ովքեր իրենց ապրած կյանքում մի լավ օր չտեսան: Բեռը շրջվում էր ու սկսվում էր մարդու և ձիու երկխոսությունը, որի ընկալումը հեշտ է, իսկ վերապրելը՝ դժվար: Ձիով խոտ տեղափոխելը սովորական աշխատանք էր, և բոլորը գիտեին մեն-մենակ բեռնել ձիուն: Անփորձը ոչինչ անել չէր կարող: Դժվար աշխատանք էր: Երբ աշխատավորը ավարտում էր այդ աշխատանքը, ուղղակի քրտինքի մեջ կորում էր, իսկ առատ քրտինքը իրեն հետ վերնաշապիկի տակ էր տանում փոշի ու խազալ: Այդ գիշեր աշխատավորի կինը ամուսնու վրայից կառնի երեքնուկի ու ձիու խնձորի բույրը, ավելի կսիրի նրան ու չի ցանկանան, որ լույսը շուտ բացվի կամ թող իսկի չբացվի էլ ...

Բեռի շրջվելը կրկնակի անհաջողություն էր: Սպառվում էին ուժերը և դե արի ու նորից սկսիր ամեն ինչ: Ուղղակի տանջանք էր:

- Քո տիրոջ հերն անիծած, ախր քո տերն ի՞նչ էր, որ դու ինչ լինես: Արփոյի Արգամը ի՞նչ էր, որ իր ձին ինչ լինի: Գնացել էր թուրքի լողացող կնոջը գաղտնի մտիկ էր տվել: Թյո՜ւ, քո տիրոջ ... Դե կանգնի, կանգնի խոտը բարձեմ, քարի տակ կանգնի, որ հեշտ բարձեմ, քեզ համար էլ լավ կլինի: Երևի դու էլ ես ուզում թուրքի լողացող կնիկ տեսնես, ոնց որ քո տերը: Արգամն ի՞նչ էր ասում, լա՞վն էր թուրքի կնիկը, թե ..., ըհը՜, ստացվեց ... : Մեռա պրծա, տո քո էլ, թուրքի կնկա էլ ...

Իսկ Աֆրիկը ամեն տեղ էր: Վերահսկում էր ամեն ինչ և բոլորին:

Հին գոմերից մեկը նորոգում էին: Ստացվեց այնպես, որ մի քանի հոգի մի-մի փայտի կտոր էին վերցրել. կտանեին տուն, չէր խանգարի:

Հանկարծ որտեղից որտեղ երևաց Աֆրիկը՝ իր նախագահ Գևորգով: Բոլորը փախան, Ավետիս դայու Ժորիկը չհասցրեց: Աֆրիկը հասավ նրան, առավ վզատակին, իսկ նախագահը մտրակում էր խեղճ Ժորիկին: Էն ինչպես էր գոռում Ժորիկը, ինչպես էր աղաղակում, գրչով անհնար է նկարագրել. աղաղակում էր մի ամբողջ խեղված սերունդ: Աֆրիկի շնչով կոլխոզացված սերունդ էր, բոլորն էլ ստիպված կոլխոզով էին շնչում, գյուղի մի հատիկ խանութով, դպրոցով, գրասենյակով, ակումբ-գրադարանով, որ մենք լուսավորվում էինք: Իրական պատկերացում չկար այլ երկրների մասին. մի սովետ պետություն էր՝ Աֆրիկի ու նախագահ Գևորգի տեսքով, իսկ «թշնամի» ինչքան ասես, որ շարված էին սովետի սահմանին ու պատրաստ էին նենգորեն մտնելու «հողը մեր հայրենի»:

Բոլորս էլ շատ լավ գիտեինք Զոյա Կոսմոդեմյանսկայայի, Օլեգ Կոշևոյի մասին: Բանը հասել էր նրան, որ մեր գյուղացի խեղճուկրակ Օհան դայու Օլեգին էինք երանի տալիս ... Երանի մեր անունն էլ Օլեգ լիներ ...

Այն ժամանակ երիտասարդ գյուղում ոչ ոք չգիտեր, որ կյանքը կարճ է, ու վաղանցուկ են բոլոր դժվարություններն ու հաճույքները, կարծում էին, որ այս աֆրիկյան և բոլշևիկյան կարմիրը դեռևս շատ քիչ է ու շուտով մեր բոլոր սարերի ու բլուրների վրա կարմիր դրոշակներ են ծածանվելու, իսկ կարմիր առաջնորդի նկարները՝ նույնպես սարերի ու բլուրների վրա: Մեզ համար հաճելի էին նրա մանկական նկարները: Իմիջիայլոց, նա հետո բավականին տգեղացել էր: Տեսնես ի՞նչ էր պատահել: Ե՛վ կոմերիտական, և՛ հոկտեմբերիկի նշանների վրա կային մուգ կարմիրներ, կարմիր էր նաև տասանոցը, կարմիր էր նաև արյունը: Այս բոլորը այնքա՞ն Աֆրիկի գույնին էին, որ կարծես Աֆրիկն էլ այդ կրծքանշաններն ու տասանոց ռուբլին ուներ:

Մի փոքրիկ նստել էր առվակի եզրին ու փորձում էր ճանաչել այն իրականությունը, որի մեջ հայտնվել է ինքը: Մի ուրիշ փայլ է ստացել առվակի ջուրը, որովհետև նրա եզրին մի գույնզգույն թիթեռնիկ է թռվռում: Շշմել է փոքրիկը, երազում է. որ թիթեռը հպվի իրեն, իր մերկ ոտքերին նստի, կամ թիթեռնիկը իր ընկերը լինի, պտտվեն իրենց տան մոտ, հետո տուն կգնան: Ինքը սիրով կհպվի թիթեռնիկին ու բոլոր գույները իրենը կլինեն: «Երանի այդպես լիներ», - մտածում էր կիսատկլոր երեխան, որը երբեք խաղալիք չէր ունենալու: Դե ի՞նչ արած, խաղալիքի հերն էլ անիծած, գոնե մի շուն ունենար, որը կգնար իր հետևից ամեն տեղ ու լավ ընկեր կլիներ:

Մարդիկ ապրում էին մի կյանքով, որը կարծես բոլորովին նոր էր, բայց այդ նորի մեջ կար աֆրիկյան ինչ-որ խելագար խստություն, և այն դրսևորվում էր ամեն տեղ ու բոլորի մոտ: Մարդկային այս ահավոր խստությունն ու զարհուրելի աղքատությունը մխրճվել էին բոլորի ու ամեն ինչի մեջ, այդ թվում՝ կենդանիների: Աֆրիկի կողքին կային առաջավոր եզներ, որոնք ամենաշատ վարն էին անում՝ Սևիլն ու Բոչոն: Սրանք գյուղում ավելի մեծ պատիվ ու հարգանք ունեին, քան մի քանի կոլտնտեսական միասին վերցրած, քան այն երիտասարդը, որ մտածում էր մի օր վեր կենալ, թքել այս ամենի վրա ու թողնել գնալ մայրաքաղաքում սովորելու: Գրտնակն ու Բոչոն, երբ սայլին լծված անցնում էին գյուղամիջով, մենք նրանց զուգահեռ վազում էինք՝ ցուցադրելու մեր կիսատկլոր գոյությունը այս կոսմիկական ու դաժան ոտաբոբիկ դարում: Եթե մորքուրիս տղա կաղ Վարդգեսի ավել անունը եզ չլիներ, մենք հաստատ երազելու էին նաև եզ լինել՝ խնամված, ապահով ու կուշտ: Որոճ էինք անելու, թափահարելու էինք մեր գլուխն ու պոչը ու էլի որոճելու էինք: Դրանից էլ հաճելի ի՞նչ կար այս տիեզերական անհայտ դարում: Մենք էլ այս աշխարհից ոչինչ չէինք հասկանա. ոչ մի ցանկություն չէր լինի, կվազեինք Աֆրիկի առջևից ու ավելի լավ կլիներ: Իսկ Բայկանուրից արձակված տիեզերանավը կծակի օզոնի շերտը և երկիր թափանցող ուլտրամանուշակագույն ճառագայթները կհարվածեն մաճկալ Մուշեղի ու հոտաղ Համբոյի գլուխներին, ու առաջինը ինչ-որ տարօրինակ հարվածից մի օր կչոքի բացված ակոսի մեջ, հողի բուրմունք կառնի ու եզան տաք թրիքի հոտ:

Բլրի վրա կանգնած Աֆրիկը հասնում էր ամեն տեղ, հանդիպում նախիրներին, ոչխարի հոտին. հանկարծ մթերման թվերը փոքր չլինեն: Հայտնվում էր հնձվորի կողքին, կուշտ խոտ էր արածում և շարունակում ընթացքը դեպի կոլտնտեսության տրակտորները, որ վար էին անում ճիշտ ժամանակին: Արևի տակ վառվում էր Աֆրիկի մուգ կարմիր մաշկը, որը շատ էր նման մեր գյուղի հանդիսությունների դահլիճի մուգ կարմիր վարագույրին, որին երբեմն, իբր անզգուշաբար հպվում էինք մենք ու շատ հաճելի զգացում պարգևում ինքներս մեզ: Քանի որ մի շնորքով շոր էլ չունեինք, դե կարգին հագուստ չկար, գուցե կար, բայց մենք չունեինք, նախանձում էինք Աֆրիկին, որի խնամված մաշկը, հազվադեպ փայլը շլացնում էին մեզ, և մենք էլ էինք ցանկանում ձի լինել ու վառվռուն, փայլուն հագուստ ունենալ:

Գունաթափվում էին նաև մարդիկ, ովքեր շալակով սիլոս ու խոտ էին կրում, գերանդի, մանգաղ բանեցնում, մաճ բռնում, եզ լծում, հոտ ու նախիր պահում սարում: Նոր հագուստ կամ կոշիկ չէին հագնում: Լվացվում էին առանց օճառի, ու երբ իրենց զավակը, ծանոթը կամ բարեկամը Երևանից գյուղ էին գալիս, ձգտում էին աչքին չերևալ. այնքա՞ն ամոթ էր: Կամ էլ ձիով էին գալիս, որ երևանցին զարմանա: Աֆրիկը կալում ոսկեհատիկ գարի էր խմում, իսկ երևանցին նկատում էր, որ արդեն ուշ ամռանը Աբել քեռու աչքերի գույնը կանաչի էր խփում: Շրջապատի համընդհանուր կանաչն ու արևը խառնվել են իրար, շաղախվել, գույն դարձել ու մխրճվել Աբել քեռու աչքերի մեջ: Ամբողջ ձմեռը կբավարարի, որ Աբել քեռու աչքերի գույնը բաց ու խեղճ կանաչից գա հասնի ու առնի իր իսկական մոխրագույնը: Իսկ աչքերի կանաչի մեջ ինչքա՞ն խեղճություն ու խիղճ էր թաքնված, անհատակ թախիծ ու տխրություն:

- Ո՞նց ես, Աբե՛լ քեռի, - հարցնում էր երևանցի հյուրը:

- Եսիմ, սև հագներ իմ մերը ու ինձ չբերեր ...

- Ինչո՞ւ, Աբե՛լ քեռի ...

- Եսիմ ...

Էն կողմից մոտենում էր Աբել քեռու Վահանը, որը իր համադասարանցի պիոներ-կոմերիտականների հետ ամբողջ օրը խոտ էր գլորել դիմացի սարից: Պետք է հնձած խոտը պարանների միջոցով, սահեցնելով իջեցնեին մինչև հարթություն: Դժվար գործ էր, բայց Վահանի պետքը չէր. Հերմինե անունով աղջնակը հիացմունքով էր նայում իրեն, իսկ կե-

Դավիթ Հովհաննիսյան

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծնվել է 1985 թ. Սիսիանում: Սիսիանի թիվ 2 միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո սովորել է ՀՀ ոստիկանության ակադեմիայում, ապա ակադեմիայի մագիստրատուրայում:
2017 թ. հրատարակվել է նրա առաջին ստեղծագործությունը՝ «Քո մասին են պատմում ալիքները...» վիպակը:

Քո մասին են պատմում ալիքները...

Հատվածներ համանուն վիպակներից

Փողոցով անցնելիս նկատեցի, որ ինչ-որ ծերունի է ուզում անցնել ճանապարհը, սակայն բազմաթիվ մարդկանցից և ոչ ոք ուղեկցելու համար օգնության ձեռք չէր մեկնում, ավելին՝ արհամարհում ու անցնում էին նրա կողքով: Վազեցի նրա մոտ և առաջարկեցի իմ օգնությունը.

– Շնորհակա՛լ եմ, տղա՛ ջան, որ այս աշխարհում դեռ մնացե՛լ են քեզ պես մարդիկ, իսկ դու կօգնե՞ս անցնել նաև զուգահեռ փողոցը.

– Մե՜ծ սիրով, պապի՛կ ջան, միասին կանցնենք երկու փողոցով էլ, դու հանգի՛ստ եղիր:

Ծերունուն օգնելուց հետո, երբ ուզում էի հրաժեշտ տալ ու հեռանալ, նա թույլ չտվեց, ասաց, որ իր տունը շատ մոտ է գտնվում և ավելացրեց.

– Որդի՛ս, դու ինձ օգնեցիր այն ժամանակ և այն վայրում, երբ և որտեղ բոլոր մարդիկ ինձ արհամարհում ու անցնում էին, արի՛ իմ տուն, ես քեզ թեյ հյուրասիրեմ, նոր կգնաս:

– Կգա՛մ, պապիկ ջան, կգա՛մ, չե՛մ ցանկանա, քո կողմից սրտանց արված առաջարկը մերժելով, տխրեցնել քեզ, բացի այդ էլ՝ գնամ տուն ի՞նչ անեմ, հատկապես որ տրամադրություն էլ չունեմ...

Դրանից հետո մենք գնացինք նրա տուն ու պապիկը, որի անունը Դին էր, դաշտից հավաքած խոտաբույսերով պատրաստված թեյ հյուրասիրեց, և մենք սկսեցինք զրուցել:

– Սքանչելի՜ համ ունի, պարո՛ն Դին, շնորհակալությու՛ն հյուրասիրության համար, իսկ այժմ կուզենայի, որ մի քիչ պատմեք ձեր մասին:

– Պատմե՛մ տղաս, բայց մինչ պատմելս ասեմ, որ չգիտես ինչու և ինչպես, բայց ես անմիջապես զգա՛ցի, որ դու լա՛վ մարդ ես: Ցավոք՝ նույնը չէի կարող ասել մյուս բոլոր-բոլորի մասին, ովքեր արհամարհում ու անցնում էին: Լա՛վ, այդ ամենը հիշել էլ հարկավո՛ր չէ, իսկ այժմ՝ իմ մասին...

– Կինս մահացավ անցյալ տարի, նա տառապում էր անբուժելի հիվանդությամբ, իսկ երեխաներ չունեմ, ճակատագիրն այդպես կամեցավ...

Ապրում եմ միայնակ: Ամեն օր՝ նույն ժամին, մի քանի փողոց այն կողմ եմ անցնում ու պարոն Ջոնի տաղավարից գնում նրա պատրաստած համեղ բլիթներից և վերադառնում տուն, այդպես էլ անցնում է իմ ամեն մի օրը: Սակայն, երբ հետ եմ վերադառնում անցյալ և վերհիշում իմ երկրորդ կեսի հետ անցկացրած երջանիկ օրերը՝ կյանքս համարում եմ լիակատար սկզբունքով ապրած, չէ՞ որ փոխադարձ զգացմունքը, հաստատվելով յուրաքանչյուրիս ներաշխարհում և գիտակցյալ կյանքի ընթացքում ամրապնդվելով հիշողության ամենանուրբ անկյուններում՝ ուղեկցում է մեզ ամբողջ կյանքի ընթացքում...

– Ցավո՛ւմ եմ ձեր կնոջ կորստի համար, ամեն դեպքում՝ կյանքը դեռ շարունակվում է, պետք է առա՛ջ նայել:

– Է՜ տղա՛ս, եթե մարդ իր կյանքում երկրորդ կեսին ընտրում է սիրո աղեղի ստույգ հարվածով, ինչպես իմ պարագայում, ապա կյանքն այլևս իմաստ չունի՛առանց նրա:

Այդ խոսքերն ասելուց հետո ծերուկն արտասվեց և, ցանկանալով նրա՝ դեպի վշտի հորձանուտ տանող ճանապարհը շեղել, սկսեցի պատմել իմ պատմությունը.

– Ես էլ օրեր առաջ եմ մեր ավանից տեղափոխվել ուսում ստանալու, չնայած՝ ծնողներիս ու ծննդավայրս շատ եմ կարոտում: Հաճախ էի առանձնանում բոլորից, ժամերով նստում ծովի ափին ու նայում հեռո՜ւ-հեռու՝ դեպի անսահմանություն տանող ալիքներին, որոնք կարծես թե զգալով իմ ներկայությունը, հաճախ խաղ էին բռնում ոտքերիս հետ՝ յուրահատուկ զրուցընկերոջ կերպարանք ընդունելով:

– Տղա՛ս, իսկ, երբ ծովափին ժամերով նստում էիր, ալիքները խոսո՞ւմ էին քեզ հետ, – անսպասելի հարցրեց ծերունին.

– Իհարկե ո՛չ, պապի՛ կջան, ալիքները ազդում էին իմ տրամադրության վրա՝ բարձրացնելով այն, սակայն խոսե՞լ՝ ո՛չ, իհարկե՝անկախ ցանկալի զրուցընկերոջ կերպարանք ընդունող նրանց համառությունից, որը և նկատելի էր...

– Կգա՛ ժամանակը, և ալիքները կխոսե՞ն քեզ հետ...

– Աչքերն արտացոլում են մարդու ամբողջ ներաշխարհը, իսկ ես քո աչքերում տեսնում եմ սրտիդ անհանգիստ բաբախյունները, որոնք ամեն բան ասում են քո հոգեվիճակի մասին, միտքս շարունակեմ և ավելացնեմ, որ դու դառնալու ես շատ հանրահայտ մի մարդ, չնայած, որ այդ մասին դու անգամ չես էլ մտածում...նաև քո աչքերում ծվարած թախիծից հասկացա, դու սիրահարված ես, սակայն հոգիդ փոթորկի մեջ է գտնվում...

* * *

Մայքը երազից վեր թռավ: Արդեն առավոտ էր և տեղավորվելով ափին վեր խոյացող ժայռի ստորոտին, սպիտակ գինին ըմբոշխնելով, անցյալը վերհիշելուց հետո, դուրս եկավ հիշողությունների ճիրաններից, սակայն այլևս չցանկացավ իջնել ժայռից և պատրաստ էր հեռանալ մի անորոշ վայր, որի մասին ոչ ոք ոչինչ չի՜ ասել, չի՜ հիշել, չի ՛պատմել և որտեղ գնալով իրենից հետո պետք է թողներ միայն հիշողություններ, որոնք տիեզերքի անսահմանության մեջ տիեզերական ինչ-որ մարմնի տեսքով՝ պետք է անվերջ սավառնեն՝ անհասցե ու աննպատակ...

Փակեց աչքերը, կանգնեց ժայռի եզրին, ականջ դրեց ալիքներին, որոնք միաձայն պատմում էին նրա մասին: Շնչեց օվկիանոսից դեպի իրեն եկող սառը օդի կենարար չափաքանակները, ցատկեց անսահմանության խորհրդանիշ հրամցնող ալիքների գիրկը... Հաշված րոպեներ անց նրա հոգին իր նշանառության տակ վերցրեց անսահման տիեզերքը՝ փնտրելով իր միակին...

Նա այլևս չկարողացավ պատկերացնել իր կյանքի և ոչ մի վայրկյանն առանց իր սիրո, ում հետ յոթ տարի ապրած երջանիկ կյանքը, լիարժեք ժամանակահատված էր՝ կյանքը կայացած և ապրած համարելու համար...

Մինչ օրս էլ՝ տիեզերական անսահմանության մեջ, գերիշխում են բազմահազար անպատասխան հարցեր, որոնց պատասխանները անհասանելի են մարդ էակի համար: Մարդիկ գիտեն միայն այն, ինչը թույլատրելի ու հասանելի է իրենց գիտակցության համար, սակայն, երկիր մոլորակում իրենց գոյության տևողության ընթացքում, բոլորին տրված է հնարավորություն երջանիկ լինելու, ցավո՛ք, շատ քչերն են գնահատում այդ հնարավորությունը ի կատար չե՞ն ածում իրենց կյանքում, չէ՞ որ բոլորս էլ ժամանակավոր հյուր ենք այս մոլորակում, բոլորիս օրերն էլ հաշված են՝ ճակատագրի հաշվիչով: Միայն իսկական զգացմունքն է հասանելի դարձնում երջանկության դռները՝ դրանով իսկ հոգևոր զգացողությունները տարբերվում են... Ներաշխարհը, դա անսահման հարստության օջախ է, մնում է միայն կարողանա՛լ այն փոթորկել, իսկ հոգու փոթորիկը՝դա մի անբացատրելի հոգեվիճակի գրավականն է:

Երջանիկ են նրա՞նք, ովքեր հասնելով խոր ծերության տարիքին և թերթելով ապրած տարիներով ներառված կյանքի էջե՛րը, այնտեղ կգտնեն երջանկություն բառի իրական մարմնավորումը:

Պետք է արժևորե՛լ միմյանց հետ եղած ամե՞ն մի երջանիկ րոպեն և անգա՛մ ակնթարթը, որովհետև դրանք ժամանակավո՛ր են, ինչպ ես՝ մեր կյանքը...

Ծովը ալիքներին նվիրում է հմայք, թույլ է տալիս համբուրել քարափներին: Բայց դա էլ է մի պահ՝ ալիքները նորից հետ են գնում, իսկ քարերը մնում են ափին՝ սպասելո՛վ ալիքների նոր հանդիպմանը: Ծովը նման է տիեզերքին, մարդը՝ ալիքներին: Եվ, քանի ալիքը հասել է ափի քարերին, փարվել է նրանց, ապրում է երջանկության՝ իրեն բաժին ընկած ակնթարթը...

Ապրե՞նք մեր կյանքի բոլոր ակնթարթներն այնպե՛ս, որ ժամանակը մեզ անսահման թվա, չէ՞ որ երբեք չե՞նք կարող ետ տալ ժամանակը, այնպե՛ս, ինչպես անհնա՛ր է, որ նույն ալիքը նորից հասնի նու՛յն քարին, նու՛յն քարափին... ●

Կարծիք «Քո մասին են պատմում ալիքները...» վիպակի մասին

Նոր ժամանակներն իրենց հետ բերում են նոր անուններ...

Ժամանակակից հայ ստեղծագործողների մեջ իր ուրույն խոսքն ու ձեռագիրն ունի Դավիթ Հովհաննիսյանը:

Նրա «Քո մասին են պատմում ալիքները...» վիպակը սիրվեց ոչ միայն հայ, այլեւ օտարերկրյա ընթերցողների կողմից:

Վիպակում ծովային անձեռակերտ տեսարաններն ավելի պատկերավոր են դարձնում հեղինակի գրական խոսքը:

«Պետք է արժեւորել միմյանց հետ ապրած ամե՞ն մի րոպեն եւ անգամ՝ ակնթարթը, որովհետեւ դրանք ժամանակավոր են, ինչպես մեր կյանքը:

Ծովը ալիքներին նվիրում է հմայք, թույլ է տալիս համբուրել քարափներին:

Բայց դա էլ է մի պահ. ալիքները նորից հետ են գնում, իսկ քարերը մնում են ափին՝ սպասելով ալիքների հետ նոր հանդիպմանը:

Ծովը նման է տիեզերքին, մարդը՛ ալիքներին:

Եվ քանի ալիքը հասել է ափի քարերին, փարվել նրանց, ապրում է երջանկության իրեն բաժին հասած ակնթարթը...

Ապրե՞նք մեր կյանքի բոլոր ակնթարթներն այնպե՛ս, որ ժամանակը մեզ անսահման թվա, չէ որ երբեք չե՞նք կարող ետ տալ ժամանակը, այնպես, ինչպես անհնար է, որ նույն ալիքը նորից հասնի նու՛յն քարին, նու՛յն քարափին...»:

Հարցազրույցներց մեկում Դավիթ Հովհաննիսյանը նշում է, որ հաճախ է եղել գրախանութներում, հարցրել ամենաընթերցված սիրային պատմվածքների մասին, եւ ցավ է ապրել, որ հայ ընթերցողը նախապատվությունը տալիս է արտասահմանյան գրականությանը:

Այսօր «Քո մասին են պատմում ալիքները...» վիպակը հայ ընթերցողի գրասեղանին է:

Այն գրադարանների ամենաընթերցված վիպակն է դարձել ընթերցողների լայն շրջանակի համար:

ԽՈՆԱՐՀ ԳՐԻԳՈՐՅԱՆ

սօրին՝ հաց ուտելիս, իր կողքին էր նստում և ուտելիս գլուխը հետ էր պահում, որ ինքը չտեսնի, չնկատի: Մի անգամ իր բաց ձեռքը հպվեց Հերմինեի ձեռքին: Դող զգաց, գլուխը պտտվեց ինչ-որ երանությունից, և դողաց սիրտը: Տեսնես ո՞վ նկատեց: Ու Վահանը նկատեց, որ իր մեջ այնքան ուժ ու կորով կա, որ ամբողջ Ղուզեյ սարի խոտը կարող է մենակ վեր բերել, միայն թե ..., միայն թե...

Աֆրիկին գետում լողացնում էր միայն Վահանը, նա կարողանում էր համոզել, սիրել ու խնամել այս հազվադեպ գեղեցկությամբ, անկրկնելի կեցվածքով ձիուն: Բոլոր երեխաների երազանքն էր մի անգամ հեծնել Աֆրիկին, ու այլևս ոչինչ պետք չէր: Աֆրիկը տեր ու տիրական էր նաև սարերում, որտեղ գյուղի նախիրներն ու ոչխարի հոտերն էին պահվում: Այդ կողմերում ոչխար էին պահում նաև Ղարաբաղի կողմերից: Հայերի հետ կային նաև թուրքեր: Թուրքերը լավ ձի էին պահում, խնամում, նրանց ձիերն ավելի առողջ ու արագավազ էին: Միայն Աֆրիկն էր, որ խեղճացնում էր թուրքերի ձիերին և՛ իր ուժերով, և՛ արագությամբ: Հեռվից հասնում էր ու առջևի ոտքերով հզոր հարված էր հասցնում այդ ձիերին: Հարվածին չէին դիմանում ձիերը, կծում էր էգերի վզերը և չարչարում ողջ օրը:

Գյուղում եռուզեռ էր, կոլխոզը պետք է «Վիլիս» ստանար: Բոլորն սպասում էին, որ Սերոժի Գրիշը վիլիսը բերի: Ասում էին, որ սրանից հետո նախագահը վիլիսով պետք է ման գա, և ձոր իջնի և՛ սար գնա, և՛ շրջկենտրոնից փակ նամակ բերի:

Աֆրիկի մասին չէինք մտածել:

Երբ վիլիսը կանգնեցրին գյուղամիջում, նախագահ Գևորգը Աֆրիկից իջավ և նստեց վիլիսի առջևը: Փայլում էր մեքենան, փայլը խփում էր Աֆրիկի աչքերին և ստեղծում մի ինչ-որ անտարբերություն ձիու մեջ, որը կարծում էր, որ ուր որ է նախագահը կիջնի մեքենայից, ու իրենք էլի միասին կլինեն: Բայց այդպես չեղավ: Նախագահը այլևս չնայեց Աֆրիկին, որը հաջորդ օրվանից դարձել էր արդեն նախրապանի ձի. Վահանն էր հեծնում, մեկ-մեկ էլ՝ ուրիշները: Երբ Աֆրիկը առաջին անգամ գնաց նախրի հետևից, կարծես ծերացել էր: Նախկինում դա ոչ ոք չէր զգացել կամ նկատել: Աֆրիկին թվում էր՝ մնացած ձիերը չարախնդում են իրեն, ու ինքը կարծես ինչ-որ ամոթ էր անում, որ անում է նույն գործը, ինչ մնացած ձիերը: Այդ պահերին նա նման էր նախկին նախագահ Ակո դայուն, որը այժմ խոտերի դեզի պահակն է:

Վերջին անգամ, երբ Աֆրիկին տեսա, հեծնելուն պիտանի չէր. չորս ոտքից էլ հիվանդ էր, նրա քայլքը այնպես էր, որ կարծես վախենում էր դիպչել գետնին, ասում էին՝ ոտքերը սև ջուր է իջել: Զարմացա, երբ իմացա, որ սերունդ չէր թողել: Շուտով կմեռնի Աֆրիկը: Նրա հետ կմեռնի մի մեծ ու դաժան ժամանակաշրջան:

Գերեզման չի ունենա. ուղղակի այն տեղը, որտեղ նրա դիակը կնեխի, այդտեղ կանաչ խոտը մի տեսակ կարիմիրի կխփի, իսկ աճած ծաղիկները՝ միայն վայրի կարմիր կակաչներ:

●

Ավետիք Այվազյան

Կենսագրություն

Արձակագիր: Ծնվել է 1964 թ.: Սուրեն Այվազյանի որդին է: Ավարտել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտը (1994): Աշխատել է ՀՀ պետհեռուստատեսության մանկապատանեկան խմբագրության գլխավոր խմբագիր, 1995-ից՝ մշակութային խմբագրության գլխավոր խմբագիր: Այնուհետեւ տեղափոխվել է Ռուսաստանի Դաշնություն:

Պատերազմ գնալուց մի օր առաջ եւ հետո...

Հրայրին շատերն էին ճանաչում: Եթե չէին էլ ճանաչում, ապա, երբ տեսնում էին, զգում էին, որ էլի են տեսել: Ինքը՝ Հրայրը, դեմքեր չէր հիշում: Դեմքերն իր համար վերեւում էին ու ներքեւից ուրիշ տեսակ էին երեւում, մի տեսակ քթային էին տակից դեմքերը: Ճանաչողները սիրում էին Հրայրին, շատ էին սիրում, չճանաչողները՝ շուռ էին գալիս, տարուբերում գլուխները, անցնում: Դրանց Հրայրը չէր ատում, ուղղակի չէր սիրում՝ միշտ զգում էր նրանց շուռ գալը ու խղճահար հայացքները. իր ընկերների մոտ Հրայրն ասում էր՝ մեքենաս լավը չի, մոտոր չունի, ես էս գիտության մայրիկը... Ասում էր «մայրիկը» ու կանգնում: Սիրում էին ընկերները Հրայրին ոչ խղճալուց, Հրայրի՞ն էին սիրում, ինչպես որ կա՝ առանց ոտքերի, միշտ իրենց ծնկներից, իր «մեքենային» ձուլված: Հրայրը ընկերների մոտ ասում էր, - բա մոտոր չունենայի՞, էս մայթերով մի գյամած անցնեի՝ մարդիկ զարմանային, ու ընկերները ծիծաղում էին, ինքն էլ հետները, ամենաբարձր:

Հրայրի ծիծաղը շատ էին սիրում ընկերները: Իր վիճակի հետ հաշտվել էր (կամ ո՞վ գիտե), որ պետք է մարդկանց ծնկներից լինի ու դեմքերն այնպես չտեսնի, ինչպես կան: Հրայրը հաշտվել էր:

Բայց մկանների հետ, իր ձեռքերի բարակության հետ ոչ մի կերպ չհամապատասխանող մկանների հետ չէր հաշտվում եւ երբեք նրան կարճաթեւ շապիկով չէիր տեսնի, բայց իր երկարաթեւ շապիկի տակից էլ մկաններն իրեն տանջում էին, մանավանդ «մեքենան» ուժ տալիս՝ ահավոր ուռչում էին այդ մկանները: Մեկ-մեկ խմում էր Հրայրը, ու ընկերներն այդ օրը վիճում էին: Բոլորն էլ ուզում էին նրան իրենց տուն տանել ու անպայման վեճ էր առաջանում, իսկ նա Սմբատին էր միշտ ընտրում, Սմբատինը մի սենյականոց էր, ինքն էլ մեջը մենակ ու տխուր էր: Ուրիշ ոչ մի առիթով Հրայրին ուրիշի տանը գիշերելու չէիր տանի՝ օգնություն չէր սիրում: Իրեն միայն գիշերը բարձրացնում էին երրորդ հարկ (երրորդ հարկում էր ապրում, որ առավոտյան իջեցնեն ու այդքանը՝ ուրիշ ոչինչ չէր ընդունում, նույնիսկ՝ ամենամոտիկներից: Բայց դե հո միշտ այդպես չի եղել Հրայրը: Ոտքեր ունեցել է՝ պատերազմից առաջ: Պատերազմից առաջ Հրայրին չեն հիշում, հիշում են պատերազմից հետո՝ առանց ոտքերի՝ մեքենայով: Պատերազմի մասին նրա ներկայությամբ չեն խոսում, ինքը՝ խուսափում է: Ասում էին շատ շքանշաններ ունի, ի՞նչ իմանաս, ինքը չի խոսում: Ինքն ասում է.

- Սմբատ, քիթդ մի կախիր, լավ կլինի, կտեսնես, ինքն ասում է՝ մեքենաս ռեմոնտի կանգնացնելու է, փռթփռթում է մեքենաս:

Ուրախություն է անուրախ Հրայրը, հույս է անհույս Հրայրը: Միայն մկանները... Մայթերով անցնելիս ուրիշ է ու ասես Հրայրը չէ, ջղաձգված-մկանաձգված է: Մարմինն առաջ, ձեռքերն առաջ, հենվում է ասֆալտին, ուժ տալիս, ձեռքերը ետ, ինքն՝ առաջ, ու այդպես այստեղ-այնտեղ լարված, ջղաձգված: Դա միայն շարժման ժամանակ, հերիք է միայն մեկն ասի՝ բարի օր, Հրայրի ժպիտը բերանից սկսվում, ամբողջ դեմքով տարածվում է ու դա արդեն Հրայրն է:

Իր երրորդ հարկում դժվար է ապրել: Հեշտ է ասել դժվար է, բայց ոչինչ... Իր երկրորդ հարկում ապրում է մի կին՝ Լուսիկը: Տարօրինակ է՝ Լուսիկը սիրում է Հրայրին, տարօրինակ է՝ մերժվում է՝ տարօրինակ է՝ տանջվում է, տարօրինակ է՝ գեղեցիկ է Լուսիկը, տարօրինակ է՝ քչերը գիտեն այդ մասին: Այդ մասին Հրայրը չի խոսում, բայց եթե մեկը կա, որի օգնությունը չի նեղում իրեն, դա Լուսիկն է: Իսկ Լուսիկը... Լուսիկը մի անգամ նստել էր կողքին, նայել էր աչքերի մեջ, դողացող ձեռքը դրել էր Հրայրի գլխին, իր մատներով սանրել մազերը, նայել էր աչքերի մեջ, հետո ավելի էր մոտեցել, նայել էր աչքերի մեջ, Հրայրը ժպտացել էր, ասել էր՝ հիմար դրության մեջ ինձ մի դիր, Լուսիկ, ու Լուսիկը լաց էր եղել:

Փողոցում միշտ էլ իր մեջ վախը եղել է:

Միշտ էլ պատկերացրել է, թե դա ոնց կլինի ու փողոցում երբեք հանգիստ չի լինի:

- Հրայր. – կասի նա: Ավելի ճիշտ ոչ թե կասի, այլ կճչա: Իր ցածրությունից նա կնայի վեր, կտեսնի նրա սարսափած աչքերը ու դրանից այնկողմ չի պատկերացնում, միայն մինչեւ այդ:

Գիտի, որ դա իրեն կսպանի ու վախենում է այդպես սպանվելուց: Ասում է (մտքում)՝ Աստված, խղճա ինձ, թող իմ մեքենայով նա ինձ չտեսնի:

- Հրա՛յր:

Աստված չխղճաց:

- Հրա՛յր:

Ոչ:

- Հրա՛յր:

Սըըըս:

- Հրայր:

Իր շարժումները փախչելու նման է, ճանապարհն էլ դիք է՝ դժվար է: Մարմինն ու ձեռքերն առաջ, մկանները ձգվում են, առաջ է սողում, իսկ կինը հասնում, ընկնում է առաջը ու աչքերը ճիշտ այնպես են, ինչպես պատկերացրել է:

- Հրա՛յր:

- Սխալվել եք տիկին, ի՞նչ Հրայր:

- Դու ես Հրայր:

- Չէ, քույրիկ, սխալվել ես:

Ու նորից նույն շարժումները, նույն սողալը, այս անգամ ասես գետնի տակով, բայց կինն այս անգամ մնում է իր տեղում, իսկ ինքն առաջը չի տեսնում՝ մթնել է, ինքն իր մեջքին զգում է սարսափած, խելակորույս, հեռացող նրա հայացքը: Հետո մի անկյունում, մի խուլ տեղում կանգնում է, հեւում, թուլացած ձեռքերը շարժում, ասես ստուգելու համար, թե այսուհետեւ կաշխատե՞ն, թե՞ ոչ, նայում է այդ կոշտացած, մկանոտ ձեռքերին ու խուլ լաց լինում, ականջին՝ Հրա՛յր, Հրա՛յր, Հրա՛յր:

* * *

Նիհար աղջիկը քայլում էր, ամեն խմբի մոտ կանգնում, նայում էր ու ամենահետաքրքիրը նրա նայելն էր: Նայում էր մի խմբի, ժպտում ու արցունքը, մի հատիկ արցունքն իջնում էր ներքեւ, տեղ-տեղ կանգնելով ու մինչեւ հասնում էր ներս ընկած այտին, կաթիլ չէր, այլ թաց գիծ՝ արցունքի հետագիծ: Աղջիկը քայլում էր ու ամենահետաքրքիր, գեղեցիկ, բարակ ոտքերն էին, անմկան ու թեթեւ հարվածից փշրվող թվացող այդ ոտքերը: Աղջիկը ձգվում էր թաթերի վրա ու ավելի նիհարում, բայց ի՞նչ սովորույթ է, անընդհատ ձգվում է թաթերի վրա, անհասկանալի է ու հետաքրքիր: Նիհար աղջիկն ամեն կողմ նայում էր ու Հրայրը ստիպված հաճախ թաքնվում էր: Իզուր իրեն չէր նկատել: Անասելի աղմուկ էր՝ լաց, ծիծաղ, դհոլի դմփոց, աղմուկի մեջ միակ լռությունը նիհար աղջիկն էր ու դա հետաքրքիր էր: Ասես եկել էր մեկին փնտրելու, ու մոռացել էր, ասես եկել էր քաղաքին ճանապարհելու, ասես, դիտմամբ մտավ ամբոխի մեջ ու Հրայրը վախեցավ ամբոխի մեջ կորցնել նրան: Հետո թե՛ ամբոխը, թե՛ բախտը, թե՛ ուղղակի հանկարծակի ստացվեց բերե՛ց-բերե՛ց նիհարին ու իրեն մոտեցրեց: Հրայրը մոտիկից տեսավ նիհար աղջկան, իսկ նա նայում էր ամեն կողմ, բացի իրենից: Ինքը եւ նա մի ակնթարթ նույնիսկ հպվեցին իրար, Հրայրը բռնեց նրա ձեռքը, քաշեց ու դուրս բերեց ամբոխի միջից:

- Ո՞ւր եք քաշում ինձ, թողեք, - բարկացավ աղջիկը, բայց այդպես չեն բարկանում, այդպես նա է բարկանում:

Հրայրը թողեց նրա ձեռքը, կանգնեց առջեւը՝ լռեց: Ուզեց հեռանալ՝ տեսավ ինքը՝ աղջիկը, արդեն հեռվում է, հասավ կանգնեց առաջը ու բառ չգտավ: Հետո նորից նույնը:

- Սպասիր, - հասավ ու վերջապես խոսեց Հրայրը:

- Ի՞նչ, - չհասկացավ այդ նիհարը:

- Մի գնա, խնդրում եմ:

- Ի՞նչ, - էլի չհասկացավ:

- Դու մի գնա, սպասիր ու ես կասեմ, - ձայնը խզվեց ու իր հազալը զզվելի ու անհարմար թվաց:

- Վաղը ես էլ եմ մեկնում, եթե դու ինձ չգաս ճանապարհես, եթե չգաս՝ կզոհվեմ հենց առաջին մարտում:

- Ի՞նչ իմանար, որ այդպես... ում մտքով կանցներ:

Նիհար աղջկա դեմքը այլայլվեց, նույնիսկ մի քիչ տգեղացավ: Նա մատը տարավ բերանը, երեւի կծեց, մատը դողաց բերանում, ձգվեց թաթերի վրա, նայեց: Ու նայելն էր: Ի՞նչ իմանար, որ այդպես կազդի իր անհամ կատակը, իր չգտած բառերի փոխարեն ասված կատակը: Ուզեց ներողություն խնդրել, բայց հարցրեց.

- Անունդ ի՞նչ է:

- Քնարիկ:

- Նիհարիկ, քո անունը Նիհարիկ է:

- Լավ, համաձայնեց աղջիկը:

- Գիտես ինչ, Նիհարիկ, բոլորին ճանապարհում են, վաղն իմ մեկնելու հերթն է ու ինձ ոչ ոք չի ճանապարհելու, - Հրայրը քայլեց, Նիհարիկը նույնպես, - երբ քեզ տեսա, ասես վաղուց ռազմաճակատում լինեի, քեզնից նամակ չկա ու չկա: Ես սպասում եմ, իսկ նամակ չկա: Գրիր ինձ, Նիհարիկ, ես չեմ սպանվի, հավատա չեմ սպանվի...

Հեռվում, շատ հեռվում է պատերազմը ու պետք է շատ գնալ նրան հասնելու համար: Ու թվում է, կարող է գնաս՝ չհասնես, կարող է գնաս, իմանաս սուտ է, կամ արդեն վերջացել է: Պատերազմը հեռվում է, շատ հեռվում, բայց եկել հասել է այս պատերազմից հեռու քաղաքը, մտել մարդկանց դեմքերի մեջ ու դարձրել պատերազմող դեմքեր: Պատերազմ կա եւ այս դպրոց չգնացած երեխաների մեջ, որ խումբ-խումբ վազում են, որ կողմ պատահի: Աղմուկի մեջ է պատերազմը ու հեռվում մնացած զուռնայի ձայնը պատերազմի գործիքի ձայն է, ստեղծվել է, որ առիթի դեպքում նրա տակ որդի, ամուսին, եղբայր ճանապարհեն: Այդ աղմուկի մեջ միակ լռությունը նիհար աղջիկն է, բայց պատերազմ կա նաեւ այդ լռության մեջ:

- Սա մեր տունն է, - ասում է Նիհարիկը ու ձեռքով ցույց տալիս երեք հարկանի մի շենք:

- Ճանապարհելո՞ւ ես, - հարցնում է Հրայրը:

- Վա՞ղը:

- Վաղը, այս ժամին, սպասե՞մ:

- Սպասիր:

- Կգա՞ս:

- Կգամ:

- Չգիտես ինչու Հրայրը չէր հավատում, բայց նա եկավ: Եկավ, բարձրացավ թաթերի վրա, իջավ ու ասաց.

- Բարեւ:

Հրայրը բռնեց նրա ձեռքից ու քայլեցին քաղաքով: Ու լռությունը չվիրավորեց Նիհարիկին, երեւի հասկացել էր, որ ինքը չի ուզում ոչ խոսել, ոչ լսել՝ ուզում է քայլել, քայլել, գնալ, կորչել, բայց կորչել չի կարելի, ուրեմն կորչել չի ուզում, ուզում է ինչքան հնարավոր է երկար քայլել, նրա կողքին լինել: Այնտեղ, որտեղ երկար են կանգնում, Նիհարիկը հասկանում է, որ այդ տեղին հրաժեշտ են տալիս, որ այդ տեղի հետ ինչ-որ հուշ է կապված: Հրայրը զարմանում է ու չի զարմանում՝ ոնց է իրեն հասկանում: Հենց ինքն իրեն ասում՝ ես քեզ սիրում եմ ու կապրեմ, իր մեջ ասում է՝ ես քեզ գտել եմ՝ դու իմն ես, ասում է ու լսում՝ դու ինձ գտել ես՝ ես քոնն եմ ու դու կապրես, ասում է՝ լուռ լսում է՝ լուռ, լուռ տխրում է: Հետո էլի նայում է Նիհարիկին ու էլի զարմանում՝ լալիս էր: Չի հավատում, ինքն իրեն ասում է՝ մի՞թե այսպես լինում է, լսում է՝ լինում է, լինում է: Հրայրը չի ասում՝ լաց մի լինիր, երբ կվերադառնա, Նիհարիկը չի ասում՝ ես քեզ կսպասեմ: Քայլում են:

Մի անգամից ստացվեց, իր համար էլ անսպասելի:

- Արի հենց այստեղ բաժանվենք, - ասաց Հրայրը:

- Ինչո՞ւ, - զարմացավ Նիհարիկը:

- Չեմ ուզում քեզ կայարանում տեսնել, - ասաց ու զգաց, որ չի կարողանալու բացատրել, - ուզում եմ քեզ վերջին անգամ այստեղ տեսնել ու այսպես հիշել:

Ու հասկացավ, որ նրան ոչինչ բացատրել պետք չէ, նրան պետք է ասել ու նա կհասկանա: Այտը փափուկ չէր, ոսկրոտ ու չոր էր, տաք էր ու ասես միշտ համբուրել էր, ասես Նիհարիկը համբույրից հետո միշտ այդպես ժպտացել էր ու իրեն միշտ դուր էր եկել այդ համբուրված ժպիտը:

Մի քանի քայլ արդեն հեռացել ու շուռ էր եկել, որովհետեւ լսել էր.

- Անունդ, անունդ ի՞նչ է:

- Հրայր:

- Որոշել էր դուրս չնայել: Ուրիշների լացերը ինքը չէր տանում, որոշել էր դուրս չնայել: Գնացքը շարժեց ու որոշումը դիմացավ մինչեւ գնացքի շարժվելը: Դրսի ամբոխի մեջ միայն մի ակնթարթ երեւաց Նիհարիկի գլուխը ու կորավ: Երեւի կանգնել էր թաթերի վրա: Հետո լաց լինող, գոռացող, ձեռքով անող ամբոխը մնաց հեռվում:

Այն, որ վաղուց լաց չէր եղել ու հիմա աչքերն արցունքոտ են, Հրայրին չզարմացրեց, չզարմացրեց գոռալու ցանկությունը, չզարմացրեց հենց այդպես գլորվելով նրան հասնելու, տակը կանգնելու, ներքեւից վերեւ նայելու, ներողություն խնդրելու ցանկությունը:

Դուրս եկավ անմարդ անկյունից:

Անձրեւ էր եկել ու ասֆալտի փոս ընկած տեղերը ջրով լցրել: Թաց ասֆալտով «մեքենան քշելը» դժվար էր, բայց լավ էր, որ անձրեւ էր եկել, փողոցում քիչ մարդ կար ու անձրեւը իր հետ հով էր բերել: ●

Վարդգես Խանոյան



Կենսագրություն

Ծնվել է 1949 թվականին Վայոց ձոր մարզի Շատին գյուղում: Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 1970 թվականից բնակվում է Ջերմուկ քաղաքում: Երկար տարիներ աշխատել է առողջարաններում:
Հրատարակել է բանաստեղծությունների հետևյալ ժողովածուները. «Արևի ձայն», 1984թ. (գրական ալմանախ), «Հրաշալի քաղաքացին», 1989 թ., «Քաջերը մահ չունեն», 1995թ., «Թախծի ծառ», 2012թ., «Արևի ճանապարհով», 2014թ.: Բանաստեղծությունները գրվել են հայրենի բնաշխարհի, մարդկային հույզերի ու ապրումների տպավորություններով: «Քաջերը մահ չունեն» գրքույկն Արցախյան պատերազմում Ջերմուկի համայնքից նահատակվածներին է ներկայացնում՝ անուն առ անուն, լուսանկարներով ու համառոտ կենսագրականով: Վերջին գրքում ամփոփված բանաստեղծություններն ու առակները հասցեագրված են փոքրիկ ընթերցողներին, նրանց սովորեցնում են լավ ճանաչել շրջակա աշխարհը, սիրել բնությունը ու լուսավոր հետքեր թողնել կյանքի ճանապարհին:
ՀԳՄ անդամ է:
2016 թվականին նրա և գրող, հրապարակախոս Լյուդվիգ Կարապետյանի համահեղինակությամբ լույս է տեսել «Լուսավոր հետագիծ» գիրքը «Ջերմուկ աշխարհ» առողջարանի երկարամյա ղեկավար բժիշկ Ստեփան Ավագյանի մասին:
Հանդիսանում է ՀԳՄ Վայոց ձորի բաժանմունքի նախագահ:
2020թ. տպագրվել է «Հայրենյաց զինվորներ» գիրքը, որը նվիրված է Արցախյան պատերազմում զոհված երկու եղբայրների հիշատակին: 2021թ. գիրքն արժանացել է ՀՀ պաշտպանության նախարարության և ՀԳՄ մրցանակին:

Մուրոյի մասին ցավալի մի հուշ

1

Մուրոն գիժ չէր,
Մուրոն միայն
բարձրահասակ էր բարձր մարդուց մի քիչ ավելի,
բարակ մարդուց մի քիչ բարակ:

Մուրոն գիժ չէր,
Մուրոն միայն,
երբ ամենքը լռում էին,
հանկարծ մի դեպք էր հիշում
և լուռ ժպտում էր Մուրոն:

Մուրոն մտքում
իր նման մի Մուրո էր հորինում,
նստեցնում էր իր դիմաց
և լուռ խոսում էր իր հետ՝
իր նման Մուրոյի հետ:

Ու երբ հիշում էր Մուրոն,
որ ոչինչ չունի,
մի երկու գրկաչափ
թևերը պարզում,
ինքն իրեն ասում էր.
- Էսքանն իմն է,
Էսքանն իմն է...

2

Մի օր թաղեցիք տարան Մուրոյին,
և ամբողջ օրն իր մեջքի վրա
հող կրեց Մուրոն,
և ամբողջ օրն իր կրծքի վրա
լո՜ւռ, անտրտո՜ւնջ,
իրե՛ն կրեց Մուրոն:

Կեսգիշերին երկու բաժակ
թունդ օղի տվեցին,
և առաջին անգամ խմեց
ու լուռ հարբեց Մուրոն,
և առաջին անգամ որոշեց
ողջ գիշեր քայլել
անքուն:

3

Քայլեց այդ գիշեր Մուրոն մինչև առավոտ,
մինչև առավոտ իր բարակ ոտքերին
լուռ, անտրտունջ
տարավ երջանիկ Մուրոյին այնքան,
մինչև էլ ուժ չուներ տանելու հոգնած
մարմինը Մուրոյի,
և ընկավ Մուրոն,
քունքը առավ քարին,
արնոտեց քարը...

Երկու զինվորներ
պատահական գտան իրենց շինելներում,
առանց դագաղի,
հողին հանձնեցին Մուրոյին:

4

Մի երկու շաբաթ անց միայն
թաղում իմացան,
որ մեռել
ու թաղվել է Մուրոն:

Մի նրբատախտակի
կտոր գտան, կցեցին հողին
ու գրեցին վրան. «Էսքանն իմն է...ՄՈՒՐՈՆ»:

5

Մուրոն գիժ չէր,
Մուրոն լավ գիտեր,
որ աշխարհում, ինչ էլ լինի,
Էդքան հող, մեկ է,
կհասնի իրեն...

Ջերմուկի գարունը

Ջրվեժի ճիչը դառնում է երգ,
Եվ փրփրում է Արփա գետը,
Եվ ծիածանով ծաղիկների
Ջգվում է գարնան արահետը:

Եվ ժպիտներից իմ զմրուխտե
Անրջում են լուռ աղբյուրները...
Անտառը լցնում են անմարելի
Կանաչ քրքիջով թռչունները:

Գարնան բույրերին խառնվելով՝
Հանքաջրերն են շատրվանում,
Եվ ձորը մտած հովերը տաք
Ծաղկի բույրով են ազնվանում:

Ժայռերի վրա ժանիքավոր
Օրը դնում մամռոտ խալեր,
Եվ գարունացած երազներս
Թռչում են անվերջ սարերն ի վեր...

Աշուն

Ծառերը դառնում են գիշերային գունավոր քաղաք՝
թարթող տերևների թափվող
լապտերներով:
Հավատարմությունից տառապող
թռչուններին
թվում է՝ ապրում են ծառերի երկնաքերների մեջ,
կախովի այգիներում,
առանց արմատի ծառին՝
ուղղաթիռի մեջ:

Ասֆալտե մայթերը ծածկել են հողի դեմքը ծառերից,
ծառը մայթերին թևավոր տերևներ է ուղարկում,
ստուգում արմատների բնակատեղը,
այնուհետև ծառը ավելի պիտի տրտնջա հոդացավերից,
այնուհետև արմատները ստիպված են հարմարվելու
նկուղային կյանքին:

Այնուհետև մշուշը պիտի ծածկի ճյուղերը,
Ինչպես արմատը ծածկված է հողով,
մայթով, տերևով,
թացությամբ:
Թացությունը՝ մշուշ, սառնություն և սեր,
թացությունը՝ աշնան ցանց ու հոդացավ, -
աշո՜ւն, այժմ դու ես դառնում կյանքի կենտրոնը,
քո շո՜ւրջն են խմբվում բոլոր մարդիկ,
պտտվում, ինչպես ներկած կառուսելում,
ինչպես գինետներում՝ խմում մշուշ, երազ,
թացություն և սպասում:

Երկրագունդը արևից հեռանում է ավելի ու ավելի,
մարդիկ ավելի ու ավելի են սիրում իրենց գունդը,
ուր ամեն մեկը մի փոքրիկ տուն ունի,
ուր իրենք իրենց ոգևորում են մի կերպ,
թեև ոչնչով չեն տարբերվում
իրենց ապրելակերպը գտած թռչուններից...

Վերհուշ

Վերջին դողոցով բարդին օրորեց
Կատարը դալար,
Լռեց սոսափը, զարթնեց Արփայի
Երգը միալար:

Իմ Վայոց հողի տաք ու ոսկեծամ
Աշունն է նորից,
Հուշեր են պատմում իմ պատանության
Հեռավոր ձորից...

Հայաստան

Իմ մտածումների հեռու կանչերից
թերթում եմ ահա
մագաղաթներդ՝
արցունքներիս շարված բազմակետերով՝
կույրի այբուբենով...
Ու շարժվում են վրան մատներիս ծայրերը,
աչքերիս մեջ, սակայն, արևը...
Գուցե կետ-այբուբեն չէ,
այլ տառերիդ սրտազարկերը...

Քեզ համար

Ես հոգնեցի լռությունից քարերի,
Ես հոգնեցի ինքս ինձնից մինչև իսկ,
Ես փնտրեցի ինչ-որ մի ձայն
Ժայռերի մեջ ամայի...
Ու ոչ մի ձայն,
Միայն կանչիս արձագանքը լսեցի,
Ու լացեցի, լացեցի
Քեզ համար...

Վ. Խանոյանի պոեզիային անդրադարձած հեղինակների գրախոսություններից

Վերջերս Ջերմուկի առողջարանում էր մեր գործընկեր, գրչակից Մելս Հարությունյանը. վերադարձին նա ասաց.«Մոտիկից ծանոթացա ու նաև բարեկամացա բանաստեղծ Վարդգես Խանոյանի հետ: Հաճելի էր տեսնել, որ մարդը զգում է իրեն երկրի տերը և միաժամանակ ծառան: Բարևում էր բոլորին և սպասում»: Քանի որ սպասում էր, գնացինք երեքով՝ գրականագետներ Դավիթ Գասպարյանը, Վահագն Սարգսյանը և ես: Վերադարձին Վահագն Սարգսյանն ասաց. «Զարմանալի մարդ է Վարդգեսը»: Իսկ ես ասում եմ. «Վարդգես Խանոյանը զարմանալի բանաստեղծ է»: Ի դեպ, բանաստեղծի մեծն ու փոքրը չկա: Ինչպես որ ոսկին ոսկի է՝ լինի մեծ կամ փոքր կտոր, այնպես էլ բանաստեղծը բանաստեղծ է: Կարևորը սեփական ձեռագիր ունենալն է և այն աչքը, որի միջոցով տեսնում է մարդը: Վարդգես Խանոյանը, հիրավի, իր լեռնաշխարհում, այսպես ասած, ներսում մնացողներից է, դեպի ներս նայողներից՝ լինի բնություն, լինի մարդ: Իսկ ներսում հոգին է, աստվածային: Վարդգեսի բառերն էլ ներսից գալով, դեպի ներս են գնում: Ամեն ինչի մեջ ինքը կա՝ ժայռի ու ժայռաբեկորի, ծառ ու թփի, լճակի ու աղբյուրի...

Ինքն այդ ամենի մասն է: Այդ ամենը մարմինն են նրա՝ շնչող ու կենսունակ էությամբ: Մարդկային հարաբերությունների առումով, սիրում, կարեկցում, ընկերանում է բոլորին, բայց բանաստեղծությամբ առավել կապված է կոտրված սրտերի հետ: Նրա հոգին շարունակ հոգի է փնտրում, այնպիսի մի հոգի, որն այս աշխարհից չէ, այսինքն՝ առանձնանում է շատերից, ինչպես, ասենք, իր տեսած Մուրոն, մարմնավոր մարդու աչքին գիժ թվացող Մուրոն ...

Ի դեպ, Վարդգեսն այս Մուրոյին իր մեջ շարունակ կրում, հետը խոսում ու նաև վկայում է. «Մուրոն գիժ չէր»:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՆԱԹԱՆ
ԴԵԿՏԵՄԲԵՐ 2019Թ.

Հայկուշ Օհանյան

Կենսագրություն

Ծնվել է 1958 թ. մայիսի 6-ին Սյունյաց աշխարհի Գորիս քաղաքում: Ավարտել է Երեւանի Վ. Բրյուսովի անվան ռուսաց եւ օտար լեզուների ինստիտուտի ֆրանսերեն ֆակուլտետը: Նրա բանաստեղծությունների առաջին շարքը լույս է տեսել «Զանգեզուր» թերթի գրական էջում: «Պիոներ կանչ» թերթում տպագրվել են նրա՝ ֆրանսերենից կատարած թարգմանությունները: Նրա առաջին գիրքը՝ «Եզերքը», տպագրվել է 1995 թ., երկրորդը՝ «Ծաղկանողի փերին» հեքիաթների գիրքը՝ 1996-ին, «Սրտիս ձայն» գիրքը՝ 1997-ին, «Անմահ հրեշտակներ» հեքիաթների գիրքը՝ 1999-ին, « Հույսի ծառերը կխոսեն դարերում» գիրքը, ձոնված Արցախյան ազատամարտի հերոսներին՝ 2000-ին: 2002-ին լույս է տեսել « Լուսե հեքիաթներ» գիրքը: 2005-ին լույս է տեսել «Ձերմակ աղավնիներ գիրքը: Հ. Օհանյանը մամուլում հրատարակել է բազմաթիվ հոդվածներ: 2010-ին վերահրատարակվել է նրա «Լուսե հեքիաթներ» գիրքը՝ թարգմանված ֆրանսերեն եւ հայերեն: 2011-ին լույս է տեսել «Գանձասարի Մանուշակը» գիրքը: 2012-ին Մշակույթի նախարարության աջակցությամբ լույս է տեսել «Սյունյաց աշխարհի թագավորությունը» գունազարդ տպագրությամբ գիրքը:

Հազարամյակների ափերի մեջ հինավուրց լեռնաշխարհում ապրելիս են լինում հայեր, որոնք օրնիբուն, մեղվի ջանասիրությամբ շենացնում են շքեղ այգիների մեջ ծվարած իրենց բնակավայրերը: Օրերից մեկ օր լեռնաշխարհում զարհուրելի արհավիրք է լինում: Քոչվոր թուրքերը ասպատակությունների են ենթարկում ամբողջ լեռնաշխարհը: Կոտորում են անզեն հայերին եւ փորձում տիրանալ ամբողջ տարածքին: Բարձրացած թոհ ու բոհի մեջ մի թուրք ձիավոր, նկատելով հայ մանչուկի գեղեցկությունը, խնայում է նրան եւ անմիջապես թաքցնում խոտերի մեջ: Հետո իրիկնաժամին, պարկի մեջ կապելով երեխային, դնում է ձիու թամբին, հեծնում այն եւ սլանում դեպի իր ավանը: Տուն հասնելուն պես պարկը դնում է մառանում, իր խանումին ու երկու աղջիկներին ներկայացնում է սլացիկ հասակով, գանգրահեր մանչին:

-Երեխայի անունն է Ավանես: Այսօրվանից նա մեր որդին է, ձեր եղբայրը: Փայփայեք նրան հարազատի պես: Բայց եթե փորձեք վիրավորել նրան, երդվում եմ, թուրս չի խնայի ոչ մեկիդ կյանքը: Առանց այն էլ որբուկի սիրտը ճաք է տվել հազար տեղից:

Անցնում են տարիներ: Տարիների հետ առնականանում եւ ավելի է գեղեցկանում Ավանեսը: Նա ոչինչ չի խնայում Ավանեսի համար: Նրան տանում է հին Հայաստանի Գողթան գավառի գրի ու գրչության մշակների մեծահամբավ Ագուլիս քաղաքը: Իր ջանասիրությամբ Ավանեսը ձեռք է բերում գիտելիքների հարուստ պաշար: Նրան մեծարողների միջավայրն ընդլայնվում է: Կրթությունը շարունակում է Եվրոպայում: Այնուհետեւ վերադառնում է Ագուլիս եւ նշանակվում Ագուլիսի տերն ու տնօրենը:

Մի օր էլ երախտագիտությամբ, պեսպես ընծաներով Տեր Ավանեսն այցելում է իր բարերարին: Իսային հայրաբար նրա պատվին կազմակերպում է մի մեծ խնջույք: Տեր Ավանեսը իր վարպետներին պատվիրում է վերանորոգել Իսայու կացարանը: Սակայն Տեր Ավանեսի շնորհները չեն ուրախացնում Իսայուն: Նա նկատում է, որ Տեր Ավանեսը օրեցօր մռայլվում է եւ սակավախոս է դառնում: Իսային մեկնում է եվրոպական երկրներ: Երկար փնտրելուց հետո իր անչափ սիրելի Ավանեսի ճաշակին համապատասխան բարձրաստիճան մի հայ ընտանիքից օրիորդ է բերում, որն իր հմայքով գերում է Ավանեսին : Յոթ օր յոթ գիշեր հարսանիք են անում: Մեծապատիվ հարսնացուն Տեր Ավանեսին նվիրում է սիրունատես հայ մանչուկներ, սակայն վերջինս դարձյալ մռայլվում է ու մռայլվում:

- Խոսիր, Ավանես, ի՞նչ է ուզածդ, -անհանգստանում է Իսային, -Ժողովուրդը քեզ փառաբանում է: Կինդ որպես արեւ ջերմացնում է օջախիդ բոլոր անկյունները, իսկ դու շարունակում ես մռայլվել: Ես տառապում եմ քո տառապանքով:

Թախծոտ աչքերով տեր Ավանեսը կրծքին է սեղմում իր բարերարին.

- Ես շնորհապարտ եմ քեզ, իմ Իսայի: Դու փրկեցիր իմ մատղաշ կյանքը, բայց ես երազում եմ այն երկիրը, որտեղ ծնվել եմ:

Իսային առանց երկմտելու, վերցնում է տեր Ավանեսին եւ տանում այն լեռնաշխարհը, ուր միայն ավերակներ էին: Ավանեսին կանգնեցնում է կիսավեր պատի մոտ, որտեղ տեսել էր մանչուկին: Պատի տակ անօթեւան մեղուները մեղրահաց էին թխել: Ջարդված փեթակները, հնամենի բակը հիշեցնում են Ավանեսին իր մանկությունը, իր ծնողներին, որոնք թուրքերի վայրագությունից սարսափահար դես ու դեն վազվզելով, փեշերի տակ թաքցնում էին իրենց զավակներին: Վանելով հոգու ցավը՝ հայրենի եզերքի շենացման համար տեր Ավանեսը Ագուլիսից հրավիրում է անվանի ճարտարապետների, շնորհալի վարպետների: Շինարարների պատվին ընթրիքի համար նա խոհարարներին պատվիրում է հրապարակի թոնրում գառներ խորովել: Ընթրիքի ընթացքում սուրհանդակը հայտնում է, որ թուրքերը ձիերին հեծած, զենք ու զրահով շրջապատել են հրապարակը եւ պահանջում են առաջնորդին: Տեր Ավանեսը ճաշակելով մի խորոված գառ, առասպելական հսկայի նման ոտքի է ելնում, զենք ու զրահ կապում, ամրացնում արծաթե քամարը եւ դուրս գալիս, կանգնում հրապարակում: Ծնողների վրեժը սրտում, զայրույթից դեմքը կաս կարմիր կտրած, հպարտ կանգնում է թուրք փաշայի դիմաց: Պայման են կապում, որ երկուսով կռվեն առանց զենքի, եւ ով հաղթի, նա է տերը տարածքի: Երկու ախոյան զինաթափվում են ու կանգնում իրար դեմ հանդիման: Տեր Ավանեսը մի ձեռքը կանթելով արծաթե գոտուն, մյուս ձեռքով ճարպկորեն գետնից պոկելով թուրք աժդահային, թափահարում է օդում եւ ուժգին զարկում քարերին: Հետո կիսամեռ թուրքի գլուխը կախում է թոնրից ու խանձում: Այնուհետեւ շարունակում է խանձել եւս չորս թուրքի գլուխ: Ախոյանը լեղապատառ թողնում է հրապարակն ու փախչում: Այնժամ Տեր Ավանեսը հրամայում է վարպետներին դեպի երկինք վեր խոյացող սյուներ տնկել Սիսիանի, Գորիսի, Կապանի, Քաջարանի, Մեղրու, Արցախ աշխարհի ամբողջ երկայնքով: Կառուցում են բնակարաններ, վանքեր, գործատներ, որբատներ, դպրոցներ, կամուրջներ եւ ամբողջ տարածքն անվանում են Սյունյաց աշխարհ: Բնակլիմայական պայմանների հետեւանքով մի շարք հեղեղումներով Ագուլիսը ենթարկվում է բազմաթիվ ավերումների: Լեռներից խուժող անձրեւաջրերի շռնդալից հոսքի հետ խոշոր ժայռաբեկորները տակնուվրա են անում ամեն ինչ: Մարդիկ խեղդամահ էին լինում: Տեր Ավանեսը անօթեւան ագուլեսցիներին բնակեցնում է իր սրբավայր Սյունյաց աշխարհում, իսկ նրանք հայրենասեր սյունեցիների հետ անսասան են պահում հայոց դարպասները: ●

Սյունյաց աշխարհի թագավորությունը

Գրականագիտական կարծիք

Հունաստանաբնակ հայր Հակոբը 1947թ. հայրենադարձվելով Հայաստան՝ իր հետ բերել էր հայ բազմադարյա արվեստի արմատները: Գորիսյան ոսկեգույն արեւի շողերի եւ զուլալ անձրեւների ներքո ծիլ են արձակել արմատները եւ արմատներից ծնվել է բանաստեղծ, արձակագիր, մանկագիր Հայկուշ Օհանյանը: Նրա ստեղծագործական բույրը վաղ հասակից հմայել է իրեն շրջապատող մարդկանց: Այսօր նա ապրում եւ ստեղծագործում է Երեւանում: Նրա հեղինակած գրքերը վաղուց բռնել են ընթերցողի հուզաշխարհի հետ հարազատություն պահող ոսկե երակը: Նրանցից շատերն արդի մանկագրության փայլուն էջերից են եւ արժանացել են բարձր գնահատության: Հայկուշ Օհանյանի գրական աշխարհն ուրիշ մի որակ ունի, որ խոսում է ոչ միայն ներաշխարհային առատ հուզապրումների գեղեցկության, խոհական-զգայական սեւեռումների կարեւորության, այլեւ ստեղծագործական ակնհայտ շնորհի եւ օժտվածության մասին: Նրա բանաստեղծական աշխարհի արահետներին չնաշխարհիկ ծաղիկներ կան, իսկապես ապրող ու շնչող ծաղիկներ: Երբ բացվում է հոգուդ ծաղիկը, ծաղկաբույրից խենթացած հաճախ ես քայլելիս զգում, որ ոտքերդ գետնից վեր են: Այդ պահերին է, որ գրողը ծաղկող է դառնում եւ գիր ծաղիկներ շաղում գրքի էջերին: Բառի, պատկերի խորհուրդն իր ողջ չափումով ընկալող բանաստեղծ է Հայկուշ Օհանյանը: Նրա պոեզիան իր իսկ լուսավոր, գեղապաշտ ու արվեստասեր հոգու հայելին է: Ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ ներկայացնում ենք նրա «Տարագիրները» շարքից «Հայի զորեղ արմատները» գիրքը:

ԼԻԼԻԹ ԹՈՒՆՅԱՆ
«ՄԻՐՀԱՎ» ԳՐԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ
Ա. ԲԱԿՈՒՆՑԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ

Կամո Ալեքսանյան (Կամո Արաքս)



Կենսագրություն

Ծնվել է 1962 թվականին Քաջարան քաղաքում: Ավարտել է Ագարակի Ե.Չարենցի անվան միջնակարգ դպրոցը:
1984-89 թթ. սովորել եւ ավարտել է ԵՊՀ աշխարհագրության ֆակուլտետը:
2005 թվականից աշխարհագրական գիտությունների թեկնածու է, 2012 թ.՝ դոցենտ:
Այժմ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դասախոս է:
Հեղինակ է 10 գրքի, 45 գիտական և մեթոդական աշխատանքների, մոտ 300 գիտահանրամատչելի հոդվածների, լուրերի, ակնարկների, գրախոսությունների, վերլուծությունների, խաչբառերի, էտյուդների և 200 բանաստեղծության:

Ագարակը

Գեղեցիկ է Ագարակը
Արաքսածին Արեգակը,
Սյունիքի նուրբ սրտի զարկը,
Լեռնաւորոփ զարկերակը:

Գեղեցիկ է Ագարակը
Մեգ լեռների հույս - երակը,
Լեռնալանջի լույս - կրակը,
Լեռնաթարթիչ նշե ակը:

Գեղեցիկ է Ագարակը
Լեռնածվար իմ պուրակը,
Ամպեր ունի մուգ կապուտակ
Ու հանքերն են անհատակ...

Գեղեցիկ է Ագարակը
Լեռնապատված ապարանքը,
Լեռնածին այգի է - պերճանք
Հյութեղ մրգերով քաղցրաճաք:

Գեղեցիկ է Ագարակը
Զանգ - լեռների նուրբ լեզվակը,
Իմ կարոտի հոլովակը
Լեռնապատկեր իմ քաղաքը:
Գեղեցիկ է Ագարակը
Լեռնաճաճանչ իմ քաղաքը,
Լեռնակակաչ է միայնակ
Մեր արծվաբույն լեռների տակ:

Իմ Մեղրին

Իմ Մեղրին գողտրիկ ժայռոտ ու քարոտ է,
Ծերպերում ծվարած մի բուռ կարոտ է,
Իմ Մեղրին անուշ շողոտ - շաղոտ է՝
Իր թզի նման ծորուն ու մեղրոտ է:
Իմ Մեղրին արևի անսպառ աղբյուր է,

Ժայռերին փարված ոսկեզօծ հուր է,
Իմ Մեղրին քնքուշ արևի բույր է,
Արևից շիկնած սիրո համբույր է:
Իմ Մեղրին ճախրող քարեղեև կարապ է,
Արաքսին թիկնած մի բուռ քարափ է,
Իմ Մեղրին փոքրիկ փրկության մի ափ է,
Աստծո սրտի չափ մեծ ու անափ է...

Ինչ հրաշք է փոքրիկ Մեղրին

1.
Մեղրին փոքրիկ, գեղանի՝
Արևաշող-ծիրանի.
Լեռնածվար քարափ է մի՝
Ձորերի մեջ ամեհի...
2.
Թուզ ունի նուրբ-մեղրածոր,
Արքայական ալ խնձոր.
Դեղձի չիր ու ալանի
Եվ սերկևիլ հոլանի:
3.
Ընտիր խաղող կարմրադեղին,
Բալ ու կեռաս տեղը տեղին,
Անգամ նորույթ՝ չքնաղ կիվի,
Որ համն ունի մեր արևի:
4.
Նուռը ճաքած, կարմրան,
Արեւի տակ հուրհրան,
Մեղրագետով դեպի վեր
Տարածվում է լանջերն ի վեր:
5.
Անուշաբույր, համեղ նուշ.
Հյութեղ ծիրան դեղնաթուշ,
Գետնին թափվող քաղցր թութ
Ու ծորացող մրգահյութ:
6.
Բերքից քաղցր ունի գինի
«Արևիկ» ու «Նեկտարենի»,
Գինեբույր են, բայց ավելի
Աղջիկները իմ հայրենի...
7.
Բաղացսարի հայացքի տակ
Մեղրին փոքրիկ մի հրեշտակ.
Հողակտոր աստվածային
Սահմանի մոտ հարավային:
8.
Բազմած խրոխտ ժայռերին՝
Ամրոցներով կուռ ու հին.
Ջերմորեն ու կաթոգին
Գուրգուրում է Արաքսին:
9.
Ինչ հրա՜շք է փոքրիկ Մեղրին
Արնաո ու ոսկեդեղին.
Նրան պահպան արևածին՝
Եկեղեցին Աստվածածին...

Գորիսը

1
Գորիսը ճախրանք է քարե՝
Քարի մեջ քնքուշ քնար է,
Երգող քարերի մի լար է,
Քարե բուրգերի շուրջպար է:
2
Գորիսը՝ քարե երգեհոն,
Քարի հրճվանք ու քարի տոն,
Քարերի ծերպերում զգոն՝
Ծիկրակող մասրենի ու հոն:
3
Գորիսը քարե քանքար է՝
Գրքի պես խոսող մի քար է,
Քարի մեջ մտքի պայքար է,
Պայքարից ծնված տաճար է:
4
Գորիսը թագն է Սյունիքի
Ճակատին քարեր են ոսկի,
Ամենուր բուրմունք է ուրցի
Եվ տաղն է բուրում Բակունցի:
5
Գորիսը Գուսան Աշոտի
Սիրո մրմունոն է կարոտի,
Ում Սերը վանքում
Տաթևի Աստծո հետ է թեւ-թևի...
6
Գորիսը հառնում է ձորից՝
Բարձրանում քարերով նորից,
Եվ ինչպես քարե մի նշխար
Կերտում է քարաշունչ աշխարհ:
7
Քարե տներ, քարե կամար,
Քարեր ամուր, քարեր՝ համառ,
Ամեն մարդու սրտի համար
Երգ են ասում ձմեռ-ամառ:
8
Իրար կողքի և քար, և ծառ,
Եվ սեգ ժայռեր, և թավ անտառ,
Կանչող միրհավ, երգող ծիծառ
Ու գորիսյան գույներ պայծառ:

9
Չքնաղ Գորիս իմ քարաբույր,
Քարե ժպիտ, քարե համբույր,
Իմ քարե Սեր՝ ոչ քարացած
Դարերի մեջ հավերժացած...

ՄԵՂՐՈՒՀԻՆԵՐ...

Մեղրուհիներ իմ նոնաբույր,
Սիրակարոտ ու սևաթույր,
Սրտերից Ձեր արևաբույր
Ճառագում են կրակ ու հուր:
Մեղրածոր են Ձեր շուրթերը,
Ծիրանավառ նուրբ այտերը,
Դեղձափայլ են Ձեր ունքերը,
Ինչպես վարդի վառ թերթերը:
Մեղրին փոքրիկ մի քարափ է,
Ամեն մեկդ մի կարապ է,
Ձեր Սերը մեծ ու անափ է՝
Համբույրների վեհ տարափ է:
Մեղրուհիներ իմ քնքուշ,
Աչքեր ունեք ինչպես նուշ,
Սլացիկ եք ու նրբին,
Ձերմացնում եք ոնց արփին...

Ներսես Աղաբեկյան



Կենսագրություն

Ծնվել է 1958 թ. մայիսի 9-ին Մեղրու շրջանի Լեհվազ գյուղում: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտ (ճարտարագիտական համալսարան), ստացել ինժեներ-մեխանիկի մասնագիտություն: Ուսմանը զուգընթաց սովորել է նաեւ նույն ինստիտուտի հասարակական մասնագիտությունների ֆակուլտետում՝ ստանալով լրագրողի որակավորում: Ունի տպագրված երեք բանաստեղծական գիրք:

Իմ լեռներում

Արեւը դանդաղ բարձրանում է վեր,
Լեռներն են կանչում իրիկնահացի,
Քամին բերում է դաղձ-ուրցի բույրեր,
Նստած են, ահա, մերոնք զրույցի:
Այգին է զարթնում ամռան խոր նիրհից,
Լսվում են ջրի կարկաչները պարզ:
Այնքան խաղաղ է օրը թվում ինձ,
Ասես խառնակ չէ ժամանակը այս:
Այստեղ է ծաղկել սերս առաջին,
Ես հար կսիրեմ աչքերը նրա:
Հայրիկիս ձայնն է դեռ իմ ականջին,
Ասես տուն կգա մթնով իրիկվա:
Ուր որ է՝ վերում կծաղկեն ամռան
Աստղերը խոնարհ ու լուսինը ջինջ:
Թող իմ հուշերում նրանք հար մնան,
Էլ ես աշխարհից չեմ ուզում ոչինչ:

Եկեղեցում

Աղոթող կույսը հրաշք է ասես,
Դեռ կոկոն լանջին՝ լուսաշող մի խաչ:
Աստվա՛ծ իմ, որքան անկատար եմ ես
Այդ գեղեցկության տաճարի առաջ:
Աղոթում է նա, ու հայում եմ ես,
Ես էլ եմ դառնում թունդ հավատացյալ:
Եվ աստվածներն են վերեւից կարծես
Ինձ մոտ սահեցնում, խենթացնում
դարձյալ:
Մոտենում եմ ու մոմ տալիս նրան,
Ոչինչ չի ասում, ժպտում է միայն:
Ասես նայում եմ ես բացվող նռան,
Ասես աղջիկն է երգում մեղմաձայն...
Ուրիշ աշխարհ է, հավատի ճախրանք,
Լուսաշող խաչ է ու ճերմակ աղջիկ,
Աչքերում խորունկ՝ լուսավոր զարմանք,
Նռան բուրմունք է ու ժպիտ մի ջինջ...
Աղջիկն այդ ճերմակ հրաշք էր ասես,
Դեռ կոկոն լանջին՝ լուսաշող մի խաչ:
Աստվա՜ծ իմ, որքան անուժ էի ես
Այդ գեղեցկության տաճարի առաջ:

* * *

Հոգնել եմ ես այս կյանքի խաղերից,
Ես կյանք եմ ուզում առանց խաղերի:
Կրծում են հոգիս առնետները պիղծ՝
Ելած գարշելի հետնախորշերից:
Իբրեւ քիչ է, որ կարճ կյանք է տրված,
Այն էլ չես կարող ուզածով ապրել:
Թե ինչ է մեր այդ ճակատին գրված,
Չես կարող երբեք, երբեք վերծանել:
Հոգնել եմ կյանքի խաղերից այս սուտ,
Հեռացրեք ինձնից առնետներին այդ,
Հերիք է ինչքան ապրեցի դրսում,
Գոնե մի քիչ էլ ապրեմ իմ ներսում:

* * *

Դեռ այսքան խորունկ չէի զգացել,
Որ մենակ եմ ես սեփական տան մեջ.
Մենության սառը դռները բացել,
Նայում եմ հոգուս խորքերը անվերջ...
Գյուղական մաքուր երկնքով տարված
Մարդու համար ի՜նչ դժվար է լինում
Ապրելը այնտեղ, ուր ընդմիշտ գերված
Փուչ հոգիներն են մութ փողեր շինում...
Խմբեր շահամոլ, երթեր ու կռիվ-
Սա է պատկերը հեռու ու մոտիկ:
Ամենուր ձգված հերթերում խռիվ
Չես գտնի մեկին՝ նուրբ ու պոետիկ:
Մտած փողի տակ՝ վերեւ են ձգվում,
Ներքեւում արդեն ծանոթներ չկան,
Տեղի-անտեղի իրար են գովում,
Սակայն չեն դառնում երբեք բարեկամ:
Սով է... Կուշտերն էլ հոգով են սովում,
Ո՞վ պետք է նայի ինձ նման մեկին.
Թեքում եմ ճամփաս եւ այգուս հովում
Գինի խմում ու միանում երգիս...
Երանի մի օր ոգին թեւածեր
Հազար սով տեսած իմ Հայաստանում:
Էս սովն էլ անցներ, ու ես՝ թեկուզ ծեր,
Հացի նստեի իմ լի բոստանում:

Բանաստեղծի հավատամքը

Կամո Ալեքսանյանը մեր մայր կրթօջախի շուրջ հարյուրամյա գրական-մշակութային ավանդույթները շարունակողներից մեկն է, որի գողտրիկ բանաստեղծություններն արդեն ավելի քան երեք տասնամյակ է, ինչ տպագրվում են մամուլում, գրական-գեղարվեստական ժողովածուներում, հանդեսներում ու իրենց վրա բևեռում ընթերցողների ուշադրությունը:

Նա հինավուրց Արևիք գավառից, որի սահմանները ողողվում են մայր Արաքսի կենարար ջրերով: Այստեղից էլ ծագել է մեր բանաստեղծի գրական անունը Կամո Արաքս:

Չնայած ընդունվել է աշխարհագրության ֆակուլտետ, բայց դեռ մանկուց մեծ սեր ու հակում է ունեցել մայրենի լեզվի ու գրականության նկատմամբ: Ուստի նա մայր կրթօջախում միաժամանակ սովորել է նաև Հասարակական մասնագիտությունների ֆակուլտետում՝ ստանալով լրագրողի երկրորդ և միջազգայնագետի երրորդ մասնագիտությունները:

Կամո Արաքսի մեջ մեծ է սերը մեր գրական մեծությունների հանդեպ, ինչն էլ նրան մղել է դեպի գրականություն և դարձրել բանաստեղծ: Նրա առաջին բանաստեղծությունները «Երևանի համալսարան» թերթում տպագրվել են դեռ ուսանողական տարիներին: Հետագայում նրա բանաստեղծությունները տպագրվել են նաև «Գրական համալսարան» տարեգրքի հերթական հատորներում, «Միհր» հայ-պարսկական մշակութային հանդեսում, Սյունիքի գրողների «Հրաշեկ լեռներ» ժողովածուում և տարբեր թերթերում:

Կամո Արաքսի բանաստեղծությունները կապված են Զանգեզուր լեռնաշխարհի հետ, պատկերում են այդ կուսական երկրամասի վեհությունը, նրա ժողովրդի իղձերն ու մտահոգությունը: Նրա քնարը հայրենասիրական է, նրան շատ է հուզում մեր հայրենիքի ճակատագիրը:

Կամո Արաքսի բանաստեղծությունները թեմատիկ առումով հիմնականում բաժանվում են երեք խմբի՝ հայրենասիրական, խոհափիլիսոփայական և սիրային:

Կարելի է ներկայացնել Կամո Արաքսի խորհրդանշական ժողովածուի շարքերը: Սակայն մեզ թվում է, որ դրա կարիքը չկա, քանի որ նրա պարզ ու վճիտ բանաստեղծությունները հասկանալի են բոլորին:

ՎԱՀԱՆ ՄԱՂԱԼՅԱՆ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ, ԲԱՆԱՍՏԵՂԾ ԵՎ ԼՐԱԳՐՈՂ

Ներսես Աղաբեկյանի բանաստեղծությունների մասին

Հաճելի զգացողություն ես ապրում, երբ հանդիպում ես ինքնատիպ բանաստեղծի: Ներսես Աղաբեկյանի լավագույն ստեղծագործություններն ինքնաբուխ են, անպաճույճ, չպարտադրող: Բանաստեղծը գիտի, թե ինչ է ասում, ինչու եւ ինչպես է ասում.

Ես մշտապես հեռացա հովիտներից
պարզ ու ջինջ,
Սակայն թաքուն մի հայացք դրոշմվել է
իմ մեջքին...
Մանուշակի փնջերով կապուտաչյա
մի աղջիկ
Ինձ է նայում անդադար պատանության
դաշտերից:

Նրա խոսքը բնական է, առինքնող, զգացողությունները՝ համամարդկային: Ունի տաք սիրտ, մեծ սեր մարդու եւ աշխարհի նկատմամբ, ունի ափսոսանք, ցավ ու ամենակարեւորը՝ լավատեսություն:

Ուրախ եմ, որ Մեղրու շրջանի Լեհվազ գյուղում ապրում է մի բանաստեղծ, ով աշխարհին իր գյուղի, իր տան շեմից արարչագործի աչքերով է նայում աշխարհին...

Լեւոն Սահակյան

ԲԱՆԱՍՏԵՂԾ, ՀԳՄ ՍՅՈՒՆԻՔԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՆԱԽԱԳԱՀ

Վարդան Սարգսյան

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծնվել է 1963 թվականին՝ Գորիսում:
1985 թ. ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը:
Ծառայել է բանակում: Զորացրվելուց հետո զբաղվել է ուսուցչությամբ:
Այնուհետև դասախոսել է Գորիսի «Տաթև» համալսարանում և Երևանի կինոյի և թատրոնի պետական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղում:
2001-2005 թթ. աշխատել է որպես Գորիսի մշակույթի կենտրոնի և «Գրադարանա-թանգարանային համակարգ» համայնքային հիմնարկի տնօրեն:
2007-2011 թթ. զբաղեցրել է Գորիսի թիվ 1 ավագ դպրոցի դաստիարակչության գծով փոխտնօրենի պաշտոնը:
2005-ից ցայսօր Գորիսի երկրագիտական թանգարանի գիտաշխատող է, 2011 թվականից հանդիսանում է Ա. Բակունցի տուն-թանգարանի վարիչը:
Ամուսնացած է, ունի երկու որդի և չորս թոռ:

Կյանքի ու մահվան սայրաբերան կածանին

Օրը պաղ էր, ցողառատ: Երկինքը՝ պարզ ու շողուն: Մեքենայով իջնում էի վար՝ քաղաքամեջ: Անտառափեշի հյուրատնից ներքև՝ ճամփեզրին, սևուլունք մեծ դժնիկենու տակ հանգչող մասրենու մոտ կանգնած էր չորուկ մի ծերունի: Կանգ առա: Հայացքով ու գլխի թեթև շարժումով առաջարկեցի նստել: Շրթունքներին թույլ ժպիտ խաղաց: Մոտեցավ, աչքաթարթով քաղաքավարի բարևեց իջնող կողապակու բացվածքից, բացեց դուռը և նստեց լռիկ: Դեմքն առինքնող էր, հագուստը՝ համեստ, բայց՝ կոկիկ: Մարդը մունջ թվաց և չհանդգնեցի բարբառել: Նա էլ չխոսեց: Մոտ երկու կիլոմետր անխոս գնալուց հետո շուկայի մոտ խոսեց. խնդրեց կանգ առնել: Սիրտս ջերմացավ ու մինչ կվանեի հույզս, արագ բացեց դուռն ու ասաց.

– Աստված աղերսանքդ կատարի: Չսպասելով պատասխանի՝ իջավ, հանգիստ փակեց դուռը և կողանց հեռացավ: Անցան ամիսներ: Օրերի հավերժական չուն ինչպես շատերին, եղբորս ընտանիքն էլ, ծվատ թևին առած, նետեց հեռուները: Եվ որպես կարոտ, ցիրուցանեց (ցայժմ պապիս մեղմանուշ ձայնն ականջիս մեջ է. «Որդի՛ս, կարոտը դարման չունի, նրա ահից չքանում է երջանկությունը, այն հոգու խոշտանգիչն է և ուղեկիցը պանդուխտի»):

Սկզբից եղբայրս գնաց: Հետո ճամփեցինք կնոջը՝ վեցամյա դստեր և ութամյա որդու հետ: Հայրս տառապում էր, հատկապես թոռների կարոտից. խոնավ աչքերն ինչպե՞ս սքողեր: Անցավ երկու տարի: Ամռան սկիզբն էր: Մի օր հայրս ընդառաջ ելավ անսովոր ուրախ և շտապով վրա տվեց:

– Ախպերդ կնոջն ու երեխաներին ուղարկում է: Վաղը կեսօրին պիտի օդանավակայանում լինես: Քշու՛մ, գնում ես, դիմավորում, վերցնում, գալիս, -կարգադրեց անառարկելի տոնով: Նա մոռացել էր, որ չէի կարող մեքենան վարել: Դեռ մեկ ամիս էլ չէր անցել, որ հինգ տարվա մեջ երկորդ անգամ սրտի վիրահատությունից հետո կրծքավանդակս կրկին կարկատած էր: Առավոտ կանուխ վեր կացա ու տաքսիով մեկնեցի մայրաքաղաք: Այս անգամ ծանոթ ճանապարհը շատ երկար թվաց: Դար ու փոս հազիվ հաղթահարող տառապյալ մեքենայի ընթացքի պես ծուլորեն հոսում էր ժամանակը, իսկ երբ դեմ էր առնում ասֆալատակարկատ բանվորախմբին, թվում էր՝ գլանամեքենայի ահից սրտի թույլ տրոփով կանգ էր առնում: Վարորդը երիտասարդ էր՝ զուսպ ու քաղաքավարի: Քունքից վեր պարզորոշ նկատելի էր գանգոսկրի կոտրվածքի նկում: Վարում էր հմտորեն ու զգույշ, դարանաշատ ուղղուց անողորմ դաս առածի պես: Ետին նստատեղի ուղևորը երիտասարդ կին էր՝ քնաթաթախ երկու երեխաների հետ: Երբ հաղթահարեցինք լեռնանցքը և անցանք արևմտահայաց կողմն ու ճամփեզրի ժիր առվակների պես սուրում էինք վար, որպես սպասված զանգակածայն, հնչեց մանչուկի բաղձալից խոսքը. – Մա՛մ, էսօր հասնելու ե՞նք պապայի մոտ:

– Հա, տղա՛ս, անպայման, -հուսավառեց բարեկիրթ ձայնը:

– Բա Ռուսաստանը մոտիկ է՞, հեռու չէ՞:

– Սամալյոտով մոտիկ է, ես գիտեմ, – քաղցրաձայն խոսեց աղջնակը:

Հիշեցի առաքելությունս, և փոթորկվեց ներաշխարհս: Մաքրամաքուր մանկական խոհը, որպես հրեղեն կայծակ, շաչեց հոգումս, փայլատակեց ու չքացավ: Արցունքաբեր դղիրդը սեղմեց կոկորդս ու խեղդվեց այնտեղ, որպես փայլակի հեռավոր շառաչ: Ճիգով սանձեցի հույզերս:

Հասանք Վայոց ձոր:

– Արագի՛լ, արագի՛լ, -գրեթե միաժամանակ ճչացին երեխաները՝ տեսնելով հեռագրասյան վրա հովվի մորթե գդակի պես բազմած բների տերերին՝ մեծ ու փոքր:

– Էլ չեն չվում, գիտե՞ք, ձմռանը հարմարվել են, -արձագանքեց վարորդը:

– Չվելն ի՞նչ է, մա՛մ:

– Էն, որ գնում են ուրիշ երկրներ, -աղջիկս:

– Մենք էլ ենք չվու՞մ, ինչ է, -զարմացած հարցրեց փոքրիկը: Երիտասարդ կնոջ աչքերում արցունքներ հայտնվեցին և ծանրորեն սևաթույր շավիղ գծելով՝ սահեցին այտն ի վար:

– Վա՛յ, վա՛յ, -բազմանշանակ հոգոց նետեց ուրբաթախոս վարորդը: Ոգու խռովքից ոստնած մայրական բնազդը քնքշորեն ու ջերմագին փարվեց մանուկներին ու մատնեց խաղաղ քնի, իսկ ինքը մնաց կկոցուն ու լուռ: Բոլորս համրացանք:

Սպասասրահի պատուհանից երևաց հռնդոցով վայրէջքի գնացող ինքնաթիռն ու կորավ տեսադաշտից: Քիչ հետո հանգիստ, թույլ սուլոցով մոտեցավ ու կանգ առավ: Շարժասանդուղքով կին ու մանկան հոսքի մեջ չհաջողեցի զանազանել հարազատներիս և վայրկյան առաջ հանդիպելու բաղձանքով շտապեցի ելք: Ուսումնական տարին ավարտվել էր, և շատերն էին դառնում տուն: Կարծես բյուր խուռներամ ճնճղուկներ խուժեցին սրահ ու սկսեցին ճռվողել: Կարոտակեզ սպասողները խլրտացին, և ծփաց երջանկությունը: Երկու ժիր մանուկներ հայտնվեցին գրկիս մեջ, երկու աշխարհ՝ մի գրկում. արդեն մի քիչ օտարախոս, չրթփրթան:

Հետդարձին նույն տաքսին էր՝ նախորդին նման անձնակազմով՝ երիտասարդ մայր, ուստր և դուստր: Պարզկա օր էր, անսովոր, պռնկեպռունկ հրաշալի: Ու թվում էր՝ պատռվել էր երկնի կապույտ, լողակագույն օվկիանը, և ուր որ է՝ կհեղվի վսեմաշուք լեռան կոներն ի վար: Չարաճճի մանուկների խառնալեզու վեճ ու ծիծաղից, անվերջ հարցերից հոգնաբեկ վարորդը ժամ առաջ տեղ հասնելու փափագով սլանում էր առաջ: Նորից Վայոց ձորում ենք: Մեքենան շնչակտուր կանգ առավ գետափին՝ մարդաշատ իջևանատան մոտ: Իջանք: Արփան ափեափ, ձնհալախեղդ, խուլ ծփանքով լիզում էր հաստաբուն ուռիների չեչոտ կողերը, չարախինդ քաշում ջրի մեջ սուզված արձակ վարսերը: Ափին թողնված մոր ու մանուկից հազիվ էինք հեռացել վարորդի հետ՝ իջևանատնից ջուր և ուտելիք բերելու համար, երբ լսվեց երիտասարդ կնոջ ահասարսուռ ծղրտոցը: Խելահեղ վազքով ջուրը նետվեց նա, կորավ տեսադաշտից՝ կոկորդում խեղդելով որդու անունը: Դուրս պրծավ մակերես, բղավեց ձեռքերը վեր հանած, կրկին սուզվեց ու հազիվ ոստոստալով, նետվեց ափ: Ցնցվող կականին հանդիման, առաջ մղվեցինք և հընթացս ինքնամոռաց նետվեցինք գետը: Ճողփյունի ու ողբի արձագանքը խլացավ ունկերիս մեջ: Կարկատած կրծքավանդակս չզորեց ձեռքերս: Հազիվ կքելով՝ ձգվեցի, ոտնաթաթերս հատակին հրելով, դուրս պրծա: Ականջախույժ, հեռացող ողբաձայնի հետ, կրկին սուզվեցի ու, ապավինելով պրկված ազդրերիս ուժին, դուրս պրծա հազիվհազ, առափնյա հոսքի կիսականգ դարանից: Հոսքի բերանն ընկած, վարորդն անհետացավ: Գետն ի վար շամբուտ մացառների կողմից թնդում էր աղեկտուր վայոց: Իջևանատնից, շուկայից ու ճամփեզրից ձայնելով՝ մոտենում էին կատարվածը կռահած մարդիկ: Այլևս անհույս ու անձնատուր մղձավանջին, ծանրացած, ջրաքամվող հագուստով, օգնություն հայցող աղաղակով, կարծես չընկալելով շրջապատն ու մարդկանց, քայլեցի մայրուղու կողմը: Ոչ ոք չէր հանդգնում խոսել: Ավելորդ էին կարծես սփոփանքի և հուսադրող խոսքերը: Սոսկացի մթագին: Ի՞նչ պատասխան պիտի տամ կարոտաբաղձ պապին: Ի՞նչ երեսով երևամ հարազատներիս: Ինչպե՞ս պիտի նայեմ վշտաբեկ մոր աչքերին... Կճմլի խիղճս անողոք ապիկարիս: – Չէ՛, չէ՛, չի համանեց խաղաղ քնի, իսկ ինքը մնաց կկոցուն ու լուռ: Բոլորս համրացանք:

Սպասասրահի պատուհանից երևաց հռնդոցով վայրէջքի գնացող ինքնաթիռն ու կորավ տեսադաշտից: Քիչ հետո հանգիստ, թույլ սուլոցով մոտեցավ ու կանգ առավ: Շարժասանդուղքով կին ու մանկան հոսքի մեջ չհաջողեցի զանազանել հարազատներիս և վայրկյան առաջ հանդիպելու բաղձանքով շտապեցի ելք: Ուսումնական տարին ավարտվել էր, և շատերն էին դառնում տուն: Կարծես բյուր խուռներամ ճնճղուկներ խուժեցին սրահ ու սկսեցին ճռվողել: Կարոտակեզ սպասողները խլրտացին, և ծփաց երջանկությունը: Երկու ժիր մանուկներ հայտնվեցին գրկիս մեջ, երկու աշխարհ՝ մի գրկում. արդեն մի քիչ օտարախոս, չրթփրթան:

Հետդարձին նույն տաքսին էր՝ նախորդին նման անձնակազմով՝ երիտասարդ մայր, ուստր և դուստր: Պարզկա օր էր, անսովոր, պռնկեպռունկ հրաշալի: Ու թվում էր՝ պատռվել էր երկնի կապույտ, լողակագույն օվկիանը, և ուր որ է՝ կհեղվի վսեմաշուք լեռան կոներն ի վար: Չարաճճի մանուկների խառնալեզու վեճ ու ծիծաղից, անվերջ հարցերից հոգնաբեկ վարորդը ժամ առաջ տեղ հասնելու փափագով սլանում էր առաջ: Նորից Վայոց ձորում ենք: Մեքենան շնչակտուր կանգ առավ գետափին՝ մարդաշատ իջևանատան մոտ: Իջանք: Արփան ափեափ, ձնհալախեղդ, խուլ ծփանքով լիզում էր հաստաբուն ուռիների չեչոտ կողերը, չարախինդ քաշում ջրի մեջ սուզված արձակ վարսերը: Ափին թողնված մոր ու մանուկից հազիվ էինք հեռացել վարորդի հետ՝ իջևանատնից ջուր և ուտելիք բերելու համար, երբ լսվեց երիտասարդ կնոջ ահասարսուռ ծղրտոցը: Խելահեղ վազքով ջուրը նետվեց նա, կորավ տեսադաշտից՝ կոկորդում խեղդելով որդու անունը: Դուրս պրծավ մակերես, բղավեց ձեռքերը վեր հանած, կրկին սուզվեց ու հազիվ ոստոստալով, նետվեց ափ: Ցնցվող կականին հանդիման, առաջ մղվեցինք և հընթացս ինքնամոռաց նետվեցինք գետը: Ճողփյունի ու ողբի արձագանքը խլացավ ունկերիս մեջ: Կարկատած կրծքավանդակս չզորեց ձեռքերս: Հազիվ կքելով՝ ձգվեցի, ոտնաթաթերս հատակին հրելով, դուրս պրծա: Ականջախույժ, հեռացող ողբաձայնի հետ, կրկին սուզվեցի ու, ապավինելով պրկված ազդրերիս ուժին, դուրս պրծա հազիվհազ, առափնյա հոսքի կիսականգ դարանից: Հոսքի բերանն ընկած, վարորդն անհետացավ: Գետն ի վար շամբուտ մացառների կողմից թնդում էր աղեկտուր վայոց: Իջևանատնից, շուկայից ու ճամփեզրից ձայնելով՝ մոտենում էին կատարվածը կռահած մարդիկ: Այլևս անհույս ու անձնատուր մղձավանջին, ծանրացած, ջրաքամվող հագուստով, օգնություն հայցող աղաղակով, կարծես չընկալելով շրջապատն ու մարդկանց, քայլեցի մայրուղու կողմը: Ոչ ոք չէր հանդգնում խոսել: Ավելորդ էին կարծես սփոփանքի և հուսադրող խոսքերը: Սոսկացի մթագին: Ի՞նչ պատասխան պիտի տամ կարոտաբաղձ պապին: Ի՞նչ երեսով երևամ հարազատներիս: Ինչպե՞ս պիտի նայեմ վշտաբեկ մոր աչքերին... Կճմլի խիղճս անողոք ապիկարիս: – Չէ՛, չէ՛, չի համատեղվի կյանքի հետ, անկարելի՛ է, – փղձկացի... խռիվ տեսիլքներ ցոլացին: Դավադիր գետը, ինչպես հալածական վիշապ, ավարառու ճեպում էր սահմանից անդին: Անեացա՛վ, չքացա՛վ լուսե մանուկը՝ ինչպես ճերմակ աղավնին՝ լազուրում: Գետեզրյա ուռիների տողանը, գետի մեջ կախված հյուսքերով ու մացառներով սքողել էր ափերը, դարձրել անմատույց: Կարեկից մարդիկ շտապել էին վարում գտնվող Նորավանքի կամրջի կողմը... ստույգ էր կորուստը՝ ոչ ոք չէր կասկածում: Ճմռելով վերընթաց ճամփեզրյա ցանկապատը՝ ընկա կից այգին ու բնազդաբար մղվեցի թույլ վշշացող գետի կողմը: Ակամա կանգ առա: Օ՜, զարմանք: Հայացքիս առաջ հառնեց դժնիկենու տակ կանգնած չորուկ ծերունու ազնվական դեմքը: Ունկերիս մեջ թրթռաց ձայնեղ պատրանքը. «Աղերսի՜ր»: Տրվեցի փրփուրին: Չքացող հույսը կրկին կայծկլտաց: -Արարի՜չ, աղերսում եմ, աղերսու՜մ եմ, Արարի՜չ, -մրմնջացի, -աղերսու՜մ եմ: Քիչ հեռվից լսվում էին խելագարության դուռը հասած մոր ընդհատ կանչերը: Ընդարմացող մկանունքս ցնցվեցին, ինչի ահից ընկրկեց հիպոտիկ քունը: Դրուժան ժամանակը հևաց և հրես-հրես կամենում էր կանգնել, երբ ինչպես ոսկեղեն տեսիլք, մացառների միջից հայտնվեց նա՝ բաղձալին՝ ուռենու խոնարհուն բնին գայթած պատանին: Նա՜, նա՜... Արդյոք, միրա՞ժ է, -սոսկացի՝ ցնորիչ, ցնդող պատրանք: Չէ՛, չէ՛, նա՛ է, նա՛..արևի պատառ՝ վերագտնված գանձ: Կողանց քիչ բացած ձեռքերի թեզանիքներից, քղանցքներից ջուր էր կաթկթում: Դալար տնկիների արանքներից նկատելով ինձ՝ աղերսաձայն կանչեց.

– Հոպա՛ր, հոպա՛ր, ների՛ր, ներիր: Եվս մի ակնթարթ, և գիրկս առած, խելահեղ հևքով սկսեցի պաչպչել քիթ ու աչքումռութ՝ երջանկության՝ հորդող արցունքների առվակներով հեղելով ազնվածին դեմքը:Ուրախ կանչերիս արձագանքած մայրը հայտնվեց հանց կայծակ: Ծնկադիր գիրկն առավ զավակին ու երկար-երկար հեծկլտալով սկսեց գուրգուրել: Իրար ձայնելով, մարդիկ շրջապատեցին՝ ականատես դառնալով երջանկության ցնցող տեսարանին: Ոմանք մոտեցան ու փաղաքշեցին մորը, քաջալերել, շոշափել ու շոյել մանկանը: Գորովանքով շրջապատած հրաշքով փրկվածներիս, ուղեկցեցին իջևանատուն: Հայտնվեց նաև գետից մի կերպ դուրս պրծած վարորդը՝ հագուստը փակչած սրթսրթուն մարմնին: Կարծես չհավատալով աչքերին՝ մոտեցավ, նստած տղեկի գլուխն առավ ափերի մեջ ու գորովանքով ասաց.

– Ա՛յ ավազա՛կ, ո՞նց քեզ հաջողվեց, ախր ես հազիվ դուրս պրծա:

– Ճղներ կային էլի, գետի մեջ, բռնեցի, -ասաց չարաճճի ու քիչ վախվորած ժպիտով:

Մենության մատնված ու կուշտ լացից կարմրած աչքերով գունատ քույրը հայացքով լուռ զննում էր խոսողներին: Բարի մարդկանց հյուրասիրությունը վայելած ու հաղորդած ջերմությունը կրծքներիս տակ, ճամփա ելանք: Որախ, աշխույժ ընթացավ մեր երթը: Կարծես արտասովոր ոչինչ չէր եղել ու չէինք հայտնվել կյանքի ու մահվան սայրաբերան կածանին: ●

ԱՆՍՊԱՍԵԼԻ ՍՊԱՍԵԼԻՆ

Ակսել Բակունցի տուն թանգարանը մի առանձին գրավչություն է ստանում նրա վարիչ Վարդան Սարգսյանի մարդկային կերպարով: Հազար ու մի տուն թանգարան եմ այցելել աշխարհի տարբեր անկյուններում, սակայն նման ջերմ զգացում երբեք չեմ ունեցել: Եվ ահա ինձ համար պարզվեց պատճառներից ամենաէականը, երբ անսպասելիորեն հայտնվեց սպասելին. այս նուրբ ու հոգատար, հյուրասեր ու ազնիվ մարդն իսկապես արձակի նուրբ քնարերգու Ակսել Բակունցի արժանի նվիրյալն է՝ նաև նրա չքնաղ արձակի շարունակողներից:

Անակնկալ ավարտ ունեցող հակիրճ պատմություններն անավարտության շունչ են հաղորդում այս գունեղ արձակին, որից տպավորվում ես, թե պատումը շարունակվում է կյանքում: Սրան նպաստում է նաև բոլոր պատումներում ներկա հեղինակային կերպարը, քանի որ ամենուր պատումը զարգանում է հեղինակի միջոցով, իսկ բոլոր մյուս կերպարները բացահայտվում են հեղինակի հետ զրույցի ընթացքում: Մեղրածոր ու քնքուշ քնարական հոգի ունի Վարդան Սարգսյանը, որը հյուրասեր տանտիրոջ պես բացել է ընթերցողի առաջ, որպես սուփրա սեղան՝ աղուհացի արժեքն իմացող մարդու համար:

«Կյանքի ու մահվան սայրաբերան կածանին» նովելը հուզիչ մի պատմություն է, որում անուղղակի ամփոփված է կործանարար արտագաղթը, սակայն պատումի դրամատիզմն ու հուզականությունը պայմանավորված են կյանքի ու մահվան սահմանագծին հայտնված մանկան հետ պատահած անսպասելի մի միջադեպով. «Դավադիր գետը, ինչպես հալածական վիշապ, ավարառու ճեպում էր սահմանից անդին: Անեացա՛վ, չքացա՛վ լուսե մանուկը՝ ինչպես ճերմակ աղավնին՝ լազուրում»:

ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ

Արթուր Կարենց



ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծնվել է 1957թ. Ագարակ քաղաքում, ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի հաշվողական տեխնիկայի ֆակուլտետը: Թե՛ ուսանողական, թե՛ աշխատանքային տարիներին ծավալել է ակտիվ գրական գործունեություն, տպագրվել է մի շարք թերթերում և ամսագրերում: 2005թ. լույս է տեսել Ա. Կարենցի բանաստեղծությունների և մանրապատումների առաջին՝ «Քեզ հետ և առանց քեզ» ժողովածուն, բանաստեղծությունները տեղ են գտել նաև ՀԳՄ «Մեղրի» տարեգրքի տարբեր տարիների համարներում: Հեղինակի ստեղծագործություններին նոր, երաժշտական կյանք է հաղորդում կոմպոզիտոր Կարինե Գալյանը:Դրանցից մեկը՝ «Ձոն Ծննդավայրիս», Ագարակ քաղաքի 70-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում ներկայացվել է որպես քաղաքի օրհներգ:

ՎԱՀԱԳՆԱԿԱՆՉ

Ես գիտեմ, այսօր դու պիտի հաղթես,
Դու պիտի հաղթես ազգովին, հավաք,
Անզուսպ բերկրանքից դու պիտի արբես,
Թշնամիդ պիտի քո բազկից դողա ...

Ես գիտեմ, այսօր դու պիտի հաղթես,
Դու պիտի հաղթես – կրտսեր ու ավագ,
Ու եթե, անգամ, ճամփին քո գայթես,
Պիտի բարձրանաս, քայլ անես առաջ ...

Ես քոնն եմ, ազգ իմ, քո հաղթող որդին,
Արյուն եմ տվել դարե՜ր ու դարե՜ր ...
Արդ փյունիկ որպես, որպես ատրուշան,
Վահագնականչիդ ձայնին եմ կանգնել...

Արդ ելել ոտի թե մանուկ, թե՝ ծեր,
Ելել են ազգիդ խիղճը փրկելու,
Ես գիտեմ, այսօր դու պիտի հաղթես՝
Ինքնամաքրման քո կամքին հլու ...

Պիտի բռունցքվես, պիտի ամրանաս,
Շարքերդ պիտի լինեն հոծ ու խիտ,
Ամպրոպիդ գինը գիտեմ ես հաստատ,
Թեպետ թշնամիդ նենգ է շատ ու բիրտ,

Դու պիտի հաղթես, պիտի ամրանաս,
Պարզապես այլ ելք չի թողել նա քեզ,
Ես գիտեմ, այսօր դու պիտի հաղթես՝
Ինքնաայրումիդ հրայրքին հլու ...

Դու պիտի հաղթես, դու պիտի ապրես,
Պարզապես այլ դուռ չի բացվի քո դեմ,
Ես գիտեմ, հաստատ, դու պիտի հաղթես՝
Քո եռագույնի դարերին հլու ...

28.04.2018Թ.

ՀԻՄԱ՞ ԷԼ ԼՌԵՆՔ ...

Նվիրվում է Սպիտակի
երկրաշարժի 30-ամյա տարելիցին

Ձեր ճիչերը՝ մինչև ի մահ,
Պետք է լռեն ունկերում իմ,
Պետք է հառնեն՝ ձեռքեր - անտառ,
Հարդագողի ճանապարհին...

Եվ ժպիտը, որ քարացել
Ու մանկան ճիչ, լաց է դարձել,
Նետեմ պիտի հավերժներին՝
Որպես պատգամ, որպես՝ բողոք...

Եվ կայծակներ, որ չեն զարկի,
Չեն ծվատի երկինքը մով,
Պիտի հառնեն մոխիրներից,
Պիտի լռեն՝ օրերում խոլ...

Ու երբ լցվեն օրերն ամա,
Օրերն այս հիր, օրերն այս բարկ,
Դու կայծակներ պիտի զարկես,
Ես՝ շանթարգել լինեմ հիմա ...

Եվ Արևներ, որ չեն ծագել
Ու չեն այրել երկինքը մով,
Պիտի հառնեն նոր օրերում,
Պիտի վառվեն ուժով մի նոր ...

Հիմա քայլենք պիտի նորեն,
Հիմա լինենք՝ ամուր ու կուռ,
Արևներին փարվենք պիտի
Եվ շանթարգել լինենք ու ծուռ ...

7 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018Թ.

Արթուր Կարենցի բանաստեղծությունների մասին

Արթուր Կարենցը մասնագիտությամբ՝ ինժեներ, սակայն էությամբ իսկական պոետ է: Այլապես ինչո՞ւ կասեր՝ «Ապրելու համար մահու չափ սիրել ու սիրվել է պետք»: Նա ունի իր ազնիվ, անեղծ պոետիկ աշխարհը, որտեղ կյանքը տրոփում է երիտասարդական ավյունով ու խանդավառությամբ: Մենք բոլորս տարիների հետ դառնում ենք ավելի խոհեմ, լրջմիտ, հավաք, և մեր սիրտը, որին զառամախտը երբեք չի սպառնում, ցանկանում է մեր հոգնած ու ալարկոտ մարմնից անդին ինքնարտահայտման տարածք գտնել: Եվ ահա օգնության է հասնում պոեզիան՝ իր անպարագիծ, անչափագրելի տարածականությամբ: Այնտեղ սիրտը կարող է իր ուզածի չափ թրթռալ, ալեկոծվել, սեղմվել, կծկվել և անգամ պայթել հույզի ժայթքումից: Դա թույատրելի կամայականություն է, որովհետև պոեզիայում կան փրկարար դեղահաբեր՝ բառեր, որոնք շարվելու են տողի վրա, և ճերմակ թղթի բողբոջումից սիրտն էլ է նորոգվելու, գոհանալու և լիանալու:

Արթուրն ունի հայրենասիրական բանաստեղծություններ, որոնցում ռազմի աստված Վահագնի կանչով արթնության, միասնության ու համախմբման կոչ է անում իր բազմաչարչար ժողովրդին՝ գալիք արևավառ օրերի հավատով:

Կարենցի սիրերգության մուսան եթերային մի կերպար է, լուսե տեսիլք, անհասանելի մի տենչ, որը բանաստեղծի ձգտումների կիզակետում է: Նրա հոգին, ճիշտ է, հագեցում է փնտրում, բայց այն ոչ թե տեղ հասնելու մեջ է, այլ ճանապարհի վայելքի: Այդ ճանապարհին, ինչպես պոետն է ասում, «ընկնել-ելնել կա», «կապույտին հառված գեղեցկության աղերս», «լույս ու ջրի հանդես», «ողջակիզման հուր»: Այդ ամենի միջով շարունակ ընթանալը, ապրումի տևումը երկարաձգելը, այդ խառնարանում հրկիզվելն է, որ անհրաժեշտ է պոետի հոգուն՝ իր սավառնումով երկինքներ չափելու, աստղերի պսպղուն կանչը չմոռանալու համար:

Արթուրի բանաստեղծություններից մեկում նրա սիրտը հուշում է՝ «Բաց արա հոգիդ...»: Երանի բոլորս, սրտին անսալով, բաց պահեինք մեր հոգիները, և թեպետ այս աշխարհում մարմնին ենք ծառայում, չմոռանանք, որ հոգին է տերը հավերժի:

ԳԱՅԱՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ
ԳՐՈՂ

Գարեգին Բաբայան



ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծնվել է 1954 թվականին մարտի 24-ին ՀՀ Սյունիքի մարզի Քարաշեն գյուղում, մանկավարժի ընտանիքում: Տեղ գյուղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ծառայել է խորհրդային բանակում: 1974 թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, այն ավարտել 1979-ին: 2002 թվականից ԼՂՀ և ՀՀ փաստաբանների միության անդամ է:

Գարնանային առավոտ

Գլորվում է գիշերը,
Օրը դառնում է կես,
Հավաքում է փեշերը
Խավարը չար բուի պես:

Ու առավոտն է բացում
Իր աչքերը կապուտակ,
Մարի գլխին թառում է
Մի ոսկեթև արեգակ:

Ու իր ծամերն է հյուսում,
Ինչպես աղջիկը պայծառ,
Հետո ցրում շողերն իր
Դաշտի վրա մեր անծայր:

Գարնան հովը փչում է,
Սև ահողն է բուրում թաց,
Վերջին ձյունն էլ հալչում է
Ու սարերից իջնում ցած:

Ակների ջուրը

Կարկաչում է վերից վար
Զուլալ ջուրը Ակների,
Դառնում փափագ ու մուրազ
Ծարավ մարդկանց շուրթերին:

Ուլունք-ուլունք գալիս է նա,
Որ կյանք բերի քաղաքին,
Մտնի տներ, բակ ու այգի՝
Ողջունելով ամենքին:

Մարդիկ խմում են խինդով
Ու փառք տալիս Աստծուն,
Որ ջուրը մեր անմահական,
Միակն է այս աշխարհում:

Ով որ խմի հեքիաթային,
Հրաշք ջուրը Գորիսի,
Մեր Զանգեզուր երկրի մասին
Հպարտությամբ կխոսի:

Միայն ցանկանք մարդկանց դեմքից
Խնդությունը չպակասի,
Եվ Ակների ջուրը զուլալ,
Խաղաղ, արդար միշտ հոսի:

Ամեն գարնան հետ

Ամեն գարնան հետ
Սիրտս բացվում է կոկոն վարդի պես,
Ամեն գարնան հետ
Հոգիս խնդում է հույզերով անտես:

Ամեն գարնան հետ
Սրտիս մեջ թաքուն
Ծնվում են երգեր,
Ամեն գարնան հետ
Արևի շողն ինձ դառնում է ընկեր:

Եվ ես ելնում եմ՝
Շուրջս ցնծություն ու խինդ մաղելու
Եվ ես ելնում եմ՝
Սարերի վրա ծաղիկ քաղելու:

Եվ ես ելնում եմ՝
Մով երկնքի տակ բախտս փնտրելու,
Եվ ես ելնում եմ՝
Ամբողջ աշխարհին սերս հայտնելու:

Առավոտ

Արշալույսը բացվում է նազով,
Ցողեր են իջնում ալ վարդին,
Խաղում է ահա մի լույսի շող
Վարդենու կարմրագույն շուրթին:

Ու ելնում է արևը պայծառ,
Ցրում ցողերն իր շիթ առ շիթ,
Լայն ժպտում է վարդը պարտեզում
Բացում աչքերն իր լուսափթիթ:

Իմ սիրտն էլ վարդի պես բացվում է,
Հայրենի արևի բոցում,
Հոգիս ցողվում է լույսերով
Շուրթս ջերմ սիրով օծում:

Իր եզերքով ներշնչված մարդը

Գրական շրջանակների ու ընթերցող զանգվածների համար գրեթե անծանոթ մի անուն է Գարեգին Բաբայանը: Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ «Կարոտներս» գիրքը հեղինակի առաջին տպագրված գործն է: Ի՞նչ է գրել և ինչու՞ է գրել հարցադրմանը մասամբ կարող է պատասխանել ընդգրկումների այն ծիրը, որին Գ. Բաբայանին մղել է իր մտորումների ու զգացողությունների դուռը բանալ ընթերցողի առջև, չափածո ու արձակ խոսք ասել իր ներաշխարհը լցնող հայրենի եզերքի գեղեցկությունների ու այդ գեղեցկությունները կերտող իր ճանաչ հեռու ու մոտ մարդկանց մասին:

Գարեգին Բաբայանը գուցե և չգրեր այս գիրքը, եթե ինքը չունենար զեղուն խառնվածք, շրջապատի հետ անմիջական ու ջերմ բնավորություն, իր ներսում բաբախող սիրագեղ հոգի:

Ասում են գիրն անմահացնում է մարդուն, սակայն համոզված ենք, որ այս գիրքը չի գրվել փառք վաստակելու համար, այլ ծնվել է ներքին թելադրանքով, այս աշխարհում լավն ու բարին տեսնելու ու այդ ամենը ուրիշներին փոխանցելու ազնիվ ձգտումներից:

Այո, Գորիսն ու գորիսեցիներն ուրիշ մարդիկ են, և ինչպես հեղինակն է գրում՝ իմաստուն պապ են ու ստնտու մայր, հարազատ քույր ու հավատարիմ ընկեր, որ իրենցով կրկնակի հրապույր են հաղորդում զանգեզուրյան շառաչող գետերին, ձմեռային դաշտերի մաքրամաքուր սպիտակությանը, գարնան շողարձակող լուսաբացներին, որ իրենց ամբողջության մեջ բանաստեղծական խտացում ու պատկերում են ստանում որպես Հայաստան աշխարհ ու Հայրենիք:

ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ
ԲԱՆ.ԳԻՏ.ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ

Սուրեն Գրիգոր



Կենսագրություն

Ծնվել է 1956 թ. Սյունիքի մարզի Նոր Առաջաձոր գյուղում: Մինչև 1968 թ. երկրաշարժը սովորել է Քաջարանի Չարենցի անվան թիվ 2 դպրոցում: 1973թ. ավարտել է Կապանի թիվ 1 միջնակարգ դպրոցը: Մեկ տարի սովորել է Կուբանի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետում, այնուհետ փոխադրվել Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետ: 2017թ. «Խայթ» երգիծական հանդեսի համահիմնադիր, երգիծաբանների համահայկական միության նախագահ: Հրատարակել է պոեզիայի տասը ժողովածու, երգիծական հինգ ժողովածու:

ԶԻՆԱԿԻՑՆԵՐ

Զինակիցներ, որ շարքերում դուք մնացիք
ու զինվորական հագուստները ձեր սրտում եք պահել...
Զինակիցներ,
Ով մահով այրվեց արդարության բագինում,
Իսկ ով ...կյանքով ուզեց բորբոք պահել կրակը սրտերում
ԵՎ ամբողջ մի կյանք ... ժամանակներն են թեև նվազում,
Թեև ամեն օր մատուցվում է մեզ շնորհի գինով,
Սակայն խույս չեմ տա ոչ պարտքի պատժից,
Ոչ էլ ինքս ինձ դատապարտելուց...

Միտքն անընկալ է դավաճանության բյուր դիմակներին,
սիրտը՝ անկարող կրելու նրա ցավն ու մորմոքը,
Ինչպես ջրերը կորչում են անհող,
ինչպես հողերը մեռնում են անջուր...
Ինչպես հանցանքի աղբյուր է դառնում
արյամբ վաստակած ինքնիշխանությամբ անկախ ապրելը...
ամբարտակները այնպես են ճեղքվել՝ ջուր չի հավաքվում,
հավատն ու հույսը այնպես են ճեղքվել՝ ուժ չի հավաքվում,
իսկ սիրտը, սիրտը այնպես է ճեղքվել՝ տուն չի հավաքվում.

Ով հավատարիմ օրինակիցներ,
իմ զինվորական հագուստներն, իրավ,
իմ դեմ պայքարում ես վաստակեցի,
քամեցի աղը հույս ու հավատի այն պտուղներից,
որ օրհասական ժամանակներում
հասունանում են մարդկանց սրտերում
և ըմբոստության խելահեղությամբ խարխլում եմ այն՝
ինչն ատելի է
ու խառնվել է կյանքի զորության մաքուր ջրերին...

Երբ Քրիստոսի ձեռքը բռնելով
Աննկատ անցա եկեղեցու բաց դռների մոտով,
Քանանի խորունկ քարանձավ մտա,
Անխռով տեսա ողորկ քարերի խաղաղությունը
և մզկիթներին դեռ չմոտեցած՝
աղոթքի ձայնը զենքի զորությամբ պատերն էր ցնցում...
Ես քայլեցի լուռ, հեռացա անխոս,
անձայն սահեցի մոխրացած ջրի խաչակիր ու խենթ փրփուրների մեջ...

Ես կամուրջներ եմ գտել հեղեղների մեջ,
Որ կապում են հավատը նվիրումին
վիրահատելով անցյալի փառքը՝ կյանքը թռիչքին,
Զինակիցներ,
ախր, տիեզերքը գիտակցություն է, իսկ այս
խեղճության սիրահարները ապրում են դեռ
Գողգոթայի բարձունքին խաչված Հիսուսի արյունը
խմելով...
Ախր Հիսուսն էլ զինվոր է, զինակիցներ...

Ծննդյան օրից զինվորություն է կտակել Տերը...
և հավատամքի հին օրենքների սրբազան ջրում
մկրտված անձի
Մարմինը զենք է... զենք է մարմինը,
և հոգիները՝ լույսով ու մութով հղկված զենքեր են,
Երբ ամեն մի քայլ, և ամեն մի ջանք և ամենօրյա
տքնության կամքը
մոտեցնում է այն սրբազան բեմին
մարմնասացության,
ուր դատավորն է ողջունում սրտի կորովն ու փառքը,
և սիրտը զենք է... զենք է մեր սիրտը,
երբ մաքրված է բոլոր վախերից ու մոլությունից,
երբ, որ սրբված է սեփական վարքի մոլորությունից
երբ զուլալված է օրերի տիղմում...

Երբ միտքն այրվում է ու բորբոքում է սրտի կրակը
Աստծո ձեռքերում՝ մահվան մոխիրն է քամին
հավաքում
Ու ցանում հողին՝ սերմերի համար...

Վարդան Բեկլարյան



Կենսագրություն

Վարդան Հրաչիկի Բեկլարյան. ծնվել է 1986 թ. հոկտեմբերի 13-ին Երեւանում: Տասներկու տարեկանում ընտանիքով տեղափոխվել են Կապան: Սովորել եւ ավարտել է Կապանի թիվ 13 միջնակարգ դպրոցը: Բանաստեղծություններ գրում է պատանեկան տարիներից: 2019 թ. լույս է տեսել երիտասարդ ստեղծագործողի առաջին ու միակ գիրքը՝ «Հոգու օազիս» բանաստեղծությունների ժողովածուն:

Բանաստեղծությունը

Բանաստեղծությունն իմ կարոտն է ջինջ
Արդարացի ու վսեմ աշխարհի,
Բայց չի մնացել հիմա էլ ոչինչ
Անցած մանկության հեքիաթից բարի:

Բանաստեղծությունն իմ էությունն է,
Որը ես ուզում եմ հանձնել դարերին,
Իմ անանձնական ուրախությունն է
Եվ իմ վեհ հոգու խոյանքն աստղային:

Նա գեղեցիկի տենչն է բոցավառ
Եվ իմ մեծ սրտի հպարտությունը,
Որի շողերից ծնվում է իմ վառ,
Անձեռնմխելի երջանկությունը:

Թանկարժեք նվերներ

Սահեց-հեռացավ ճերմակ կարապը՝
Իմ լուրթ երազը առած կտուցին,
Թախիծով լցվեց հոգուս պարապը,
Եվ նախանձեցի ես արշալույսին,

Որ սրտում ունի անթիվ երազներ
Եվ բաժանում է դրանք ամենքին,
Բայց միշտ մնում է ուրախ ու ջահել,
Եվ չի դատարկվում նրա մեծ հոգին:

Սակայն ախր դա ջինջ արշալույսն է,
Ո՛չ թե հասարակ մի մահկանացու,
Նրա խորհուրդը վեհացնող լույսն է,
Որ խնդություն է շուրջը տարածում:

Իսկ ես երազս տվի կարապին
Եվ ծերացա մի տասնհինգ տարով,
Բայց պետք է տոկամ թախիծի տապին,
Նոր երազ դարբնեմ իմ այս քնարով:

Թեկուզեւ երազն իմ այդ չունենա
Ջինջ արշալույսի ողջ վեհությունը,
Սակայն նրանում հավետ կմնա
Պոետի սրտի մեծ բարությունը:

Հայրենի երկիր

Սուրում է ահա խենթացած քամին
Հայրենի երկրի դաշտերով արձակ,
Եվ առավոտվա պայծառ այս ժամին
Խինդն է ծփում իմ սրտում լայնարձակ:

Քամի, վերցրու ինձ հզոր թեւերիդ
Եվ արի թռչենք ոլորտը լուսե.
Ջինջ երջանկության համբավաբերիդ
Պայծառ խոսքերն եմ ուզում ես լսել:

Այնտեղ, լուսավոր ու ջերմ այն երկրում,
Աշխատավորն է տեր ու տիրական,
Աշխատանքո՛վ է մարդն այնտեղ բերկրում,
Չկան հարուստներ շվայտ ու անբան:

Բայց թե հեռանանք, ո՛վ հպարտ քամի,
Էլ ո՞վ կցանի սերմերը լուսե,
Որ երկիրը մեր ճորտ, բայց հայրենի
Դառնա երազի երկիրը վսեմ:

Սուրեն Գրիգորի պոեզիայի մասին

Սուրեն Գրիգորն իր գրչի մեղեդին դարձրեց ներդաշնակությունը եւ ճախրանքը: Էության ոգին՝ մարմինն է Աստծո եւ բառերը դարձան նոր աղոթագիր հաջորդ հազարամյակի համար:

Նոր մտածողություն է տրվել բանական մտքին: Այն այսօր գալիս է տիեզերքից եւ նյութի հատկությունների նախորդ ճանաչողությունը ենթարկվում է փոփոխության: Պահանջ է ներկայացված մարդուն՝ դառնալ ավելի զգայուն եւ ընկալունակ: Հնարավորություն է ստեղծվել ավելի խորքային կամ ավելի ճիշտ երկնային բացահայտումների: Ոգեղեն պոետի նույն բացահայտմամբ կարծես բերում է կրկնումը բնագիտության, ֆիզիկայի, մաթեմատիկայի, կենսաբանական գիտությունների խորքային դրսեւորումները: Որքան նման են նրանց էության օրինաչափությունները: Մեծ գյուտը որոնեք պոետի խոսքերում:

Հեղինակը փորձում է հող ու ջուրը տրորելուց հետո անցնել քվանտային մտածողության էացմանը: Այս դժվարին սահմանագիծն անցնելու, ձգտողներ կան՝ անկասկած: Գուցե նրանց օգնությամբ տեղի կունենա մարդկության առաջխաղացումը:

Եթե ճշգրիտ չեն ընկալված օրինաչափություններ առաջացրած փոփոխությունները, ողջ կառավարման համակարգը, նաև արվեստը, գիտությունը, ապա հումանիտար բացահայտումների մեկնաբանման մեջ այն դառնում է անկառավարելի:

Ոգին ձեւավորված սահում է ուղեղի լուսե հյուսվածքներում:

Փորձեմ ասել Սուրեն Գրիգոր Վարդապետի լեզվամտածողությամբ. «Գիտակցված գործողությունների թռիչքը բարձրացնել ոգեղենության յոթերորդ աստիճան»: Այս ոդիսական անցումից հետո մարդու բանական գիտակցությունը համբուրում է հավերժության շուրթերը:

Հեղինակի պոեզիան առանձնանում է առանց եսականության կեցվածքաբանության, նեղմիտ փառահավակնության, իսկ հնարավոր մղումներ հետ են շպրտվում ազնիվ էության բացահայտումների մեջ: Տիրոջ երկնային վարագույրների ամեն մի թելիկը վերցված է լուսեղեն սուրբ հոգու մաքրեմաքուր զտված հյուսվածքից, որ գործվածքն անթերի լինի:

Վարդապետի տողերը պետք է կարդալ հատիկ առ հատիկ եւ դարձնել գեր գիտակցության ոգեղեն մարմին ու ձուլվել նրան: Այն ժայթքում է Աստծո գիտակցումից:

ԳԵՎՈՐԳ ՇԱՀԻՆՅԱՆ
ԹԱՏԵՐԱԳԻՐ

Բորիս Մինասյան



ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծնվել է 1956 թվականին Կապանում: Ավարտել է Կապանի թիվ 27 գիշերօթիկ դպրոցը: 1976-1982 թթ. սովորել է Երևանի մանկավարժական ինստիտուտի կերպարվեստի բաժնում: 1992 թ. Հայաստանի նկարիչների միության անդամ է: 1990 թ. ԺԱԹ-ի Կապանի մասնաճյուղի տնօրենն է: Ունի հեղինակային գործեր Կապան և Ջերմուկ քաղաքներում (քանդակներ և գեղանկարչական աշխատանքներ): Մասնակցել է միջազգային, համամիութենական, հանրապետական ցուցահանդեսների: Աշխատանքները գտնվում են ԱՄՆ, Մոսկվայի, Երևանի, Սանկտ-Պետերբուրգի մասնավոր հավաքածուներում: «Ի սեր Աստծո» գրքի հեղինակն է: Պարգեւատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով:

* * *

Վերջին գիշերվա թանձր երազում
Նետվում է սիրտս ծովն անուրջների,
Ամպերը սառած հառաչ են քաշում,
Արտասվում կորած իմ սիրո համար:
Անձրևի ցողն է մաղում տաղտկալի՝
Միրուս շուշանս գրկում պահելով,
Մերս պահ տալիս թևերին ամպի՝
Լուռ հեռանում են կողքով իմ ցավի...

* * *

Հարբում եմ հաճախ գինով, հուշերով,
Պոեզիայով եմ խենթանում մեկեն,
Այցի են գալիս, ասես վտառով,
Անցած սերերի անհամար հետքեր:
Եվ որպես ընկեր եմ սրտին թախծոտ՝
Մնում են ինձ հետ քամին շրջմոլիկ,
Եվ ժամանակը, ողջին մեղմօրոտ,
Աստղը երկնքի և թռիչքն իմ՝
Հարբեցման պահին,
Խենթության պահին...

Իմ խենթությունը

Իմ խենթությունը հորդառատ գետ է,
Անցած ուղի է՝
Իմ արյան միջով եկող շատ հեռվից,
Իմ խենթությունը մի կենաց ծառ է,
Պտուղը նրա շատ հաճախ դառն է...
Իմ խենթությունը կարմիր արև է,
Փոշոտ փողոց է, անտառ է ու լեռ,
Թափ առնող սերն է, իմ երազանքն է,
Իմ երազներն են անցած մանկության...
Իմ խենթությունը խավար գիշեր է,
Փայլող գիսաստղ, շանթ է երկնային,
Ժայռեղեն փորված խորան է սուրբ,
Մասրենու թուփ է, նուռ է հասուն,
Նրանցից կաթող հյութ է խոսուն...
Իմ խենթությունը կարմիր որդան է,
Ծիրան է հյութեղ՝ արևից պրկված,
Կոպիտ է, խելառ, գինովցած երեր,
Անձրևոտ, ցեխոտ,
Հայհոյված, ծեծված, բայց ոչ տրորված,
Վեհ ու գեղեցիկ, շռայլ, իմաստուն...
Իմ խենթությունը՝ ուզեն թե չուզեն,
Իմն է, լոկ իմը,
Եվ հավերժ՝ ինչպես իմ Խուստուփ լեռը...

* * *

Քարից ծեփված ժայռի բեկոր,
Հսկա նավի կաթնալույս խուց
Բաց պատուհան...
Տկլոր մարմին՝ ձիգ իրանով
Ինչպես փրփուր ճերմա՜կ, ճերմա՜կ...
Ու կենտ մի ճայ՝ բարձր ճախրող,
Բաբախող սիրտ, հոգնած ականջ...
Եվ ստինքներ անջատ-անջատ,
Շշի խցան, ռոմի բաժակ,
Աղեղնավոր նեգրի քանդակ...
Մի բուռ ցորեն, մի բլիթ հաց,
Մի անբան նավ,
Ինչպես բեկոր՝ ժայռին ծեփված...

* * *

Դժոխքի ծնունդ, քո գիշերային սիրո ժամերից
Վայրի հրեշտակներն ինձ բաներ մատնեցին.
Իմ սիրո համար քեզ չեմ մեղանչում
Դեն նետված կարոտ վարդի պատկեր,
Հավերժական սիրո լուռ քարանձավ,
Թափառող մտքերի ցոլացող բացատ...
Աստղերն են հուշում մոռացված տխուր
Գուշակություններ անող գնչուհու տեսքով...
Հավերժի ծնունդ:

* * *

Հանճարներ են ծնվել
Աստղային դարի պատերազմներում
Նոր հույսերի երազախեղդ ծովում:
Երազկոտ աստղերից սուրհանդակներն են իջնում՝
Վտանգավոր զոհի բոթը սրտերում:
Հեռավոր մտքերի մենակյաց անապատում
Հանճարներ են ծնվում...

* * *

Ծիծաղկոտ իմ օրագիրը՝
Ճակատագրական ժառանգություն,
Իմ կյանքի միակ համը վկան,
Իմ թախծի և սիրո թագավորը:
Եվ իմ այս վազքը ժամանակի միջով,
Ջնջվող այս կոպիտ սխալները
Կատակերգությունների բացվող դռներից
Թաքնվում են վայրի բնության ծոցում՝
Իմ ծիծաղկոտ օրագրի հետ:

* * *

Ջրհոսի մոլորակն է շրջապտույտում
Իմաստ չուներ գոռալ, կամ գժվել
Շղթայված էին շները, շրջադարձին
Ողջախոհությունը ծպուտ չհանեց
Անզուսպ հիացական ծավալներն էին կանչում
Ես կանգնել էի ամբողջ հասակով
Զարմացած այս տեսիլքով, որ կոչվում էր երազ:
Ես շոյեցի հիշողությանս լույսը
Նկարում լավ բան չկար...

Քարի լույս

Հոգնած քունքերով ճերմակամազին,
Եկեղեցու գավթում պահված մեղքերին,
Տերևաթափ մարդկանց մտքերին,
Հեռվում ոռնացող գայլի ձագերին:
Ծաղկաթերթ փեշին, ամեն-ամենքին,
Հավերժության մեջ թաղված քարեղեն հոգուն,
Մոլորակների մտահղացումներին
Թեժ լեռան գլխին. շքերթ արթնացումին
Ճամփոդող մտքին, երազանքներին
Քարի լույս, լուսեղեն ճամփա...

Նաիրի Սահյան

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համո Սահյանի ավագ որդին է, ծնվել է 1946 թ. Բաքվում՝ Համո Սահյանի եւ բանաստեղծուհի Մարիա Հակոբյանի ընտանիքում: 1951 թ. ընտանիքով տեղափոխվել են Երեւան:

Սովորել է Ձերժինսկու անվան ռուսական դպրոցում, այնուհետեւ տեղափոխվել հայկական դպրոց:

Ավարտել է Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական եւ ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետները:

* * *

Կյանքս թողած էն անցյալում,
Ճակատագրի թելից կախված,
Հոգիս տխուր, աչքերս թաց
Գնում եմ ես, դատարկությամբ,
դատարկությամբ շրջապատված:

Ձեզ բոլորիդ հեռվում թողած
Ու մեն-մենակ, ու մոլորված,
Վերհուշերիս թելից կախված,
Գնում եմ ես, դատարկությամբ,
դատարկությամբ շրջապատված:

Շատ եմ հոգնել այս աշխարհից ապականված,
Ամեն ինչից հիասթափված,
Հույսի բարակ թելից կախված,
Գնում եմ ես, դատարկությամբ,
դատարկությամբ շրջապատված:
11 փետրվարի 2010 թ., Լոս Անջելես

* * *

Մի քիչ հուշեր տվեք մանկությունից,
Մի քիչ ձայներ տվեք, արևի լույս:
Մի քիչ ծիծաղ տվեք մանկությունից,
Մեղմ ծիածան տվեք ու մի քիչ հույս:
30 մարտի, 2010 թ., Լոս Անջելես

Պատրանք

Նվիրում եմ Արա Սահյանին

Ծիածանագույն երազանքներիս
պատրանքից կախված
Ես ճոճվում էի տիեզերական
անսահմանության լաբիրինթոսում:
Իրականության ժամանակից դուրս,
ես գնում էի գույներից հարբած,
Երազանքներիս ծիածանագույն
պատրանքին բախված
Ու չգիտեի, թե ուր եմ գնում,
և որն է ճամփաս՝
Ծիածանագույն անսահմանության
լաբիրինթոսում:
3 ապրիլի, 2010 թ., Լոս Անջելես

Ազատություն

Ես պիտի ճախրեմ եղրևանագույն
այն աշխարհներում,
Ուր դատարկության անսահմանության
ոգին է իշխում,
Ուր իմաստնությամբ է լցված ամեն ինչ,
և չկա ոչինչ:
Ես պիտի ճախրեմ մանուշակագույն
երազանքներիս թևերով հզոր
Այն աշխարհներում, որտեղ ննջում է
լռությունն անխախտ ու
ամենազոր:
Ես պիտի ճախրեմ այն աշխարհներում,
Որտեղ Աստծով է լցված ամեն ինչ,
բայց չկա ոչինչ:
Եվ այդ ճախրանքում անսահման, անվերջ
Ազատությունս կգտնեմ հանկարծ,
Ամեն ինչից դուրս, ամեն ինչի մեջ:
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2010 Թ., ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ

* * *

Այս գիշեր կրկին հիշեցի ես քեզ,
Աչքերդ տխուր ու կեցվածքդ հեզ,
Շրթունքներդ մեղմ շշնջացին՝ ոչ,
Ու գլխիս փլվեց աշխարհը ամբողջ:

Տարիներ անցան այդ տխուր պահից,
Ոչ սեր կա իմ մեջ, ոչ հույս, ոչ թախիծ,
Լոկ երկու բան է հիմա կապում մեզ՝
Տարիներն անցած և կեցվածքդ հեզ:
21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2010 Թ., ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ

Հիշողություն

Ես հաշտվել եմ
Անիմաստ հոսքին այս տխմարության,
Ես հաշտվել եմ
Այս տգիտության անհաղթ շքերթին,
Ես հաշտվել եմ
Անիմաստության իմաստին անգամ,
Չեմ պայքարելու ես ոչ մի անգամ:
Ես լռելու եմ,
Որ հիմարներն խոսեն անդադար,
Աչքերս փակեմ,
Կույրերին տալով տեսնելու փառքը,
Եվ անշարժ մնամ,
Որ իրենք վարեն այս կյանքի կառքը:
Իսկ հե՞տո:
Հետո լինելու է այն, ինչ պիտի լինի,
Եվ ինչ որ լինի, թող իրենց լինի:
Չեմ պայքարելու ես ոչ մի անգամ,
Ես հաշտվելու եմ
Մահիս հետ անգամ:
21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2010 Թ., ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ

Շչորս Դավթյանի խոսքը Նաիրի Սահյանի «Եղրեւանագույն պատրանք» բանաստեղծական ժողովածուի մասին

Հայ մեծ բանաստեղծ Համո Սահյանի և տաղանդաշատ բանաստեղծուհի Մարիա Հակոբյանի որդին՝ Նաիրի Սահյանը ընթերցողին է հանձնում բանաստեղծությունների մի փոքրիկ ընտրանի: Ու թեև նա տպագրվում է առաջին անգամ, սակայն նրա բանաստեղծությունները գրական թոթովանքներ չեն և ոչ էլ ավելիին հասնելու նախափորձ: Դրանք կյանքի փիլիսոփայության կիզակետը հատած գործեր են, որոնք նույնիսկ քննություն բռնելու կարիք էլ չունեն: Եվ դա այն պատճառով, որ ծնվել են իրենք իրենց բնական երկունքով, այսինքն՝ այդ տողերը ինքնեկության արգասիք են, ինչպես բնության գարնանային գալուստը, ծառերի ծաղկումն ու պտղակալումը, աղբյուրների ընդերքից բխելը:

Ունենալով բնական պարզություն և զուլալություն, Նաիրիի տողերը, սակայն, ունեն ներքին լարվածություն և կենսափիլիսոփայական եզրահանգումների զարմանալի խտություն: Միաժամանակ այդ ամենը ուղղված է ոչ այնքան ընթերցողին, որքան հենց իրեն՝ տողերի հեղինակին, որովհետև նա կաշկանդված չէ ոչ ընթերցողի, ոչ իր և ոչ էլ աշխարհի առջև ասելու այն, ինչ ինքը զգում է մինչև հոգու հատակը:

Եվ վերջապես, այս մի բուռ բանաստեղծություններով կարելի է եզրակացնել, որ Աստծո առաքած հրեշտակը, ներշնչանքների ծիածանումներով արդեն բախել է Նաիրի Սահյանի դուռը: ●

Արթուր Պատվականյան



Կենսագրություն

Ծնվել է 1962թ. Քաջարանում՝ շիկահողցի ծնողների ընտանիքում: 1979-ին ավարտել է Կապանի թիվ 10 դպրոցը: 1984-ին ավարտել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի ագրոնոմիական ֆակուլտետը և գործուղվել Շիկահողի պետական տնտեսություն: 1990թ. ընտրվել է Շիկահողի գյուղապետ, աշխատել մինչև 1995 թվականը: Անցումային բարդ պայմաններում և պատերազմական ծանր իրավիճակում Արթուր Պատվականյանը նրանցից էր, ում ուսերին էր գյուղի կենսապահովումն ու ինքնապաշտպանության կազմակերպումը: Որոշ ժամանակ բնակվել է Սամարայում: 2018թ. հրապարակել է անդրանիկ «Չինվորի տարի» բանաստեղծությունների գիրքը:

Լուսատիտիկների բույրը

-Պապիի՞...

- Ջանի՛, - մի պահ միայն հոգնած աչքերին իջած նինջից վեր թռավ Գերման պապը:

- Պապի՛ ջան, պապիներն է՞լ են երազ տեսնում:

- Պապինե՞րը... Հա, Արփինե ջան, մեկ-մեկ էլ պապիներն են երազ տեսնում:

- Պ՛ապ, Լուսատիտիկներն էլ են երազ տեսնում, չէ՞: Երբ գիշեր է լինում, իրենք չեն քնում, ուրիշներին լույս են տալիս: Իսկ ցերեկներն էլ քնում են, որ երազ տեսնեն:

- Դե շուտով որ գնանք ջրի, դա իրենց կհարցնես, Արփո՛ւկ ջան:

...Գերման պապին տարեկան ընդամենը մի երազ ուներ. ամռանը թոռնուհին՝ Արփինեն, գա Երևանից, ու պապիկի հետ բարձրանան ալպիական դրախտային բարձրավանդակի մեղվանոցը: Ու հիմա Գերման պապին այդ ալպիական երազի մեջ էր:

- Պապի՞, ա՛յ պապի, չես մոռացել, չէ՞, որ խոսք ես տվել ինձ՝ տանել ջրի: Վե՛ր կաց, պապի՛ ջան, հիմա Լուսատիտիկները քնից վեր կկենան:

Վեր է կենում Գերման պապին, օճորքից կախված դույլերն է իջեցնում: Փոքրիկ աղջնակն էլ ինքնուրույն կոշիկներն է հագնում ու արդեն դռան մոտից ձեն տալիս.

- Պապի՛ ջան, դու դույլերը հագիվ կբերես, ինձ ուսերիդ չդնես, դու իմ հետևից կգաս: Ես ջրի ճանապարհը գիտեմ, չէ՞, պապի՛:

Առաջ է վազում աղջնակը ու պապին կանչում՝ իր հետևից գալ: Իսկ ջրի ճանապարհը տանում է դեպի ձոր՝ լեռնային սառնորակ փոքրիկ գետակը, լեռներից ու ձյուներից, աղբյուրներից սկիզբ առնող քչքչան գետակը:

- Պա՛պ, ա՛յ, պա՛պ, կլինի՞՝ գետի մոտ մի քիչ խաղանք, մինչև Լուսատիտիները քնից վեր կենան:

Ու չսպասելով պապիկի պատասխանին՝ փոքրիկ աղջնակը վազում մտնում է ալպիական փարթամ դաղձերի մեջ: Մի աչքը թոռնուհու վրա, ժպիտը դեմքին՝ լսում է թոռնուհու՝ ամեն հաջորդ Լուսատիտիկի հետ կապված ուրախության ճիչը: Գետաքարին նստած ծխելուց հետո վեր է կենում Գերման պապին, թևերն է քշտում, բռով ջուր է առնում գետակից ու կարոտած կշտացնում ծարավը:

- Պապի՛ ջան, բա էդ ջուրը համո՞վ է, որ խմում ես:

- Ա՛յ, դու էլ էսպես կռացի՛ր ու բռով խմի՛ր աշխարհի ամենահամով ջուրը, Արփո՛ւկ ջան:

- Չէ՛, պապի՛, քո ձեռքերից եմ ուզում խմել: Որ իմ ձեռքերով խմեմ, Լուսատիտիկների հոտը կանցնի: Պապի՛, դու տեսե՞լ ես Լուսատիտիկների հոտը, - ասում է աղջնակը և փոքրիկ թատիկներն մեկնում պապիկի ուղղությամբ:

Գերման պապին հողից կոշտացած ափերի մեջ է առնում նուրբ թաթիկները... Փակ աքերով խորը ներս է քաշում մանկական թատիկներից բուրող անուշաբույր դաղձի հոտը... Աչքերն են լցվում, շատ բան տեսած, բոյ ու բուսաթով տղամարդ պապի աչքերը:

Մանկական թաթիկներից եկող ալպիական դաղձի բույրը կարծես մեղմում է կռվի ժամանակ կորցրած որդու անբուժելի ցավի մորմոքը: Սառնությունից կկոցած աչիկներով փոքրիկը ջուր է խմում պապիկի ափերից:

- Ի՞նչ համով է, պապի, համ էլ ի՞նչ լավ է, որ չլվացի իմ թաթիկների Լուսատիտիկների հոտը:

Տնակների մոտից հարևանի որդին՝ Ժիրայրն է ձեն տալիս.

- Գերմա՛ն պապի, Արփինե՛, ի՞նչ եղաք, է՞. մթնեց արդեն:

- Գալիս ենք, գալիս ենք, - կարծես պայմանավորված պապ ու թոռնուհի միաբերան պատասխանում են, նայում իրար ու ծիծաղում:

- Պապի՛ ջան, բա լուսինը ինչի՞ է կլոր:

- Դե՛, որովհետև լիալուսին է:

- Վա՛յ, վա՛յ... Պապի՛ ջան, մեր մանկապարտեզում համ Լիա կա, համ էլ Լուսին:

- Իսկ Լուսատիտիկ չկա՞ ձեր պարտեզում, - ծիծաղում է Գերման պապը:

- Վա՛յ, պապի՛-պապի՛, բա Լուսատիտիկը մեծ լուսի՞ն է, որ անուն ունենա: Պապի՛ ջան, դու կարող ես չէ՞ շատ Լուսատիտիկների պապին էլ դառնաս:

- Հա՛, Արփու՛կ ջան, էսօրվանից ես բոլոր Լուսատիտիկների պապին էլ կլինեմ:

Դու իրենց կհաղորդես:

- Վա՛յ, պապի՛ ջան, դու աշխարհի ամենալավ պապին ես, չէ՞...

- Որ էդ չաչանակ լեզուդ հոգնի, կասես, մի հարց էլ ես տամ, Արփո՛ւկ ջան:

- Դե լեզուս հոգնեց, պապի՛, բա հարցդ ո՞ւր ա:

- Մինչև քնելը քեզ քանի՞ հատ հարց մնաց:

- Պապի՛ ջան, ճի՞շտ ասեմ, թե՞ սուտ:

- Սո՛ւտ ասա, - ծիծաղելով ասում է պապին:

- Ոչ մի հարց չմնաց, պապի՛, - արդեն հասնելով տնակներին ու զրնգուն ծիծաղով սարվորներին ժպիտ պարգևելով՝ ասում է աղջնակը:

Պապիի տնակը էս սարի ամենասիրուն խրճիթն է՝ սեփական ձեռքերով շինված, ներս ու դրսից փայտե ճիպոտների սիրուն հյուսվածքով: Այդ սիրուն հյուսվածքին էլ գիշերն է աննկատ հյուսվում, թանձրանում, ալպիական քաղցր երազը ավարտին մոտեցնում:

- Դե՛, Արփո՛ւկ ջան, երկու անգամ էլ քնես-վեր կենաս, իջնելու ենք գյուղ, - ասում է Գերման պապը:

- Պապի՛ ջան, ի՞նչ կլինի, որ Ժիրայրի «Վիլիսով» չիջնենք: Պապի՛, արի՛ ես ու դու ոտքով իջնենք:

Առավոտ ծեգին սարվորի կահ-կարասին «Վիլիսին» բարձելով, պապիի ծառերի պատվաստի դանակով նախշազարդ ճիպոտներն առած՝ պապ ու թոռնուհի գյուղի արահետն են բռնում: Արփինեի հարցերն արդեն վերևից են հնչում հաճախ.

- Պապի՛, բա Ժիրայրը որտեղի՞ց գիտի, որ դու մեր սարերի ամենալավ ոչխար մորթողն ես... Պապի՛ ջան, իմ կարթը չես կորցնի, չէ՞, որ գամ, էլի գնանք կարմրախայտ բռնելու... Պապի՛, որ քեզ մի գաղտնիք ասեմ, մամային չես ասի, չէ՞:

- Չեմ ասի, Արփո՛ւկ ջան, ասա՛:

- Պապի՛, ես որ մեծանամ, Լուսատիտիկի հետ եմ ամուսնանալու:

Ու մանկական անկաշկանդ քրքիջը ալպիական ծաղիկների բույրի պես, լեռնային գետակի զուլալ ջրերի քչքչոցի պես հյուսվում է հրաշք սարերին:

Գերման պապին անթաքույց վայելում է... Վայելում է իր ամառային միակ երազը: Իսկ ալպիական դաշտերն արդեն վերևում են մնում, խանդոտ քամին հեռուներին է տանում ալպիական երազը: Գյուղից վերև՝ հին շենատեղում, պապը ուսերից իջեցնում է Արփինեին՝ մի քիչ շունչ առնելու: Նստում է մի սալաքարի վրա, ծխախոտ կպցնում ու ասում.

- Վա՛յ, Արփո՛ւկ ջան, ոնց որ է գյուղի ճանապարհը կորցրինք:

- Պապի՛ ջան, դու մենակ չվախենաս, - թփերի ու քարերի միջով այս ու այն կողմ է վազվզում փոքրիկ աղջնակը.- պապի՛ ջան, չվախենաս, հիմա ես գյուղի ճանապարհը կգտնեմ:

Պտտվում, պտտվում, գալիս կանգնում է այն արահետի վրա, որով գյուղ էին իջնում, ու հիացած բացականչում.

- Պապի՛, ես գյուղի ճանապարհը գտա: Տեսա՞ր, պա՛պ, որ ասացի չվախենաս, գտնելու եմ:

Որքան էլ Գերման պապին ձգել էր փորձում իր միակ արթմնի երազը, արահետը գյուղի թագադիր մասում գտնվող գերեզմաններին է հասնում:

Այստեղ երազը տխուր է դառնում, ու...Աչքերն են լցվում...

Փոքրիկ երազն արդեն Երևանի ճանապարհն էր բռնել, երբ Ժիրայրն է ձայնում.

- Գերմա՛ն պապի, դաղձով թեյ եմ դրել օջախին: Հոգնել ես, արի՛ դաղձով թեյ խմենք:

Տխուր ու մտածկոտ քայլերն են ձգվում դեպի հարևանի բակը: Ճթճթացող օջախի կրակի մոտ նստում է պապը, անխոս վերցնում թեյի բաժակը երկու ափերի մեջ: Փակ աչքերով խորը ներս է քաշում իր սիրելի սարերի, լեռնային գետակի դաղձի բույրը, մանկական թաթիկների Լուսատիտիկների բույրը...

●

Ստեղծագործությունների մասին

Արթուր Պատվականյանի խոսքն ու քնարական բնույթի աշխարհական պահանջը դուրս են լսարաններ ու դափնիներ գրավելու գոռոզական տենչանքներից: Երկխոսություններով ու մենախոսություններով փորձ է արել ու ադամական խոսքը հնչեցնելու եռանկյունաչափ սահմանում գրագրել ասելիքն ու հույզը, որպեսզի իրեն սիրելի մարդկանց թողնի հոգևեր և փոքրիկ հուշարձան: Պարտադիր չէ ամենևին, որ ներքին խոսքի հրապարակումը լինի ծափեր կորզելու համար, ակնկալիքներ չկան, որ փխրուն և կարծրակամք շիկահողցուն դասական շրջանակներում պիտի տեղավորենք, բայց ակնհայտ է, որ բոլորս ունենք բանաստեղծական հոգու հետ շփվելու մեծ պահանջ, որ ցավոք մեր օրերում շաղախվում է չոր ու չափագրված մտապատկերներով:

Ես իսկապես հաղորդակից եղա զավակին ու ընկերոջը հասանելի, գիտակցված, բայց չբարձրաձայնված մտքերին, ես էլ բանաստեղծական խոսքի թևով մտերմացա բարուն... Եվ որքան էլ զարմանալի, բայց խոստովանելի է, որ անպաճույճ ու անզարդ խոսքերում տակավին կան հույզեր, որ հուշի ու ներկայի կենսակերպով լուսավոր են բանաստեղծի համար և նույնքան մտորելու տեղիք տվող ընթերցողին: Այո՛, մթությունը շղարշված է ապրումի ու հույսի ծիրանաթել պսակով, բայց կան զգացմունքներ, որ բանաստեղծական խոսքախաղում անճանաչելի է դարձնում նույն աշխարհում քայլող, բոլորին «բարի լույսը» տվող և «բարի գիշերն» առնող հեղինակին... Երբեմն պարզ խոսքերին հաջորդած նույնքան պարզ խոսքերը շփոթեցնելու չափ մոտեցնում են պարզագույնին, բայց գույնի ու նյութի, երկաթյա գաղափարի ծանրությունից անկումի գագաթին չեն հասնում... Խոսքը մտքին այնքան համոզիչ է ետ դարձնում դեպի լքված շքամուտք կամ չորացած ընկուզենու նոսրացած ստվերը, որ թևաթափ նստում ես բանաստեղծության ընկեր Արթուրի մոտ, շնչում նույն օդն ու վայելում նույն մտքի ճախրանքը և զուգահեռաբար մտորում. ի՞նչը դատարկ թողեց նա, ու՞մ էր կանչում, ու՞ր պիտի հասներ...

Արթուր Պատվականյանի խոսքը կմնա ընթերցողի ու նրա բարեկամ-ընկերոջ ափի գծածալքերում, հողին հպվելիս եզրեր կլինեն ափին, որ կծիրեն մի պատառիկ հուշ, կլինեն կախարդական և սովորական պատկերներ՝ հարցահարույց ու խոհական, ափով ջուր առնելիս ամեն ինչ պարզ կլինի... ջրի չափ պարզ է, ծարավ հագեցնելու չափ խմվող...

Մ. ՔՈՒՄՈՒՆՑ /Բ.Գ.Թ., ԴՈՑԵՆՏ, ԳՈՐԻՍ/

Ապրիլապատում

Ռոբերտ Աբաջյանի հիշատակին

Մառախուղը ծածկեց ժայռերը
Սառն ու սպիտակ հարսնաքողով,
Եվ մարեց համր խաբկանքը
Հեռավոր ու օտար սահանքով:
Ու երկնաքեր պատերը կորան,
Եվ փողոցները խոր այս ձորերի,
Մառախլապատ ելան իմ տողերը
Լույս որոնելու ակնածանքով:
Լույսն այսօր լամպի լցված է արյունով,
Թարթում են ինչ-որ մեկի աչքերն ասես,
Փակվել եմ այստեղ սիրով ու ցավով,
Մի ջահել Չինվոր երկինք հեռացավ:
Ապրիլ, 2016 Տոյատի

* * *

Դեպի ուխտատեղ
Մի օր քայլեցի,
Քանդված, ավերված
Մատուռին այցի,
Ու պատի մի քար
Ծնկեցի, վերցրի,
Իր մայր տեղում
Ես այն դրեցի:
Հասկացա հանկարծ.
Այդ քարի համար
Ես դարձա Աստված:

ՀՈՒԼԻՍ, 2015 ԱՆԴՈԿԱՎԱՆ

* * *

Սառեց քո հայացքը մի պահ,
Աչերդ, ափսոս, գերված չեն ինձնով,
Մատներս ես տամ մատներիդ ի պահ,
Գուցե բռնկվեմ կրակե վրձնով:

ԱՊՐԻԼ, 2017 ՄԵՂՐԻ

Դուխիկ Հայրապետյան

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծնվել է 1947 թ. Գորիսի շրջանի Հալիձոր գյուղում: Ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: Ավարտել է Երեւանի գյուղատնտեսական ինստիտուտի ագրոնոմիական բաժինը: Գրել սկսել է դպրոցական տարիներից: Բանաստեղծությունները տպագրվել են շրջանային եւ հանրապետական մամուլում 2001 թ. «Իմն է երգն այս» գրքույկը (2001 թ.): Այնուհետեւ՝ 2011 թ. լույս է տեսել «Հայրենի եզերք» ժողովածուն (138 էջ), 2013 թ. տպագրվել է նրա երրորդ գիրքը՝ «Զորաց ձորեր» (136 էջ), 2014 թ. տպագրվել է «Լռությունս ճաք է տվել» գիրքը (194 էջ), 2014 թ. լույս է տեսել «Իմ շող շաղիկներ» մանկական գիրքը (154 էջ), 2015 թվականին «Մթնշաղի ցոլքեր» գիրքը (180 էջ):

Զոն Գուսան Աշոտին

Չափ ու ձեւի մեջ
Սահման կա անշուշտ,
Սակայն իմ սերը
Սահմաններ չունի:

Բառ ու բանով չէ,
Որ պիտի գովեմ՝
Հիշեմ կերպարդ
Ու ոգեւորվեմ:

Դու մեր բոլորի
Պարծա՛նքն ես եղել,
Քո լույս երգերն են,
Մեզ մեծացրել:

Հպարտ ենք քեզնով,
Ո՛վ դու մեր Գուսան,
Սյունյաց սարերն են
Տաղանդիդ վկան:

Ոսկե շնորհքդ՝
Կապրի՛ դարեդար,
Հայ հող ու ջրից
Մերած մեծ գուսան...

Դաշտում՝ կարոտ ես,
Արտում՝ ցորեն հաց,
Տանը՝ գորով ես,
Այգում՝ սիրո կանչ...

Մեր թխպի մալանչ
Լույս-քուլաներով
Հավերժ լողում է
Տաք շունչդ, Գուսա՛ն...

Դու հայի սրտի
Սերն ես՝ միշտ առկա՝
Քո ժողովրդի
Հիացքը վկա՛...

Նինա Դանիելյան

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծնվել է 1951թ. Կապան քաղաքում՝ հանքագործների ընտանիքում: 1968-ին ավարտել է Լենհանքերի միջնակարգ դպրոցը: Պահեստի ենթասպա է: Զորացրվելուց հետո առաքելություն է վերցրել մոռացումից փրկելու ժամանակին աշխույժ եռուզեռով ապրող, նախկինում Կապան քաղաքի արդյունաբերական կենտրոն համարվող իր հարազատ ծննդավայրի՝ Լենհանքեր բանավանի պատմությունը: 2019-ի հուլիսին լույս է տեսել «Կապանյան ուրվագծեր» գիրքը, որտեղ զետեղված են նրա բանաստեղծությունները:

ՈՆՑ ԿՈՒԶԵՆԱՅԻ...

Ո՞նց կուզենայի նորից մանկանալ,
Իմ բանավանում կրկին «թրև գալ»...
Մայրիկս կանչեր՝ այ բալա, ու՞ր ես,
Իսկ հայրս գոչեր՝ համը հանու՛մ ես...

Ու ինձ գուրգուրող նրա հայացքից՝
Ես ոգևորված մոտը վազեի,
Իմ կոշտ ու կոպիտ հայրն էլի ժպտար
Եվ իր գիրկն առած՝ «գի՜ժ բալաս» ասեր...

Առատ ու հարուստ մեր խանութներից
Ես տեսակ-տեսակ կոնֆետ գնեի,
Բուլվար վազեի՝ գրպանս լցրած,
Ընկերներիս հետ կոնֆետ «չրթեի»:

Հարայ-հրոցով խաղեր խաղայինք՝
Չոր տերևների ճիպոտահարմամբ,
Սատկած ծիտիկի «թաղումն» անեինք՝
Մանկական խորունկ անհուն տխրությամբ...

Մեր երազների հետևից ընկած՝
Ակացիա ծառին երկա՜ր նայեինք...
Ու ընկերներով կողք-կողքի նստած՝
Կռվեինք, սակայն իսկույն հաշտվեինք...

Հանքերի դուռը գնայինք հետո՝
Հանքափորներին դիմավորեինք,
Սաղավարտների ճրագի ներքո՝
Տունդարձի ճամփան նորից բռնեինք:

Իսկ երեկոյան «կլուբ» վազեինք,
Ու հնդկական ֆիլմ նայեինք հուզված,
Հետո «թիժաթռիչ» լավաշ ուտեինք,
Տաքուկ թոնիրի պռնկին նստած...

Ու ոտքերը մեր թոնրի մեջ կախած՝
Դատարկ խոսեինք՝ «տակից ու գլխից»...
Հերթով հեքիաթներ պատմեինք միմյանց,
Իսկ հետո... հոգնած մու՛շ-մուշ քնեինք...

Դուխիկ Հայրապետյանի ստեղծագործությունների մասին

Գիտեմ, ճանաչում եմ ստեղծագործ Դուխիկ Հայրապետյանին:

Ծանոթ եմ նրա գրքերին:

Դուխիկ Հայրապետյանը պատկանում է այն մարդկանց թվին, որոնց համար ստեղծագործելը ապրելակերպ է: Նա պարզապես առանց ստեղծագործելու չի կարող:

Ստեղծագործում է եւ ինքն իր համար, եւ իր սիրելի գորիսեցիների, եւ հայ մարդու:

Դուխիկ Հայրապետյանն ուզում է ստեղծել իր բաժին գրականությունը: Ստացվում է, թե չի ստացվում, դա բոլորովին ուրիշ հարց է:

Մենք մեր առջեւ խնդիր չենք դնում նրա ստեղծագործությունը քննել՝ գեղարվեստական տեսակետից: Ուղղակի նա շատ է ցանկանում, որ առաջին հերթին Զանգեզուրը ճանաչի իրեն: Նա ուզում է գնահատված լինել ընթերցողների կողմից:

Մի կողմ դնելով գեղարվեստական գրականության առջեւ դրված խնդիրներն ու պահանջները, ասենք, որ Դուխիկ Հայրապետյանն ուզում է մեր ժամանակներին հարիր բովանդակություն դնել իր ստեղծագործությունների հիմքում եւ դիմում է զանազան թեմաների:

Սեր, հայրենիք, ծննդավայր, եղեռն, Գորիս, մարդ, բնություն- ահա նրա ստեղծագործության գլխավոր թեմաները: Այս թեմաների շուրջ նա իր ասելիքն ունի որպես մարդ, որպես մարդ-քաղաքացի:

Այս տեսակետից մայրական խրատականությունը մեծ տեղ ունի նրա գրվածքներում: Նրա ստեղծագործության հիմնական մոտիվը բարությունն է: Ամենուր ու ամեն տեղ նա բարություն է քարոզում:

Դուխիկ Հայրապետյանն ինչ ասում է, միանգամայն անկեղծ է ասում: Նրա ասածները մոր սրտից բխած անկեղծ խոսքեր են՝ ուղղված մարդկանց, սերունդներին:

Նա ուզում է, որ բոլորը բարի լինեն, լինեն՝ «Տեր Աստծո խոնարհ ծառաները»:

Դուխիկ Հայրապետյանը սերունդների բարի խորհրդատուն է:

Նա խրատաբանությունների մի շարք ունի՝ գրված պարզ ու հասարակ լեզվով:

Ինչպես բոլոր մարդիկ, առհասարակ, նա էլ խորհուրդ է տալիս հեռու մնալ չարից ու չարագործությունից, աշխարհում հայտնի դառնալ բարի ու անշառ գործերով:

ԱՐԿԱԴԻ ԾԱՏՈՒՐՅԱՆ

Նինա Դանիելյանի ստեղծագործությունների մասին

Կապանի Լենհանքեր բանավանում անցկացրած մանկության և ապա ծառայության բերումով Նինա Դանիելյանը ճանաչել է մարդկանց, առնչվել ամենատարբեր իրադարձությունների, որոնք հետագայում իմաստավորել և վերածել է գրքերի: Անցյալը փրկելու նրա առաքելությունը կատարված է:

Ժամանակին նրա մեքենագիր էջերին ծանոթացել էր Ռոբերտ Էջանանցին և հայտնել այն միտքը, որ Նինան խոպանի մշակ է: Իրավացի էր մաթեմատիկոս և բանահավաք մեր մեծ հայրենակիցը: Նինան գնաց չտրորված ճանապարհով, բերեց նորություններ: Անցյալում քչերն են անդրադարձել հանքաշխարհին, իսկ եթե անդրադարձել են, ապա գրել են աշխատանքային հաջողությունների, խորհրդակցությունների, պլանների, ցուցանիշների մասին:

Իսկ ահա «Ես և իմ հանքաշխարհը» գիրքը մեզ տանում է այլ ճանապարհով, որտեղ մարդն է, պարզ, հասարակ, սովորական մարդն իր հերոսական աշխատանքով, առօրյայով, մտորումներով:

Նրա հերոսները սակայն միայն լեռնագործներ չեն, այլ ամենատարբեր զբաղմունքի տեր մարդիկ: Նրանք փրկվել են մոռացումից:

Նինան ճշմարտության տարեգիրն է՝ հեռու կուսակցական և քաղաքական ընկալումներից, ահա թե ինչու շատ բան նա իմաստավորում է իր ընկալմամբ և խոհերով:

ԳՐԻՇԱ ՍՄԲԱՏՅԱՆ
ՊԱՏՄԱԲԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉ



Խոսք՝ «Սյունյաց երկիր. մշակութային» պարբերականի խմբագրակազմին

Սյունիքը մեր պատմության ընթացքում միշտ էլ եղել է հայոց ոգու վիճակը բարձր պահող երկրամաս: Տվել է հզոր զինվորականներ, պատմաբաններ, գիտնականներ և արվեստի ռահվիրաներ: Միայն Տաթևի դպրոցը հիշատակելը կխոսի այդ բոլորի մասին:

Անպայման պիտի առանձնացնենք մեր գրական մեծերին՝ Ակ. Բակունցին, Ս. Խանզադյանին, Ս. Այվազյանին, Հ. Սահյանին, Գուսան Աշոտին, Գ. Սևունցին... Պատմաբաններից ոմանք իրենց գործերում հյուսել են գեղարվեստական պատումներ: Ո՞նց կարող ենք չհիշել Գրիգոր Տաթևացուն ու Ստեփանոս Օրբելյանին:

Նաև ուզում եմ նշել ժամանակակից սյունեցի գրողներ Հրանտ Գյուլասարյանին, Գագիկ Դավթյանին, Լևոն Սահակյանին, Ավագ Եփրեմյանին, Արկադի Ծատուրյանին, Տիգրան Գրիգորյանին, Արթուր Առաքելյանին, Էդուարդ Հարենցին, Ներսես Խառատյանին և թարգմանչուհի Սուսաննա Խաչատրյանին, ովքեր՝ լինելով այդ հրաշք երկրամասի ծնունդներ, ստեղծագործում և ապրում են սյունեցու պայքարի ոգով:

Շատ, շատ կցանկանայի, որ ՀԳՄ Սյունիքի մեր բաժանմունքը համալրվեր նոր անուններով:

Ողջունում եմ «Սյունյաց երկիր» եւ «Սյունյաց երկիր. մշակութային» պարբերականների խմբագիր Սամվել Ալեքսանյանի այս նախաձեռնությունն ու մեծ ուշադրությունը՝ գրականությանը և մշակույթին:

ԷԴՈՒԱՐԴ ՄԻԼԻՏՈՆՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Հարցազրույց Հայաստանի գրողների միության Սյունիքի բաժանմունքի նախագահ Լեւոն Սահակյանի հետ

Սյունիքի գրական աշխարհը ներկայացնելու մեր մտադրությունը շատ թե քիչ լիարժեք իրագործված չէր լինի, եթե սույն համարում չպատասխանեինք մեկ հարցի եւս՝ Հայաստանի գրողների միությունը եւ այդ միության բաժանմունքը որքանո՞վ են մասնակցում երկրամասի գրական կյանքի կազմակերպմանը: Հարցը պարզաբանելու համար զրույցի հրավիրեցինք ՀԳՄ Սյունիքի բաժանմունքի նախագահ Լեւոն Սահակյանին:



– Պարոն Սահակյան, նախ կուզենայինք իմանալ, թե ի՞նչ ասել է Հայաստանի գրողների միության Սյունիքի բաժանմունք:

– Հայաստանի գրողների միությունն ունի բաժանմունքներ բոլոր մարզերում, և դրանք կոչված են հայտնաբերելու սկսնակ ու ոչ սկսնակ ստեղծագործողների, օգնելու, խորհուրդ տալու նրանց, հանրայնացնելու գործերը, ավելի արժանավորներին երաշխավորելու, որ (ցանկության դեպքում) դառնան ՀԳՄ անդամ:

Բաժանմունքի նախագահն աշխատավարձ չի ստանում, թերթ կամ գիրք հրատարակելու համար էլ պետությունից գումար չի հատկացվում:

– Հայաստանի գրողների միությանն անդամակցող սյունեցիների թիվը կուզենայինք իմանալ նաեւ: Ի՞նչ հիմքով կամ ի՞նչ սկզբունքով են ստեղծագործողներն ընդունվում ՀԳՄ շարքերը:

Եվ արդյո՞ք միայն ՀԳՄ սյունեցի անդամներն են Ձեր գլխավորած բաժանմունքի հետաքրքրությունների տիրույթում, թե՞...

– Ներկա պահին ՀԳՄ-ին անդամակցում է տասը սյունեցի գրող՝ Արկադի Ծատուրյան, Հրանտ Գյուլասարյան, Գագիկ Դավթյան, Ներսես Խառատյան, Տիգրան Գրիգորյան, Արթուր Առաքելյան, Սուսաննա Խաչատրյան (թարգմանչուհի), Էդուարդ Հարենց, Ավագ Եփրեմյան, Լևոն Սահակյան, Մարի Առաքելյան, Վարդան Սարգսյան, Վարուժան Գազարյան:

ՀԳՄ անդամ դառնալ կամեցողը պետք է ունենա գոնե մեկ տպագրված գիրք, ՀԳՄ անդամ հանդիսացող երեք գրողի երաշխավորագիր, որից հետո դիմի ընդունող հանձնաժողովին:

– Ի՞նչ է տալիս ՀԳՄ անդամ լինելը բանաստեղծին, արձակագրին եւ ընդհանրապես ստեղծագործողին:

– Տալիս է եռանդ, գնահատված լինելու զգացողություն, «Գրական թերթում» տպագրվելու հնարավորություն, ճանաչողություն ավելի լայն մասշտաբով:

Սակայն, եթե հաշվի առնենք, որ 10-րդ դարում Նարեկացին ՀԳՄ անդամ չէր ու գրող էր, պետք չէ ապրել ամեն գնով ՀԳՄ անդամ դառնալու մարմաջով: Ստեղծագործողին ոչ թե ՀԳՄ անդամության վկայականն է գրող դարձնում, այլ նրա բարձրակարգ գործերը:

– ՀԳՄ Սյունիքի բաժանմունքի գործունեության մասին՝ մի փոքր ավելի հանգամանալից:

Ձեզ հաջողվո՞ւմ է Սյունիքի գրական հասարակության ընթացքը շատ թե քիչ ուղղորդել կամ այդ հանրությանը մի դաշտ բերել:

– Արդեն 4-րդ տարին է, որ ՀԳՄ Սյունիքի բաժանմունքի նախագահն եմ: Գորիսի Մշակույթի տան երկրորդ հարկում ունենք Գորիս համայնքի ղեկավարի կողմից անհատույց հատկացված գրասենյակ (Գրոջախ):

Ընկերների և կամեցող անձանց նվիրատվությունների շնորհիվ այն կահավորել ու այնտեղ պարբերաբար անց ենք կացնում գրական հանդիպումներ, գրքերի շնորհանդեսներ, տարբեր միջոցառումներ: Յուրաքանչյուր սյունեցի ստեղծագործող տեղյակ է բաժանմունքի մասին, հաճախակի շփվում ենք ֆեյսբուքով, հեռախոսով, առանձին պլանավորված և պատահական հանդիպումներով: Այնպես որ՝ ոչ մի ստեղծագործող անտեսված չի կարող լինել և ոչ մի տաղանդավոր գրիչ չի կարող մնալ անհայտ:

– Մեզ հետաքրքրում են երիտասարդ ստեղծագործողների, սկսնակ գրողների եւ ՀԳՄ (այդ թվում՝ բաժանմունքի) հարաբերությունները:

Նախ՝ նրանց գործերի հանրայնացման խնդրի մասին:

Նախկինում, օրինակ, Սյունիքի բաժանմունքն ուներ պարբերաթերթ, որը նաեւ այդ նպատակին էր ծառայում:

Իսկ լուսահոգի Էդուարդ Զոհրաբյանի՝ բաժանմունքի նախագահ լինելու ժամանակ, առնվազն երկու անգամ Սյունիքի գրողների երկերի, եթե կարելի է այդպես ձեւակերպել, ընտրանի հրատարակվեց: Դրանք՝ մի շարք թերություններով հանդերձ, ուշագրավ էին:

Եվ ուրեմն՝ ինչպե՞ս եք հանրայնացնում նոր անունները եւ գրողների լավագույն գործերը:

– Շնորհիքով ստեղծագործողների փնտրտուքը սկսել ենք դպրոցահասակ երեխաների շրջանում՝ այցելելով մարզի դպրոցներ, ԲՈՒՀ և հարցումներ արել մարզի մասշտաբով: Պատրաստակամ և բաց ենք ամեն ստեղծագործողի

Կյորվա աստղերը

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 32

հարսին պատեհ առիթով պատառ-պատառ անելու պատրաստ հովազի: Ասենք Փոլին էլ հովազի առջև խեղճացած ջեյրան չէր: Ո՛չ: Նա գիտեր իր ուժեղ կամքի գինը, գիտեր, որ պստիկ է, բայց Ճստիկ է, գիտեր, որ Սիմոնի պես երազկոտ տղամարդուն հենց իր պես կին է պետք, գիտեր, որ դրանով է հենց Սիմոնի սիրտը գրավել ու կապել իրեն: Նա ոչնչով աչքի չընկնող արտաքին ուներ, փոքրամարմին էր, թխադեմ, նույնիսկ անբարետես, ի տարբերություն գեղեցկադեմ Սիմոնի, որ Մոնմարտրի բոհեմի անփույթ նկարչի փարթամ մազափնջով գլուխ ուներ և Ապոլոնի կիսադեմ: Չի կարելի բացառել, որ հենց այդ հավակնոտ կերպարի վսեմությանը համապատասխան լինելու համար էր երկնային տերը նրան ոտանավորներ գրելու ձիրք շնորհել: Սիմոնը Կյորվա գյուղական դպրոցում մի կերպ ուսուցչություն անելուց բացի թաքուն ոտանավորներ էր հորինում, աշակերտական վանդակավոր տետրը մշտապես ծոցում պահած: Ասել կուզի՝ նա բանաստեղծ էր:

– Հերիք քիթդ էդ թղթերի մեջ խոթես, – ստեղծագործական ծածուկ ներշնչանքից սթափեցնում էր նրան Փոլին ու թոնթորում, - խելքդ գլուխդ հավաքիր, մի լուրջ բանի կաց, այ շա՛շ: Տանը անելու բան չկա՞, ինչ է...

Սակայն բանաստեղծական ձիրք շնորհելու հետ մեկտեղ Աստված մի փոքրիկ անարդություն էր արել՝ զրկելով Սիմոնին իր շնորհը գիտակցելու կարողությունից: Սիմոնը միամիտ էր մանկան պես, ասես լուսնից ընկած լիներ: Մի խոսքով, այս աշխարհից չէր: Այս հանգամանքից օգտվում էր Փոլին՝ ամուսնուն միշտ բռան մեջ պահելով, որից կեսուրը և Սիմոնի քույրերն էլ ավելի էին ատում հարսին ու հետզհետե խորթանում իրենց թուլակամ Սիմոնից: Իսկ Հովհանը երբեք կանանց պայքարին չէր խառնվում, ուստի ավանակի դավաճան արարքից վախճանված կեսրայրի վրա Փոլին, անկասկած, անկեղծորեն էր արցունք թափում:

Նման խառն ու անբարենպաստ կենսապայմաններում Փոլին այդուհանդերձ կարողացել էր ամուսնուց չորս աղջիկ ծնել, ամեն պտղավորվելուց տղա զավակ հուսալով և ամեն աղջիկ բերելուց՝ էլ ավելի քամահրելով տղա զավակ սաղմնավորելու անկարող բանաստեղծին:

– Գոնե մի տղա-բալա տուր, տեր Աստված, գոնե մի տղա: Ախր ու՞մ եմ ինչ արել..., – զուր աղերսում էր Փոլին:

Չորրորդ, վերստին աղջիկ զավակի լույս աշխարհ գալն ընտանիքի բազմացման վերջը նշանավորեց և ի դերև հանեց Փոլիի՝ գյուղի հասարակության աչքում ամուսնու տղամարդկային պատիվը ինչ-ինչ բարձրացնելու հույսերը:

Քանի որ ատելությունը մարդկային կրքի բացասական կարգատեսակ է ու աննախատեսելի հետևանքներով հղի, բացի դրանից Փոլին ուզում էր դուրս գալ կեսուրի և անտեսանելի թելերով քաղաքից իր կյանքը հսկող ամուսնու քույրերի իշխանությունից, որ հատկապես սաստկացել էր կեսրայրի անակնկալ մահից հետո, գուցե թե նաև ցանկալով ինչ էլ ուզում է լինի ազատվել անբարեհուսչ Փոլիից և վերականգնել իր նրբահուսչ Ֆլորա անունը, ուստի մի գեղեցիկ օր նա հայտարարեց, որ որոշել է Կյորուից տեղափոխվել Արարատյան դաշտավայր՝ Երևանին մոտ հարթավայրի մի գյուղ:

– Ը՛-ը՛հ, վրաս հալ չկա, կժի տակ մեջքս ծռած ամեն օր էս սարերի հետ կռիվ եմ տալիս, - հեծեծում էր Կյորվա կյանքի դժնի պայմաններից իսպառ չորացած, թխադեմ, պստիկ, սակայն Ճստիկ Փոլին: - Կերածներս էլ մի բան չի՝ լավաշ – մածու՞ն, մածու՞ն -լավաշ: Գնանք, բալքի Երևանում մի բանի հասնենք:

Սիմոնն առանց ոգևորության ընդունեց կնոջ որոշումը: Նա իր ընտանիքի կյանքը բարեփոխելու որևէ ծրագիր չուներ, ասենք, որևէ բան փոխելու ընդունակ էլ չէր: Ինքն էր ու իր Կյորուն, իր սարերը, իր քերծերը, իր աստղալի երկինքը, քարանձավը՝ բնության տված ապաստան: Էլ ի՞նչ է պետք բանաստեղծ մարդուն: Այնինչ մայրաքաղաքի մատույցներում ընդամենը հող էր մշակելու և շուկայում օր մթնեցներ՝ հոգևոր կյանքը նյութականից գերադասող մարդուն բնավ չհիրապուրող հեռանկար: Բայց քանի որ լոկ աղջիկ-արմատներ սաղմնավորելով, կնոջ վրա նա այլևս իշխանություն չուներ, չհամարձակվեց դիմադրել:

– Թող քո ասածը լինի, – հեզորեն համաձայնեց նա, բայց մտքում երդվեց, որ ինչ էլ լինի, երբևէ կրկին կվերադառնա Կյորու, սակայն, ի տարբերություն իր հեռատես կնոջ, չզգալով, որ բոլշևիկյան կոչերի մեջ այդպես էլ չբարգավաճած ու վերջնականապես հյութաքամ եղած իր հայրենի գյուղը փաստորեն սպառվել է և դուրս մնացել աշխարհի գոյընթացից:

համար: Նախկինում հրատարակված «Գրական Սյունիք» թերթը, Արթուր Առաքելյանի խմբագրությամբ, տպագրվել է Մարտին Զիլֆուղարյանի հովանավորությամբ: Էդուարդ Զոհրաբյանը, այո, շնորհակալ գործ է արել՝ գումարներ հայթայթելով, գրքեր է տպագրել՝ դրանցում ներառելով սյունեցի գրողների ստեղծագործությունները: Երկու տարուց ավելի է՝ դիմել և դիմում եմ սյունեցի մեծահարուստների՝ սյունեցի գրողների նոր ստեղծագործությունների ժողովածու հրատարակելու համար, սակայն մինչ այսօր արձագանք չկա:

Նոր անուններն ու գործերը հանրայնացվում են ֆեյսբուքի, միջոցառումների, հանդիպումների և տպագրված գրքերի միջոցով:

– Սյունիքի գրողներն էլ ժամանակ առ ժամանակ գրքեր են հրատարակում: Բայց դրանք, ցավոք, այլեւս հեռու են իրադարձություն լինելուց: Ո՛չ շնորհանդես, ո՛չ քննարկում եւ ոչ էլ (առավել եւս) անաչառ գրական քննադատություն...

Եվ տխուր պատկեր է երբեմն ստացվում՝ տպագրված գրքեր, գրքեր, բայց իրենցից գրական երեւույթ ներկայացնող ոչ մի արժեք, ճանաչողական եւ դաստիարակչական առաքելության բացակայություն, ասելիքի անընկալելիություն:

Չե՞ք կարծում, որ գրական ազնիվ քննադատության, գրականագիտական մոտեցումների բացակայության արդյունք է այդ ամենը, թեեւ հասկանում ենք, որ դա ՀԳՄ մասնաճյուղի խնդիր չէ, այլ...

– Փաստ է, որ գեղարվեստական արժեք չներկայացնող գրքեր տպագրվում են, որովհետև երկրում տիրում են հանցավոր անտարբերությունը, անսկզբունքայնությունը: Տպարանները, հանուն փողի, ամեն անտաղանդ շարադրանք գիրք են դարձնում, գրականագետներն ու գրաքննադատներն էլ, կարծես, ձեռք են թափ տվել այդ ամենի վրա: Սակայն փաստ է և այն, որ իսկական գրողը կա և լավ գիրքը կա: Ինչպես նշեցի վերևում՝ «Գրօջախում» պարբերաբար կատարվում են գրքերի շնորհանդեսներ, քննարկումներ, գրական հանդիպումներ, խորհրդատվություններ...

– Համընդհանուր մի ցավ կա. ընթերցողը հեռանում է գրքից...

Դա, իսկապես, մեր ժամանակի ամենացավոտ իրողություններից մեկն է:

ՀԳՄ-ն կամ հենց ՀԳՄ Սյունիքի բաժանմունքը ի՞նչ են անում գրքի հանդեպ պատկառանքը, գիրք-ընթերցող կապը հնարավորինս վերականգնելու համար:

– Պետք է չմոռանալ, որ ընթերցանությունն էլ աշխատանք է: Իսկական ընթերցողը գիտի, թե ում գործերն է կարդում և բավարարվածություն ստանում իր ընթերցանություն-աշխատանքի արդյունքից: Ու ես համոզված եմ, որ նա երբեք չի հեռանալու գրքից:

Իսկ նրանք, ովքեր չեն ուզում կամ ծուլանում են կարդալ, արդարանում են այսպես՝ «Հիմա ոչ լավ գրող կա, ոչ լավ գիրք»: Ու դրանով վիրավորում են նախ իրենք իրենց, հետո էլ՝ իսկական գրողին:

ՀԳՄ-ն և ՀԳՄ Սյունիքի բաժանմունքը պաշտոնապես հայտարարում են՝ պարոնա՛յք, ազգն ունի լավ գրողներ և լավ գրքեր, գտե՛ք ու կարդացե՛ք, այլապես ոգու սովն ավելի շուտ կսկսի հետապնդել ձեզ...

– Չե՞ք կարծում, որ գրական ազնիվ միջոցառումներն էլ հիշողություն են դարձել. երեկույթներ, գրական սալոններում բանավեճեր, մտահոգ քննարկումներ...

Հասկանում ենք՝ մեր ազգային արժեհամակարգի հանդեպ ձեռնարկված դաժան գրոհը, կարծեք, տեղ չի թողել նման միջոցառումների համար, իսկ ի՞նչ անել...

– Այո՛, գերզարգացած տեխնիկական միջոցները մտնելով մեր կյանքի մեջ, շատ բան փոխեցին ու շարունակում են իրենց լավ ու վատ գործունեությունը: Վեպերը վեպիկներ դարձան, գրքերը՝ էլեկտրոնային, ընթերցանությունը՝ լսովի... Բայց նորից կրկնում եմ՝ լավ գրողը կա և լավ գիրքը կա: Գրողն իր գործն անում է պարտաճանաչորեն, նվիրաբար ու սիրով: Կարծում եմ, եռանդուն ու շնորհալի կազմակերպիչների պակասի հարցը կա և բարի կամեցողության: Դժբախտաբար, դրսից ու ներսից մեր ազգային արժեհամակարգի վրա ցեխ շպրտողների թիվն է ավելանում, օրենքները մղվում են հետին պլան...

– Գեղարվեստական գրականությունը, ինչպես եւ արվեստի մյուս ճյուղերը, կյանքի ճանաչողության, նրա գաղափարական արտացոլման, իրականության գնահատման ու արժեւորման ձեւերից է, որը թերեւս իրականացվում է գեղարվեստական պատկերավոր խոսքով:

Քանի որ մեր ժողովուրդը ծանրագույն ժամանակներ է ապրում՝ Սյունիքի օրինակով փորձենք չափել-նժարել՝ այդ ամենը գրական ստեղծագործություններում արտացոլելու միտում տեսնո՞ւմ եք:

– Այո՛, տեսնում եմ ու հարցին կպատասխանեմ վերջերս գրած իմ մի բանաստեղծությամբ.

Կիզում է հոգիս կրակն ամոթի,
Դավաճանները չեն հայտնաբերվում,
Ինչքա՞ն դեռ պիտի ազնիվ հայն ապրի
Անօրենության ժամանակներում:

Թնդանոթները էլ չեն դղրդում,
Զայնը չի լսվում ծանր ռումբերի,
Զինվոր տղերքը շարքեր են կազմել
Ծաղկազարդ տեսքով հողե թմբերի:

Ա՛խ, իմ հայրենի՛ք, իշխողներդ՝ գող
Եվ տականքներդ՝ եռերեսանի,
Անհրաժեշտ պահին մենք զենք չունեցանք
Ու դիվանագետ մի շնորհալի...

Վրդովված ջրերն ափին են տալիս,
Փրփուր են թքում քարերի վրա,
Ծնկած դիմում եմ ես հայի աստծուն
Ու նա ասելու բան չունի ահա:

– Արձակագիրները, բանաստեղծներն ընկալվում են որպես մտավորականության առաջին շարքում կանգնած անհատականություններ...

Ինչպես արդեն ասացինք, հայոց պետությունն ու պետականությունը ծանրագույն ժամանակներ են ապրում:

Սյունեցի գրողները (գեղարվեստական գործերից զատ) կարողանո՞ւմ են արդյոք դիրքորոշում հայտնել ստեղծված իրավիճակի շուրջ, թե՞ միայն սպասողի, հայեցողի դերում են:

– Ազնիվ մարդը, առավել ևս մտավորականը, ինչպե՞ս կարող է այս դժվարին ժամանակներում չկանգնել երկրի, հայոց պետականության պահպանության դիրքերում: Այո՛, սյունեցի գրողները ոչ միայն դիրքորոշում են հայտնում, այլև նրանցից ոմանք զենքով են կանգնում այդ դիրքերում:

– Որքանով տեսնում ենք՝ Դուք Սյունյաց աշխարհի բոլոր գրողների հանդեպ հարգալից վերաբերմունք ունեք, ինչը բնական է: Սակայն կուզենայինք լսել, թե ովքե՞ր են, ըստ Ձեզ՝ մարզի առավել մեծ ճանաչում ունեցող գրողները եւ ի՞նչ հաջողված գործեր ունեն նրանք:

– Հարգում եմ գրչի մարդու ազնիվ տեսակին... Սյունիքում եղել են, կան ու հաստատապես լինելու են պատկառելի գրիչներ:

Ներկա պահին ճանաչում և հաջողված գործեր ունեն սյունեցի հետևյալ գրողները՝ Արկադի Ծատուրյան, Հրանտ Գյուլասարյան, Ապետնակ Գրիգորյան, Գագիկ Դավթյան, Տիգրան Գրիգորյան, Ավագ Եփրեմյան, Սուսաննա Բաբաջանյան, Էդուարդ Հարեցնց, Արթուր Առաքելյան, Վարուժան Գալստյան, Վարդան Սարգսյան, Արթուր Չերքեզյան, Ավետիք Այվազյան, Ներսես Խառատյան, Մարի Առաքելյան, Ներսես Աղաբեկյան, Աշոտ Մինասյան, Սուրեն Վարդանյան, Դուխիկ Հայրապետյան, Նինա Դանիելյան, Լևոն Սահակյան...

– Արդյո՞ք սյունեցի գրողների լավագույն գործերն այլ լեզուներով թարգմանելու եւ ներկայացնելու խնդիր դնում եք ՀԳՄ ղեկավարության առջեւ:

– Նախ նշեմ, որ թարգմանական գործընթացը կապված է ֆինանսական լուրջ խնդիրների հետ: Այդ գործում իր մեծ ներդրումն ունի բանաստեղծ Գագիկ Դավթյանը ու նրա միջոցով է, որ սյունեցի մի շարք գրողների ստեղծագործություններ թարգմանվել և տպագրվել են տարբեր լեզուներով /Գ. Դավթյան, Ավ. Եփրեմյան, Էդ. Հարեցնց, Ն. Խառատյան, Լ. Սահակյան, Ավ. Այվազյան/:

– ՀԳՄ պաշտոնաթերթ «Գրական թերթը» եւ առհասարակ հայաստանյան գրական մամուլը որքանո՞վ եք կարողանում օգտագործել սյունեցի գրողների ստեղծագործությունների հանրայնացման նպատակով:

– Այդ հարցում շնորհակալ գործ են անում «Գրական թերթ», «Սյունյաց երկիր», «Գրեթերթ», «Առավոտ» թերթերը և «Գրանիշ» գրական հանդեսը: Կցանկանայի նշել, որ որոշ ստեղծագործողների անհետևողականության հետևանքով է, որ նրանց գործերը մնում են անտիպ: Գրական աշխատանքը ծանր աշխատանք է, պիտի գնալ մինչև վերջ: Հիշենք, թե ինչպես են բազմանում կրիաները: Նրանք ծովից դուրս են գալիս, ձվադրում ափից քիչ հեռու: Ձվերից ելած փոքրիկ կրիաները բնազդով աճապարում են դեպի ծով: Այդ ընթացքում նրանցից շատերը զոհ են գնում թշնամիներին և ծով են հասնում քչերը: Այս կոպիտ օրինակը հատկանշանական է նաև արվեստագետների /գրողների/ համար: Շնորհքով օժտված շատերն են ելնում ստեղծագործական ուղի, սակայն վերջնագիծ հասնում են նրանք, ովքեր կարողանում են դիմանալ կյանքի բազում դժվարություններին: Ստացվում է, որ արվեստն էլ անզիջում պայքար է, և ոչ մեկը թող չսպասի առանձնահատուկ պայմանների: Կայացած գրող համարվում է նա, ՈՎ ՏԵՂ Է ՀԱՍՆՈՒՄ:

– Հետաքրքիր է՝ բաժանմունքը կամ Սյունիքի գրողների ներկայացուցիչները համագործակցո՞ւմ են գրական-մշակութային այլ կազմակերպությունների հետ (մարզի, նաեւ հանրապետության սահմաններից դուրս) կամ ընդգրկվո՞ւմ են ինչ-որ ժողովածուների հրատարակման կամ օտարալեզու գրականության թարգմանության գործերում:

– Համագործակցում ենք մշակույթի տների, գրադարանների, բանակի զորամասերի, դպրոցների և բուհերի հետ: Մեր գրողները, ճիշտ է՝ ոչ հաճախ, ընդգրկվում են Հայաստանում տպագրվող ալմանախներում: Փոխադրամիջոցի և նվազագույն գումարի առկայության դեպքում հնարավոր կլիներ այցելել մարզի տարբեր բնակավայրեր և հանդիպումներ ունենալ գրասեր հասարակության ու տեղի ստեղծագործողների հետ: Հուսանք, որ մեր երկրի առողջացմանը զուգահեռ լուծելի կդառնան և այդ խնդիրները:

– Եվ, ի վերջո, կուզենայինք իմանալ՝ Սյունիքի տարածքային եւ համայնքային իշխանություններն ինչպիսի՞ վերաբերմունք են ցուցաբերում գրողներին, ստեղծագործող մտավորականությանը եւ, իհարկե, գրքին, գրքերի աշխարհին:

Ուզում եմ մեր վերին իշխանավորներին հուշել, որ հայ գրականության զարգացման համար ֆինանսավորում է անհրաժեշտ պետական բյուջեից ու գրողին չի կարելի թողնել խղճալի վիճակում: Հայ գրողն իրավունք ունի կախված չլինելու իշխանությունների քմահաճույքներից այն դեպքում, երբ գրողին արժևորողը գրականագետն ու գրաքննադատն են և բարձրակարգ ընթերցողը:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

Տարիներ անց խորհրդային պետությունը մեկ էլ որոշեց գյուղի բնակչության հոգսը թեթևացնել հատուկ ձևով, և ժողովուրդների տեղահանման գործում մեծ փորձառություն ունեցողի հմտությամբ Կյորվա ողջ բնակչությունը բերեց- դրեց սարերի մեջ կորած մի տափարակում, քաղաքի պստլիկ օդանավակայանի կողքին, ասես թե կյորուեցիներն իրենց լեռները թողած պետք է հիմա էլ հոգով-սրտով կապվեին խորհրդային քաղաքակրթության նվաճում՝ դռդռան, խաղալիքանման «կուկուռուզնիկներին»:

Կյորուն լքվեց, որբացավ ու դարձավ Հարթաշեն: Իրականում Կյորուն մնաց Կյորու, բայց առանց կյորուեցիների, իսկ Հարթաշենը եղավ հարթ շեն՝ բնակեցված կյորուեցիներով, բայց դարձած Կյորվա սարերի կարոտ հարթաշենցիներ: Նպատակն իբր մարդասիրական էր, կյանքը փոքր ինչ դյուրացավ, բայց չկային արդեն Կյորվա ահարկու, բայց հարազատ ծերպերը, թթի պղպջան տակառները, գիշերվա խոշոր աստղերը... Բա գերեզմանն՞ը, բա Սիմոնի կարո՞տը... Ոչ ոք դա հաշվի չառավ: Սխալ կլինի կարծել, թե կյորուեցիներն ուրախությամբ բաժանվեցին իրենց չքնաղ սարերից: Հովհանի գերեզմանն էլ մնաց անմարդաբնակ Կյորուում: Ոչ ոք այլևս չէր այցելում նրան: Կյորուն ու՛ր, Հարթաշենն ու՛ր... Այդ բարի մարդու հիշատակը մացառապատվեց, մոռացվեց ու դարձավ «հին գերեզման»: Երբեմն ինձ թվում է, թե Հովհանը մնացել է կռվի դաշտում ու անհայտ զինվորի պես մնացել անթաղ:

Իսկ ճստլիկ Փոլին, համոզված, որ Ելիսեյան Դաշտերին վայել իր Ֆլորա անունն Արարատյան դաշտում էլ ոչ պակաս հնչեղություն ունի, ամուսնուն, ոտանավորներով լի վանդակավոր տետրը և չորս աղջնակին վերցրած՝ առանց որևէ ափսոսանքի լքեց Կյորուն՝ մտքում երդվելով այլևս երբեք չվերադառնալ այս գյուղը, որտեղ չափից դուրս զառիթափ էր արահետը, այնքա՜ն ծանր՝ ջրով լի կուժը և անչափ չար՝ Շուշան կեսուրը:

Շատ տարիներ անց, երբ Փոլին վաղուց արդեն Ֆլորա էր ու ծեր կին, իսկ Սիմոնն արդեն Արարատյան դաշտում հալալ քրտինքով կանգնեցրած տուն ուներ, նրա մեջ վերստին գլուխ բարձրացրեց բանաստեղծը, ու Կյորվա կարոտը խեղդեց նրան: Էլ ինչ բանաստեղծ, եթե սրտումդ կարոտ չկա...

Չնայած հարթավայրում անցած տարիները զուր չապրելուն, ընտանիքի տնտեսապես բարգավաճ լինելուն, տուն-տեղը կարգի ընկնելուն ու, վերջապես, տղա երեխայով ընտանիքը հավելված, իսկ բազմաչարչար Ֆլորան՝ հավատարմորեն միշտ կողքին, աղջիկներն էլ մարդու տալու և մարդու գնացած, Սիմոնն այդպես էլ չկապվեց հարթավայրին ու մայրաքաղաքի աղմկոտ մոտիկությանը: Նա հոգով-սրտով մնացել էր Կյորուում ու ոչ մի կերպ չէր համակերպվում այն մտքին, որ Կյորուն այլևս չկա: Սիմոնը լքել էր Կյորուն, սակայն Կյորուն նրա սրտի մի անկյունում թաքուն մնացած՝ եկել-հասել էր Արարատյան դաշտ ու շարունակ մղմղում- մռմռացնում էր ու զգալ տալիս, որ ինքը կա: Այդ պատճառով հավատալով իր սրտին, քան թե լուրերին, թե Կյորուն այլևս գոյություն չունի, մի օր նա տնեցիներին ոչինչ չասելով և, բանաստեղծի իր աստվածատուր կոչմանը հավատարիմ՝ վերցնելով ոտանավորների արդեն քրքրված տետրը, լքեց իր շինած տունը, որն այդպես էլ տեղ չէր գտել Կյորուով լցված իր սրտում և մի գեղեցիկ օր հայտնվեց Գորիսում: Ծերացած քույրերին թվաց, թե նա աստղերից է իջել:

- Եկել եմ՝ գնամ Կյորու, - ասաց Սիմոնն այնպես հանդարտ, կարծես թե երկու-երեք տասնյակ տարիները մատների մի չռթոցով ետ էին վերադարձել, ասես թե Կյորվա ոչ մի տեղահանություն չէր եղել ու պատերազմ- բան չկար և ժամանակը փչացած ժամացույցի պես կանգ էր առել:

– Գնամ մեր շենում, մեր սարերում ման գամ, մի բուռ թութ ուտեմ, էլ ուրիշ բան չեմ ուզում, սրտիս ուզածն էդ է:

Քույրերը տարակուսեցին, ի վերջո հասկանալով, որ այստեղ, անշուշտ, անդրերկրային ուժերի մատն է խառը... Սակայն ի՞նչ կարող էին անել: Կյորուն պինդ բուն էր դրել Սիմոնի սրտում և երբեք դուրս չէր ելել այնտեղից: Այնուամենայնիվ փորձեցին հակաճառել.

– Էլի շաշ-շաշ դուրս տվեց: Ինչ Կյորու՜, ինչ բա՜ն... Կյորուն ո՞րն է: Կյորուից բա՞ն է մնացել, այ անխելք: Ժամանակ ես գտե՜լ ... Հազար ու մի շառ կա՜, փորձանք կա՜: Գլխիդ մի բան կգա, կկորչես-գնաս, – ծղրտացին նրանք:

– Ինչ լինելու է՝ թող լինի... – ասաց Սիմոնը՝ մի տեսակ անհաղորդ:

Քույրերը պայծառատես էին: Սիմոնը գնաց Կյորու ու էն գնալն էր, որ գնաց:

Ամառ էր, տաք, թթվի լավ ժամանակը: Ոչ ոք չիմացավ, թե ուր մնաց բանաստեղծը, և թե գոնե նա իր սրտուզելիք Կյորվա մի բուռ թութը կերա՞վ: Արդյո՞ք անմարդաբնակ Կյորուում դեռևս թթի ծառեր կային: Կորավ-գնաց, նաև այդպես էլ անհայտ մնացած ոտանավորների տետրը...

Պատերազմ էր, Կյորուն արդեն գյուղ չէր, Կյորուն պատերազմի վտանգավոր գոտի էր: Կյորվա կիրճերում թուրքեր էին վխտում...

«Գոնե մի ոտանավոր կարդացած լինեի Սիմոնի տետրից...», – ափսոսացի ես ու մտածեցի.

«Ճիշտ են ասում, որ ամենացավալին ժամանակի կորուստն է...»: ●

Հազար ու մի երգում գովված սար եմ տեսել, Բայց միշտ ձեր կարոտը քաշել, Սյունյաց սարեր...

Սյունյաց սարեր

Խոսք: Աշոտ / Գուսան (Աշոտ Հայրապետի Դադայան)
Երաժշտություն: Աշոտ / Գուսան (Աշոտ Հայրապետի Դադայան)

Հազար ու մի երգում գովված սար եմ տեսել,
Բայց միշտ ձեր կարոտը քաշել, Սյունյաց սարեր,
Ասես մեծ վարպետ Նաղաշի ձեռքն է հասել,
Ծաղիկներիդ գույն-գույն նախշել, Սյունյաց սարեր,
Ինձ մոր սրտով ձեր գիրկն առեք, Սյունյաց սարեր:
Ցայլաներիդ ծուխը սահող երամ դառած,
Իմ նազելին երամի մեջ երազ դառած:

Ծաղկիդ բույրը հազար դաշտ ու ձոր կլցնի,
Հազար ցամաք հողի, քարի շուրթ կբացի.
Տուն կբերեք ձեր պանդուխտին, չեք կորցնի,
Հովերդ ինձ ձեռքով կանեն Սյունյաց սարեր,
Ինձ մոր սրտով ձեր գիրկն առեք, Սյունյաց սարեր:
Ցայլաներիդ ծուխը սահող երամ դառած,
Իմ նազելին երամի մեջ երազ դառած:

Մարդուն քաջի ուժ կտա ձեր օդն ու ջուրը,
Սուրբ մոր նման օրոր կասի զով զեփյուռը,
Աշխարհով մեկ տարածվել է ձեր անունը,
Ձեզ հազարան խաղ եմ կանչել, Սյունյաց սարեր,
Ինձ մոր նման ձեր գիրկն առեք, Սյունյաց սարեր:
Ցայլաներիդ ծուխը սահող երամ դառած,
Իմ նազելին երամի մեջ երազ դառած:

Գուսան Աշոտ, Սյունյաց հողը անարատ է,
Չարի սերմը բուն չի դնի, անարմատ է.
Մարդն արծիվ է, լեռնածին է, հրահատ է,
Հազար հողմեր ձեզ չեն մաշել, Սյունյաց սարեր,
Ինձ մոր նման ձեր գիրկն առեք, Սյունյաց սարեր:
Ցայլաներիդ ծուխը սահող երամ դառած,
Իմ նազելին երամի մեջ երազ դառած:

Կապուտջուղ, լեռնագագաթ Սյունիքի մարզի և Նախիջևանի սահմանագլխին: Զանգեզուրի լեռնաշղթայի ամենաբարձր կետն է (3905 մ): Հայաստանի երկրորդ բարձր գագաթը Արագածից հետո:

Մեղրու բերդ, հայկական ճարտարապետական հուշարձան Մեղրի քաղաքի շրջակա լեռնաշղթայի գագաթների վրա, հյուսիսից պայտաձև, ընդգրկելով քաղաքը: Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ 1083 թվականին բերդն արդեն կանգուն էր և հայտնի:

Զանգեզուր

Ինձ կանչում է երկիրն այն անձրևոտ,
Ուր մի գիշերվա մեջ՝ մարդահասակ
Մի եղեգ է աճում անձավի մոտ:

Ինձ կանչում է երկիրն այն արևոտ,
Ուր քարակույտերի հոտն է ննջում
Խոշոր եղջերավոր ժայռերի մոտ:

Ինձ կանչում է երկիրն այն բարձրաբերձ,
Ուր որոտի պահին չես իմանում
Ա՞մպ է ոտքերիդ տակ, թե՞ փլվող քերծ:

Ինձ կանչում է երկիրն այն խորախոր,
Ուր թե երեկ քար ես նետել անդունդ,
Արձագանքը պիտի լսես այսօր:

Ինձ այն հողն է կանչում, ուր նույն պահին,
Երբ որ ձորերի մեջ բալն է հասնում,
Ձնծաղիկն է բացվում ձորագլխին:

Ինձ կանչում է երկիրն այն խիստ ու մեղմ,
Որ կարող ես հանգիստ՝ ու տարվա չորս
Եղանակը տեսնել մի ժամվա մեջ:

Ինձ կանչում է երկիրն այն գեղանի,
Ուր մարդը մեղմ է, խիստ, բարձր է ու խոր
Բնաշխարհի նման իր հայրենի:

1954 Թ., ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

Մեծ Իշխանասար (3549 մ), լեռնագագաթ Սյունիքի բարձրավանդակում: Գտնվում է Սյունիքի մարզի և Ադրբեջանի սահմանի վրա: Արևելյան լանջին է Սև լիճը: Լեռնազանգվածում կա նաև Փոքր Իշխանասար գագաթը, որը գտնվում է Մեծ Իշխանասարից հյուսիս:





Արամազդ, Բարգուշատի լեռնաշղթայի ամենաբարձր լեռնագագաթը, առավելագույն բարձրությունը՝ 3399 մ:

Շաքիի ջրվեժ, Շաքի գետի վրա, Որոտանի միախառնվելուց 3 կմ դեպի հյուսիս-արևելք, կիրճում: Շաքի գյուղից ներքև՝ 1,5 կմ հեռու, բարձրությունը 15-17 մ:

Սյունյաց Երկիր մշակութային

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2021Թ. ՄԱՐՏԻ 30-ԻՑ:
Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:
www.syuniacyerkir.am

Հղումը «Սյունյաց Երկիր. Մշակութային» պարբերականին պարտադիր է:
Հրատարակվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 12 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 31.05.2021թ.: